

ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԸՆԹԵՐՑԱԳԻՐՔ 2

Միմոն Ֆաուզ և ուրիշներ

Տնտեսությունը և սոցիալ-դեմոկրատիան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԲԱՆ	4
1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
2. ՀԻՄՆԱՐԱՐ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՏՈՒՆՔՆԵՐ	9
2.1. Աղամ Սմիթ. տնտեսական ազատականության հիմնադիրը	12
2.2. Կապիտալիզմի քննադատությունը Կարլ Մարքսի կողմից	17
2.3. Ջոն Մեյնարդ Բեյնս. կապիտալիզմի կառավարումը	23
2.4. Տնտեսագիտության կատարելատիպերը	28
2.5. Տնտեսագիտությունն այսօր	30
3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՐԳԵՐ	42
3.1. Կապիտալիզմ և ժողովրդավարություն	42
3.2. Համակարգվող և չհամակարգվող կապիտալիզմ	46
3.3. Նոր շրջանակային պայմաններ գլոբալիզացիայի մեջ	51
4. ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԲԱՐԱԲԱԿԱՆ ԿՈՐՆԵՐՈՐՇՈՒՄԸ	56
4.1. Հիմնարար արժեքներ	56
4.2. Հիմնարար իրավունքներ	59
4.3. Տնտեսաբաղաբական սկզբունքներ	65
4.4. Ակնարկ. որակական աճի չափումը	74
5. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ	77
5.1. Համբուրգյան ծրագիր՝ Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության հիմնադրության ծրագիր	78
5.2. Հիմնադրոյթներ Գերմանիայի համար. Զրիստոնեսա-դեմոկրատական միության ծրագիրը	82

5.3. “Ապագան կանաչ է” - 90-ի դաշինք / Կանաչներ կուսակցության հիմնադրության ծրագիրը	85
5.4. Լիբերալ-դեմոկրատական կուսակցության «Վիսքոնսինյան հիմնադրությունը»	87
5.5. «Զախ» («Die Linke») կուսակցության «Ծրագրային հիմնակետերը»	90
5.6. Ծրագրերի գնահատումը սոցիալ-դեմոկրատիայի նպատակների տեսանկյունից	93
6. ՏՆՏԵՍԱԿԱՐԳԵՐ. ԵՐԿՐՆԵՐԻ ՄՈՂԵՆՆԵՐ	96
6.1. ԱՄՆ	96
6.2. Մեծ Բրիտանիա	101
6.3. Գերմանիա	107
6.4. Ճապոնիա	115
6.5. Շվեդիա	121
7. ԿՈՆԿՐԵՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՕՐԻՆԱԿՆԵՐ ՊՐԱԿՏԻԿԱՅԻՑ	128
7.1. Բնապահպանական արդյունաբերական քաղաքականություն.	129
7.2. Բյուջետային քաղաքականություն.	134
7.3. Մասնավորեցման ռիսկերն ու հնարավորությունները	139
7.4. Լավ աշխատանք և մասնակցականություն.	145
8. ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՄՏԱԾԵԼ	160
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	161
ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	164
ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ	166

ԵՐՐՈՐԴ ՅՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԲԱՆ

Ֆինանսական շուկաների և տնտեսության ճգնաժամը բեկումնային էր: Խնդիրը միայն ճգնաժամի կոնկրետ հետևանքները վերացնելը չէ: Այն շոշափում է մեր հասարակության հիմքը: Մենք այսօր պետք է որոշենք, թե ինչպես ենք ուզում ապրել և աշխատել առաջիկա տարիներին ու տասնամյակներին: Ինչպիսի՞ն կարող է լինել արդար ու համերաշխ տնտեսակարգը: Պետության և շուկայի միջև ինչպիսի՞ հավասարակշռություն պետք է գտնել: Ինչպե՞ս կարող է հաջողվել սոցիալ-դեմոկրատիայի ժամանակակից, արժեքամետ տնտեսական քաղաքականությունը:

Այս հարցերը վճռորոշ են յուրաքանչյուրի համար, ով կամենում է խոսքով ու գործով մասնակից լինել քաղաքական գործընթացներին: Չվերահսկվող շուկայի նկատմամբ հավատը մեզ փակուղի է մտցրել: Այժմ կա հետագա զարգացման ուղիները Նորովի Նախանշելու հնարավորություն: Բայց միայն նա, ով գիտի, թե այդ ճանապարհն ուր է տանելու, կկարողանա իր գաղափարներով ոգեշնչել նաև ուրիշների և հասնել իր նպատակներին: Այդ իսկ պատճառով Նույնքան ավելի կարևոր է հավաստիանալ սեփական ընթացակերպի մեջ:

Այդ հավաստիացմանը նպաստելուն է կոչված այս ընթերցագիրքը: Այստեղ պարզաբանվում են կարևոր տնտեսագիտական ուսմունքներ, նկարագրվում տնտեսակարգեր, սահմանվում առանցքային արժեքներ ու կողմնորոշումներ, և հարց է տրվում, թե ի՞նչ նշանակություն ունեն այդ արժեքները սոցիալ-դեմոկրատիայի տնտեսական քաղաքականության համար: Ընդ որում, պարզ է, որ այստեղ ավարտուն պատասխաններ չեն կարող տրվել: Շարունակ Նորովի պետք է խորհել և Նորովի հիմնավորել, թե ինչպես կարող է հաջողություն ունենալ սոցիալ-դեմոկրատիայի տնտեսական քաղաքականությունը: Ուստի և, սույն հատորի նպատակը ոչ թե հավերժորեն գործող պատասխաններ ներկայացնելն է, այլ ընթերցելու և մտորելու հրավիրելը:

Սույն գիրքը սոցիալ-դեմոկրատիայի ընթերցագրքերի շարքի երկրորդ հատորն է և հիմնվում է «Սոցիալ-դեմոկրատիայի հիմքերը» ընթերցագրքի վրա: Այնտեղ քննվում են սոցիալ-դեմոկրատիայի հիմնարար արժեքները, համեմատվում հասարակության ազատական, պահպանողական ու սոցիալ-դեմոկրատական մոդելները և ներկայացվում լիբերալ-դեմոկրատիայի և սոցիալ-դեմոկրատիայի տարբերությունները: Շարքի երրորդ հատորը կրում է «Սոցիալական պետությունը և սոցիալ-դեմոկրատիան» անվանումը:

21-րդ դարի տնտեսությունը քննարկելիս չեն կարող աչքաթող արվել գլոբալիզացիայի բերած շրջադարձերը: Ընթերցագրքերի շարքում լույս կտեսնի մեկ հատոր ևս՝ «Գլոբալիզացիան և սոցիալ-դեմոկրատիան» թեմայով: Այդ հատորում գլոբալիզացիան կդիտարկվի այն տեսանկյունից, թե վերջինս ինչ ազդեցություն ունի տնտեսակարգի ձևավորման և շրջանակային պայմանների վրա: Գլոբալիզացիային նվիրված հատորում այնուհետև կվերլուծվեն գլոբալիզացիայի դրդապատճառները և դրա քաղաքական ձևավորման հնարավորությունները:

Այստեղ կուզենայինք սրտանց շնորհակալություն հայտնել Սիմոն Ֆաուլթին և Թոբիաս Գոմբերթին: Սիմոն Ֆաուլթը հեղինակել է ընթերցագրքի մեծ մասը: Թոբիաս Գոմբերթն արտասովոր բանիմացությամբ ու մեծ նվիրումով իրականացրել է խմբագրական ու դիդակտիկ աշխատանքը: Ընդհանրապես ենք հայտնում նաև Թոմաս Մայերին և Միխայել Դաուդերշտեդթին՝ գրքի հայեցակարգի մշակմանն իրենց խորհուրդներով աջակցելու, Վիլիելմ Նյոլլինգին՝ իր օգտակար դիտողությունների, և բոլոր հեղինակներին՝ գերազանց համագործակցության համար: Դնարավոր թերությունների մեղավորությունը մերն է:

Սոցիալ-դեմոկրատիայի ակադեմիայի խորհրդանիշը կողմնացույց է: Ակադեմիայի տրամադրած առաջարկներով Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամը կամենում է տալ դիրքորոշումների և կողմնորոշումների հստակեցման շրջանակ: Ուրախ կլինենք, եթե օգուվեք մեր առաջարկներից՝ ձեր քաղաքական ուղին որոշելու համար: Սոցիալ-դեմոկրատիան կենսունակ է այն բանի հաշվին, որ քաղաքացիները կրկին ու կրկին զբաղվում են դրանով և հանդես գալիս դրա օգտին:


դր. Զրիստիան Զրել


Յոխեն Դահմ

*Սոցիալ-դեմոկրատիայի
ակադեմիայի տնօրեն*

*«Սոցիալ-դեմոկրատիայի ընթերցագրքեր»
Նախագծի ղեկավար*

Բոնն, դեկտեմբեր 2009թ.

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ո՞ր տնտեսական քաղաքականությունն է համապատասխանում սոցիալ-դեմոկրատիային:

Կառավարության 1998 թվականի հայտարարության մեջ նախկին դաշնային կանցլեր Գերհարդ Շրյոդերն ասել է, որ իր կոալիցիան հանդես է գալիս ոչ թե այլ կամ ձախ, այլ արդի տնտեսական քաղաքականության օգտին:

Այսինքն՝ այդ քաղաքական դաշտում այլևս չկա՞ն տարբերություններ լիբերալների, պահպանողականների և սոցիալ-դեմոկրատների միջև:¹ Կա՞, արդյոք, սոցիալ-դեմոկրատիայի տնտեսական ուսմունք, որը տարբերվում է այլ հոսանքներից:

Թե՞, իսկապես, կա միայն «արդի» և «ոչ արդի»: Իսկ այդ դեպքում ո՞վ իր մասին կանդի, թե ներկայացնում է ոչ արդի քաղաքականություն, և այս կապակցությամբ, ընդհանրապես, ի՞նչ է նշանակում «արդի»: Ֆուտբոլային մարզիչ Օթթո Ռեհագելը մի անգամ ասել է. «Արդի խաղ է ցուցադրում նա, ով հաջողություններ ունի»: Տարածելով քաղաքականության վրա՝ դա կնշանակի. արդի տնտեսական քաղաքականությունն այն քաղաքականությունն է, որը հաջողություններ է ունենում:

Ինչո՞վ է չափվում հաջողությունը տնտեսական քաղաքականության մեջ:

Իսկ ինչո՞վ է չափվում այդ հաջողությունը: Ոմանք ասում են՝ հնարավոր առավելագույն բարեկեցությամբ և աճով: Մյուսները շեշտում են հատկապես հավասարությունն ու արդարությունը: Ըստ այդմ, տնտեսակարգը չի կարող հանգեցնել անհավասարության, շահագործման և անարդարության: Եվ գնալով աճում է այն ձայների նշանակությունը, որոնք տնտեսության համար որպես մասշտաբ նշում են կայունությունը, ռեսուրսների ինսայունը և բնապահպանությունը: Ըստ այդմ՝ աճը չպետք է հանգեցնի գիշատիչ շահագործման:

Տնտեսական աճի, սոցիալական համահարթեցման և բնապահպանական կայունության հավասարակշռություն

Սոցիալ-դեմոկրատիայի հիմնարար արժեքներն են՝ ազատություն, արդարություն և համերաշխություն: Ուստի և, սոցիալ-դեմոկրատիայի տեսանկյունից ծրագրային առումով կարող է լինել նաև միայն մի պատասխան: Բոլոր երեք սկզբունքները, այսինքն՝ առաջին՝ աճը, երկրորդ՝ սոցիալական համահարթեցումը և, երրորդ՝ կայունությունը, պետք է ներդաշնակեցվեն միմյանց հետ:

Բայց դրան տանող ուղին նախանշված չէ: Արդի արժեքամետ տնտեսական քաղաքականությունը՝ Գերհարդ Շրյոդերից արված մեջբերման իմաստով, ռեֆլեքտորեն չի օգտագործի ոչ բացառապես դասական ձախ, ոչ էլ այլ տնտեսաքաղաքական գործիքներ: Սոցիալ-դեմոկրատիայի արժեքամետ տնտեսական քաղաքականությունը պետք է ամենից առաջ լինի արդյունքամետ: Նրա նպատակն այնպիսի հասարակու-

¹ Տեքստը պարունակում է բազմաթիվ արական և իգական ձևեր: Այն տեղերում, որտեղ լեզվական պատճառներով հրաժարվել ենք դրանցից, այնուամենայնիվ, նկատի են ամսվում երկու սեռերն էլ:

թյուն իրականացնելն է, որտեղ ազատության, արդարության, համերաշխության հիմնարար արժեքները և ընդգրկուն քաղաքական, սոցիալական, տնտեսական ու մշակութային հիմնարար իրավունքներն իրականացված կլինեն բոլոր մարդկանց համար:

Սույն ընթերցագրքի նպատակը հիմնարար կողմնորոշում տալն է այն հարցերի ամնչությամբ, թե սոցիալ-դեմոկրատիան այստեղ ի՞նչ տեսական հիմունքներով կարող է առաջնորդվել, ո՞ր տնտեսական համակարգերն ու տնտեսակարգերն են նպաստում իր այդ հավակնության իրականացմանը, ինչպիսի՞ն են տնտեսակարգերն այլ երկրներում, և ի՞նչ կարող են նշանակել այդ տեսական հիմնախնդիրները որոշակի քաղաքական նախագծերի համար:

*Ընթերցագրքի
նպատակը և
կառուցվածքը*

«Սոցիալ-դեմոկրատիայի հիմքերը» ընթերցագրքի առարկան		Սոցիալ-դեմոկրատիայի տնտեսաքաղաքական կողմնորոշումը (Գլուխ 4)			
		Ազատական ժողովրդավարություն			Ազատականական ժողովրդավարություն
«Տնտեսությունը և սոցիալ-դեմոկրատիան» ընթերցագրքի առարկան					
Գլուխ 2	Տեսություն	Մարքս	Քեյնս		Սմիթ
Գլուխ 3.1	Համակարգ	Կապիտալիզմ			
Գլուխ 3.2	Կարգեր	Ավտորիտար	Համակարգված		Չհամակարգված
Գլուխ 6	Երկրներ		Շվեդիա	Ճապոնիա	Գերմանիա
				Մեծ Բրիտանիա	ԱՄՆ
Գլուխ 5	Կուսակցական ծրագրերի համեմատություն				
Գլուխ 7	Օրինակներ պրակտիկայից				

Նախ **տնտեսագիտական ուսմունքի** հարթությունում կնկարագրվի, թե պատմության մեջ ամենաազդեցիկ տնտեսագետներ Ադամ Սմիթը, Կարլ Մարքսը և Ջոն Մեյնարդ Թեյնսն ինչ վերլուծություններ ու եզրակացություններ են առաջարկում: Տնտեսական ազատականության, հակակապիտալիզմի և կառավարվող կապիտալիզմի՝ դրանից ածանցված կատարելատիպերն այնուհետև կքննվեն այսօրվա տեսանկյունից և սոցիալ-դեմոկրատիայի նպատակների հեռանկարում (Գլուխ 2):

Գլուխ 2. Տնտեսագիտական ուսմունք

Տնտեսական համակարգերի և տնտեսակարգերի հարթությունում կարծարծվի կապիտալիզմի և ժողովրդավարության կապը, և կներկայացվեն համակարգված ու չհամակարգված կապիտալիզմի՝ արևմտյան արդյունաբերական պետություններում գերիշխող երկու տնտեսակարգերը (Գլուխ 3):

Գլուխ 3. Տնտեսական համակարգեր և տնտեսակարգեր

Գլուխ 4. Սոցիալ-դեմոկրատիայի տնտեսաքաղաքական կողմնորոշումը

Գլուխ 5. Կուսակցությունների տնտեսաքաղաքական ծրագրայնությունը

Գլուխ 6 և 7. Երկրների մոդելներ և պրակտիկայից օրինակներ

Տնտեսաքաղաքական ծրագրայնության մակարդակում, մի կողմից՝ հիմնարար արժեքների, հիմնարար իրավունքների և տնտեսաքաղաքական սկզբունքների համակցումից կուրվագծվի **սոցիալ-դեմոկրատիայի տնտեսաքաղաքական կողմնորոշումը** (Գլուխ 4):

Մյուս կողմից՝ համակարգված ու չհամակարգված տնտեսակարգերի չափանիշների և սոցիալ-դեմոկրատիայի նկարագրված տնտեսաքաղաքական կողմնորոշման հիման վրա կհամեմատվի Բունդեսթագում ներկայացված **կուսակցությունների տնտեսաքաղաքական ծրագրայնությունը**՝ ելնելով նրանց հիմնադրութային ծրագրերից (Գլուխ 5):

ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Ճապոնիայում և Շվեդիայում գերիշխող տարբեր տնտեսակարգերի համեմատությունը (Գլուխ 6) և **մասնավորեցման, բնապահպանական արդյունաբերական քաղաքականության, լավ աշխատանքի և մասնակցականության**, ինչպես նաև **սվազագույն աշխատավարձի** տնտեսաքաղաքական ոլորտներից բերված կոնկրետ և նմուշային քաղաքական առաջարկությունները (Գլուխ 7) կեզրափակեն հատորը:

Սոցիալ-դեմոկրատիայի տնտեսական քաղաքականության առնչությամբ տրվող հարցն, այսպիսով, շոշափում է տարբեր հարթությունների մի բազմություն, որոնց այս հատորում անդրադարձ կլինի, մասնավորապես, նաև այն հարցին, թե ինչն է հատկանշում բուն սոցիալ-դեմոկրատիան:

Այս հարցին առաջին պատասխանը տալիս է սոցիալ-դեմոկրատական կուսակցությունն (SPD) իր հիմնադրութային ծրագրում.

«Սոցիալ-դեմոկրատիան երաշխավորում է ոչ միայն բոլոր մարդկանց քաղաքացիական, քաղաքական և տնտեսական հիմնարար իրավունքները: Այն ապահովում է բոլորի իրավահավասար սոցիալական մասնակցությունը՝ հասարակության ժողովրդավարացմամբ, ամենից առաջ՝ մասնակցականությամբ, քաղաքացիական իրավունքների վրա հիմնված կանխահոգ սոցիալական պետությամբ և համակարգված շուկայական տնտեսությամբ, որտեղ ապահովված է ժողովրդավարության առաջնայնությունը շուկաների նկատմամբ»: (Համբուրգյան ծրագիր, 2007թ., 19):

2. ՀԻՄՆԱՐԱՐ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՍՈՒՆՔՆԵՐ

Այս գլխում՝

- ներկայացվում են պատմականորեն ամենաազդեցիկ տնտեսագիտական ուսմունքները,
- արտացոլվում է դրանց այսօրվա նշանակությունը,
- ներկայացվում է, թե դրանք ինչ նշանակություն ունեն սոցիալ-դեմոկրատիայի համար:

«Ինտելեկտուալ ազդեցություններից իրենց միանգամայն զերծ կարծող պրակտիկները սովորաբար որևէ հանգած տնտեսագետի ստրուկներն են» (Քեյնս 1966թ., 323), – գրել է Ջոն Մեյնարդ Զեյնսը՝ ինքը լինելով պատմության ամենակարևոր տնտեսագետներից մեկը: Այս գլխում ներկայացվում ու միմյանց հետ համեմատվում են Նրա և Նրա հետ մեկտեղ, թերևս, ամենանշանավոր ու ամենաազդեցիկ տնտեսագետների՝ Ադամ Սմիթի և Կարլ Մարքսի տեսությունների հիմնական գծերը: Դրանով նշահարվում են պատմականորեն ամենակարևոր տնտեսագիտական ուսմունքների երեք բևեռները:

Բայց արժե՞, արդյոք, զբաղվել իրենց աշխատությունները շատ տարիներ առաջ գրած տնտեսագետների գաղափարների աշխարհով: Արդյո՞ք նրանց բացատրությունները դեռ համապատասխանում են մշտապես փոփոխվող զլրբալիզացված աշխարհին, թե՞ դրանք վաղուց փոշեկալվել են, այլևս հասկանալի չեն և հերքվել են պատմության կողմից:

Ինչո՞ւ և ի՞նչ կերպ այդ տեսություններն, այսպիսով, նշանակություն ունեն սոցիալ-դեմոկրատիայի համար: Դրանք կարող են երկակի առումով օգտակար լինել:

Առաջին՝ դրանք շատ դեպքերում կազմում են «գաղափարախոսական քարհանքեր», որոնցից քաղաքականությունն օգտվում է: Քարհանքերն իմանալը կարող է օգնել ստուգելու տնտեսաբաղաբական փաստարկման ճշմարտացիությունը և այդ կերպ «կուրորեն» չտրվելու գաղափարաբանական «քարամատակարարումներին»:

Երկրորդ՝ սոցիալ-դեմոկրատիան ամբողջությամբ չի պատկանում այդ երեք տնտեսագիտական ուսմունքներից որևէ մեկին, այլ նշահարում է վերանց Նորմատիվային շրջանակ: Բայց այն օգտվում է բոլոր երեք տեսություններից, թեև նախապատվությունն ակնհայտորեն կառավարվող կապիտալիզմի, ինչպես Քեյնսն է այն նկարագրել, կողմն է:

Երեք մեծ տնտեսագետներ՝ Սմիթ, Մարքս և Քեյնս

Արդյո՞ք դասականները դեռ արդիական են:

«Գաղափարախոսական քարհանքեր»

Սոցիալ-դեմոկրատիա. փոխառություն բոլոր երեքից

Ընդ որում, բոլոր երեքն էլ ենթարկվել են խիստ քննադատության: Անհամար են դրանց հերքման փորձերը: Դրանք հայտարարվել են մեռած, բայց և կանոնավորապես ապացույց են բերում այն բանի, որ մեռած հայտարարվածներն ավելի երկար են ապրում: Տևտեսությամբ հիմնովին զբաղվել ցանկացող և ոչ մեկը չի կարող անտեսել Սմիթի, Մարքսի կամ Զեյնսի գաղափարները:

*Պատմական
համատեքստը.
Սմիթ. 18-րդ դարի
կեսեր*

Այս դասականներին նկարագրելիս հարկ է հաշվի առնել նրանցից յուրաքանչյուրի դարաշրջանը: Այնպես Սմիթն իր գաղափարները ձևակերպել է 18-րդ դարի կեսերին՝ մերկանտիլիզմի դարաշրջանում, այսինքն՝ այն տեսության, որը միապետներին ուսուցանում էր, որ նրանք իրենց շվայտ արքունավարությունը պետք է ֆինանսավորեն ամռտորի նկատմամբ վերահսկողությամբ և տնտեսության կառավարմամբ: Այսպիսով՝ պետության նկատմամբ իր քննադատական անվտանգությունը նա ձևավորել է վատնող, սոսկ իրենց հարստացման մասին մտածող միապետների փորձից, ոչ թե, ասենք, ժամանակակից բարեկեցիկ պետության օրինակով:

*Մարքս. 19-րդ դարի
կեսեր*

Կապիտալիզմի մարքսյան հզորալեզու քննադատությունը 19-րդ դարի կեսերին պատասխան էր փնտրում վաղ շրջանի արդյունաբերականացման և գլոբալիզացիայի առաջին ալիքի ժամանակ զանգվածների թշվառացման համար: Այսօր նրա ընկալումը կրում է 20-րդ դարի պետական սոցիալիզմի դրոշմը, որը երբեմն հանգեցնում է նրա գաղափարների աղճատված պատկերի:

*Զեյնս. 1930-ական
թվականներ*

Վերջապես, Զեյնսը 1930-ական թվականներին քննում էր տնտեսական լիբերալիզմը, որը համաշխարհային տնտեսական ճգնաժամի պայմաններում ակնհայտորեն խարխիվել էր: Նրա «Չբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն» աշխատությունը ոչ վերջին հերթին տնտեսական համակարգի կայունացման համար առաջարկություններ անելու փորձ էր՝ այդ կերպ խոչընդոտելու համար այլ ժողովրդավարությունների վերածմանը արմատական դիկտատուրաների: 2007 թվականին սկիզբ առած համաշխարհային ֆինանսական ճգնաժամով Զեյնսի գաղափարները վերածնունդ են ապրում: Վեստին թեժօրեն քննարկվում են ինչպես համաշխարհային ֆինանսական շուկայի կարգավորման շուրջ մտորումները, այնպես էլ պետական ներդրումային ծրագրերը:

*Տևտեսագիտության
անժամկետ
հասկացություններ
և պատկերներ*

Երեք մեծ տնտեսագետներով՝ Սմիթով, Մարքսով և Զեյնսով, զբաղվելը, սկզբունքային կողմնորոշումից զատ, ունի նաև մեկ այլ, միանգամայն գործնական առավելություն: Շատ տնտեսագիտական պատկերներ ու բացատրություններ, որոնք այսօր հանրածանոթ են, և մենք, առանց դրանց ծագումն իմանալու, հաճախ գործածում ենք, ստեղծվել են այդ երեքի կողմից:

	Սմիթ	Մարքս	Զեյնս
Երբ	18-րդ դարի կեսեր	19-րդ դարի կեսեր	1930-ական թվականներ
Առիթ	մերկանտիլիզմ, արքայադատարարական	արդյունաբերականացում և բանվորների թշվառացում	համաշխարհային տնտեսական ճգնաժամ և դիկտատուրաների առաջացում
Հիմնական նպատակ	ազատություն մերկանտիլիստական պետությունից	բանվորների վիճակի բարելավում և շահագործումից նրանց ազատագրում	ժողովրդավարության ապահովում՝ տնտեսության և աշխատանքի շուկայի կայունացման միջոցով
Սոցիալ-դեմոկրատիայի համար ընդհանուր եզրեր	ազատություն և համագործակցության տեսլական	«լավ աշխատանքի» տեսլական և աշխատանքի ու կապիտալի հավասարակշռության հարցը	համակարգված տնտեսության տեսլական և գործունե տնտեսական քաղաքականություն

«Շուկայի անտեսանելի ձեռք» պատկերն, օրինակ, մտցրել է Ադամ Սմիթը: Այն կոչված էր բացատրելու շուկայի արդյունավետությունը: Այսօր այն գործածվում է մասամբ առասպելաբանական պայծառակերպմամբ, ըստ որի՝ շուկան ամեն բան կշտկի:

Ով, ընդհակառակը, «լավ աշխատանք» երաշխավորող քաղաքականության է ձգտում, նա չի կարող շրջանցել Մարքսին: Նա է հենց հիմնականում դրոշմել «աշխատանքի օտարացում» հասկացությունը:

Վերջապես, Զեյնսին է պատկանում հաճախ մեջբերվող հետևյալ արտահայտությունը. «Երկարաժամկետ հեռանկարում բոլորս մեռած կլինենք»: Դրանով նա հանդես էր գալիս շուկայի խափանումը կանխելու գործում պետության պատասխանատվության օգտին: Նրա «ցուցումն» ամենից առաջ ուղղված է նրանց դեմ, ովքեր, պետության տնտեսաբաղադրական պատասխանատվությանը ապավինելու փոխարեն, հույսերը կապում են շուկայի (հենց) երկարաժամկետ ինքնաբուժիչ ուժերի հետ:

Սմիթ. «շուկայի անտեսանելի ձեռքը»

Մարքս. «լավ աշխատանք»

Զեյնս. «Երկարաժամկետ հեռանկարում բոլորս մեռած կլինենք»:

Լրացուցիչ ընթերցանության համար.
Նիկոլաուս Փիլիեր (հրատ.) (1996թ.), Մեծ տնտեսագետները. տնտեսագիտական մտքի ռազմավորաների կյանքն ու գործունեությունը, Շտուտգարթ

2.1. Ադամ Սմիթ. տնտեսական ազատականության հիմնադիրը

Սմիթ. «Ազգերի բարեկեցությունը»

Տնտեսական ազատականների հիմնարար երկն Ադամ Սմիթը 1776 թվականին հրատարակած «Ազգերի բարեկեցությունը» գիրքն է:

Ժամանակային համատեքստ. 18-րդ դարի կեսերի մերկանտիլիզմ

Այն ժամանակ Մեծ Բրիտանիան գտնվում էր մերկանտիլիզմից կապիտալիզմին անցման փուլում (հմմտ. Գերսթենբերգեր 2006թ., 40, 57-60, և Քոնեթ 2002թ., 64):

16-րդ դարից մինչև 18-րդ դարը տևած մերկանտիլիզմի դարաշրջանում իշխաններն ու թագավորներն իրենց տնտեսական քաղաքականության

հաջողությունը չափում էին իրենց կուտակած ոսկու և արծաթի առատությամբ: Առևտուրը դիտվում էր որպես զրոյական գումարով խաղ. մի երկրի շահածը մյուս երկրի համար կորուստ էր: Փոխադարձ օգուտ չէր տեսնվում: Այդ պատճառով ապրանքների ներկրումների պաշտպանվածության համար սահմանվում էին բարձր մաքսատուրքեր, և խթանվում էր հումքի ներկրումը: Արթունիքները փորձում էին կառավարել տնտեսությունը: Համբարային օրենսդրությունը ճշգրտորեն կարգավորում էր, թե ով ինչ գործունեությամբ կարող է զբաղվել, և թե ինչ չափով ապրանքներ են արտադրվելու:

Ադամ Սմիթը (1723 - 1790) համարվում է տնտեսական ազատականության հայրը, բարոյագետ է: Որպես մաքսային ծառայող ապրում էր Շոտլանդիայում:

Նա առաջ էր քաշում այն դրույթը, որ ուժերի ազատ շուկայական խաղի պարագայում առավելագույն բարեկեցությունը կառաջանա այն դեպքում, եթե ամեն մեկը հետամուտ լինի իր շահահանդրությանը: Սմիթը 1776 թվականին հրատարակեց «Չետագոտություն ազգերի բարեկեցության եռության և պատճառների մասին» գիրքը (մեծ մասամբ մեջբերվում է «Ազգերի բարեկեցությունը» անվան ներքո), որը համարվում է Նոր շրջանի տնտեսագիտության հիմքը: Նրա հիմնական գաղափարները մինչ օրս զետեղված են տնտեսագիտական դասագրքերում:

Առավել քիչ է հայտնի այն, որ բարոյագետ Սմիթը «Էթիկական զգացմունքների տեսություն» գրքում շարադրել է, որ պարկեշտությունը, վստահությունը և ազնվությունը տնտեսական գործունեության համար անհրաժարելի են, և փոխադարձ ապրումակցությունը (Empathie) հասարակական համակեցության ամենակարևոր շարժիչ ուժն է:

Սմիթի նպատակը. մերկանտիլիզմի հաղթահարումը

Սմիթն իր «Կապիտալիստական մանիֆեստը» գրեց այդ կարծրացած տնտեսակարգը փշրելու նպատակով: Նրա գաղափարները պարարտ հող գտան: Դրանով նա նպաստեց տնտեսության և առևտրի ազատականացմանը:

Բարեկեցության երեք աղբյուր

Սմիթը հիմնովին փոխեց ժողովրդական տնտեսության հարստության մասին տեսությունը: Նա հարստությունը չափում էր բացառապես կատարված աշխատանքով և ոչ թե, ինչպես մերկանտիլիստների մոտ, վերջիններիս ոսկու պաշարներով:

Սմիթը համընդհանուր բարեկեցության համար տեսնում էր երեք աղբյուր՝

- շահախնդրության և սեփականության ձգտումը,
- աշխատանքի բաժանումը և մասնագիտացումը,
- ազատ առևտուրը և մրցակցությունը:

Մի օրինակով նա նկարագրում էր, թե շահախնդրության ու սեփականության ձգտումից ինչպես կարող է առաջանալ ինչ-որ արդյունավետ բան, որն, ի վերջո, կծառայի համընդհանուր բարեկեցությանը:

*Շահախնդրության
ձգտումը*

«Ոչ թե մնագործի, գարեջրագործի կամ հացթուփի բարյացակամությունից ենք սպասում այն, ինչ մեզ պետք է ուտելու համար, այլ այն բանից, որ նրանք իրենց շահերն են պաշտպանում: Մենք դիմում ենք նրանց ոչ թե մարդասիրությանը, այլ եսասիրությանը և չենք հիշատակում սեփական պահանջմունքները, այլ խոսում ենք նրանց օգուտի մասին»: (Սմիթ, 1974թ. 17)

Որպես տնտեսական զարգացման էական մղիչ ուժ Սմիթն իր «Ազգերի բարեկեցությունը» աշխատության անմիջապես առաջին նախադասության մեջ նկարագրում է աշխատանքի բաժանումը:

«Աշխատանքի բաժանումը կարող է, ավելի քան մնացյալ ամեն բան, խթանել ու բարելավել աշխատանքի արտադրողական ուժերը»: (Սմիթ, 1974թ. 17)

*Արդյունավետու-
թյուն աշխատանքի
բաժանման միջոցով*

Աշխատանքի բաժանման առավելությունը նա բացատրում էր գնդասեղներ արտադրող գործարանի օրինակով: Մեկ առանձին բանվորը միայնակ կարող է արտադրել օրական միայն սակավաքանակ գնդասեղ: Եթե արտադրությունը բաժանվում է մի քանի աշխատանքային քայլերի և իրականացվում մի քանի մասնագիտացված բանվորների կողմից, ապա օրական կարելի է արտադրել մի քանի հազար գնդասեղ:

Վերջապես, Սմիթը հանդես էր գալիս ազատ առևտրի և ազատ մրցակցության օգտին: Ինչպես տարբեր բանվորների միջև աշխատանքի բաժանումը, նույնպես և իրար հետ ազատորեն առևտուր անող կողմերը կարող են մասնագիտանալ այն բանում, ինչին նրանցից յուրաքանչյուրն ամենալավն է տիրապետում: Այդ կերպ կարող է աճել ընդհանուր արդյունավետությունը: «Շուկայի անտեսանելի ձեռքի» միջոցով բաժանումն, ըստ Սմիթի, առավել արդյունավետ է և ավելի շատ խթաններ կարող է ստեղծել, քան տնտեսության կենտրոնական պլանավորման ցանկացած ձև: Որպես օրինակ Սմիթը նկարագրում էր Շոտլանդիայի և Պորտուգալիայի միջև առևտուրը:

*Բարեկեցություն
ազատ առևտրի և
մրցակցության
միջոցով*

*Առևտրի միջոցով
օգտվել «համեմա-
տական» առավելու-
թյունից*

Եթե Շոտլանդիան հատկապես հաջող բուրդ էր արտադրում, ապա Պորտուգալիայում գինի էր էժան արտադրվում: Դա Սմիթն անվանում էր համեմատական առավելություն: Եթե երկու երկրները, մեծ ծախսերով ինչպես գինի, այնպես էլ բուրդ արտադրելու փոխարեն, կենտրոնանան իրենց արտադրանքի վրա և առևտուր անեն, ապա երկուսն էլ կշահեն:

Այս միտքը հեռանում էր իր ժամանակի այն պատկերացումից, թե առևտուրը զրոյական գումարով խաղ է: Հեգևանքի բերումով Սմիթը որպես մաթսային պաշտոնյա մեկ տասնամյակ շարունակ պատասխանատու էր մերկանտիլիստական առևտրային կանոնների պահպանման համար:

*Ի՞նչ է նշանակում
«ինքնահոսի
թողնել» («Laissez-
faire»):*

Բարեկեցության աղբյուրները (շահույթի ձգտելը, աշխատանքի բաժանումը, առևտուրը և մրցակցությունը) գործի դնելու համար պետությունն, ըստ Սմիթի, պետք է միայն անուղղակիորեն ազդի շուկայի վրա և նրան թողնի հնարավորինս ազատ ասպարեզ: Դրանից բխում էր, ասպես կոչված, «ինքնահոսի թողնելու»² ուսմունքը: Համաձայն դրա՝ պետությունը պետք է սահմանափակվի հանրային անվտանգության, երկրի պաշտպանության, իրավական անվտանգության, ենթակառուցվածքների և կրթության ապահովմամբ, իսկ մնացյալ պարագայում չպետք է միջամտի շուկային: Այդ դեպքում կզարգանա հնարավոր առավելագույն արտադրողականություն:

*Արտադրական
ուժերը կապանքնե-
րից ազատելը*

Սմիթն ստեղծեց տնտեսության ազատականացման համար տեսական հիմքը: Տնտեսություն, որն առաջին հերթին 19-րդ դարում, ի դեմս արդյունաբերականացման, շղթայագերծեց մինչ այդ չտեսված արտադրական ուժեր: Սմիթն, անշուշտ, ելնում էր այն բանից, որ ազատ շուկայական տնտեսությունը մեխանիկորեն հավասարակշռության կգա, և չէր կանխատեսում ճգնաժամերն ու հետաճը:

*Աշխատանքի
բաժանման
հիմնախնդիրները*

Ինչպես և Մարքսն էր իր ուսմունքում վերլուծում բանվորների շահագործումն ու աշխատանքի օտարացվածությունը, նաև Սմիթն էր տեսնում կապիտալիզմի ստվերոտ կողմերը: Նա երկյուղում էր, որ աշխատանքի ավելի ու ավելի փոքրամասն բաժանումը կհանգեցնի մարդկանց բթացմանը, և որպես հակակշիռ պահանջում էր ավելի շատ կրթական առաջարկներ:


*Սմիթ, Էթիկական
զգացմունքների
տեսությունը*

Իր «Էթիկական զգացմունքների տեսությունը» (1759թ.) առավել քիչ հայտնի երկրորդ մեծ աշխատության մեջ Սմիթը նկարագրում է մարդկանց՝ որպես կոլեկտիվի կարիք ունեցող եակների, պարկեշտ ու ազնիվ վարք դրսևորելու և սեփական տես-

2 Laissez faire /ֆրնս./ նշանակում է մոտավորապես «ինքնահոսի թողնել»:

սիրությունը հաղթահարելու պահանջմունքը: Դրանով Սմիթը հերքում է նրանց, ովքեր կամենում են նրան իբրև գլխավոր վկայի ներգրավել զուտ օգուտն առավելագունացնող *homo oeconomicus*-ի մարդկային կերպարի համար:

Սմիթն ինքն իրեն համարում էր առաջին հերթին ոչ թե տնտեսագետ, այլ բարոյագետ և շեշտում պարկեշտության, վստահության և ազնվության նշանակությունը տնտեսական գործունեությունն իրականացնելիս:



Նկ. 1. Սմիթ. Համընդհանուր բարեկեցություն շահախնդրության միջոցով

Սմիթի վրա հենվող դասական տնտեսական ազատականության տեսությունն իշխող կարծիք էր մինչև 1929 թվականի համաշխարհային տնտեսական ճգնաժամը: Միայն դրանից հետո համընդհանուր կասկած առաջացավ, թե շուկաները, կառավարվելով անտեսանելի ձեռքի միջոցով, արդյո՞ք մշտապես հավասարակշռության են գալիս: Խոր ճգնաժամի և դրան հաջորդող տևական մեծ գործազրկության համար ինքնահոսի թողնելու տրամաբանական մոդելները համոզեցուցիչ չէին: Դասական տնտեսական ազատականությունը հիմքում ցնցում ապրեց: Նոբելյան մրցանակի դափնեկիր Ջոզեֆ Յու. Ստիգլիցը, հետադարձ հայացք նետելով, նկատել է, որ անտեսանելի ձեռքի խնդիրն այն է, որ միայն այն պատճառով է անտեսանելի, որ հաճախ ամենևին էլ այդտեղ չէ (Ստիգլից, 2002թ.):

Սմիթի թողած
ազդեցությունը

Մի քանի տասնամյակ հետևեց հաջորդ մասում նկարագրված քեյնսականության փուլը: Միայն սովետային գոյության տարիներից հետո տնտեսական լիբերալիզմի գաղափարախոսությունը, հանձինս Նորագատականների, 1980-ական թվականներից վերածնունդ ապրեց:

Չիկագոյի դպրոցը

Սմիթի գաղափարները վերստին կյանքի կոչող, հետագա զարգացման ենթարկող և հանրահռչակող տնտեսագետներից Ֆրիդրիխ Աուգուսթ ֆոն Յայթը և Միլթոն Ֆրիդմենը ամենահայտնիներն են: Վերջինս հիմնադրել է տնտեսական-ազատական մի գաղափարախոսություն, որն անվանվում է Նաև «Չիկագոյի դպրոց» (Ֆրիդմենը՝ որպես պրոֆեսոր, դասախոսում էր Չիկագոյում): Բայց Նորագատականները կրճատեցին Սմիթի գաղափարները՝ այն հասցնելով Նրա վիճակագրությանը և շուկայի օգտին հանդես գալուն: Նրա «Էթիկական զգացմունքների տեսությունը» ֆոն Յայթը և Ֆրիդմենը անուշադրության մատնեցին:

Նոր մեկնաբանություն Թեոչերի և Ռեյգանի կողմից

Նրանց կողմից Սմիթի գործերի նոր մեկնաբանությունն զգալի ազդեցության հասավ առաջին հերթին ԱՄՆ-ում նախագահ Ռոնալդ Ռեյգանի և Մեծ Բրիտանիայում վարչապետ Մարգարեթ Թեոչերի օրոք: Երկուսի քաղաքականության լեյտմոտիվն էր. «Պետությունը հիմնախնդրի լուծման մաս չէ, պետությունը հիմնախնդիրն է»: Դա նշանակում էր ապակարգավորում, մասնավորեցում և պետական միջոցառումների կրճատում:

Վաշինգտոնյան կոնսենսուս

Շուկային հավատացողները մեծ ազդեցություն ունեին Նաև Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի վարած քաղաքականության վրա: Այսպես կոչված Վաշինգտոնյան կոնսենսուսի շրջանակներում այդ հաստատությունները տնտեսական ազատականության գաղափարախոսությունը տարածեցին Նաև, ի թիվս այլոց, Լատինական Ամերիկայում, հետկոմունիստական պետություններում, իսկ 1997 թվականի սափական ճգնաժամից հետո՝ Նաև Հարավարևելյան Ասիայում: Նաև ֆինանսական շուկաների ապակարգավորումն էր Էսպես խրախուսվում այս գաղափարախոսության կողմից: Դրա հետևանքը տասնամյակների ընթացքում ֆինանսական համաշխարհային կառույցի ծանրագույն ճգնաժամը և համաշխարհային հետաճն էին 2008 թվականից սկսած: Ճգնաժամի չափերը և խորությունը հանգեցրին տնտեսական ու քաղաքական վերամտածողության: Տնտեսական ազատականության գաղափարախոսության փոխարեն, որին շուկան կուրորեն վստահում էր, ներկայումս գերիշխող են դառնում այն գաղափարախոսությունները, որոնք ելևում են պետության և շուկայի նոր հավասարակշռությունից և տնտեսության նկատմամբ քաղաքականության առաջնայնությունից:

Լրացուցիչ ընթերցանության համար.

Յելեն Վիկթեր և Թոմաս Ռոմմել (1999թ.). Ադամ Սմիթն սկսնակների համար: Ազգերի բարեկեցությունը. ընթերցանության ներածություն, Մյունխեն

2.2 Կապիտալիզմի քննադատությունը Կարլ Մարքսի կողմից

Կարլ Յայնրիխ Մարքսը (1818 - 1883) գերմանացի փիլիսոփա և բաղադրական լրագրող էր: Ինչ լիբերալ տնտեսագետներն ազատ շուկայի զարգացման միջոցով տեսնում էին որպես կայունություն և աճ, Կարլ Մարքսը դա նկարագրում էր որպես դասակարգային պայթյար, շահագործում, թշվառացում և ճգնաժամերով հղի համակարգ, որը կարող է վերածվել պրոլետարական հեղափոխության:

Մարքսի տնտեսագիտական ամենակարևոր հրապարակումը մասամբ միայն նրա մահվանից հետո լույս ընծայված «Կապիտալը» աշխատությունն է, որի երեք հատորները լույս են տեսել 1867 և 1894 թվականների միջև: Զաղաքական մեծ ազդեցություն է ունեցել 1848 թվականին հրատարակված «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը»:

յուն և քայքայիչ, այն տանում է ոչ թե «ազգերի բարեկեցության», այլ բանվորների գերակշիռ մեծամասնության թշվառացման:

Մարքսի գաղափարներն ըմբռնելու համար պետք է հասկանալ 19-րդ դարում վաղ արդյունաբերականացման շրջանում բանվորների ծանր կենսապայմանները: Դուլիսբուրգի Արդյունաբերական մշակույթի թանգարանում պահվող մի տեքստից ստանում ենք միանշանակ տպավորություն (Բայեր և ուրիշներ 2002թ., 18).

«Եթե ունևոր շրջանները քաղաքի եզրին առանձնատների թաղամաս էին կառուցում, ապա բանվորների համար անբարեշուք վարձակալական շենքեր էին կառուցվում ամայի փողոցաշարքերում, որոնք ամբողջովին լեփ-լեցուն էին, հակահիգիենիկ և չափազանց բարձր գներով: [...] Օրինակ, հաճախ մի ամբողջ ընտանիք և մի օտար մարդ մի սենյակում, ընդ որում, մի քանի մարդ փոխմիփոխ կիսում էին մի մահճակալ: Քնելու ռիթմը համապատասխանեցվել էր աշխատանքային հերթափոխներին: Գործարաններում տիրող աշխատանքային պայմանները համապատասխանեցված էին մեքենաներին, որոնց պետք է հարմարվեին դրանք սպասարկող բանվորները: Շաբաթական 70 աշխատանքային ժամը կանոն էր, տեքստիլ արդյունաբերության մեջ՝ նույնիսկ 80 ժամը: Տարածված էր մանկական աշխատանքը, սոցիալական ապահովություն գրեթե չկար, առողջապահական սպասարկումը թերի էր:»

Մարքսի վերաբերմունքը Սմիթի նկատմամբ

Ժամանակային համատեքստը: Կաղարդյունաբերականացման շրջան, 19-րդ դարի կեսեր

Նկարագրություն, որը նույն կամ նման ձևով դեռ այսօր էլ, անշուշտ, վերաբերում է շատ աղքատ երկրներում տիրող կենսական և աշխատանքային պայմաններին:

*Շահագործումը՝
որպես կապիտա-
լիզմի հետևանք*

Այդ ոչ մարդկային աշխատանքային ու կենսական պայմաններում Մարքսը տեսնում էր ոչ թե դժբախտ պատահականություն, այլ կապիտալիզմի անհրաժեշտ հետևանք: Նա վերլուծում էր, որ ազատ շուկան անխուսափելիորեն հանգեցնում է թշվառության ու շահագործման, քանի որ կապիտալիստների շահույթը բխում էր բանվորների շահագործումից:

*«Հավելյալ արժեքի»
հասկացությունը*

Մարքսի տեսության մեջ առանցքային է «հավելյալ արժեքի» հասկացությունը, որը նա ներկայացրել է իր «Կապիտալը» աշխատության 1867 թվականին լույս տեսած առաջին հատորում և մանրամասնել հետմահու հրատարակված մյուս հատորներում: Հավելյալ արժեքն այն արժեքն է, որը ձեռնարկատերը ներդրված կապիտալից դուրս փոխանակմամբ կարող է իրացնել որպես շահույթ: Այսինքն՝ եթե նա 100 եվրո է ներդրել արտադրության մեջ (մասնային հիմունքներով աշխատավարձ՝ ապրանքի և բոլոր արտադրական միջոցների համար), բայց շուկայում իրացնում է 110 եվրո: Այդ հավելյալ արժեքը կանոնավորապես, ըստ Մարքսի, կարող է ձևավորվել միայն մարդկանց արժեքաստեղծ աշխատանքով: Կամ, այլ կերպ ասած, երբ բանվորն ավելի շատ արժեք է ստեղծում, քան ստանում է որպես ռոճիկ:

Աշխատանքի արժեքի մարքսյան տեսության համաձայն՝ **հավելյալ արժեքը** ձևավորվում է այն շահույթից, որը ձեռնարկատերն ստանում է բանվորի աշխատանքից՝ աշխատավարձային ծախսերը և արտադրական միջոցների համար ծախսումները հանելուց հետո: Այսպիսով, հավելյալ արժեքը նույնանշանակ է բանվորների շահագործմանը: Ընդ որում, Մարքսը դեռ տարբերակում էր բացարձակ հավելյալ արժեքը, որն առաջանում էր պարզապես հավելյալ աշխատանքի (առավել երկար աշխատաժամանակի) միջոցով, և հարաբերական հավելյալ արժեքը, որը ձեռք է բերվում արտադրողականության բարձրացման միջոցով: (Տեստեսագիտական բառարան, 2009թ.)

Մարքսը նկարագրում էր, որ բանվորներն ընդամենը այնքան ռոճիկ էին ստանում, որ կարողանային գոյատևել: Կապիտալիստներն, ընդհակառակը, հարստանում էին այդ ռոճիկի և ստեղծված հավելյալ արժեքի տարբերությունից:

Նա ելնում էր այն բանից, որ կապիտալիստը, մղվելով ավելի ու ավելի սրվող մրցակցությունից, փորձելու է ավելացնել այդ հավելյալ արժեքը: Ռոճիկները շարունակ իջեցվելու են, աշխատաժամանակը երկարացվելու է, և մեծանալու է մեքենաների օգտագործումը: Հետևանքը լինելու է գործազրկության աճը: Միաժամանակ մրցա-

3 Շնորհակալություն ենք հայտնում Բոննի J.H.W. Dietz հրատարակչությանը սույն հատորում տարբեր հասկացություններ Տեստեսագիտական բառարանից նախապես օգտագործելու հնարավորությունը ընձեռնելու համար:

**Լրացուցիչ ընթեր-
ցանության համար.**


*Ֆրյոբեր Հափիե,
Գուստավ Հորն,
Կիմ Օթթո (2009թ.),
Տեստեսագիտական
բառարան, հասկա-
ցություններ, թվեր,
առնչակցություններ,
Բոնն³*

կիցները հետզհետե դուրս են մղվելու շուկայից: Վերջապես հասարակությունը շարունակ փեռեկվելու է չունևորների և մարդկանց մի փոքրիկ խմբի, որոնց ձեռքում է կենտրոնանալու կապիտալը:

«Հավելյալ արժեքի» հասկացությունից զատ՝ Մարքսն իր 1844 թվականին գրած «Փիլիսոփայական-տնտեսագիտական ձեռագրերում» ստեղծել է նաև «աշխատանքի օտարացում» հասկացությունը: Դրանում Մարքսը, Սմիթի նման, բացահայտել է աշխատանքի արդյունավետ բաժանման սովերային կողմը: Չանգվածային արտադրության մեջ բանվորը մասնակցում է ընդամենը փոքրամասն և միապաղաղ արտադրական գործընթացների: Վերջում արտադրված ապրանքի հետ կապից և դրանով պայմանավորված հաճույքից նա զրկվում է:

Մրցակցությունը և աշխատանքի բաժանումը Սմիթի համար առաջընթացի աղբյուրն էին: Մարքսն, ընդհակառակը, մրցակցությունը և աշխատանքի բաժանումը համարում էր կապիտալիզմի հիմնական չարիք և շահագործման ու օտարացման պատճառ: Նա տեսնում էր, որ արտադրական առաջընթացներն իր ժամանակ օգուտ էին բերում միայն կապիտալի տերերին, մինչդեռ բանվորները թշվառանում էին:

«Օտարացման»
հասկացությունը



Ակ. 2. Մարքսյան փաստարկման հիմնական կառուցվածքը

*Կապիտալիզմի
անկայունությունը*

Շահույթին կողմնորոշված տնտեսակարգը, ըստ Մարքսի, անկայուն էր և ճգնաժամահարույց: Նրա կարծիքով, ի վերջո, դա կարող է հանգեցնել շահագործվածների հեղափոխության⁴:

«Արտադրամիջոցների կենտրոնացումը և աշխատանքի հանրայնացումը հասնում են մի կետի, որտեղ դրանք իրենց կապիտալիստական պատյանով անտանելի են դառնում: Այդ պատյանը փշրվելու է: Կապիտալիստական մասնավոր սեփականության ժամը հասել է»: (Մարքս 1991թ., 684 և հետո)

*Արտադրամիջոցների
նկատմամբ մասնավոր
սեփականությունը
որպես դասակարգային
հասարակության
հատկանիշ*

Կարլ Մարքսի ուսմունքի վերջին կենտրոնական հասկացությունը, որին նա անդրադառնում է առաջին հերթին 1848 թվականի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստում», «սեփականության» հասկացությունն է, որի տակ այստեղ հասկացվում է արտադրամիջոցների նկատմամբ մասնավոր սեփականությունը:

Արտադրամիջոցների նկատմամբ մասնավոր սեփականությունը Մարքսի համար կապիտալիզմի դասակարգային հասարակության էական հատկանիշ է: Իր վաղ գործերում՝ Նրա կողմից կանխատեսված պրոլետարական հեղափոխությունից հետո, ըստ Նրա, այդ սեփականությունը կվերացվի: Բանվոր դասակարգը հազիվ գոյությունն ապահովող իր ռոճիկների աննշան չափի պատճառով առանց այդ էլ չունի հիշատակության արժանի սեփականություն ձեռք բերելու հնարավորություն: Իսկ կապիտալիստերն, ընդհակառակը, իրենց սեփականությունը ձեռք են բերել շահագործման միջոցով:

*Քաղաքական
պահանջներ
«Կոմունիստական
մանիֆեստում»*

Ուստի և, նա Կոմունիստական կուսակցության մանիֆեստում պահանջում էր, մասնավորապես.

- վարկի կենտրոնացում պետության ձեռքում՝ պետական կապիտալով և բացառիկ մենաշնորհով ազգային բանկի միջոցով,
- տրանսպորտի կենտրոնացում պետության ձեռքում,
- ազգային գործարանների, արտադրական գործիքների շատացում, բոլոր հողերի մշակում և բարելավում՝ ըստ կոլեկտիվ պլանի (հմմտ. Մարքս / Էնգելս, 1987թ., 54)

*Պետականացման
հիմնախնդիրները*

Մարքսի ամենակարևոր մեկնաբան Ֆրիդրիխ Էնգելսը հետագայում, իհարկե, տեսնում էր նման պետականացումների նաև թերությունները. «Որքան ավելի շատ արտադրամիջոցներ է այն (պետությունը) դարձնում իր սեփականությունը, այնքան

4 Մարքսագիտության մեջ տարբեր գնահատական է տրվում այն հարցին, արդյոք Մարքսը հեղափոխությունն անխուսափելի է, թե՞ ընդամենը հնարավոր պատմական զարգացում էր համարում: Չամապատասխան դիրքորոշման համար վճռորոշ է այն հարցը, արդյոք տարբերակվում են զանազան ստեղծագործական փուլեր, թե՞ նկատի է առնվում ամբողջ ստեղծագործությունը: Լրացուցիչ ընթերցման համար տես Չայնրիխ (2004թ. 169-178)

ավելի շատ է դառնում իրական ընդհանուր կապիտալիստ, այնքան ավելի շատ քաղաքացիներ է շահագործում: [...] Կապիտալային հարաբերությունը չի վերացվում, այն ավելի շուտ ծայրահեղության է հասցվում» (Էնգելս, 1988թ., 553 և հետո):

Տնտեսագետ Ջոն Զեննեթ Գելբրեյթին է վերագրվում այս կապակցությամբ հետևյալ մեջբերումը. «Կապիտալիզմում մարդը շահագործում է մարդուն: Կոմունիզմում ճիշտ հակառակն է»: Այնպիսի պետություններ, ինչպիսիք էին Խորհրդային Միությունը և Գերմանիայի Դեմոկրատական Զանրապետությունը, որոնք հետևեցին Կոմունիստական մանիֆեստի պահանջներին՝ կենտրոնացնելու և հանրայնացնելու բանկերը, տրանսպորտը և արտադրամիջոցները, դրանով ձախողվեցին:

Մարքսը պատմությունը մեկնաբանում էր որպես դասակարգային պայքարների հաջորդականություն, որն իր բարձրակետին է հասնում բուրժուազիայի և պրոլետարիատի բախմամբ և կարող է ավարտվել պրոլետարական հեղափոխությամբ: Նա զարգացրել է անդասակարգ հասարակության ուտոպիան՝ առանց մրցակցության և արտադրամիջոցների նկատմամբ մասնավոր սեփականության:

Բայց պատմությունը ցույց տվեց, որ բանվորների՝ Մարքսի կողմից նկարագրված թշվառացումը և կապիտալի տերերի մոտ սեփականության հարաճուն կենտրոնացումն անխուսափելի չեն: Բարեկեցության ձեռքբերումները կարող են առավել արդար բաշխվել ոչ վերջին հաշվով արհեստակցական միություններում բանվոր-բանվորուհիների կազմակերպմամբ ու համերաշխությամբ և սոցիալական պետության ստեղծմամբ ու կայացմամբ:

Կապիտալի համակենտրոնացումը փշրվեց ավստրիացի տնտեսագետ Յոզեֆ Շումպերթերի կողմից նկարագրված «ստեղծագործական քայքայմամբ»: Նա նկարագրում է, թե տնտեսական ձեռնարկություններն ինչպես են շարունակ նորովի կազմակերպվում նորարարության, մրցակցության, ճգնաժամերի կամ նոր առևտրային շուկաների շնորհիվ:

Մարքսի կողմից հաճախ գործածված «**բուրժուազիա**» և «**պրոլետարիատ**» հասկացությունները ներկայացնում են իրար հակադիր դասակարգերը: «Պրոլետար» հասկացությունն ածանցվում է լատիներեն proletarius-ից («ժողովրդի ամենաստորին շերտին պատկանող»): «Բուրժուազիա» հասկացությունը սերում է ֆրանսերենից և նշանակում է «տնտեսական քաղաքացիներ»:

*Պատմությունը՝
որպես դասակարգային պայքարների
հաջորդականություն*

*Թշվառացումն
անխուսափելի չէ*

*Շումպերթեր.
«ստեղծագործական քայքայում»*

«Նոր, օտար կամ տեղական շուկաների յուրացումը և արհեստավորական ձեռնարկության ու գործարանի կազմակերպական միավորումը նման կոնցեռնների մեջ [...] պարզաբանում են նույն գործընթացը [...], որն անընդհատորեն ներսից հեղափոխականացնում է տնտեսական կառուցվածքը, անընդհատորեն փշրում հին կառուցվածքը և անընդհատորեն ստեղծում նորը: «Ստեղծագործական քայքայման» այդ գործընթացը կապիտալիզմի համար էական փաստն է»: (Շումկեթեր, 1942թ., 137 և հետո)

Ավտոմոբիլային արդյունաբերությունը փոխարինում է կառապանին, պայտագործին ու ախոռապանին: Գրամեքենա արտադրողն ստիպված է դադարեցնել արտադրությունը, նրան փոխարինելու է գալիս համակարգիչ արտադրողը: Սրանք օրինակներ են ստեղծագործական քայքայման, որը մի կողմից խրախուսում է նորարարությունները, բայց և մյուս կողմից ստեղծում նոր անվստահություններ և պահանջում մարդկանց չափազանց մեծ ճկունություն:

Պետական սոցիալիզմի ձախողումը

Պետական սոցիալիզմի փորձառքը, որը վկայակոչում էր Մարքսին, ձախողվել է և վարկաբեկել իր տեսաբանին: Արդյո՞ք դրանով պետք է հերքված համարել տեսությունը: Փաստ է, որ շուկայական արդյունավետության ու մասնավոր սեփականության վրա հիմնվող տնտեսակարգի ոչ մի գործող այլընտրանք մինչ այժմ պրակտիկայի թեսթը չի անցել:

Վերլուծության գոյատևումը

Մարքսը որպես վերլուծաբան ավելի լավ էր, քան որպես խորհրդատու: Նրա դասերից գործնականում կիրառելի ոչ մի լուծման մոտեցում չի բխում, և նրա կանխատեսումները չեն իրականացել: Բայց նրա վերլուծությունները դեռ շարունակում են արժանանալ ուշադրության: Մարքսը, ինչպես ոչ ոք, հայացքը սրում է անսանձ կապիտալիզմի վտանգների և ճգնաժամերի վրա:

Ինչպե՞ն դասակարգել Մարքսին: Վիլլի Բրանդթ. «ձգտումն առ ազատություն»

Ինչպե՞ն դասակարգել Մարքսին: Գուցե այնպես, ինչպես Վիլլի Բրանդթն էր 1977 թվականին Տրիո՝ Կարլ Մարքսի տուն-թանգարան այցելության ժամանակ պահանջել. «Մարքսի նկատմամբ ամենաարդարացին կլինի, եթե նա (դրական, ինչպես և բացասական իմաստով) իջեցվի անձեռնմխելիության հարթակից: Մարքսից ինչ էլ որ երբևէ արել են կամ ուզեցել են անել, այդուհանդերձ, ազատության, ճորտությունից ու անչափահասի կախվածությունից ազատագրման ձգտումը եղել է նրա մտածողության ու գործունեության մոտիվը:

Լրացուցիչ ընթերցանության համար.
*Ֆրենսիս Ուին (2008թ.),
Կարլ Մարքսի մասին:
Կապիտալը, Մյունխեն*

2.3. Ջոն Մեյնարդ Բեյնս. Կապիտալիզմի կառավարումը

Ջոն Մեյնարդ Բեյնսը (1883 - 1946) բրիտանացի տնտեսագետ էր և էական ազդեցություն է ունեցել 20-րդ դարի տնտեսագիտական մտքի վրա:

Իր «Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսությունը» (1936թ.) ազդեցիկ աշխատության մեջ նա կասկածի տակ է առել շուկաների ինքնաբուժման գործունեությունը և հիմնել քեյնսականությունը, որը ձգտում է կապիտալիզմի կառավարման:

Բացի այդ՝ Բեյնսը մասնակցել է Բրեթեյնսկուլոսյան համակարգի հայեցակարգի մշակմանը, որը վճռորոշ դեր է խաղացել հետպատերազմյան շրջանի համաշխարհային տնտեսության մեջ և ֆինանսական շուկաներում:

Սյսպիսով, ինդրահարույց են ինչպես հնարավորինս քիչ պետական ազդեցությամբ ազատ կապիտալիզմի մասին Ադամ Սմիթի ուսմունքը, այնպես էլ Կարլ Մարքսի կողմից մրցակցության և արտադրամիջոցների նկատմամբ մասնավոր սեփականության մերժումը: Կամ, արդյոք, համակարգվող կապիտալիզմի այն միջին ճանա-

Բեյնսը՝ միջին ճանապարհ

պարիչը, որն օգտագործեր շուկայի արտադրական ուժերը՝ միաժամանակ հավասարակշռելով և մեղմացնելով դրա քայքայիչ ուժերը:

Բրիտանացի տնտեսագետ Ջոն Մեյնարդ Բեյնսը վերլուծել է կապիտալիզմի երկդիմությունը, որը թեև արդյունավետ և արտադրողական է, բայց կառուցվածքային առումով՝ անկայուն: Նա թեև համոզված էր սեփականության ու մրցակցության վրա հիմնվող շուկայակարգի մեջ, սակայն քննադատորեն էր մոտենում Սմիթի ուսմունքները վկայակոչող Նորդասական մտածողության դպրոցին:

Բեյնսի կողմից Նորդասական մտածողության դպրոցի քննադատությունը

Օրինակ, նա քննադատում էր, «որ այդ դպրոցի լուռումուռը նախադրյալներն իրականացել են հազվադեպ կամ երբեք, այն արդյունքով, որ չի կարող լուծել իրական աշխարհի տնտեսական խնդիրները» (Բեյնս, 1966թ., 319):

1929 թվականի ծանր համաշխարհային ճգնաժամի առաջությամբ Բեյնսը կասկածի տակ առավ նաև «անտեսանելի ձեռքը»: Շուկան ոչ թե վերստին կայունացել էր, ինչպես պետք էր ենթադրել ըստ Սմիթի, այլ գործազրկությունը հասել էր բարձր մակարդակի, և տնտեսությունը տևական լճացման մեջ էր:

Կասկած «անտեսանելի ձեռքի» հանդեպ

Բեյնսն արձանագրել էր հետընթաց պարույր: Եթե ավելի քիչ ապրանքներ են արտադրվում, և մարդկանց ազատում են աշխատանքից, ապա դա անվտանգություն է առաջ բերում սպառողների ու արտադրողների մոտ, և ավելի քիչ փող է ծախսվում («խնայողություն վախից»): Պահանջարկն ավելի է ընկնում, ձեռնարկություններն ավելի քիչ են արտադրում և ավելի են կրճատում աշխատատեղերը,

Տնտեսական կայունության պարույրի վտանգ

մարդիկ սկսում են ավելի շատ ինսայդություն անել և այլն: Ճգնաժամն ավելի ու ավելի է սրվում, և տնտեսությունը կարող է տևական անկում ապրել: Համաշխարհային տնտեսական ճգնաժամից հետո, որի ժամանակ հենց դա էլ տեղի ունեցավ, այս բացատրությունը պարարտ հող գտավ: Թեյնսը ոչ միայն նկատեց իրավիճակներ, որոնցում ազատ շուկան չէր գործում, այլև, ի դեմս հակաշրջափոխային կառավարման, մշակեց դրան դիմակայող հայեցակարգ:

Պետության կողմից գործուն միջամտության պահանջ

Անկումային փուլում պետությունը պետք է միջամտի շուկային և փոխարինի մասնավոր պահանջարկը՝ ավելի շատ պարտք անելով և ավելի շատ փող ծախսելով: Կամ նա կարող է փող տալ անմիջապես քաղաքացիներին, օրինակ, հարկերի նվազեցմամբ: Անշուշտ, կա այն բանի վտանգը, որ այս միջոցառումն արդյունք չտա, եթե մարդիկ անվստահությունից շարունակեն ինսայդություն անել: Առավել արդյունավետ կլինի, եթե պետությունը միջոցներն ուղղակիորեն ծախսի, օրինակ, փողոցներ կամ դպրոցներ կառուցելով: Լրացուցիչ ծախսերի պարագայում ավելի շատ մարդիկ աշխատանքի կանցնեն, որոնք իրենց հերթին ավելի շատ կսպառեն, պահանջարկ կառաջացնեն և այդ կերպ գործի կդնեն դրական մի պարույր: Թեյնսը դա հետևյալ կերպ էր արտահայտում.


Պետության կողմից կոնյունկտուրայի կառավարում

«Եթե մենք ծախսենք ավելի քան հարյուր հիսուն միլիոն ֆունտ, ապա բոլոր մարդիկ կունենան ավելի բաժր եկամուտներ, և նրանք, ովքեր գործազուրկ են, ալևս գործազրկության նպաստի կարիք չեն ունենա: Դրանից զատ՝ այդ ծախսերն ահագին թվով մարդկանց կաշիսատեցնեն: Փողը տնտեսության մեջ կշրջանառվի և կծախսվի ամենատարբեր ապրանքների վրա և ոչ թե կկենտրոնանա ընդամենը մի քանի արդյունաբերությունների վրա»: (Թեյնս, 1939թ., մեջբերումն ըստ՝ Վայներթ, 2008թ.)

«Երկարաժամկետ հեռանկարում բոլորս մեռած կլինենք»

Դրանով նա հիմնավորեց այն բանի նկատմամբ հավատից հրաժարվելը, որ շուկան միշտ հավասարակշռության է գալիս, ինչպես Սմիթն էր ենթադրում: Հայտնի է նրա արդեն մեջբերված «Երկարաժամկետ հեռանկարում բոլորս մեռած կլինենք» արտահայտությունը: Դրանով նա քաղաքական պատասխանատվության կոչ էր անում, որ առավել կարևոր է այսօր աշխատատեղեր և աճ ապահովելը, քան վեհերոտ ապավինել ավելի լավ ապագայի և ինքնակարգավորվող շուկայի:

Բայց Թեյնսն ընդունում էր, որ շուկային միջամտելն իր մեջ ռիսկեր է պարունակում, քանի որ դժվար է գնահատել ճիշտ պահը և ճիշտ չափը: Այս առնչությամբ նա գրում է.



Նկ. 3. Քեյնսի փաստարկման կառուցվածքը՝ ընդհանուր գծերով

«Ավանառու փաստն այն գիտելիքի հիմքի խիստ կասկածելիությունն է, որի վրա հարկադրաբար արվում են ենթադրվող արդյունքների մեր գնահատումները: Ներդրումից ստացվելիք հասույթը մի քանի տարի անց որոշող գործոնների վերաբերյալ մեր իմացությունը սովորաբար քիչ է և հաճախ՝ անըշանակ»: (Քեյնս, 1966թ., 126)

Նրա վերլուծություններն ու պետության կողմից շուկային միջամտելու առաջարկությունները նրա ժամանակի համար այնքան ազդեցիկ էին, որ խոսվում է նաև «Քեյնսյան հեղափոխության» մասին, որով նա ընդդիմացավ ինչպես Սմիթին, այնպես էլ Մարքսին: Արձագանքները համապատասխան էին: Ազատականներն ու պահպանողականները Քեյնսի մասին ասում էին, թե նա ծպտված սոցիալիստ է: Ընդհակառակը, մարքսիստները նրան մեղադրում էին չափից ավել շուկայաիվատության համար: Փաստ է, որ Քեյնսը ժամանակին ընդդիմադիր էր ոչ միայն

Այսպես կոչված
Քեյնսյան հեղափո-
խությունը

Գերմանիայում ձևավորվող դիկտատուրաներին. նա իր առաջարկություններով ցանկանում էր պահպանել ժողովրդավարությունը:

«Այսօրվա ավտորիտար պետական համակարգերը գործազրկության խնդիրը կարծես թե լուծում են արտադրողականության և ազատության հաշվին: Չաստատ է, որ աշխարհն այսօրվա կապիտալիստական անհատապաշտության հետ (աշխուժացման կարծ ժամանակահատվածները չհաշված), իմ կարծիքով, անխուսափելիորեն կապված գործազրկությունն այլևս երկար չի հանդուրժելու: Խնդրի ճիշտ վերլուծությամբ պետք է որ հնարավոր լինի բուժել հիվանդությունը և միաժամանակ պահպանել արտադրողականությունն ու ազատությունը»: (Զեյնս, 1966թ., 321)

«Ղոգեբանական օրենքը»

Բացի այդ՝ Զեյնսը «հոգեբանական օրենքով» ստեղծեց հիմնավորում, թե ինչու վերաբաշխումը կարող է լինել ոչ միայն սոցիալապես ցանկալի, այլ նաև տնտեսապես արդյունավետ: Դիմամիկ տնտեսության անհրաժեշտ է բավարար չափով պահանջարկ: Զանի որ աճող եկամտի հետ խնայողության մակարդակն աճում է, իսկ սպառման հակումը՝ նվազում, ապա իմաստալից է, երբ քիչ վաստակողները, որոնց խնայողական մակարդակն առավել ցածր է, ավելի շատ եկամուտ ստանան:

Բրեթթոնվուդյան համակարգ: 1944 թվականին ամերիկյան Բրեթթոն Վուդս ամոռաբանային բաղաբում կայացած խորհրդածրոլի ժամանակ որոշում կայացվեց հետպատերազմյան շրջանի միջազգային ֆինանսական ճարտարապետության վերաբերյալ: Կորիզը միջազգային արժուբային այնպիսի համակարգի ստեղծումն էր, որի պարագայում փոխարժեբային տատանումները զսպվում էին ամերիկյան դոլարին կապելու միջոցով: Որպես միջազգային վարկերի տրամադրման ու ֆինանսական շուկայի կարգավորման հաստատություններ ստեղծվեցին Արժուբայի միջազգային հիմնադրամը (ԱՄԳ) և Չամաշխարհային բանկը: Բրեթթոնվուդյան համակարգը գոյություն ունեցավ մինչև 1973 թվականը: Արժուբայի շուկայում տիրող խառնակություններից հետո փոխարժեբների կապվածությունը դոլարին հարկադրաբար վերացվեց: Դրանով նվազեցվեց ֆինանսական շուկայի կայունությունը:

Զեյնսի թողած ազդեցությունը 20-րդ դարի վրա

Վերջապես, Զեյնսը վճռորոշ դեր է խաղացել, ասպես կոչված, Բրեթթոնվուդյան համակարգի ձևավորման ժամանակ:

Ուրիշ ոչ մի տնտեսագետ այնքան ազդեցություն չի թողել 20-րդ դարի վրա, որքան Զեյնսը: Զեյնսի առաջարկությունները նպատակաուղղված ձևով ԱՄՆ-ում առաջին անգամ իրագործվել են դեմոկրատ նախագահ Ֆրանկլին Դ. Ռուզվելթի կողմից 1933 թվականից նախաձեռնված “New Deal”-ում: Նախ նշանակալիորեն ավելացվեցին հանրային ոլորտում ներդրումները, օրինակ, ենթակառուցվածքների համար: Այնուհետև սոցիալական վճարների բարձրացման միջոցով զարկ տրվեց սպառմանը, քանի որ քիչ եկամուտ ունեցող կամ եկամուտ չունեցող մարդիկ դրսևորում են խնայողության սոսկ ցածր մակարդակ: Զեյնսի ուսմունքը մինչև 1970-ական թվականները տարածված տեսական կարծիքն էր: Գերմանիայում դրա ներկայացուցիչը հատկա-

Ստագֆլյացիա. Լճացման (Stagnation) և սղաճի (Inflation) ժամանակային համընկնումը (Տնտեսագիտական բառարան, 2009թ.)

պես Կարլ Շիլլերն էր, որը 1966-1972 թվականներին Գերմանիայի ֆինանսների և Էկոնոմիկայի սոցիալ-դեմոկրատ նախարարն էր: Այդ ժամանակ Նույնիսկ ԱՄՆ պահպանողական նախագահ Ռիչարդ Նիքսոնն էր ասում. «Մենք հիմա բոլորս բեյնսականներ ենք»:

Բայց 1970-ական թվականների կեսերից սկսած բեյնսականությունն ընկավ ճգնաժամի մեջ: Մի կողմից, հակաշրջափոխային բյուջետային քաղաքականությունը չէր գործում այնպես, ինչպես Քեյնսն էր ուրվագծել: Թեև ճգնաժամային շրջաններում ծախսերն ավելացվում էին, բայց տնտեսապես բարվոք տարիներին բյուջետային պարտքերը չէին վերադարձվում: Այդ պատճառով կուտակվում էին պետական պարտքերը, իսկ ճեղքվածքային ծախսերի համար հնարավորությունները նվազում էին ճգնաժամից ճգնաժամ: Դրան ավելացան երկու նավթային ճգնաժամերը: Նավթի գների շեշտակի բարձրացմամբ առաջացավ արատավոր շրջան: Աշխատավարձերը բարձրացվում էին, բայց Էներգիայի գների բարձրացումը վերստին խժռում էր ավելացած եկամուտները, այնուհետև աշխատավարձերը դարձյալ բարձրացվում էին, ինչը հանգեցրեց սղաճի աճին, որն էլ իր հերթին ավելի բարձրացրեց աշխատավարձային ճնշումը: Պետական կոնյունկտուրային ծրագրերը ազդդեցություն չէին ունենում: Տնտեսությունը լճացավ գրեթե միաժամանակյա բարձր սղաճի պայմաններում (ստագֆլյացիա): Ասպարեզ եկան Նորագատականներ ու Նորդասականներ և շեշտադրում էին ձեռնարկութենամետ առաջարկային քաղաքականությունը: Ծախսերի նվազեցման միջոցով նստավայրային առավելությունները, բյուջեի համախմբմամբ ամրակայման և ինսայողական միջոցառումները պահի պահանջն էին:

Ազատական-տնտեսական քաղաքականության տարիներից հետո այժմ, մասնավորապես, ֆինանսական շուկայի ճգնաժամի պատճառով, որն սկսվեց 2007 թվականին, դարձյալ բաճրածայնվում է հիմնականում ապակարգավորված շուկային պետական միջամտությունների կոչը: Նկատելի է դիմադարձությունը դեպի Քեյնսը: Դա զարմանալի էլ չէ, քանզի միջազգային շուկաների մասին Քեյնսի գրածը հրատապ է, ինչպես երբեք:

«Չնարավոր է, որ սպեկուլյանտներն անվնաս լինեն, ինչպես օճառի պղպղակները՝ ձեռնարկատիրական մղումի մշտական հոսանքի վրա: Բայց վիճակը լրջանում է, եթե ձեռնարկատիրական մղումը դառնում է սպեկուլյացիայի հորձանտի վրայի պղպղակը: Եթե որևէ երկրի կապիտալի զարգացումը դառնում է խաղատան գործունեության կողմնակի արտադրանք, ապա աշխատանքը կանխատեսելիորեն վատ է կատարվելու»: (Քեյնս, 1966թ., 134)

Քեյնսականության հիմնախնդիրները

Լրացուցիչ ընթերցանության համար.

Ռայնհարդ Բլումերթ (2007թ.), Ջոն Մեյ-Նարդ Քեյնս, Ռայնբերգ Յայնց-Յ. Բոկթրուկ (2006թ.), Քեյնսն ուզում էր փրկել կապիտալիզմը: Սըր Ջոն Մեյնհարդ Քեյնսի մահվան 60-ամյակի առթիվ, Բոնն

2.4 Տնտեսագիտության կատարելատիպերը

Առօրյա քաղաքական բանավեճերում Սմիթի, Մարքսի և Բեյնսի գաղափարները մշտակա են: Եթե որևէ ազատական քաղաքական գործիչ կամենում է պետությունը ներդաշնակ իր առանքային խնդիրների վրա և ասում է, թե պետությունը հիմնախնդրի լուծման մաս չէ, պետությունն է հիմնախնդիրը, ապա դա համապատասխանում է Ադամ Սմիթի մտածողությանը: Անարգել գլոբալիզացված կապիտալիզմի շրջանում, երբ շուկաներն ավելի ու ավելի հաճախ են խաթարվում, վերստին հրատապ են դառնում շուկայական տնտեսության կառավարման նպատակով քեյնսյան լուծումնային մոտեցումները: Իսկ զարգացող երկրներում գործարանների պատկերները տեսելիս, որտեղ բանվորներն օրը 14 ժամ կեղեքիչ ռոճիկով հագուստներ են կարում, միտքդ են գալիս Մարքսի վերլուծությունները:

Դա զարմանալի չէ, քանի որ կատարելատիպային (idealtypisch)⁵առումով Սմիթը, Մարքսը և Բեյնսը ներկայացնում են երեք տարբեր տնտեսագիտական աշխարհայեցողություններ, որոնք առանձին քաղաքական ճամբարների կողմից ամեն անգամ այն դեպքում են առաջադրվում, երբ խոսք է բացվում բաշխման հարցերի, շուկա-պետություն հարաբերության և այլ տնտեսաքաղաքական թեմաների մասին: Երեք կատարելատիպերը կարելի է նկարագրել հետևյալ կերպ.

1. Չուտ կապիտալիզմ

1. Պետությունը չպետք է միջամտի տնտեսական գործընթացներին: Առ սեփականություն ձգտումը տնտեսական գործունեության շարժիչ ուժն է և այդ պատճառով պետք է լինի անձեռնմխելի (ազատական տեսակետ՝ հենվում է Սմիթի վրա):

2. Հակա-կապիտալիզմ

2. Արտադրամիջոցների նկատմամբ մասնավոր սեփականության և մրցակցության վրա հիմնվող կապիտալիստական տնտեսական համակարգը հանգեցնում է զանգվածների շահագործմանն ու թշվառացմանը: Այդ պատճառով այն վերացվում է (կոմունիստական տեսակետ՝ հենվում է Մարքսի վրա):

3. Կառավարվող կապիտալիզմ

3. Այս տնտեսակարգը հիմնվում է սեփականության և շուկայական տնտեսության վրա, բայց պետությունը կարգավորման, վերաբաշխման ու մակրոտնտեսական կառավարման, այսինքն՝ պահանջարկի նպատակային կառավարման միջոցով միջամտում է ժողովրդական տնտեսությանը: Սեփականությունը երաշխավոր-

⁵ «Կատարելատիպային» բառն այստեղ նշանակում է՝ սոցիոլոգ Մաքս Վեբերի նշած իմաստով՝ իրականության միտումնավոր և նպատակաուղղված չափազանցումը՝ սոցիալական իրականության առանձին հատվածների մտովի դասակարգելու և ըմբռնելու նպատակով: Բայց «կատարելատիպային» նշանակում է նաև, որ այս ներածականում խոսքը կարող է լինել պարզեցնող բնույթի համառոտ ակնարկի մասին միայն:

վում է, բայց այն միաժամանակ ունի համընդհանուր հանդեպ սոցիալական պարտավորություններ (սոցիալ-դեմոկրատիա՝ հենվում է Զեյնսի վրա):

Տնտեսագիտական ուսմունքների բնույթից պարզորոշ է դառնում, որ անսանձ շուկան նույնպես չի գործում, որքան շուկայակարգից լիովին հրաժարվելու փորձերը: Պատմությունն ուսուցանում է, որ ձախողվել է ինչպես շուկայական արմատականությունը, այնպես էլ շուկայի լիովին վերացումը: Կապիտալիզմը պետք է ուղղորդվի և կառավարվի, եթե պետք է իրականացվեն սոցիալ-դեմոկրատիայի նպատակները: Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության Գոդեսբերգյան ծրագիրը 1959 թվականին այն ժամանակ կուսակցության ազդեցիկ տնտեսագետ Կարլ Շիլլերի ջանքերով դա ձևակերպեց հետևյալ կերպ. «Այնքան շուկա, որքան հնարավոր է, այնքան պլանավորում, որքան անհրաժեշտ է»:

Ինչպես շարադրվեց, այստեղ ներկայացված տեսությունները պետք է գնահատվեն իրենց պատմական կապի մեջ: Պատմությունը ցույց է տվել, որ կապիտալիզմն իր ներքին հակասություններից չկործանվեց, ինչպես Կարլ Մարքսն էր կանխատեսել: Բայց կապիտալիզմը նաև ձեռք չի բերել ներդաշնակ հավասարակշռություն, ինչպես ակնկալում էր Ադամ Սմիթը: 20-րդ դարն իր հետ բերել է ինչպես բնակչության լայն շերտերի համար միևս այդ գոյություն չունեցած բարեկեցություն, այնպես էլ սոցիալական վայրիվերումներ և անհամար ճգնաժամեր: Ինպե՞ն կարելի է գնահատել այդ զարգացումը սոցիալ-դեմոկրատիայի տեսանկյունից: Մաթիաս Փլացեթը, Փիլի Շտայնբրյուքը և Ֆրանկ-Վալթեր Շտայնմայերն այս առնչությամբ հնարավոր պատասխան են առաջարկում իրենց 2007 թվականին լույս տեսած «Ժամանակի բարձունքին» գրքում:

«Այնքան շուկա, որքան հնարավոր է, այնքան պլանավորում, որքան անհրաժեշտ է»

Ի՞նչ պատասխան են առաջարկում սոցիալ-դեմոկրատ բաղաբանական գործիչներն այս հարցերի առնչությամբ:

«Ուղղակիառ մարքսիստների՝ մի կողմից, և ազատականների՝ մյուս կողմից, համապատասխան նեղադուր տնտեսական մտածողությանը տեսաբան Էդուարդ Բեռնշտայնի շուրջ համախմբված «ռեվիզիոնիստական» սոցիալ-դեմոկրատները հակադրեցին ինչպես բաղաբանական առաջնահերթությունը, այնպես էլ բարեփոխումների և առաջընթացի, փոխզիջման և շահերի հավասարակշռման սկզբունքները՝ անցնելով դասակարգային սահմանները: Որտեղ մյուսներն ապավինում էին տնտեսական ու պատմական ուժերի ինքնահոս ընթացքին, այնտեղ սոցիալ-դեմոկրատները կարևորում էին շրջադարձի գործուն ու պրագմատիկ ձևավորումը: Նրանք կամենում էին շուկաների դինամիկան հարձակողականորեն կապել սոցիալական բարեփոխման ու հասարակական նորացման հետ՝ այս կերպ աճն ու բարեկեցությունը բնակչության բոլոր խմբերի համար սիստեմատիկորեն մատչելի դարձնելու համար: Շուկայական տնտեսությունը, ժողովրդավարությունը և սոցիալական համերաշխությունը ոչ միայն միմյանց հետ համատեղելի դարձնելը, այլև բաղաբանական միջոցներով նույնիսկ դրա-

կան փոխազդեցության հարաբերության մեջ դնելը՝ ահա դա՛ էր սոցիալ-դեմոկրատիայի պատմականորեն միակզամայն նոր և աննախադեպ առաջընթացի նախագիծը 20-րդ դարի սկզբին: Առաջին անգամ գործնականում և աննախադեպ հաջողությամբ հաշտեցվում էր այն, ինչ պատմականորեն մշտապես համարվել է անհամատեղելի և օգտագործվել մեկմեկու դեմ՝ դինամիկ շուկայական տնտեսություն, կենսունակ ժողովրդավարություն և սոցիալական համերաշխություն: Այդ իսկ պատճառով միանգամայն իրավացիորեն է սոցիոլոգ Ռալֆ Դահրենդորֆը մտցրել «սոցիալ-դեմոկրատական 20-րդ դարի» հասկացությունը: [...] Այսօր վերստին հարկ է պարզ ու հստակ հիշեցնել, թե ինչ դժվարությամբ է ձեռք բերվել սոցիալ-դեմոկրատիայի հաղթանակը նրա հակառակորդների նկատմամբ, և թե որքան վտանգված են այդ հաջողության պտուղները 21-րդ դարում: [...] Այդու անհետաձգելիորեն անհրաժեշտ է, որ ինքնագիտակից սոցիալ-դեմոկրատիան մտաբերի, թե 21-րդ դարի համար դեռ որքան անսահմանորեն էական և ուղենշիչ է սկզբնապես մարքսիստական ուղղափառության և ազատական թողտվության հետ պայքարում մշակված հաջողության գաղափարը: Զանգի գլոբալիզացիայի ժամանակներում ոչինչ չի փոխվել շուկաների, ժողովրդավարության ու հասարակության միջև հիմնարար ներքին լարումնային հարաբերությունում: (Փլացեթ / Շտայնբրյուք / Շտայնմայեր, 2007թ., 19-21)

2.5 Տնտեսագիտությունն այսօր

Պատմական նշանավոր տնտեսագետներին ներկայացնելուց հետո, առաջանում է այն հարցը, թե ինչպիսին է այսօրվա տնտեսագիտության վիճակը: Որ այս հարցին պատասխանելը դժվար է, դա երևում է ներքոբերյալ պատմությունից:

1973 թվականին Եվրահամակեցությանը Մեծ Բրիտանիայի անդամակցության կապակցությամբ լոնդոնյան «Թայմզ» օրաթերթում հրատարակվեց 154 տնտեսագետների կողմից ստորագրված մի հայտարարություն այն բովանդակությամբ, թե Եվրահամակեցությանն անդամակցությունը Մեծ Բրիտանիային տնտեսապես հավանաբար ավելի շատ վնաս կբերի, քան օգուտ: Հաջորդ օրը հրատարակվեց 142 (այլ) տնտեսագետների կողմից մի դիրքորոշում, որում ասվում էր, թե Մեծ Բրիտանիայի անդամակցությունը տնտեսապես հավանաբար ավելի շատ օգուտ կբերի, քան վնաս: Դրանից հետո տպվեց մի ընթերցողի նամակ, որտեղ ենթադրվում էր, որ տնտեսագետները Մեծ Բրիտանիային հավանաբար ավելի շատ վնաս են տալիս, քան օգուտ (մեջբերումն ըստ Վազներ / Վիզարդ, 2002թ., 773):

Այս դրվագը ցույց է տալիս, որ տնտեսագիտության մեջ ակնհայտորեն տիրապետող կարծիք չկա: Դրա պատճառներն առաջին հերթին երկուսն են.

Ինչպիսին է այսօրվա տնտեսագիտության վիճակը:

Դժվարին հարց. մի օրինակ

Տիրապետող կարծիք չկա. երկու պատճառ

Առաջին՝ տնտեսագիտությունը, ինչպես ամեն մի գիտություն, փիլիսոփա Կարլ Փոփփերի խոսքերով, կառուցվում է ոչ թե ժայռե հիմքի, այլ ճահճի վրա: Դա նշանակում է, որ այն տվյալները, փաստերը և դիտարկումները, որոնցից տնտեսագետներն իրենց եզրահանգումներն են անում, ենթակա են անհստակությունների կամ կարող են պարզապես սխալ լինել:

Երկրորդ՝ տնտեսագիտությունն առանձնակի չափով կապված է արժեքների հետ: Ի տարբերություն բնական գիտությունների՝ նրա ենթադրություններն ու տեսությունները որոշվում են մարդու և հասարակության պատկերներով: Այն տնտեսագետը, ով կարծում է, որ մարդը օգուտն առավելագունացնող *homo oeconomicus* է, նա այլ գնահատումների կիսանի, քան այն տնտեսագետը, ով մարդուն ընկալում է որպես հանրային և հարաբարդ (komplex) էակ:

Որ կարծեցյալ ամուր փաստերի վրա հիմնվող տնտեսական գիտության մեջ կա նաև շատ գաղափարախոսություն, և այդ պատճառով տնտեսագետների առաջարկություններին հարկ է մշտապես քննադատորեն մոտենալ, այդպիսի մի սթափեցուցիչ հիշեցում հրապարակել է տնտեսական լրագրող Անդրեաս Յոֆմանը:

«Ես չեմ կարող նստել օդանավ՝ առանց սուբսիդիաների մասին մտածելու: Տնտեսագետներն ասում են սուբսիդիաները: Սուբսիդիաները սերում են չարի թագավորությունից, դրանք խեղում են տնտեսությունը: Բայց առանց սուբսիդիայի ոչ մի Էրբաս չի թռչի: Մենք թռչում ենք Էրբասով միայն այն պատճառով, որ մի քանի պետությունների դեկավարներ ուզում են օդանավեր կառուցել: Այլապես Բոինգը կտիրեր երկինքների, ինչպես Բիլլ Գեյթսը՝ համակարգիչների: [...] Կամ թե արհմիությունների իշխանությունը: Արհմիություններն իբր թե նվազեցնում են ձեռնարկությունների հաջողությունը: Բայց այդ դեպքում ինչու՞ են հենց գերմանական ավտոարտադրողները, մեքենաշինական ձեռնարկությունները, մետաղածուլարաններն ու էլեկտրագործարանները այդքան հաջողակ ամբողջ աշխարհում: Ըստ Էուլթայն, դրանք պետք է անհաջողության մատնվեին, դրանց գործարաններում արհմիություններն ամենաուժեղն են: [...] Պրակտիկային հղում անելն, ի դեպ, ճշմարիտ տնտեսական փորձագետների պարագայում քիչ է օգնում: Այդ դեպքում տեսնում ես տնտեսագետի անբարյացակամ հայացքը, որին հետևում է այն նախադասությունը, թե խոսքը ոչ թե իրականության մասին է, այլ «տնտեսակարգի ձևավորման քաղաքականության մոտեցման»: [...] Միայն թե ինչու՞ հաճախ անգամ ուղղությունը ճիշտ չէ այս քարտեզի վրա: Առաջին համաշխարհային պատերազմը երբեք չպետք է բռնկվեր, որովհետև տնտեսագետներն այն ոչ շահավետ էին համարում: Սև հինգաբլթակնից ութ օր առաջ՝ 1929 թվականի հոկտեմբերին, տնտեսագետ-աստղ Իրվինգ Ֆիշերն ասում էր՝ բորսայի փլուզում երբեք տեղի չի ունենա: Այս

երկրում տեղի ունեցած հինգ հետաճից և ոչ մեկը չի կանխատեսվել հետազոտողների կողմից, ոչ էլ՝ համացանցի բումը 1990-ականներին: 2002 թվականին հաստատություններն ակնկալում էին 2003 թվականի համար 1,4 % աճ, փաստացի տնտեսությունը նվազեց 0,2 %-ով, իսկ ներկայումս բոլորը գլուխ են կոտրում այն բանի վրա, թե երկրում ինչու են աշխատատեղեր առաջանում, և տնտեսությունը վեստին աճում է: Նավթը չափազանց թանկ է, իսկ Անգելա Մերկելը փչացնում է բարեփոխումները»: (Տպագրվել է «Չյուդդոյե Ցայթունգ» թերթում 2006թ. սեպտեմբերի 16-ին):

Տնտեսագիտությունը ճշգրիտ բնագիտություն չէ:

Այսպիսով՝ փաստ է, որ տնտեսագիտությունը ճշգրիտ բնագիտություն չէ, որ ճշգրիտ կանխատեսումներ անի, այլ, հիմնվելով ենթադրությունների վրա, առաջ է քաշում փոքրիշատե համոզեցուցիչ եմպիրիկ փաստարկներով դրույթներ:

Չեռևություն՝ բացահայտել սեփական դիրքորոշումը

Ի՞նչ հեռևություն պետք է անել այս իմացությունից: Իհարկե, ոչ այնպիսին, որ տնտեսագիտությունը պետք է զրկել գիտականությունից, կամ նրա ասածները կարելի է միանգամայն կամայական ձևով մեկնաբանել: Բայց կարևոր է, որ տնտեսագետներից յուրաքանչյուրը բացահայտի սեփական ելակետը կամ տեսակետը, և ով էլ որ կարդա նրանց արդյունքները, կարողանա նրանց դասակարգել և մեկնաբանել այդ ֆոնի վրա:

Երկու ճամբար. առաջարկային և պահանջարկային քաղաքականություն

Տնտեսագիտական ճամբարներն այսօր ընդհանուր գծերով բաժանվում են առաջարկային քաղաքականության և պահանջարկային քաղաքականության, որոնց միջև, անշուշտ, սահուն անցումներ և համընկնումներ կան:

Առաջարկային քաղաքականություն

Առաջարկամետ տնտեսական քաղաքականությունը կանգնած է Ադամ Սմիթի նորդասական ուսմունքի ավանդույթի դիրքերում, որը շարունակվել է տնտեսագետներ Դեյվիդ Ռիկարդոյի, Ջոն Ստյուարտ Միլլի և ուրիշների կողմից: Պետության նկատմամբ քննադատական և շուկայի նկատմամբ ազատական մոտեցում ունեցող այս տեսությունից բխող քաղաքական պահանջը ձեռնարկությունների համար հնարավորինս նպաստավոր պայմաններ ստեղծելն է, որոնց դեպքում դրանք կարողանան լավ շահույթ ստանալ: Դրանից էլ՝ «առաջարկային քաղաքականություն» անվանումը: Պետք է օպտիմալացնել ապրանքների և ծառայությունների առաջարկը: Դրանից, ըստ այս տեսության, մեխանիկորեն առաջանում է պահանջարկը: Պետությունը պետք է հնարավորինս քիչ միջամտի շուկային: Սուբսիդիաները, պետական սեփականությունն ու կարգավորումները պետք է նվազագույնի հասցվեն, հարկերն ու տուրքերը հնարավորինս ցածր մակարդակում պահվեն: Կենտրոնական բանկն ապահովում է փողի արժեքի կայունությունը, բայց չի միջամտում կոնյունկտուրային շրջափոխներին:

Առաջարկային քաղաքականություն. Ադամ Սմիթ, Դեյվիդ Ռիկարդո, Ջոն Ստյուարտ Միլլ

Պահանջարկային քաղաքականություն

Պահանջարկամետ տնտեսական քաղաքականությունը հիմնադրվել է Ջոն Մեյ-նարդ Բեյնսի կողմից և կարևորում է պետության գործուն դերը զբաղվածության խթանման և կոնյունկտուրայի կառավարման հարցում: Ընդ որում, առանցքային է ժողովրդական տնտեսության մեջ մշտական առաջարկի ապահովումը: Դրա համար աշխատավարձերը պետք է առնվազն նույնքան աճեն, որքան արտադրողականությունը: Հենրի Ֆորդը, որն իր գործարաններում ներդրել է զանգվածային արտադրությունը և դրանով զարկ տվել արտադրողականությանը, պահանջարկի մասին հոգ տանելիս հանդես էր գալիս բարձր աշխատավարձերի օգտին: Նրան է վերագրվում «Մեքենաները մեքենա չեն գնում» մեջբերումը:

Եթե մասնավոր սպառումն ու ներդրումները թուլանում են, ապա պետությունը պետք է միջամտի ներդրումնային ծրագրերով և զբաղվածությունն ապահովող միջոցառումներով: Այդ լրացուցիչ պահանջարկի շնորհիվ ձեռնարկությունները դարձյալ գործուն ներդրումներ են կատարում, զբաղվածության մակարդակը բարձրանում է, և մասնավոր պահանջարկը՝ աճում: Կենտրոնական բանկը ճգնաժամերի շրջանում տոկոսադրույթների նվազեցմամբ և փողի ծավալի մեծացմամբ պետք է ուղեկցի կոնյունկտուրայի աշխուժացումը:

Տարբերակիչ հատկանիշներ

Առաջարկամետ և պահանջարկամետ տնտեսական քաղաքականությունների միջև առանցքային տարբերակիչ հատկանիշներից մեկը աշխատավարձերի նշանակության գնահատումն է: Առաջինն աշխատավարձերը համարում է ծախսերը ծանրաբեռնող գործոն, որը հատկապես ճգնաժամերի ժամանակ պետք է իջեցվի: Մյուսն, ընդհակառակը, աշխատավարձերը մեկնաբանում է որպես ժողովրդական տնտեսության վճռորոշ պահանջարկային գործոն, որը պետք է ամրապնդվի տնտեսության անկման շրջաններում, որպեսզի չառաջանա վայրընթաց պարույր, ինչը տեղի ունեցավ 1920-ական թվականների համաշխարհային տնտեսական ճգնաժամի ընթացքում: Որոշ տնտեսագետներ նաև պահանջարկի պակասն են դիտում որպես 2001-2005 թվականների ընթացքում Գերմանիայում տիրող լճացման պատճառ: Տարիներ շարունակ աշխատավարձերի զսպման և կրճատվող պետական ներդրումների համակցմամբ փլուզվել էր ներքին պահանջարկը, որը ծանրաբեռնում էր գերմանական տնտեսությունը: Որպես ճգնաժամից ելք հնչում էին աշխատավարձերի բարձրացման և պետական կոնյունկտուրային ծրագրերի իրականացման պահանջներ (Հորն, 2005թ.): Անշուշտ, առաջարկային քաղաքականության պարագայում ծագում է երկու հիմնախնդիր: Առաջին՝ պարզվել է, որ պրակտիկայում դժվար իրականացնելի է պետական բյուջեների պարտքերի

Պահանջարկային քաղաքականություն. Ջոն Մեյնարդ Բեյնս

Աշխատավարձերի մասին տեսակետների տարբերությունը

Լրացուցիչ ընթերցանության համար.
Այդ բանավեճի պատճառների հաջողված համապատկերող տրված է Փեթեր Բոֆինգերի «Ժողովրդական տնտեսության տեսության հիմնական սկզբունքները» ընթերցարժան և դյուրըմբռնելի գրքում (2007թ.):

նաև փաստացի մարումը տնտեսապես առավել նպաստավոր ժամանակներում: Իմիջիայլոց, այդ պատճառով է շարունակ աճել պետական բյուջեների պարտքը: Ի վերջո, կոնյունկտուրային ծրագրերի և քաղաքական աշխուժության համար ասպարեզը գնալով նեղանում է: Երկրորդ՝ խթանվող պահանջարկը շուկան փողով ողողող կենտրոնական բանկի վարած քաղաքականության հետ կապելիս առաջանում էին աշխատավարձային պարոլյուներ, որոնք էլ իրենց հերթին սղած էին բերում: Բայց դա հանգեցրել էր նաև այն բանին, որ բաժնացված աշխատավարձերը սղաճը դարձյալ արագ խժռում էր: Սղաճի հետևանքով միաժամանակ սկսվեց «վախից ինայողություն անելը», որը լճացրեց սպառումը: Այդ զարգացման տրամաբանական զարգացումը 1970-ական թվականների վերջին լճացման և սղաճի ճագատագրական համակցումն էր՝ այսպես կոչված ստագֆլյացիան:

*1970-ական
թվականների
բեյնսականություն-
կից դեպի
1990-ական
թվականների
Վաշինգտոնյան
կոնսենսուս*

Երկու տեսություններից ո՞րն է ավելի ազդեցիկ: Ինչպես արդեն նկարագրվեց, 1920-ական թվականների համաշխարհային տնտեսական ճգնաժամից մինչև 1970-ական թվականները միջազգայնորեն գերիշխող էր բեյնսյան պահանջարկային քաղաքականությունը: Բայց որպես արձագանք 1970-ական թվականների վերջերին լճացող համաշխարհային տնտեսությանը և տարածվող սղաճին (ստագֆլյացիա), Նորդասական առաջարկային քաղաքականությունը վերածնունդ ապրեց: Առաջարկային քաղաքականությունը, սկսած 1980-ական թվականներից, առաջնորդում էին Ռոնալդ Ռեյգանը ԱՄՆ-ում, Մարգարեթ Թետչերը՝ Մեծ Բրիտանիայում և, թույլ ձևով, Յելմոթ Բոնդը՝ Գերմանիայում: 1990-ական թվականներին այդ տնտեսաքաղաքական ուղղվածությունն արտացոլվեց Վաշինգտոնյան կոնսենսուսում և ստացավ ավելի լայն միջազգային տարածում: Առաջին հերթին Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի միջոցով հանրահռչակվում էր ազատականացման քաղաքականություն, որը պահանջում էր հարկերի իջեցում, մասնավորեցումներ, ապակարգավորում, ազատ առևտուր և սուբսիդիաների կրճատում: Շուկան պետք է զորացվեր, իսկ պետությունը հետ մղվեր: Համաշխարհային բանկի Նախկին գլխավոր տնտեսագետ և Նոբելյան մրցանակի դափնեկիր Ջոզեֆ Յու. Սոխոլիցն այս ընթացքում դարձել է Վաշինգտոնյան կոնսենսուսի նշանավոր քննադատներից մեկը: Կույր վստահությունը նա համարում է մի գաղափարախոսություն, որն էմպիրիկ տվյալներով ապահովված չէ: Կան պետություններ, որոնք որդեգրել են շուկայի ազատականացման դեղատոմսերը և տնտեսական լճացման մեջ են, մինչդեռ ուրիշները շուկաների առավել ուժեղ համակարգմամբ ու կառավարմամբ հասել են սոցիալական ու տնտեսական հաջողությունների (Սոխոլից, 2002թ.):

*Գերմանացի
տնտեսագետները՝
մեծ մասամբ
առաջարկամետ*

Գերմանացի տնտեսագետների մեծամասնությունը ներկայումս, կարծես թե, հակված է դեպի առաջարկային քաղաքականությունը: Երբ կարմիր-կանաչ կոալիցիան

2005 թվականին մտորում էր թերի պահանջարկին զարկ տալ պետական ծախսումների միջոցով, այսինքն՝ վարել դասական բեյնսականական քաղաքականություն, տնտեսագիտության 250 պրոֆեսորներ «Համբուրգյան կոչով» պահանջեցին առաջարկամետ տնտեսական քաղաքականություն: Պահանջարկամետ քաղաքականության օգտին հանդես եկող տնտեսագետներն անցած տարիներին պաշտպանական դիրքերում էին, բայց հիմա դարձյալ ավելի շատ լսարան են հավաքում:

Քեյնսի պահանջարկային տեսությամբ, օրինակ, կարելի է բացատրել, թե 2008 թվականին ֆինանսական շուկայի ճգնաժամն ինչու այդպես արագ և արմատապես անդրադարձավ իրական տնտեսության վրա և հարուցեց համաշխարհային հետաճ: Բազմաթիվ երկրների արձագանքը համապատասխան էր. պահանջարկի խթանման դասական բեյնսականական քաղաքականություն՝ պետական ծախսերի ընդլայնմամբ և բնակչության լայն շրջանների գնողունակության ամրապնդմամբ:

Ֆինանսական շուկայի և տնտեսության ճգնաժամը 2008 թվականից հանգեցրել է զանգվածային վերամտածողության: Նույնիսկ Դոյչե բանկի վարչության նախագահ Յոզեֆ Աբերմանն է հիմա ասում. «Ես այլևս չեմ հավատում շուկայի ինքնաբուժիչ ուժերին» (Աբերման, 2008թ.), և պահանջում է համընդհանուր ֆինանսական վերահսկողություն: Շուկայի կողմնակից արմատականներն անցել են պաշտպանության, իսկ Քեյնսի ուսմունքները նորից վերահայտնագործվում են: Քանզի նրա տեսությունները բացատրում են այս դժվարին ճգնաժամը և մատնացույց անում ճգնաժամից դուրս բերող հնարավոր ուղիներ:

Քեյնսի արդիականությունը պատահական չէ. ի վերջո, նրա «Չբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսությունը» զավակն է 1930-ական թվականների ճգնաժամի, որը մասամբ նմանվում է ներկայիս վիճակին: Այն ժամանակ, ինչպես այսօր, սկսվելով ֆինանսական շուկայի խաթարումից՝ կոնյունկտուրան ամբողջ աշխարհում խաթարվեց, ինչը գործի դրեց բացասական վայրընթաց մի պարույր: Գնողունակության նվազման պատճառով և ավելի խոր ճգնաժամի վախից մասնավոր տնտեսություններն ավելի քիչ են սպառում, ձեռնարկությունները հետաճգում են ներդրումները, իսկ բանկերը գրեթե վարկեր չեն տրամադրում: Ավելի քիչ է արտադրվում, որի պատճառով աշխատատեղեր են կորչում, և սպառումը շարունակում է նվազել: 1930-ականների ճգնաժամին վերջ դրվեց միայն շուկայի կարգավորման ընդլայնմամբ և պետական ներդրումների ծրագրերով՝ հենվելով Քեյնսի վրա:

Ինչպե՞ս կարելի է բացատրել ամերիկյան անշարժ գույքի շուկայում ներկայիս ճգնաժամի ծագումը: Այնտեղ ձևավորվել էր առեղծվածի սպեկուլյացիոն փուչիկ, որը փլուզման եզրին

*Քեյնսականական
պատասխաններ
ֆինանսական
շուկայի 2008
թվականի
ճգնաժամին*

հասցրեց միջազգային բանկային համակարգը: Զեյնսի աշակերտ Ջայմեն Մինսքին, հենվելով իր ուսուցչի վրա, դրան պարզ բացատրություն է տալիս (Մինսքի, 1986թ.): Տնտեսական աճի տևական փուլերում աճում են ընչաքաղցությունն ու ռիսկին հակվածությունը: Աճող շահույթների փնտրտուքում ավելի մեծ ռիսկերի են գնում: Բանկերի մրցակցությունը բանկերին զայթակղում է կարգավորումները նոր ֆինանսական արդյունքների միջոցով շրջանցելուն՝ ֆինանսավորելու համար ռիսկային ներդրումները: Եթե չափից ավելի շատ ռիսկեր են կուտակվում, ապա խաղաքարտերով շարված տունը փուլ է գալիս, ինչն էլ հենց տեղի է ունեցել: Որպես լուծում Մինսքին պահանջում է պետության կողմից կարգավորում՝ շուկան իրենից իսկ պաշտպանելու և ֆինանսական ճգնաժամերից խուսափելու համար: Չկարգավորվող համաշխարհային ֆինանսական շուկաներից հրաժարվելը Զեյնսը պահանջում էր դեռևս 1926 թվականին իր «Ինքնահոսի թողնելու վերջը» խոհագրությունում (Զեյնս, 1926թ.): Նա գործնականում մասնակցել է նաև համաշխարհային շուկայի համար կանոններ մշակելուն: Մասնավորապես, նա ներգրավված էր Բրեթթոն Վուդսում ընթացող համաժողովի աշխատանքներին, որտեղ նախագծվեց համաշխարհային ֆինանսական շուկաների համար կարգ, որը տասնամյակներ շարունակ կայունություն ստեղծեց: Այժմ այս թեման դարձյալ միջազգային օրակարգում է: Տնտեսապես ամենաշանակալից 20 երկրների՝ 2009 թվականին Լոնդոնում կայացած գագաթնաժողովը ընտրվեց նաև որպես երկրորդ Բրեթթոն Վուդսի փորձ: Այնտեղ այս ուղղությամբ արվեցին թեև փոքր, բայց կարևոր քայլեր: Որոշում կայացվեց ստեղծել հեջ-ֆոնդեր և վարկակիշային գործակալություններ, իսկ Արժույթի միջազգային հիմնադրամին կից ստեղծվեց ֆինանսական կայունության ներկայացուցչական ֆորում:

Իսկ ճգնաժամից դուրս գալու ի՞նչ ուղի է ցույց տալիս Զեյնսը: Սովորաբար, կոնյունկտուրային շրջափուլերը կառավարվում են տոկոսադրույթային քաղաքականության միջոցով: Դրան համապատասխան, որպես արձագանք 2008 թվականի ճգնաժամի, կենտրոնական բանկերն ամբողջ աշխարհում իջեցնում են տոկոսադրույթները: Բայց ճգնաժամի խորության պատճառով դրանք իրենց սովորական արդյունքը չդրսևորեցին, այլ փողը պահուստավորվեց, ինչպես Զեյնսը կանխատեսել էր առանձնապես ցայտուն ճգնաժամերի համար: Դրանից հետո մնացած մասնավոր ներդրումներն ու սպառումը հավասարակշռելու համար Զեյնսն առաջարկում է պարտքային ֆինանսավորման պետական ներդրումներ: Ահա 2008 և 2009 թվականներին բազմաթիվ երկրներ արձագանքեցին պահանջարկի խթանման դասական քեյնսականական քաղաքականությամբ՝ աննախադեպ չափերով ընդլայնելով պետական ծախսերը և ամրապնդելով բնակչության լայն շրջանների գնողունակությունը: Այն բանից հետո, երբ ԱՄՆ-ում, Չինաստանում և եվրոպական պետություններում կայացվեցին արդեն իսկ մասամբ նշանակալից կոնյունկտուրային փաթեթների վերաբերյալ որոշումներ, տնտեսապես ամենա հզոր երկրները 2009 թվականի ապրիլին G20 գագաթնաժողովի

Լրացուցիչ

գրականություն.

*Միխայել Դաուդերշտեդթ (2009թ.),
Ճգնաժամային
շրջաններ. թե ինչ
կարող են անել
պարտքերը և ինչ են
պարտք կարողու-
թյունները, Ֆրիդ-
րիխ Էբերտ հիմնադ-
րամ (իրատարակիչ),
Բոնն*

Ժամանակ պայմանավորվեցին ամբողջ աշխարհում 1,1 տրիլիոն ԱՄՆ դոլարի չափով միջոցներ մղել տնտեսություն՝ այն խթանելու նպատակով: Մեծ Բրիտանիայի ֆինանսների սոցիալ-դեմոկրատ նախարար Ալիսթեր Դարլինգն իր կառավարության կոնյունկտուրային փաթեթն ազդարարելիս միանշանակորեն վկայակոչեց Զեյսի տեսությունը:

Տնտեսական հետազոտությունների հաստատությունները մակրոտնտեսագիտության շրջանակներում հաճախ ներկայացնում են որոշակի սկզբունքային ուղղություն (առաջարկամետ կամ պահանջարկամետ) և դրանով իսկ կողմնորոշված են նշված տեսություններից որևէ մեկին: Գերմանիայի հինգ մեծ տնտեսական հետազոտությունների հաստատությունները ևս իրենց միտման մեջ կարելի է դասակարգել ավելի շուտ որպես «առաջարկամետ» կամ «պահանջարկամետ»: Իրենց հետազոտություններով նրանք անթերազնահատելի ազդեցություն ունեն տնտեսաբաղաբական բանավեճի վրա: Այդ իսկ պատճառով պետք է իմանալ նրանց տնտեսագիտական հիմնարար համոզմունքները և դրանք մշտապես հաշվի առնել նրանց վերլուծություններն ու առաջարկությունները գնահատելիս: Բայց և բոլոր հինգն էլ համատեղ աշխատում են առաջին հերթին կոնյունկտուրայի կանխատեսումներ կազմելու վրա, որոնք պետական բյուջեների հիմքն են և ազդեցություն են թողնում շատ ձեռնարկությունների պլանավորման վրա:

- Բեռլինի Տնտեսական հետազոտությունների գերմանական ինստիտուտ (DIW), ղեկավար՝ պրոֆ. Զլաուս Ցիմմերման, www.diw.de, ավելի շատ պահանջարկամետ
- Դալլեի Տնտեսական հետազոտությունների ինստիտուտ (IWH), ղեկավար՝ պրոֆ. Ուլրիխ Բլում, www.iwh-halle.de, ավելի շատ առաջարկամետ
- Զիլի Զամաշխարհային տնտեսության ինստիտուտ (IfW), ղեկավար՝ Դենիս Յ. Սնուեր, www.ifw.de, առաջարկամետ
- Էսսենի Տնտեսական հետազոտությունների հռենոս-վեսթֆալյան ինստիտուտ (RWI), ղեկավար՝ պրոֆ. Զրիսթոֆ Մ. Շմիդթ, www.rwi-essen.de, առաջարկամետ
- Մյունխենի Տնտեսական հետազոտությունների ifo ինստիտուտ (ifo), ղեկավար՝ պրոֆ. Զանս-Վերներ Չինս, www.ifo.de, առաջարկամետ, շուկայի նկատմամբ բոլոր հինգ հաստատություններից ամենաազատականն է:

Այնուհետև գալիս են Զյոլի «Գերմանական տնտեսության ինստիտուտը» (IW, ղեկավար՝ պրոֆ., դ-ր Միխաել Զյոլթեր, www.iwkoeln.de), որը մոտ է կանգնած գործատուներին, ինչպես նաև արհմիություններին մոտ կանգնած պահանջարկամետ ինստիտուտներ «WSI»-ն (Տնտեսագիտության և սոցիալական գիտությունների ինստիտուտ, ղեկավար՝ պրոֆ., դ-ր Զայդե Փֆարր, www.wsi.de) և «IMK»-ն (Մակրոտնտեսության և կոնյունկտուրային հետազոտությունների ինստիտուտ, ղեկավար՝ դ-ր Գուստավ Զորն):

	Առաջարկային քաղաքականություն	Պահանջարկային քաղաքականություն
Հիմնական գաղափար	Ձեռնարկությունների համար ստեղծել հնարավորինս նպաստավոր պայմաններ, որտեղ նրանք կարողանան լավ շահույթներ ստանալ	Պետության կողմից զբաղվածության խթանման և իրավիճակի կառավարման ճանապարհով ժողովրդական տնտեսության համար ապահովել մշտական պահանջարկ
Ստածողության ավանդույթ	Ադամ Սմիթ, Դեյվիդ Ռիկարդո, Ջոն Ստյուարտ	Ջոն Մեյնարդ Զեյնս
Պետության ընթերցումը	Պասսիվ պետություն	Ակտիվ պետություն
Աշխատավարձերի ընկալումը	Աշխատավարձերը վճարող ծախսային գործոն են:	Աշխատավարձերը պահանջարկային գործոն են և պետք է աճեն արտադրողականությանը զուգահեռ:
Կենտրոնական բանկի դերը	Պետք է ապահովի փողի արժեքի կայունությունը:	Պետք է ապահովի փողի արժեքի կայունությունը և նպաստի զբաղվածությանը և կայուն աճին:
Ժամանակին բնորոշ	Սկսած 1980-ական թվականներից	1930-ական, 1970-ական թվականներ, վերստին աշխուժացում՝ սկսած 2008 թվականից
Հաստատություններ	Հալլեի Տնտեսական հետազոտությունների ինստիտուտ (IWH) Համաշխարհային տնտեսության ինստիտուտ (IfW) Տնտեսական հետազոտությունների հռենոս-վեսթֆալյան ինստիտուտ (RWI) Տնտեսական հետազոտությունների ifo ինստիտուտ (ifo) Զյոլի Գերմանական տնտեսության ինստիտուտ (IW)	Տնտեսական հետազոտությունների գերմանական ինստիտուտ (DIW) Տնտեսագիտության և սոցիալական գիտությունների ինստիտուտ (WSI) Մակրոտնտեսության և կոնյունկտուրային հետազոտությունների ինստիտուտ (IMK)

Շուկա, մասնակցականություն, կարգավորում և քաղաքական կառավարում լարումնային դաշտերը

Հիմնարար տնտեսաքաղաքական տեսություններին անդրադառնալուց հետո ծագում է այն հարցը, թե սոցիալ-դեմոկրատիայի ժամանակակից արժեքամետ տնտեսական քաղաքականությունն ինչպես կարող է հիմնվել դրանց վրա: Դրա համար կողմնացույց են տալիս սոցիալ-դեմոկրատիայի կողմնորոշվածությունները, որոնք կպարզաբանվեն հաջորդ երկու գլուխներում: Բայց այստեղ նախ ներկայացնենք այն լարումնային հարաբերությունները, որոնք պետք է հավասարակշռվեն սոցիալ-դեմոկրատիայի իմաստով (հմմտ. Մայեր, 2005թ., բ, 67):

Շուկայի, ժողովրդավարության և սոցիալական համերաշխության հավասարակշռություն

1. Արտադրողականություն և աճ՝ ընդդեմ սոցիալական արդարության և անվտանգության

Սեփական շահի և սեփականության ձգտումը երևան է բերում հսկայական ուժեր, ինչպես նկարագրել են Սմիթը և Մարքսը: Շուկան և մրցակցությունը հոգում են այն բանի համար, որ սուղ միջոցները հասնեն այնտեղ, որտեղ դրանք կօգտագործվեն ամենարդյունավետ ձևով: Սա էապես ավելի արդյունավետ է դրսևորվել, քան պլանային տնտեսությունը երբևէ կարող է այդպիսին լինել:

Աճ և արդարություն

Մյուս կողմից, շուկան ստեղծում է նաև անհավասար բաշխում և իր շրջափուլային տատանումներով ու իր ճգնաժամայնությամբ, որոնք նկարագրել է Քեյնսը, կառուցվածքայնորեն անկայուն է: Այդ իսկ պատճառով շուկաները պետք է ներառվեն այնպիսի քաղաքական շրջանակի մեջ, որ ճգնաժամերը կանխվեն: Սոցիալական պետությունը պետք է մարդկանց պաշտպանի շուկայի ռիսկերից: Դրոգրեսիվ (այսինքն՝ եկամուտների հետ աճող) եկամտահարկերի, ինչպես նաև ժառանգության հարկերի և գույքահարկերի միջոցով պետք է ձևավորվի արդար բաշխում: Իսկ ծախսային, հարկային և տոկոսադրույքային քաղաքականության միջոցով պետությունը պետք է կառավարի տնտեսական փուլերը: Դա նշանակում է, որ կոյունկտուրային ճգնաժամերի դեպքում պետական ծախսերը պետք է ավելացվեն՝ սպառումը կայուն պահելու և նպաստավոր վարկերի միջոցով բնակչության մեջ ներդրումային պատրաստակամությունը խթանելու նպատակով:

2. Ըկունություն և նորարարություն՝ ընդդեմ կախյալ զբաղվածության պաշտպանության և ընդգրկուն սոցիալական անվտանգության

Մրցավազքն ու մրցակցությունը մի կողմից հանգեցնում են նորարարության:

Ըկունություն և անվտանգություն

Բայց, մյուս կողմից, դրանց ուղեկցող անկումներն ու ճգնաժամերը պետք է մեղմվեն աշխատողներին ազատումներից պաշտպանության և սոցիալական նպաստների միջոցով: Արմատական կառուցվածքային շրջադարձերը, ինչպես, օրինակ, լեռնարդյունաբերության անկումը Ռուսիի մարզում, հետագա զարգացում կարող են միայն ստանալ աշխատատեղերի ստեղծմանը միտված նպատակաուղղված կառուցվածքային քաղաքականության միջոցով:

Ճկունություն և անվտանգություն

3. Սեփականություն և մրցակցություն՝ ընդդեմ սոցիալական ներառվածության և կարգավորման

Արտադրամիջոցների նկատմամբ սեփականության իրավունքից և մրցակցությունից հիմնականում հրաժարված տնտեսակարգերը ձախողվել են: Յուրաքանչյուր հաջողված տնտեսակարգ հիմնվում է սեփականության ու մրցակցության վրա: Դա չի ազատում սեփականության միջոցով սոցիալական պատասխանատվությունից: Այսպես՝ Հիմնական օրենքի 14-րդ հոդվածն ասում է. «Սեփականությունը և ժառանգական իրավունքը երաշխավորվում են: [...] Սեփականությունը պարտավորեցնում է: Դրա օգտագործումը միաժամանակ պետք է ծառայի ընդհանուրի բարեկեցությանը»: Շուկայում ազնիվ վարք ապահովելու և շուկայում առանձին դերակատարների գերիշխող դիրքից խուսափելու համար անհրաժեշտ է կարգավորել մրցակցությունը:

Ձեռնարկատերերի որոշումները և աշխատողների մասնակցությունն այդ որոշումների կայացմանը

4. Ինքնավար ձեռնարկատիրական գործառույթ՝ ընդդեմ մասնակցականության և քաղաքական շրջանակների սահմանման

Սեփականության նկատմամբ իրավունքից բխում է նաև ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը: Բայց ձեռնարկություններում որոշումների կայացմանը պետք է մասնակից լինեն ոչ միայն փայտտերերը, այլ նաև նրանք, ովքեր աշխատուժի միջոցով նպաստում են արժեքաստեղծմանը: Ձեռնարկատերերի կողմից որոշումների կայացումն այդ պատճառով սահմանափակվում է մասնակցականության սկզբունքով:

Տնտեսական քաղաքականության չորս չափումները

Դրանից բխում են չորս չափումներ՝

- քաղաքական շրջանակի սահմանում,
- շուկայական տրամաբանության զարգացում,
- գործակցության և մասնակցականության իրավունքներ,
- մակրոտնտեսական կարգավորում:

Միասին դա նշանակում է, որ սոցիալ-դեմոկրատիայի արժեքների վրա հիմնվող տնտեսակարգում շուկայի տամաբանությունը կարող է զարգանալ քաղաքական շրջանակում: Սեփականությունը պարտավորեցնում է և միաժամանակ ենթարկված է համընդհանուր բարեկեցությանը: Դա, մասնավորապես, երաշխավորվում է այն բանի միջոցով, որ ձեռնակությունների որոշումների կայացմանը մասնակցում են ոչ միայն փայտերերը, այլ նաև աշխատողները: Ընդհանուր տնտեսական կայունությունն ապահովվում է մակրոտնտեսական կարգավորմամբ, այսինքն՝ պետությունն իր բյուջետային և տոկոսադրույթային քաղաքականությամբ աշխատում է կայուն աճի և զբաղվածության բարձր մակարդակի ուղղությամբ:

Ի՞նչ է դա նշանակում սոցիալ-դեմոկրատիայի համար

- Ով հետաքրքրվում է տնտեսագիտական հարցերով, նա պետք է իմանա տարբեր տեսական հիմունքները և կարողանա նույնականացնել գաղափարախոսությունները:
- Սոցիալ-դեմոկրատիան օգտվում է ոչ թե մեկ, այլ տարբեր տեսական մոտեցումներից:
- Ընդ որում, առանցքում կառավարվող կապիտալիզմն է, ինչպիսին պահանջում էր Զեյնսը:
- Բայց սոցիալ-դեմոկրատիան նաև ի գիտություն է ընդունում Մարքսի կողմից կապիտալիզմի քննադատությունը և շուկայի արդյունավետության և արտադրողականության սմիթյան նկարագրությունը:
- Այսպիսով՝ տնտեսակարգը պետք է հիմնվի մրցակցության և սեփականության վրա: Բայց հարկ է, որ շուկաները կարգավորվեն, պետությունները գործուն կերպով դիմագրավեն տնտեսական ճգնաժամներին և մասնակցականությունն ու գործակցությունը երաշխավորված լինեն:

3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՐԳԵՐ

Այս գլխում՝

- քննության է առնվում կապիտալիզմի և ժողովրդավարության հարաբերությունը, որը մի կողմից՝ լարված է, իսկ մյուս կողմից՝ փոխադարձաբար օժանդակիչ:
- նկարագրվում են կապիտալիզմի զանազան տիպեր, որոնք իրարից տարբերվում են իրենց համակարգման աստիճանով:
- պարզաբանվում է «սոցիալական շուկայական տնտեսություն» հասկացությունը:
- ներկայացվում է, թե ինչ դրական ազդեցություններ և ինչ ստվերային կողմեր ունի գլոբալիզացիան սոցիալ-դեմոկրատիայի տեսանկյունից:

3.1. Կապիտալիզմ և ժողովրդավարություն



Արդյո՞ք
«գերկապիտալիզմը»
բայթայում է
ժողովրդավարությունը:

«Արդյո՞ք գերկապիտալիզմը քայքայում է ժողովրդավարությունը»: Այսպիսի հարց էր տալիս «Manager magazin» տնտեսական հանդեսն իր տիտղոսաչին 2008 թվականի մարտին: Այնուհետև պատկերված է մորեխ: Առաջնորդող հոդվածում ասվում է, որ գլոբալիզացված շուկայական տնտեսությունը⁶ կարող է խաթարել ժողովրդավարության հավատարմությունը: Այնուհետև վերլուծվում է, որ քաղաքացիներից շատերն այլևս չեն հավատում, որ գլոբալիզացված տնտեսությունից կշահեն: Յետևաբար, տնտեսության և քաղաքականության նկատմամբ վստահությունը կվերանա:

«Manager magazin»-ի հոդվածը դրանով անդրադառնում է ժողովրդավարության և կապիտալիզմի միջև առկա սկզբունքային լարվածության հարաբերությանը:

6 Շուկայական տնտեսություն կամ կապիտալիզմ. կամ, արդյոք, նշանակությունների տարբերություն: Բովանդակային առումով երկու հասկացություններն էլ նկատի ունեն սեփականության և մրցակցության վրա հիմնվող տնտեսական համակարգ: Լեզվագործածության մեջ հաճախ նկատվում է, որ «շուկայական տնտեսություն» եզրն ավելի շատ օգտագործվում է ազատական տնտեսական համակարգի կողմնակիցների կողմից, մինչդեռ «կապիտալիզմ» գործածում են շուկայի նկատմամբ քննադատական մոտեցում ունեցողները:

Պատմականորեն միահյուսված ժողովրդավարության և կապիտալիզմի

Պատմականորեն ժողովրդավարության և կապիտալիզմի առաջացումը սերտորեն միահյուսված են իրար: Ժողովրդավարությունները հաճախ հիմնվում էին ազատ շուկաների առաջացմանը զուգընթաց: 18-րդ և 19-րդ դարերի Եվրոպայում՝ նախ անհատական ազատության կոչ էր արվում՝ զուգակցված ազատ մրցակցության և մասնավոր սեփականության վրա հիմնվող տնտեսության հետ (հմմտ. գլխով 2, Ադամ Սմիթի վերաբերյալ շարադրվածը): Այդ պահանջը զուգակցվում էր իրավական անվտանգության ու պարտադիր հիմնարար իրավունքների ցանկության, ինչպես նաև պետության մեջ քաղաքացիների քաղաքական մասնակցականության և ներկայացվածության պահանջի հետ: Նոր շրջանի առաջին ժողովրդավարության սկիզբը դրվեց Ամերիկայի Միացյալ Նահանգների անկախությանը զուգահեռ “No taxation without representation” (հարկերի ոչ մի վճարում՝ առանց պետության մեջ ներկայացված լինելու) կոչով, այսինքն այն բանի կոչով, որ տնտեսական և քաղաքական մասնակցականությունը միասին են: 1989 թվականից հետո նաև հետկոմունիստական պետություններում տնտեսական ազատականացումը և ժողովրդավարությունն ընթանում էին ձեռք ձեռքի տված:

Արդյո՞ք ժողովրդավարական պետությունները տնտեսապես ավելի արդյունավետ են:

Երկար ժամանակ նաև թվում էր, թե պարզ է, որ ժողովրդավարական պետություններն սկզբունքորեն տնտեսապես ավելի արդյունավետ են, քան ոչ ժողովրդավարական համակարգերը: Թվում էր, թե Արևմուտքի բարգավաճումը և Արևելյան բլոկի տնտեսական ձախողումը դա էին ապացուցում: Բայց այս ընթացքում պարզվում է, որ կան նաև պետություններ, որոնք ժողովրդավարական հիմքեր չունեն և, այնուամենայնիվ, կարող են կապիտալիստական տնտեսական համակարգում երևան բերել մեծ տնտեսական աճ: Դրա ամենահայտնի օրինակը Չինաստանն է, որը տնտեսապես զարգանում է, ինչ 1970-ական թվականների վերջերից վերածվում է կապիտալիստական երկրի, բայց այդ գործընթացում չի ժողովրդավարանում: Նաև մի քանի այլ երկրներում (դեռև՛ս) չի նկատվում տնտեսական և քաղաքական ազատականացման համաժամանակյա շարժում: Այդ մասին է վկայում ամեն տարի հրատարակվող «Աշխարհի տնտեսական ազատության» («Economic Freedom of the World») ցուցիչը, որը դասակարգում է տնտեսական և քաղաքական ազատությունը: Այստեղ տնտեսական ազատության առաջին երկու տեղերում են Հոնգկոնգը և Սինգապուրը:

Պետք է ամրագրել, որ (դեռև՛ս) կան ավտորիտար կապիտալիստական համակարգով պետություններ: Բայց յուրաքանչյուր գոյություն ունեցող ժողովրդավարական պետությունն հիմնվում է շուկայական տնտեսության վրա:

Կապիտալիզմի և ժողովրդավարության լարումնային հարաբերությունը

Ընդ որում, ժողովրդավարության և կապիտալիզմի հարաբերությունն ամենևին էլ զերծ չէ լարումներից: Ժողովրդավարությունը հիմնվում է հավասարության վրա. «մեկ մարդ, մեկ ձայն»․ յուրաքանչյուր ձայն պետք է ունենա նույն կշիռը: Շուկայա-

կան տնտեսությունը հիմնվում է անհավասարության վրա: Կապիտալիստական տնտեսական համակարգում արտադրվող «կարկանդակը» բաժանվում է տարբեր մեծության կտորների: Թեև կարելի է միջամտել վերաբաշխիչ գործառույթով, սակայն եթե բանը հասցվի նրան, որ յուրաքանչյուրն ստանա նույն մեծության կտոր, ապա այլևս ազդակներ չեն մնա:

Անհավասարությունը կարող է հանգեցնել «պակասավոր ժողովրդավարությունների»

Անհավասարությունն, ի թիվս այլոց, կարող է հանգեցնել այն բանին, որ տնտեսապես ուժեղ դերակատարները դրսևորեն վետոյի այնպիսի հզոր դիրքորոշում, որ առաջանա «պակասավոր ժողովրդավարություն»: Զաղաքագետ Վոլֆգանգ Մերկելն այդ հասկացությունը սահմանում է հետևյալ կերպ. «Պակասավոր ժողովրդավարություններն այն իշխանական համակարգերն են, որոնք առանձնանում են հիմնականում գործող ժողովրդավարական ընտրակարգի ամկայության միջոցով իշխանության մատչելիության կարգավորմամբ, բայց մեկ կամ մի քանի մնացյալ մասնակի կարգերի գործողության տրամաբանության խանգարումների պատճառով կորցնում են այն լրացուցիչ հենարանները, որոնք գործող ժողովրդավարության մեջ պարտադիր են ազատության, հավասարության և վերահսկողության ապահովման համար» (Մերկել և ուրիշներ, 2003թ., 66):

Ժողովրդավարությանը խանգարող գործոնները

Դա նշանակում է, որ ընտրություններ տեղի են ունենում, և ժողովրդավարության այլ տարրեր ամռա են, բայց դրանք քայքայվում են խանգարիչ գործոններից: Դա, օրինակ, այն դեպքն է, երբ որևէ դերակատար հասարակության մեջ տնտեսապես այնքան հզոր է, որ կոլեկտիվ որոշումների վրա կարող է վետո դնել: Օրինակ՝ պատկերացնենք մի ներդրողի, ով հասարակությանը կարող է շատաժի ենթարկել ձեռնարկության նստավայրի վերաբերյալ որոշմամբ, երբ սպառնում է հանել կապիտալը՝ քաղաքական զիջումներ ստանալու նպատակով, օրինակ՝ բնապահպանական կամ աշխատանքային չափորոշիչների սահմանափակումը: Սա կլիներ ժողովրդավարական սկզբունքների խախտում:


Ժողովրդավարության և շուկայական կապիտալիզմի հարաբերությունն ըստ Թ. Մայերի տեսության

Ընթերցագրքերի այս շարքի հիմունքներին վերաբերող հատորում 62-66 և 89 ու հաջորդ էջերում ներկայացվում է ժողովրդավարության և շուկայական կապիտալիզմի լարումնային հարաբերությունը՝ ելնելով Թոմաս Մայերի «Սոցիալ-դեմոկրատիայի տեսությունը»-ից:

Ժողովրդավարության պարադոքսը

45 էջի նկարը ցույց է տալիս ժողովրդավարության պարադոքսը: Ըստ այդմ, կապիտալիզմը, մի կողմից, ժողովրդավարության նախադրյալ է: Մյուս կողմից՝ ոչ բավարար չափով կարգավորված շուկան կարող է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կարող են հակասել բոլորին բաժին հասնելու սկզբունքին և այդ կերպ հանգեցնել պակասավոր ժողովրդավարության:

Ժողովրդավարության տեսության պարադիքը



Նկ. 4. Ժողովրդավարության տեսության պարադիքը

Այս կերպ տարբերություն դնելով և ժողովրդավարության համար կապիտալիզմի ռիսկերը գիտակցելով՝ սոցիալ-դեմոկրատիան տարբերվում է լիբերտար (libertär = անարխիստական, ազատականական.- Ծ.թ.) ժողովրդավարությունից: Միլթոն Ֆրիդմենի պես լիբերտարիստական տնտեսագետները պնդում են, թե շուկայական տնտեսությունը հանգեցնում է նաև քաղաքական ազատության և ժողովրդավարության:

Ընդ որում, նա ինքը բերել է Էմպիրիկ մի օրինակ: Ի սարսափ իր գործընկերներից շատերի՝ Ֆրիդմենը 1970-ական թվականներին խորհրդատվական ծառայություններ էր մատուցում Չիլիի բիրտ գինվորական խունտային: Դիկտատոր Ավգուստո Պինոչետը հետևում էր տնտեսության ծայրահեղ ազատականացման կուրսի ֆրիդմանյան դեղատոմսերին: Ի հակադրություն ազատական տնտեսագետների սպասման՝ դա չհանգեցրեց ավելի շատ քաղաքական ազատությունների, էլ ուր մնաց՝ ժողովրդավարացման: Ընդհակառակը, տնտեսական վերելքը կայունացրեց դիկտատուրան: Չիլին վերստին ժողովրդավարական դարձավ ավելի ուշ, քան մյուս լատինաամերիկյան երկրները:

Ինչպե՞ս բացատրել, որ կապիտալիզմի և ժողովրդավարության միջև լարումնային հարաբերությունը դարձյալ հարաճուն ուշադրության է արժանացվում և քննարկվում նույնիսկ տնտեսական հանդեսներում: Ամերիկյան տնտեսագետ և Զինվորի կառավարության նախկին աշխատանքի նախարար Ռոբերտ Ռեյչն իր 2008 թվականին լույս

*Միլթոն Ֆրիդմեն.
Շուկայական տնտեսությունը հանգեցնում է ժողովրդավարության:*

Չիլիի հակառակ օրինակը

«Ժողովրդավարություն և կապիտալիզմ» թեմայի հրատապությունը

տեսած «Գերկապիտալիզմ. թե ինչպես է տնտեսությունը քայքայում մեր ժողովրդավարությունը» գրքում առաջարկում է պատասխան: Նա նկարագրում է հետպատերազմյան շրջանից մինչև 1980-ական թվականներն ընկած ժամանակահատվածը՝ որպես չափավոր կապիտալիզմի գրեթե *Ոսկեդար* (գրեթե, որովհետև նաև այս ժամանակահատվածը չպետք է դիտել անքննադատ կերպով: Ռոբերթ Ռեյչն այս առնչությամբ հիշեցնում է տնտեսության մեջ կանանց ու փոքրամասնությունների մասնակցության պակաս հնարավորությունները): Հետպատերազմյան շրջանի

Գերկապիտալիզմը Ռոբերթ Ռեյչի կողմից ստեղծված մոդայիկ բառ է, որը կոչված է քննադատելու կապիտալիզմի զարգացումը գլոբալիզացիայի պայմաններում:

արևմտյան հասարակություններում արհմիությունների, գործատուների և կառավարությունների միջև ձեռք բերված համաձայնությամբ հնարավոր եղավ հասնել կենսամակարդակի աճի և նվազագույն սոցիալական ստանդարտների: Նախորդ տարիների «ինքնահոսի թողնված տնտեսության» հետ համեմատած՝ դա հսկայական քայլ էր: Բայց գլոբալիզացված տնտեսության «գերկապիտալիզմում» եկամտային տարբերությունները դարձյալ մեծանում են: Աշխատողների իրավունքներն ու սոցիալական ստանդարտները վտանգված են, իսկ ձեռնարկությունների սոցիալական պատասխանատվությունը նվազում է: Ռոբերթ Ռեյչը հանգում է նման վերլուծության, ինչպես սկզբում մեջբերված «Manager magazin» հանդեսը և ինչպես Թոմաս Մայերը: Շուկայի կենտրոնախույս ուժերը կարող են քայքայել ժողովրդավարությունը: Ուստի և Ռոբերթ Ռեյչը հանդես է գալիս կարգավորման և գործառույթի իրավունքների ամրապնդման ճանապարհով շուկայի կառավարումն ավելի ուժեղացնելու օգտին:

3.2. Համակարգվող և չհամակարգվող կապիտալիզմ

Սույն գրքի 2-րդ գլխում, ի դեմս տնտեսագետներ Սմիթի, Մարքսի և Զեյնսի, ներկայացվեցին տնտեսական համակարգերի իդեալական տիպերը: Իրական աշխարհում գոյություն ունեն բազմաթիվ խառը մոդելներ: Փիթեր Ա. Հոլլը և Դեյվիդ Սոսկիսը (2001թ.) արևմտյան արդյունաբերական ազգերի մոտ վեր են հանել երկու մոդել, որոնք իրենց “Varieties of Capitalism” («Կապիտալիզմի տարբերակները») գրքում անվանում են չհամակարգված և համակարգված կապիտալիզմ: Այս մոտեցումը տնտեսական համակարգերի վերլուծության ու գնահատման համար ունի պարզաբանիչ մեծ ուժ:

Ընդ որում, տնտեսական համակարգերը տարբերակվում են հետևյալ չափումների տիրույթում.

- ֆինանսական համակարգ,
- աշխատանքային հարաբերություններ,

- կրթության և մասնագիտացման համակարգ,
- միջձեռնարկութենային հարաբերություններ:

Չհամակարգվող կապիտալիզմ

Ազատական, չհամակարգվող կապիտալիզմն այս չափումների տիրույթում բնութագրվում է հետևյալ կերպ.

- Ֆինանսական համակարգ: Ձեռնարկությունների ֆինանսավորումը տեղի է ունենում հիմնականում կապիտալի շուկայի միջոցով (բաժնետոմս): Դա նշանակում է, որ ձեռնարկությունները գործում են Shareholder-Value սկզբունքով (հայերեն մոտավորապես՝ «բաժնետիրային արժեք»): Ընդ որում, կապիտալի սեփականատերերը պատրաստ են ներդրումներ կատարել նաև ռիսկային ձեռնարկություններում և այդ կերպ սպեկուլյացիա են անում հնարավորինս արագ մեծ շահութաբաժինների ակնկալիքով:
- Աշխատանքային հարաբերություններ: Չբաղվածության հարաբերություններն ավելի շատ կարճաժամկետ են («hire and fire» – «ընդունել և ազատել»), իսկ աշխատանքից ազատվելուց պաշտպանվածությունը թույլ է արտահայտված: Աշխատավարձերի վերաբերյալ պայմանավորվածությունները ձեռք են բերվում անհատական կամ ձեռնարկության մակարդակում: Գործատուների միություններն ու արհմիությունները համեմատաբար թույլ են:
- Կրթության և մասնագիտացման համակարգ: Ավելի շատ պատրաստվում են հանրիմաց կադրեր (Generalisten): Այսինքն՝ մասնագիտական կրթության ոլորտում հաղորդվում են հիմնականում ընդհանուր, ոչ անմիջականորեն մասնագիտական կողմնորոշման որակավորումներ: Դա դյուրացնում է աշխատանքի շուկայում տարբեր մասնագիտական ոլորտների միջև շարժունությունը, բայց նշանակում է նաև որոշակի աշխատանքին հատուկ մասնագիտական գիտելիքների պակաս:
- Ձեռնարկությունների միջև հարաբերություններ: Քիչ են ֆիրմաների փոխառնչությունները (օրինակ՝ երբ ձեռնարկությունները փոխադարձաբար ձևավորում են դիտորդ խորհուրդների կազմերը) և արտաձեռնարկութենային համագործակցությունը (օրինակ՝ հետազոտությունների բնագավառում): Ծյուղային միավորումներն ավելի շատ սեփական ձեռնարկությունների լրբբիստական կառույցներ են և ոչ թե ընդհանուր հասարակական պատասխանատվություն ունեցող դերակատարներ:

*Ֆինանսական
համակարգ*

*Աշխատանքային
հարաբերություններ*

*Կրթության և
մասնագիտացման
համակարգ*

*Ձեռնարկություն-
ների միջև
հարաբերություններ*

Այս համակարգը ճկունորեն և արագ կարող է հարմարվել շուկայական փոփոխություններին: Դա նշանակում է, որ արտադրական այս մոդելը նպաստում է նորարարական արդյունաբերություններին, բայց միաժամանակ նաև անկայուն և անապահով է գործառուների համար:

Համակարգվող կապիտալիզմ

Համակարգվող կապիտալիզմը բնութագրվում է հետևյալ կերպ.

Ֆինանսական համակարգ

- **Ֆինանսական համակարգ:** Որպես կանոն, ֆինանսավորումը կատարվում է բանկային վարկերի միջոցով: Դա «ավելի համբերատար» կապիտալ է, քան բաժնետիրային արժեքի մոդելում, և ավելի շատ ընձեռում է երկարաժամկետ ներդրումների հնարավորություն: Իհարկե, ձեռնարկությունների ֆինանսավորման այս ձևը կարող է դժվարացնել կապիտալի մատչելիությունը շուկայում դեռևս չկայացած դերակատարների համար, ինչպիսիք են սկսնակ ձեռնարկատերերը: Կառավարումը, շուկայից զատ, վերահսկվում ու զննահատվում է նաև այլ դերակատարների կողմից, ինչպիսիք են բանկերը, գործառուները և պետական դերակատարները (փայտիիրական մոդել):

Աշխատանքային հարաբերություններ

- **Աշխատանքային հարաբերություններ:** Աշխատավարձերի վերաբերյալ պայմանավորվածությունները համակարգված ձևով ձեռք են բերվում ոչ թե առաձին ֆիրմաների կողմից, այլ ոլորտային կտրվածքով (միասնական սակագնային պայմանագրեր): Զբաղվածության հարաբերություններն ավելի շատ երկարաժամկետ են: Կայունությունն ու սոցիալական հատուցումները կապված են իրար հետ: Կան լավ կազմակերպված գործատուների միություններ, արհմիություններ, ինչպես նաև գործառուների ձեռնարկութենային մասնակցականություն:

Կրթության և մասնագիտացման համակարգ

- **Կրթության և մասնագիտացման համակարգ:** Մասնագիտացման համակարգը միավորում է ֆիրմաներին հատուկ որակավորումներն ընդհանուր ճյուղային որակավորումների հետ և ապահովվում է աշխատողների և գործատուների գլխամասային միությունների կողմից (մասնագիտական կրթության երկվական /dual/ համակարգ): Դրա շնորհիվ հաղորդվում են ֆիրմաներին ու ճյուղերին հատուկ գիտելիքներ:

Ձեռնարկություն- ների միջև հարաբերություններ

- **Ձեռնարկությունների միջև հարաբերություններ:** Շնորհիվ կապիտալային մասնակցությունների՝ ձեռնարկությունների միջև հաճախ գոյություն ունի փոխկապվածություն: Ճյուղային միությունները կարևոր դեր են խաղում քաղաքական կյանքում:

Համակարգված կապիտալիզմն աչքի է ընկնում մեծ կայունությամբ և պակաս ռիսկամիկայով ու ճկունությամբ, քան չհամակարգված կապիտալիզմը: Այս համակարգում գոյություն ունեցող արտադրական գծերն ու գործընթացները ենթարկվում են ավելի շատ շարունակական ու փոքրամասն փոփոխության: Նորարարություններն ավելի շատ փոքր քայլերով են արվում: Նոր խնդրահարույց վիճակներին համակարգը միայն դասդաղ կարող է հարմարվել:

Երկու համակարգերն էլ ունեն իրենց յուրահատուկ առավելություններ և թերություններ: Աշխատանքային և մրցակցային ունակության մեջ մոդելներից ոչ մեկը մյուսի նկատմամբ սկզբունքային առավելություն չունի: Տարբերակումն օգտակար է երկու պատճառով:

Տարբերական օգուտը

1. Վերլուծական մոդելով կարելի է բացատրել, թե ինչու են ձևավորվում տարբեր արտադրական մոդելներ: Անգլո-սաքսոնական երկրներն իրենց ճկուն աշխատաշուկայով ու ռիսկային կապիտալի հեշտ մատչելիությամբ նպաստում են նորարարական արդյունաբերություններին, օրինակ, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում: Ահա և պատահական չէ, որ տեղեկատվական տեխնոլոգիաների Գուգլ, Մայքրոսոֆթ ձեռնարկությունները և մի շարք նորեկներ գործում են ԱՄՆ-ում: Համակարգված կապիտալիզմի այնպիսի երկրներ, ինչպես Շվեդիան և Գերմանիան, ունեն խիստ մրցունակ արդյունաբերություն, օրինակ, ավտոմեքենաշինության կամ մեքենաշինության ոլորտում: Այնտեղ արտադրվում են բարիքներ, որոնք մեծ ծավալի կապիտալի ներդրման պատճառով շատ երկարաժամկետ պլանավորման ժամանակահատվածներ ունեն: Այս

Վերլուծական հարթություն

Սոցիալական ուղղվածություն ունեցող շուկայական տնտեսություն: Համակարգված կապիտալիզմի գերմանական տարբերակի համար հետպատերազմյան շրջանից ի վեր ձևավորվել է «սոցիալական շուկայական տնտեսություն» հասկացությունը կամ, հակնարկումս Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության նախկին նստավայրի, «հռենոյան կապիտալիզմը»: Սոցիալական շուկայական տնտեսությունն արձագանք էր, մի կողմից, արդյունաբերականացման սոցիալական վայրիվերուժների, և, մյուս կողմից, նացիոնալ-սոցիալիստական դիկտատուրայի սարսափների: Այն սանձաձակ կապիտալիզմի և սոցիալիստական տնտեսակարգի միջև մի երրորդ ճանապարհի փորձն է: Վերջինս հետպատերազմյան շրջանում ուներ անթերագնահատելի գրավիչ ուժ: Բոլորովին նոր ընդունված Հիմնական օրենքը խարսխված չէր որևէ որոշակի տնտեսակարգի վրա: 15-րդ հոդվածում այն ընձեռում է արտադրամիջոցների սոցիալիզացման հնարավորություն: Կապիտալիզմի նկատմամբ մասամբ քննադատական վերաբերմունք ունեին նաև կուսակցությունները: Զրիստոնեա-դեմոկրատական միության Զյուսիսային Հռենոս-Վեսթֆալիա երկրամասի միությունն իր 1947 թվականի Աիլենյան ծրագրում հանդես էր գալիս «բրիստոնեական սոցիալիզմի» օգտին, իսկ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը պահանջում էր արդյունաբերության բազային ճյուղերի պետականացում: Այսպիսով՝ սոցիալական շուկայական տնտեսությունը Գերմանիայի բնակչությանը շուկայական տնտեսության ու ժողովրդավարության օգտին գրավելու փորձն էր:

Տևտեսագետ Ալֆրեդ Մյուլլեր-Արմաքը մեծապես նպաստել է հայեցակարգի ու հասկացության ձևավորմանը և շարադրել դրանք իր 1947 թվականին լույս տեսած «Տևտեսության կառավարում և շուկայական տևտեսություն» գրքում:

«Մենք խոսում ենք «սոցիալական շուկայական տևտեսությունից», որպեսզի հատկանշենք այդ երրորդ տևտեսաբաղադրական ձևը: Դա նշանակում է, [...] որ մեզ շուկայական տևտեսությունը ներկայանում է անհրաժեշտ որպես ապագա տևտեսակարգի կրող փայտամած, միայն թե դա հենց պետք է լինի ոչ թե ինքն իրեն թողնված, ազատական շուկայական տևտեսություն, այլ գիտակցաբար կառավարվող, և այն էլ սոցիալապես կառավարվող շուկայական տևտեսություն»: (Մյուլլեր-Արմաք, 1947թ., 88)

Դա որոշակիորեն նշանակում էր մրցակցություն, ազատ գնագոյացում և արտադրամիջոցների նկատմամբ մասնավոր սեփականություն՝ մի կողմից, և սոցիալական ապահովագրությունների և հարկային պրոգրեսիայի միջոցով սոցիալական համահարթեցում՝ մյուս կողմից: Ընդ որում, պետության դերը ճշգրտորեն որոշված չէր: Դաշնային հանրապետության գոյության առաջին տարիներին շուկային միջամտությունները սահմանափակ էին, օրինակ, մենաշնորհների ձևավորումը կանխելու նպատակով: 1970-ական թվականներից տևտեսության վրա ազդեցությունն ընդլայնվեց, մասնավորապես, կոնյունկտուրայի կառավարման միջոցով:

Հռենոսյան կապիտալիզմն ուշադրության արժանացավ ամբողջ աշխարհում, որովհետև հաջողվեց տևտեսության և զբաղվածության աճը միավորել ընդլայնվող սոցիալական պետության հետ: Նաև այլ եվրոպական երկրներ են ձգտում այս մոդելին: Եվրոպայի համար սահմանադրության նախագիծը 1-3 հոդվածներում որպես Եվրամիության նպատակ է սահմանում սոցիալական շուկայական տևտեսությունը:

Լուդվիգ Երհարդի «Բարեկեցություն բոլորի համար» խոստումն, անշուշտ, կատարվեց ոչ ամեն մեկի համար, քանի որ, մասնավորապես, 1970-ական թվականների նավթային ճգնաժամերով և վերամիավորմամբ պայմանավորված ծագեցին նոր սոցիալական հիմնահարցեր հատկապես աշխատանքի շուկայում: Այդուհանդերձ, հաջողվեց ստեղծել լայն միջին շերտ, որն էապես նպաստեց երիտասարդ ժողովրդավարության կայացմանը:

Հասկացության հանրահայտությունն այս ընթացքում հանգեցրել է որոշակի կամայականության: Ինչպես Ռորշախի թեստի պարագայում, նույն ձևով նաև այստեղ ցանկացած տարբեր հայեցակարգեր առձեռն են այդ հասկացությանը:

Գերմանիայի արհմիությունների կոնֆեդերացիայի հիմնադրությամբ ծրագրվող սոցիալական շուկայական տևտեսությունը հատկանշում է որպես «պատմական մեծ առաջընթաց»: Իսկ ընդհանուր մետալուրգիայի ոլորտի գործատուների միության կողմից ստեղծված մի կազմակերպություն կոչվում է «Նոր սոցիալական շուկայական տևտեսություն» նախածեռնություն: Այսպիսով՝ գրեթե յուրաքանչյուր բաղադրական հոսանք վկայակոչում է սոցիալական շուկայական տևտեսությունը, ընդ որում, իհարկե, սոցիալական բաղադրականության, կարգավորման և շուկայական տևտեսության հավասարակշռությունը մեկնաբանվում է ամենատարբեր կերպ:

արդյունաբերություններում չեն պահանջվում հիմնարար նորարարություններ, բայց պահանջվում են մշտական բարելավումներ: Այս գործոնները նպաստում են այնպիսի նստավայրերին, որտեղ կան լավ պատրաստված աշխատուժեր, որոնք երկարաժամկետ մտում են իրենց ձեռնարկությունում և ապահովում «համբերատար» կապիտալի հասանելիություն:

2. Նորմատիվային տեսանկյունից երկու մոդելները տարբերվում են: Սոցիալ-դեմոկրատիայի արժեքներն ավելի շատ իրականացվում են համակարգված

կապիտալիզմի երկրներում: Երկարաժամկետ զբաղվածության հարաբերությունները գործառույթին տալիս են ավելի շատ ապահովություն, քան «ընդունման և ազատման» աշխատաշուկան: Երկարաժամկետ ներդրումներ անող և ոչ թե հիմնականում կարճաժամկետ շահադիտական ակնկալիքներով առաջնորդվող ձեռնարկություններն էլ իրենց հերթին նպաստում են առավել կայուն աշխատանքային ոլորտի ձևավորմանը:

3.3. Նոր շրջանակային պայմաններ գլոբալիզացիայի մեջ

«Աշխարհը տափակ է», այսպես է կոչվում 2006 թվականին լույս տեսած մի գիրք: Ի՞նչ է ուզում ասել այս փոխաբերությունը: Զեդինակ Թոմաս Ֆրիդմենն առաջ է քաշում այն դրույթը, որ գլոբալիզացիայի շնորհիվ համաշխարհային տնտեսությունը թևակոխել է մի նոր դարաշրջան, որտեղ համաշխարհային մրցակցությունը մեծապես սաստկացել է: Ժողովրդական տնտեսություններն ընդամենը աննշան չափով ունեն պատասպարվելու հնարավորություն: Համաշխարհային մրցակցության խաղադաշտը հարթեցված է, հենց տափակ է: Ֆրիդմենն առանձնացնում է գլոբալիզացիայի մի քանի շարժիչ ուժեր:

- 1950-ական թվականներից սկսած՝ միջազգային համաձայնագրերով քայլ առ քայլ վերացվում են առևտրային խոչընդոտները: Առևտրի համաշխարհային կազմակերպության (WTO, նախկինում՝ GATT) համաձայնագրերով իջեցվել են մաքսային տուրքերը, և վերացվում են ներկրման սահմանափակումները: 1970-ական թվականներից սկսած՝ երկրների արժույթների միջև փոխարժեքները հիմնականում ազատ են: Եվրամիության և ՆԱՖՅԱ-ի (ԱՄՆ, Կանադա և Մեքսիկա) տարածաշրջանային ազատ առևտրային գոտիներում առևտրի բոլոր սահմանափակումները գործնականում արդեն վերացված են: Մերկոսուրի (Mercosur) դաշինքները Լատինական Ամերիկայում և ԱՄԵԱՆ-ը Հարավարևելյան Ասիայում ձգտում են նման բանի:
- Եթե նախկինում Եվրոպան, ԱՄՆ-ը և Ճապոնիան էին համաշխարհային շուկաներում գերիշխող ուժերը, հիմա ավելի ու ավելի շատ երկրներ են մտնում մրցակցության մեջ: Չինաստանը, 1970-ական թվականներից սկսած, քայլ առ քայլ համաշխարհային շուկայի և շուկայական տնտեսության առջև իր մեկուսացված պլանային տնտեսությունը բացելով, այս ընթացքում արձանագրում է աճի բարձր տեմպեր և Գերմանիայից հետո դարձել է աշխարհի երկրորդ ամենամեծ արտահանող երկիրը: 1989 թվականի շրջադարձից հետո նախկին խորհրդային հանրա-

*Գլոբալիզացիա
– «Աշխարհը
տափակ է»*

*Գլոբալիզացիայի
շարժիչ ուժերը*

*1. Առևտրային
խոչընդոտների
վերացում*

*2. Չարգացող
երկրների վերելքը*

պետությունները և Արևելյան Եվրոպան անցել են շուկայական տնտեսության և մրցակցում են համաշխարհային առևտրի մեջ: Դրանից քիչ հետո նաև Յնդկաստանն սկսեց ազատականացնել իր մինչ այդ հովանավորչական ու խիստ կարգավորվող տնտեսությունը և հիմա գտնվում է տնտեսական աճի մասով Զինաստանին հասնելու ճանապարհին: Այսպես ընդհանուր առմամբ երկու միլիարդից ավել մարդ նոր մտել է համաշխարհային մրցակցության մեջ:

*3. Տեխնիկական
նորարարություններ*

- Տեխնիկական նորարարություններն արագացրին այդ երկու քաղաքականապես մղվող գործընթացները: Միջազգային հեռախոսազանգերի ծախսերը ապակեթելային տեխնիկայի շնորհիվ կրճատվել և հասել են այդ ծախսերի մասնիկի մակարդակի, այնպես որ Յնդկաստանի հեռախոսային կենտրոնները զանգեր կարող են ընդունել ԱՄՆ-ից: Համացանցի միջոցով կարելի է վայրկենական արագությամբ պատվերներ փոխանցել Համբուրգից Շանհայ: Փարիզյան որևէ ֆիրմայի համար ծրագրային ապահովում կարելի է մշակել հնդկական Բանգալորում: Հաշվապահությունը կարելի է Լոնդոնից Պրագա տեղափոխել: Ժամանակակից լոգիստիկան ընձեռում է համալիր արտադրական շղթաների հնարավորություն, այնպես որ առանձին մասեր կարող են արտադրվել աշխարհի տարբեր վայրերում, հավաքվել և, ի վերջո, աշխարհում ամենուրեք վաճառվել: Նավագնացության համար փոխադրման ծախսերը նվազել են, իսկ օդանավով ուղևորություններն այլևս պերճանքի ապրանք չեն:

*Գլոբալիզացիայից
շահողները՝
գիտատար
տնտեսություններ*

Ուլթե՛ր են այդ գլոբալիզացիայից շահողները: Ամենաշատ օգուտը քաղում են գիտատար Էկոնոմիկաները: Դրանք ինտենսիվ հետազոտություններ իրականացնող տնտեսական ճյուղեր ունեցող երկրներն են, որոնց համար, ահա, համաշխարհային շուկան իրացման հսկայական շուկա է բացում: Ինչո՞ւ է դա այդպես: Մեծ ծախսերով մեկ անգամ iPod մշակելով՝ կարելի է համեմատաբար էժան ծախսերով կազմակերպել դրա սերիական արտադրությունը և միլիոններով վաճառել համաշխարհային շուկայում: Տեղայնորեն սահմանափակված շուկայում մշակման ծախսերը, հնարավոր է, չարդարացնեն իրենց: Որևէ ծրագրային ապահովում, երգ կամ կինոնկար, արտադրվելուց հետո, այնքան ավելի շահույթաբեր կդառնա, որքան ավելի մեծ է իրացման շուկան:

*Բարձրորակ
արդյունաբերական
ապրանքների
թողած ազդեցու-
թյունը*

Նույնը վերաբերում է նաև բարձրորակ մշակման արդյունաբերական ապրանքներին: Ավտոմեքենայի նոր մոդելն, օրինակ, կարող է մշակվել միայն հինգից տասը տարի տևող ժամանակահատվածում: Նոր տեխնոլոգիաները, ինչպես, օրինակ, հիբրիդային շարժիչը, շահավետ են միայն այն դեպքում, եթե արտադրված մեքենաների համար մեծ շուկա կա: Այդ իսկ պատճառով Ճապոնիայի և Գերմանիայի ավտոմոբիլային արդյունաբերությունները, որոնք մշակումների համար շատ ներդրումներ

են կատարել, մեծապես շահել են գլոբալիզացիայից: Ընդհանուր առմամբ, գլոբալիզացիայից շահել են մասնագիտացման բարձր մակարդակ ունեցող այն երկրները, որոնք գրավիչ են հետազոտողների և ստեղծագործ գիտնականների համար:

Չանգվածային սպառման ապրանքների պարագայում իրավիճակն այլ է: Եթե, օրինակ, գործարանն արտադրում է կարճաթև մարզաշապիկներ, ծախսերը գրեթե նույն չափով ավելանում են, որքան դրանց արտադրված քանակը: Մասնագիտացման առավել բարձր մակարդակի և առավել բարվոք ենթակառուցվածքի միջոցով ձեռք բերվող մրցակցային առավելությունները պարզունակ արտադրության ապրանքների պարագայում, որոնց դեպքում հետազոտություններն ու մշակումները մեծ դեր չեն խաղում, այնքան էլ մեծ կշիռ չունեն: Այդ պատճառով լայն սպառման ապրանքների արտադրությունն ակնհայտորեն անհետանում է բարձր աշխատավարձի երկրներից: Դրանց արտադրությունը տեղափոխվում է այնպիսի երկրներ, որտեղ արտադրության ծախսերն ամենաքիչն են: Տեքստիլ արդյունաբերությունը նախկինում Եվրոպայի ամենամեծ տնտեսական ճյուղերից մեկն էր: Հիմա այն կարելի է գտնել միայն մի քանի շուկայական խորշերում, ինչպես, օրինակ, գեղաձև հագուստի ոլորտում: Չանգվածային ապրանքների արտադրությունը տեղափոխվել է Հնդկաստան, Բանգլադեշ կամ Չինաստան:

Դա նշանակում է, որ գլոբալիզացիայից օգուտ կարող են քաղել ինչպես կոնստրուկտորական մեծ աշխատանքով և ստեղծագործական ներդրումներով արտադրանք առաջարկող գիտատար տնտեսությունները, այնպես էլ լայն սպառման էժան ապրանքներ արտադրող երկրները: Դա նաև տեղի է ունեցել: Գերմանիան՝ որպես աշխարհում արտահանման գծով առաջատար երկիր, ամբողջ աշխարհ է արտահանում բարձրորակ ավտոմեքենաներ ու սարքավորումներ: Շրագրային ապահովումներ մշակող ամերիկյան Գուգլ և Մայքրոսոֆթ ֆիրմաները Չինաստանում և Ռուսաստանում նույնքան հայտնի են, որքան իրենց հայրենի երկրում: Մյուս կողմից, գիտատար տնտեսություններն օգուտ են ստանում լայն սպառման էժան ապրանքների ներկրումից: Թոսթերներ, գուլպաներ, ԻՔԵՄ-ի կահույք, այսինքն՝ այն ամենը, ինչ արտադրվում է Չինաստանում, Արևելյան Եվրոպայում և ցածր աշխատավարձի մյուս տնտեսություններում, անցած երկու տասնամյակներում գնողունակության համեմատությամբ ավելի էժանացել է:

Չարգացումն, անշուշտ, ունի նաև սովերոտ կողմեր.

1. Գլոբալիզացիայից շահում են հասարակության ոչ բոլոր անդամները, շատերը նույնիսկ ամենևին չեն շահում, իսկ ոմանք էլ կանոնավոր կերպով դուրս են

Չանգվածային սպառման ապրանքների թողած ազդեցությունները

Գլոբալիզացիայի առավելությունները

Գլոբալիզացիայի ստվերները

Եկամուտների խտտորում իրարից

մղվում դրանից: Եվրոպայում տեքստիլ արտադրող գործարանի բանվորի համար քիչ միսիթարություն է, որ հարևան տեղեկատվական տեխնոլոգիաների ֆիրմայի պատվերների մատյանը լցված է, եթե իր ձեռնարկությունը փակվում է հետագայում ցածր աշխատավարձի որևէ երկրում արտադրությունը կազմակերպելու նպատակով: Բարեկեցությունն ընդհանուր առմամբ աճել է ինչպես բարեկեցիկ երկրներում, այնպես էլ զարգացող երկրներում: 1990 թվականից սկսած՝ երկու տասնամյակներն արձանագրում են ամբողջ աշխարհում տնտեսական ամենաբարձր աճը, որը երբևէ չափվել է: Միայն Չինաստանում 1970-ական թվականներից ի վեր 400 միլիոն մարդ հաղթահարել է ՄԱԿ-ի կողմից սահմանված բացարձակ աղքատության սահմանը, անշուշտ, մասամբ ծանր աշխատանքային պայմաններում: Բայց միաժամանակ բարեկեցության բաշխվածությունն անհավասար է, ինչպես երբեք մինչ այդ: Հատկապես զարգացող երկրներում, բայց նաև բարեկեցիկ երկրներում եկամուտների միջև տարբերությունն ավելի ու ավելի է մեծանում:

Միջազգային սոցիալական ստանդարտների բացակայություն

2. Համաշխարհային առևտրի ազատականացումը տասնամյակներ տևած կոշտ գործընթաց էր: Այդուհանդերձ, այդ, այսպես կոչված, «բացասական» գլոբալիզացիան, որի ժամանակ վերացվեցին կանոնակարգերը, նշանակալիորեն ավելի արագ առաջընթաց է ունեցել, քան «դրական» գլոբալիզացիայի, այսինքն՝ անհրաժեշտ դարձած նոր ստանդարտների մշակման գործընթացը, որը գրեթե առաջընթաց չունի: Օրինակ՝ Կիտոյի արձանագրությունը նաև 15 տարի անց չի վավերացվել բոլոր պետությունների կողմից և չի էլ պահպանվում բոլոր այն պետությունների կողմից, որոնք պարտավորվել են իրականացնել արձանագրության դրույթները: Համաշխարհային սոցիալական չափորոշիչները, ինչպես, օրինակ, գործառույթի պաշտպանության նպատակով Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից ընդունված նորմերը, պարտադիր բնույթ չեն կրում: Սոցիալական ու տնտեսական հիմնարար իրավունքների վերաբերյալ ՄԱԿ-ի դաշնագրերը միջազգային իրավունքով թեն պարտադիր են, բայց իրական հետևանքներ գրեթե չեն ունեցել: Մինչև այդ հիմնարար իրավունքների կիրարկումը դեռևս երկար ճանապարհ կա անցնելու:

Արդյո՞ք մրցակցային ճնշումը պահանջում է սոցիալական և բնապահպանական ստանդարտների վերացում:

Գլոբալիզացիայի առնչությամբ արտահայտված մտահոգություններից մեկը «դեպի հատակը մրցավազքն» է, այսինքն՝ նվազագույն սոցիալական ու բնապահպանական չափորոշիչների համար մղվող մրցավազքը: Այս դրույթի դեմ է խոսում այն հանգամանքը, որ ամենաբարձր սոցիալական ու բնապահպանական ստանդարտներ ունեցող երկրները նաև ամենամրցունակ ժողովրդական տնտեսություններն են: Այդ թվին են պատկանում առաջին հերթին սկանդինավյան երկրները՝ իրենց օրի-

Նակելի բնապահպանական Նորմերով և աշխարհում ամենաընդգրկուն բարօրության համակարգերով, որոնք ֆինանսավորվում են բարձր հարկերի հաշվին: Այսպիսով՝ պարտադիր չէ, որ մեծ ծախսերը միջակցությանը վնաս լինեն, եթե դրանք, ինչպես Ֆինլանդիայում, Շվեդիայում, Նորվեգիայում և Դանիայում, հանգեցնում են մասնագիտացման հոյակապ համակարգերի և հետազոտական աշխատանքի, գերազանց ենթակառուցվածքի, կոռուպցիայից զերծ արդյունավետ կառավարման, ինչպես նաև սոցիալական խաղաղության: Բարձր զարգացման հասած բարեկեցիկ երկիրն, այսպիսով, կարող է խթանել մրցունակությունն ու բարեկեցությունը նաև ազատ շուկաների պայմաններում: Անշուշտ, դրա համար անպայման նաև նախադրյալներ են անհրաժեշտ: Եթե երկրները որակապես Նույնքանով ավելին չեն առաջարկում, քան իրենց ծախսերն են, ապա գլոբալիզացիայում կորցնում են: Եվ, վերջապես, այն փաստից, որ ամենաբարձր ստանդարտներ ունեցող երկրներն ամենաշատն են շահում գլոբալիզացիայից, չի բխում, որ այդ ստանդարտները մեխանիկորեն են տարածվում:

Ի՞նչ է դա նշանակում սոցիալ-դեմոկրատիայի համար:

- Կապիտալիզմը և ժողովրդավարությունն իրենց առաջացման մեջ սերտորեն միահյուսված են:
- Կապիտալիզմը կարող է հանգեցնել ժողովրդավարությունը քայքայող անհավասարությունների: Դրանց համար սոցիալ-դեմոկրատիան պետք է գտնի պատասխաններ:
- Սոցիալ-դեմոկրատիայի տեսանկյունից համակարգված կապիտալիզմն առավել շահեկան մոդելն է: Այն երաշխավորում է առավել կայուն տնտեսակարգ՝ առավել բարձր սոցիալական համահարթեցմամբ և առավել երկարաժամկետ աշխատանքային հարաբերություններով, քան չհամակարգվող կապիտալիզմը:
- Գլոբալիզացիան հանգեցրել է համաշխարհային տնտեսական առաջընթացի և մեծ տնտեսական դինամիկայի: Բայց այն առաջ է քաշել նաև Նոր սոցիալական հարցեր:

4. ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՏՆՏԵՍԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ

Քրիստոսիան Զրեյլ, Սիմոն Ֆաուլթ

Այս գլխում՝

- Ներկայացվում են սոցիալ-դեմոկրատիայի տնտեսաքաղաքական կողմնորոշումները.
- Նշվում են սոցիալ-դեմոկրատիայի (ազատություն, արդարություն և համերաշխություն) հիմնարար արժեքները.
- Նկարագրվում են այն հիմնարար իրավունքները, որոնց լիարժեք գործողությանն ու իրականացմանն է ձգտում սոցիալ-դեմոկրատիան.
- Վերջապես, ներկայացվում են «կայունություն, սոցիալական համահարթեցում և տնտեսական դինամիկա» սկզբունքները, որոնց դրոշմը պետք է կրի սոցիալ-դեմոկրատիայի տնտեսական քաղաքականությունը, եթե այն կողմնորոշվում է հիմնարար արժեքներին ու հիմնարար իրավունքներին:

Սոցիալ-դեմոկրատիայի տնտեսաքաղաքական կողմնորոշումը բացատրելու համար նախ միանգամայն գիտակացաբար դուրս գանք նեղ տնտեսաքաղաքական շրջանակից և սկզբունքորեն հարցնենք, թե ո՞ր արժեքներին է կողմնորոշվում սոցիալ-դեմոկրատիայի հեռանկարն ամբողջ հասարակության համար: Քանզի քաղաքական գործը, անգամ եթե ինտրո առարկան այնպիսի մասնակի ոլորտներն են, ինչպիսիք են տնտեսական կամ սոցիալական քաղաքականությունը, մշտապես աչքի առաջ պետք է ունենա ամբողջ հասարակությունը:

4.1. Հիմնարար արժեքներ

Ազատություն, արդարություն և համերաշխություն՝ սրանք են սոցիալ-դեմոկրատիայի առանցքային հիմնարար արժեքները: Այն ձգտում է մի հասարակության, որտեղ այդ արժեքներն իրականացված են: Սոցիալ-դեմոկրատիայի հիմնարար արժեքները նույնակարգ են, պայմանավորում և միաժամանակ սահմանափակում են իրար:

Սոցիալ-դեմոկրատիայի հիմնարար արժեքները մանրամասն նկարագրված, վեր հանված և պարզաբանված են «Սոցիալ-դեմոկրատիայի հիմքերը» ընթերցագրքում: Այդ պատճառով այս գրքում կտրվի միայն համառոտ սահմանում:

*Ազատություն,
արդարություն և
համերաշխություն*

*Ազատություն՝
ինքնորոշված կյանք*

*Արդարություն՝
բաժնեկցություն և
ապահովություն*

*Համերաշխություն՝
միմյանց համար
պատասխանատու-
ություն կրելը*

*Պատմական
արմատները*

**Լրացուցիչ ընթեր-
ցանության համար.**
*Թոքիաս Գոմբերթ
(2008թ.), Սոցիալ-
դեմոկրատիայի
հիմքերը, Սոցիալ-
դեմոկրատիայի
ընթերցագրքեր,
հատոր 1, Երևան
2011թ.*

- Ազատություն՝ նշանակում է ապրել ինքնորոշված: Դրանով նախ ենթադրվում է պետության կամ հասարակության կողմից կամայական ոտնձգություններից ազատությունը: Բայց իրական ազատություն ձեռք է բերվում միայն այն ժամանակ, երբ ազատության օգտագործման համար ստեղծված են նաև տնտեսական ու սոցիալական նախադրյալները:
- Արդարության հիմքը բոլոր մարդկանց հավասար արժանապատվությունն է, և այն պահանջում է ոչ միայն հավասարություն օրենքի առաջ, այլ նաև բաժնեկցության և սոցիալական ապահովության հավասար հնարավորություններ՝ անկախ ընտանեկան դրությունից, սոցիալական ծագումից, ունեցվածքից կամ սեռից:
- Համերաշխությունը մարդկանց՝ միմյանց համար պատասխանատվություն կրելու և փոխադարձաբար օգնելու պատրաստակամությունն է: Սոցիալ-դեմոկրատ Յոհանես Ռաուն համերաշխությունն անվանել է հասարակությունն իրար կապող շաղախ:

Ուշագրավ է այս երեք հիմնարար արժեքների պատմությունը: Նրանց արմատները հասնում են Լուսավորության դարաշրջան և ժամանակին հեղափոխական կարգախոս էին: «Ազատության, հավասարության, եղբայրության» պահանջը հատկանշական էր 1789 թվականի Ֆրանսիական հեղափոխությանը: 18-րդ դարի կեսերից սկսած՝ բանվորական շարժումը շարունակ առաջ էր քաշում այդ պահանջները: Երբ 1863 թվականին Ֆերդինանդ Լասալի կողմից դրվեցին Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության հիմքերը, բանվորներն իրենց դրոշի վրա գործեցին «Ազատություն, հավասարություն և եղբայրություն» պահանջը:

Վերջապես, Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը նաև առաջին կուսակցությունն էր, որը 1959 թվականին իր հիմնադրությամբ ծրագրում՝ «Գողեսբերգյան ծրագրում», ամրագրեց ազատություն, արդարություն և համերաշխություն հիմնարար արժեքները: Մոտավորապես երկու տասնամյակ անց (1978թ.) նաև Զրիստոնես-դեմոկրատական կուսակցությունը որդեգրեց այդ երեք հիմնարար արժեքները, և ույնիսկ եթե՝ այլ ըմբռնմամբ:


Այսօր այդ հիմնարար արժեքներն այլևս հեղափոխական շարժման պահանջներ չեն, այլ սկզբունքորեն ընդունվում են բոլոր հիմնական քաղաքական հոսանքների կողմից: Այդուհանդերձ, սխալ կլիներ ելնել «ազատություն, արդարություն և համերաշխություն» հիմնարար արժեքների հարցում բոլոր կուսակցությունների միջև կոնսենսուսից:

Հիմնարար արժեքների հարցում քաղաքական հոսանքների միջև դեռևս կան առաջին հերթին երկու հարթություններում կարևոր տարբերություններ:

Հիմնարար արժեքների տարբեր մեկնաբանություններ

1. Առանձին հիմնարար արժեքների ըմբռնումը

Առանձին հիմնարար արժեքները կարող են մեկնաբանվել տարբեր կերպ: Օրինակ՝ ոչ բոլորն են ազատության տակ հասկանում նույն բանը: Ազատական հոսանքներն, օրինակ, շեշտում են հատկապես ազատության, այսպես կոչված, բացասական իրավունքները, այսինքն՝ պետական կամայականության դեմ պաշտպանվելու իրավունքները և մասնավոր սեփականության պաշտպանությունը: Սոցիալ-դեմոկրատիան ավելի առաջ է գնում և շեշտում, որ իրական ազատության համար վճռորոշ են ոչ միայն պաշտպանիչ իրավունքները, այլ նաև ազատության դրական հնարավորիչ իրավունքները: Սոցիալ-դեմոկրատիայի հեռանկարից իրական ազատություն, ասենք, խոսքի ազատության առնչությամբ, կնշանակի, որ բավարար չէ ազատ կարծիք արտահայտելու իրավունքն ամբազրելը, այլ որ կարևոր է կրթության միջոցով յուրաքանչյուրին ի վիճակի դարձնել՝ ազատորեն կարծիք հայտնելու իրավունքից նաև արդյունավետորեն օգտվելու:



Այ. 5. Ազատության բացասական և դրական իրավունքները

2. Հիմնարար արժեքների փոխհարաբերությունը

Մեծ նշանակություն ունի ոչ միայն առանձին հիմնարար արժեքների մեկնաբանությունը, այլ նաև դրանց փոխհարաբերությունը: Միանգամայն տարբեր բան է՝ արդյոք հիմնարար արժեքներն իրավահավասար են, թե՞ որևէ հիմնարար արժեքի պետք է վերագրել ավելի մեծ նշանակություն, քան մեկ ուրիշ հիմնարար արժեքի: Սա դարձյալ կարելի է պարզաբանել քաղաքական ազատականության օրինակով: Հիմնարար արժեքների ազատական ըմբռնման մեջ ազատությունը կենտրոնական արժեքն է: Այդ պատճառով ազատությանը, օրինակ, մրցակցության ազատությանը կամ սեփականության ազատությանը, սովորաբար ավելի մեծ նշանակություն է վերագրվում, քան արդարության արժեքին, որը կարող է սահմանափակել սեփականության ազատությունը: Սոցիալ-դեմոկրատիան հիմնարար արժեքների անհավասար կշռավորում չի անում: Այն շեշտում է, որ բոլոր հիմնարար արժեքները հավասարադաս են:

Պարզ է դառնում, որ անգամ եթե Գերմանիայում բոլոր կարևոր քաղաքական հոսանքները վկայակոչում են ազատություն, արդարություն, համերաշխություն հիմնարար արժեքները, դրանց տակ հաճախ միանգամայն տարբեր բան է հասկացվում:

4.2. Հիմնարար իրավունքներ

Հիմա եթե խորհենք, թե ուրվագծված հիմնարար արժեքները սոցիալ-դեմոկրատիայի տնտեսաքաղաքական կողմնորոշման համար ինչ են նշանակում, ապա առաջանում է կրկնակի մի հիմնախնդիր:

Նախ՝ հիմնարար արժեքներն անվիճարկելի չեն: Տարբեր քաղաքական հոսանքներ, բայց նաև տարբեր մշակույթներ դրանց հետ ինչ-որ տարբեր բան են կապում: Այսպիսով՝ դրանք լայն և համընդհանուր ընդունված հիմք չեն տնտեսաքաղաքական կողմնորոշման համար:

Երկրորդ՝ հիմնարար արժեքները շարժվում են վերացարկման բարձր մակարդակում: Երբ հարկ է նկարագրել տնտեսաքաղաքական կողմնորոշումները, դա պետք է որոշակիորեն արվի: Տնտեսաքաղաքական կողմնորոշման ճշգրիտ ու որոշակի հրահանգավորման համար սոսկ հիմնարար արժեքները դեռ բավական չեն: Այսպիսով՝ սոցիալ-դեմոկրատիայի հիմնարար արժեքները կարևոր շրջանակ են, եթե խնդրո՞ւ առարկան սոցիալ-դեմոկրատիայի տնտեսական քաղաքականության նկարագրությունն է: Անշուշտ, այդ շրջանակը դեռ պետք է դրվի առավել լայն և առավել պարտավորիչ հիմքի վրա և լցվի ճշգրիտ ու կոնկրետ պահանջներով:

Հիմնարար արժեքները՝ որպես տնտեսաքաղաքական կողմնորոշման հիմքեր կու: հիմնախնդիր

1. Հիմնարար արժեքներն անվիճարկելի չեն:

2. Հիմնարար արժեքները շատ վերացական են:

Ելակետ. Միավորված ազգերի կազմակերպության՝ մարդու իրավունքների դաշնագրերը

Այդ մարտահրավերով սոցիալ-դեմոկրատիայի ռահվիրաները միշտ զբաղվել են: Քաղաքագետ Թոմաս Մայերը, մասնավորապես, որպես պատասխան այդ մարտահրավերների, առաջարկել է, որ սոցիալ-դեմոկրատիան վկայակոչի ոչ միայն հիմնարար արժեքները, այլ նաև հիմնարար իրավունքները: *Սոցիալ-դեմոկրատիայի տեսության* համար որպես առանցքային ելակետ Մայերն այդ պատճառով նշում է Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ)՝ մարդու իրավունքների դաշնագրերում ամրագրված հիմնարար իրավունքները: «Սոցիալ-դեմոկրատիայի հիմքերը» գրքում դա մանրամասն ներկայացվել է:

Անդրվճակության և անդրպետության

Բազմաթիվ փաստարկներ խոսում են սոցիալ-դեմոկրատիայի տնտեսաքաղաքական կողմնորոշումները սահմանելիս նաև ՄԱԿ-ի դաշնագրերը վկայակոչելու օգտին:

- ՄԱԿ-ի դաշնագրերը հիմնարար իրավունքների և դրանով էլ՝ մարդկանց համակցության համար աշխարհում ամենամիասնական իրավականորեն պարտադիր անդրվճակության և անդրպետության այն աղբյուրն են:
- ՄԱԿ-ի դաշնագրերը ձևակերպում են միանգամայն կոնկրետ ու ճշգրիտ տնտեսական իրավունքներ յուրաքանչյուր անհատի համար:

Կոնկրետ ու ճշգրիտ

Այդ իսկ պատճառով այստեղ առավել ճշգրտորեն նկարագրենք ՄԱԿ-ի դաշնագրերում ամրագրված հիմնարար իրավունքները և քննենք այն հարցը, թե դրանք ինչ նշանակություն ունեն սոցիալ-դեմոկրատիայի տնտեսական քաղաքականության համար, և թե դրանով սոցիալ-դեմոկրատիան ինչպես է տարբերվում մյուս քաղաքական հոսանքներից:

1966 թ., ՄԱԿ-ի երկու դաշնագիր

1966 թվականին Միավորված ազգերի կազմակերպության կողմից մարդու իրավունքների վերաբերյալ նախագծվեց երկու միջազգային դաշնագիր:

1. ՄԱԿ-ի Քաղաքացիական դաշնագիրը

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների դաշնագիրը (Քաղաքացիական դաշնագիր) առաջին հերթին նշում է ազատության, այսպես կոչված, բացասական իրավունքները, այսինքն՝ պետության կամ հասարակության կողմից անձնական ազատությունների կամայական միջամտություններից պաշտպանվելու իրավունքները: Դրանց թվին են պատկանում, օրինակ, անձնական ազատության և անվտանգության իրավունքը (հոդված 9) կամ սեփական կարծիքն անխոչ արտահայտելու իրավունքը (հոդված 19) և ազատ ու գաղտնի ընտրությունը (հոդված 29):

2. ՄԱԿ-ի Սոցիալական դաշնագիրը

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների դաշնագիրը (Սոցիալական դաշնագիր) առաջին հերթին նշում է ազատության, այսպես կոչված, դրական իրավունքները, այսինքն՝ հնարավորիչ իրավունքները, որոնք կոչված են պետու-

թյան և հասարակության միջոցառումների միջոցով հնարավորելու և խթանելու անհատի ազատությունը: Այդ թվին են պատկանում, օրինակ, աշխատանքի իրավունքը (հոդված 6), ինչպես նաև արդար, անվտանգ և առողջ աշխատանքային պայմանները (հոդված 7), ազատ արհեստակցական միություններում կազմակերպվելու իրավունքը (հոդված 8), սոցիալական ապահովության իրավունքը (հոդված 9) և ազատ կրթության ու բուհական կրթության իրավունքը (հոդված 13):

Այս ընթացքում Զաղաքացիական դաշնագիրը վավերացվել է աշխարհի 151 պետությունների, իսկ Սոցիալական դաշնագիրը՝ 148 պետությունների կողմից: Բայց, զգույշ: Դաշնագրերը ստորագրվել են նաև այնպիսի պետությունների կողմից, որոնք պարբերաբար խախտում են ազատության հիմնարար իրավունքները: Ակնհայտ է, որ ՄԱԿ-ի դաշնագրերի սոսկ ձևական գործողությունը դեռևս բավարար չէ դաշնագրերում նկարագրված «վախից և կարիքից ազատագրված ազատ մարդու տեսլականին» հասնելու համար: Իրավունքների պահանջը և իրավունքների իրականացումը հաճախ կտրուկ տարբերվում են իրարից:

Բացի այդ՝ սոցիալական դաշնագրում ամրագրված իրավունքները պետություններին պարտավորեցնում են ոչ թե անհապաղ իրականացնել հիմնարար իրավունքները, այլ այնպիսի վարքագիծ դրսևորել, որով հիմնարար իրավունքները քայլ առ քայլ իրականանան: Այստեղ պետության համար նկարագրվում է սկզբունքորեն ձևականորեն երաշխավորված իրավունքների նաև իրական ապահովմանն ու խթանմանն ուղղված գործողությունների պարտավորություն:

Սոցիալ-դեմոկրատիայի նպատակն է ՄԱԿ-ի դաշնագրերում նկարագրված քաղաքական, քաղաքացիական, սոցիալական, տնտեսական և մշակութային հիմնարար իրավունքներն ամենուրեք այնպես իրականացնել, որ դրանք ոչ միայն ձևականորեն գործեն, այլ նաև իրական ազդեցություն ունենան: Իր էությունը սոցիալ-դեմոկրատիան ամբողջ աշխարհում ազատության դրական ու բացասական իրավունքների հետևողական իրականացման ծրագիրն է:

Բայց ազատության դրական ու բացասական իրավունքներն արդո՞ք կարելի համեմատել իրար հետ: Իրո՞ք դրանք հավասարապես կարևոր են: Թե՞ որոշներն ավելի բարձր են դասվում, քան մյուսները: Այդ մասին բանավեճ բացել է, օրինակ, Օսկար Լաֆոնթենը, երբ մի հարցազրույցի ժամանակ բարձրացրել էր այն հարցը, թե Աֆրիկայում ՁԻԱԶ-ով հիվանդներին ի՞նչ օգուտ՝ սեփական կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունքից («Թագեսչպիգել», 2008թ., օգոստոսի 15): Այսինքն՝ ազատության իրավունքներն օգնում են միայն ունևորներին, ովքեր ունեն լրատվամիջոցներով արտա-

ՄԱԿ-ի դաշնագրերով սահմանված իրավունքների պահանջը և իրավունքների իրականացումը հաճախ կտրուկ տարբերվում են իրարից

Սոցիալ-դեմոկրատիա. ՄԱԿ-ի դաշնագրերի կենսազործում

Արդյո՞ք ազատության իրավունքները կարելի է համեմատել իրար հետ

հայտվելու հնարավորություն: Արդյո՞ք մամուլի ազատությունից շահում է մեկը, ով այնքան աղքատ է, որ չի կարող թույլ տալ իրեն անգամ թերթ գնել: Իր աշխատանքի համար Նոբելյան մրցանակի արժանացած հնդիկ տնտեսագետ-փոխտնտեսաբան Ամարթյա Սեն գալիս է հետևյալ եզրահանգմանը. «Ազատ լրատվամիջոցներ ունեցող ժողովրդավարական երկրում դեռ երբեք սով չի եղել» (Սեն, 1999թ.): Բանն այն է, որ սովի պատճառը, որպես կանոն, բաշխման հիմնախնդիրներն են՝ առկա սննդամթերքի անբավարար հասանելիության իմաստով: Սեփական քաղաքացիների հանդեպ պատասխանատվություն կրելու պատրաստ և վերընտրվելու ցանկություն ունեցող կառավարությունը տևական հեռանկարում չի կարող թույլ տալ իրեն արհամարհել սոցիալական անպատեհությունները, առաջին հերթին, երբ դրանք բարձրացվում են ազատ լրատվամիջոցների կողմից: Ազատությունն, ըստ Սենի, այսպիսով, հանգեցնում է նաև սոցիալական համահարթեցման: Ընդ որում, Սենն այն կարծիքին է, որ պետությունն ու հասարակությունը պետք է ստեղծեն սեփական պատասխանատվությամբ գործելու և ազատության հիմքերը: Դա նշանակում է, որ ազատությունը միայն այն դեպքում գոյություն ունի, երբ կա սոցիալական ապահովության ու կենսապահովման նվազագույն չափ, օրինակ, առողջության և կրթության համար:

Բացասական և դրական հիմնարար իրավունքները փոխադարձաբար պայմանավորում են իրար

*Վիլլի Բրանդթ.
«Նաև ազատություն կարիքից ու վախից»*

Այսպիսով՝ քաղաքացիական ու սոցիալական հիմնարար իրավունքները, ազատության դրական ու բացասական իրավունքները փոխադարձաբար պայմանավորում են իրար և չեն կարող իրար դեմ խաղարկվել: Նաև Վիլլի Բրանդթն է կուսակցապետի իր հրաժեշտի խոսքում ընդգծել այս առնչակցությունը. «Եթե ես, ուրեմն, պետք է ասեմ, թե, խաղաղությունից բացի, ինձ համար ինչն է ավելի կարևոր, քան մնացած ամեն բան, այդ դեպքում իմ պատասխանն է առանց երկմտանքի՝ ազատությունը: Ազատությունը՝ շատերի համար, ոչ թե միայն քեզի համար: Խղճի և կարծիքի ազատությունը: Նաև կարիքից ու վախից ազատությունը» (Բրանդթ, 1987թ., 32): Այսպիսով՝ Վիլլի Բրանդթի համար խոսքը մի կողմից՝ կամայականությունից ու ճնշումից ազատության և դրանով էլ՝ ազատության բացասական իրավունքների մասին էր, բայց մյուս կողմից՝ միաժամանակ նաև նյութապես ապահով կյանք ունենալու ազատության և դրանով էլ՝ ազատության դրական իրավունքների: Ամբողջ աշխարհում հիմնարար իրավունքների իրական ազդեցության համար այսպես հստակ հանդես գալով է սոցիալ-դեմոկրատիան տարբերվում լիբերտար ժողովրդավարությունից:

Սոցիալական ժողովրդավարություն և լիբերտար ժողովրդավարություն
Սոցիալական ժողովրդավարությունը և լիբերտար ժողովրդավարությունը նախ գիտական կատարելատիպեր են, որոնք որպես իրական տիպեր դժվար թե գտնվեն: Բայց սեփական տեղը որոշելու համար կարևորվում է ժողովրդավարության այդ տարբեր մոդելների մասին պատկերացումը:

Ժողովրդավարության տարբեր մոդելներ...

Ինչպես լիբերտար ժողովրդավարությունը, այնպես էլ սոցիալ-ժողովրդավարությունը հիմնվում են լիբերալ ժողովրդավարության մոդելի, դրանով էլ՝ համատեղ արմատների վրա:

- Իրավապետական և բազմակարծական ժողովրդավարություն.
- Քաղաքական իշխանության սահմանադրորեն պարտավորվածություն
- Ժողովրդի՝ մեծամասնության ժողովրդավարական սկզբունքով կազմակերպված ինքնավարություն:

Բայց նրանք հստակորեն տարբերվում են ազատության դրական և բացասական իրավունքների հարաբերության առումով: Լիբերտար ժողովրդավարությունը ելնում է այն բանից, որ ազատության դրական իրավունքների երաշխավորումը կրճատում և ի վերջո նույնիսկ քայքայում է ազատության բացասական իրավունքները: Սոցիալ-ժողովրդավարությունը, ընդհակառակը, ելնում է այն բանից, որ ազատության բացասական և դրական իրավունքները պետք է հաշվի առնվեն հավասարադասորեն, էթե՛ դրանք բոլորի համար պետք է ձևականորեն գործեն և իրական ազդեցություն ունենան:

Ազատության իրավունքների զուտ ձևական գործողությունը, ինչպես առաջարկում է լիբերտար ժողովրդավարությունը, սոցիալ-դեմոկրատիայի տեսանկյունից բավական չէ, որովհետև տնտեսական անհավասարությունները կարող են հանգեցնել՝

- կախվածության և ստորադասության հարաբերությունների,
- մարդուն անարժան աշխատանքային հարաբերությունների,
- քաղաքացիության քաղաքական իրավունքներից անհավասար օգտվելու հնարավորությանը (հմմտ. Մայեր, 2005թ., բ, 15):

Պարզաբանենք կարծիքի արտահայտման ազատության օրինակով: Լիբերտարիստական տեսանկյունից բավական է, որ պետությունը ոչինչ չի անում կարծիքի արտահայտման ազատությունը սահմանափակելու համար, այսինքն, օրինակ, մամուլի գրաքննությունից հրաժարվում է: Բայց սոցիալ-դեմոկրատիայի տեսանկյունից պետությունը մի քայլ առաջ պետք է գնա և աշխուժորեն նաև խթանի կարծիքի արտահայտման իրական ու հավասար հնարավորությունը: Դրա մեջ է մտնում, մասնավորապես, այն, որ բոլոր մարդկանց համար հավասարապես ապահովվի տեղեկատվության հասանելիությունը և տրվի կրթության հնարավորություն, որպեսզի ընդհանրապես հնարավոր լինի նախ կարծիք ձևավորել: Բացի այդ՝ զանգվածային լրատվամիջոցները տնօրինողների սեփականական իրավունքները պետք է կազմակերպվեն այնպես, որ նրանք չկարողանան օգտվել իրենց լրատ-

*Ազատության
իրավունքների
ձևական գործողու-
թյունը բավական չէ*

*Կարծիքի արտա-
հայտման ազատու-
թյան օրինակը*

վամիջոցային իշխանությունից՝ սեփական կարծիքն ավելի շատ հրապարակելու, քան մյուսներինը: Նման չարաշահումը կխախտի սեփականության սոցիալական պարտավորվածության դրույթը, որը սոցիալ-դեմոկրատիայի կարևոր հատկանիշներից է: Լիբերտարիստական տեսանկյունից անպատկերացելի է այդպիսի միջամտությունը սեփականության ազատությանը:

Սոցիալական և լիբերտար ժողովրդավարությունների տարբեր նպատակային պատկերացումներ

Այդ պատճառով, չնայած համատեղ արմատներին, սոցիալական ժողովրդավարությունը և լիբերտար ժողովրդավարությունը հիմնվում են տարբեր ենթադրությունների վրա, որոնք տևտեսակարգի առումով հանգեցնում են շատ տարբեր նպատակային պատկերացումների:

Անհրաժեշտ է շուկաների հասարակական ներառվածություն


Օրինակ՝ եական տարբերություններ են դրսևորվում շուկայի ըմբռնման հարցում: Լիբերտար ժողովրդավարությունը շուկան հասկանում է որպես ազատության արտահայտություն և այդ պատճառով ձգտում է ինքնակարգավորվող շուկայի: Դրան հակառակ՝ սոցիալ-դեմոկրատիան շեշտում է, որ լրիվ ազատ շուկաները կարող են հանգեցնել ընդհանուր հասարակական անցանկալի արդյունքների: 2008 թվականի ֆինանսական շուկայի ճգնաժամը դրա օրինակն է: Այդ պատճառով սոցիալ-դեմոկրատիան հանդես է գալիս քաղաքականորեն սահմանված շրջանակային պայմանների և պետական կարգավորման միջոցով շուկաների հասարակական ներառվածության օգտին:

Պարզ է դառնում, որ սոցիալ-ժողովրդավարությունը և լիբերտար ժողովրդավարությունը թեև պատմական դիտարկմամբ ունեն նման ելակետեր լիբերալ ժողովրդավարության մեջ, բայց հստակորեն տարբերվում են իրարից՝ հենց նաև տևտեսաքաղաքական առումով:

Շուկայի սոցիալ-ժողովրդավարական ըմբռնումն արտահայտված է նաև Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության Համբուրգյան ծրագրում.

«Մեզ համար շուկան անհրաժեշտ և մյուս տևտեսական համակարգման ձևերը գերազանցող միջոց է: Բայց ինքնահոսի թողնված շուկան սոցիալապես և բնապահպանորեն կոյր է: Այն ինքն իրենից ի վիճակի չէ հանրային բարիքները տրամադրել համարժեք ծավալով: Որպեսզի շուկան կարողանա զարգացնել իր դրական ներգործությունը, նրան անհրաժեշտ են սանկցիայի իրավասություն ունեցող պետություն, գործուն օրենքներ և ազնիվ գնազոյացում»: (Համբուրգյան ծրագիր, 2007թ., 17)

Լիբերտար ժողովրդավարություն
ընդդեմ սոցիալ-ժողովրդավարության



Նկ. 6. Լիբերալ, լիբերտար և սոցիալ-ժողովրդավարությունը համեմատության մեջ (տնտեսական ոլորտով)

4.3. Տնտեսաքաղաքական սկզբունքներ


Իսկ սոցիալ-դեմոկրատիայի հիմնարար արժեքներն ու հիմնարար իրավունքները մասնավորապես ի՞նչ են նշանակում սոցիալ-դեմոկրատիայի տնտեսական քաղաքականության համար:

Այստեղ ելնում են այն ենթադրությունից, որ սոցիալ-դեմոկրատիայի քաղաքականությունը, եթե ցանկանում է իրականացնել իր հիմնարար արժեքները, և եթե հիմնարար իրավունքները պետք է իրական ազդեցություն ունենան, պետք է կողմնորոշվի երեք սկզբունքներով՝

- աճ,
- սոցիալական համահարթեցում,
- կայունություն:

Երեք սկզբունք

Աճ, սոցիալական համահարթեցում և կայունություն



Նկ. 7. Սոցիալ-դեմոկրատիայի տնտեսաբաղաբական սկզբունքների եռանկյունին

Սոցիալ-դեմոկրատիայի տեսանկյունից այս երեք սկզբունքները պետք է իրավահավասարորեն հաշվի առնվեն տնտեսական քաղաքականության մեջ: Դրանով է սոցիալ-դեմոկրատիան տարբերվում պահպանողական, ազատականական և ծախամբոխահաճ ձայներից, որոնք համապատասխանաբար կենտրոնանում են այդ սկզբունքներից ընդամենը մեկի վրա: Քանզի որակական աճ և դրանով էլ՝ համընդհանուր բարեկեցությանը կողմնորոշված և կայուն առաջընթացք ձևավորվում է միայն այն դեպքում, երբ այդ սկզբունքներն իրավահավասարորեն են հաշվի առնվում:

Յուրաքանչյուր տնտեսաբաղաբական միջոցառում կարող է չափվել այն բանով, թե այն արդյո՞ք հավասարապես բավարարում է այդ սկզբունքները: Այսպիսով՝ այդ սկզբունքները նաև գնահատման մասշտաբ են սոցիալ-դեմոկրատիայի տնտեսական քաղաքականության համար:

Աճ

«Մարդը» (այսպես են ձևակերպում ՄԱԿ-ի դաշնագրերը) պետք է ապրի «վախից և կարիքից ազատ»: Ավելի ստույգ, այնտեղ նկարագրվում է «տնտեսական, սոցիալական և մշակութային անընդհատ զարգացման և արդյունավետ լիարժեք զբաղվածության» նպատակը: Կարիքից ազատ լինելը հարկադրաբար ենթադրում է հիմնական նյութական ապահովվածություն: Պետք է առկա լինի այնպիսի սոցիալական արդյունք, որը երաշխավորի բարեկեցության նվազագույն չափ, որպեսզի յուրաքանչյուր ոք կարողանա իրականացնել իր հիմնարար իրավունքները: Ընդ որում, խոսքը մի կողմից՝ յուրաքանչյուրի անհատական բարեկության

Տնտեսական աճ: Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ավելացում, այսինքն՝ ժողովրդական տնտեսության մեջ արտադրված բոլոր ապրանքների և ծառայությունների գների ընդհանուր գումարի աճը: Քանի որ, որպես կանոն, ելնում են աճից, լճացումը նշվում է որպես զրոյական աճ: Եթե արտադրությունը նվազում է, ապա գրանցվում է բացասական աճ: Եթե, իհարկե, գներն աճում են, ապա առավել տնտեսական անվանական աճի պարագայում դրական հաշվարկ է կազմվում: Իրական աճի պարագայում, ընդհակառակը, գնաճը հանվում է: (Տնտեսագիտական բառարան, 2009թ.)

ՄԱԿ-ի
Սոցիալական
դաշնագիր.
«Ազատություն
վախից և կարիքից»

«ԱճՆ» Համբուրգյան ծրագրում.

«Բոլորի համար բարեկեցությունը և բարձր կենսամակարդակը եղել և մնում են սոցիալ-դեմոկրատիայի տնտեսական քաղաքականության նպատակները: Անցյալում առաջընթացն առաջին հերթին հասկացվել է որպես բնակական աճ: Այսօր կլիմայի սրընթաց փոփոխությունը, բնապահպանական համակարգերի գերադատումը և աշխարհի բնակչության աճը ստիպում են մեզ զարգացմանը տալ նոր, ապագայի համար պիտանի ուղղություն: Դրանից է կախված, թե արդյոք զարգացումից առաջընթաց դուրս կգա: Մենք կամենում ենք տնտեսական դինամիկան, սոցիալական արդարությունը և բնապահպանական պատասխանատվությունը միավորող կայուն առաջընթաց: Դրա համար անհրաժեշտ է որակական աճ՝ միջոցների օգտագործման նվազեցմամբ: Մարդիկ պետք է կարողանան, շահագործումից և վախից զերծ, լավ աշխատանքով վաստակել իրենց սեփական ապրուստը: Յուրաքանչյուր մարդ պետք է արդար բաժին ստանա ձեռք բերված հարստությունից»: (Համբուրգյան ծրագիր, 2007թ., 42)

րակական բարեկեցության ասպարեզներ: Պատմականորեն կարելի է ցույց տալ, որ, որպես կանոն, ամեն անգամ այն դեպքում է սոցիալական արդյունքի բաշխումը ավելի ազնիվ և արդար եղել, քան տնտեսական անկման փուլերում, երբ ժողովրդական տնտեսությունները կայուն աճ են գրանցել: Այսպիսով՝ աճը սոցիալ-դեմոկրատիայի՝ վերևում նշված արժեքների և նպատակների իրականացման նախադրյալ է:

Բայց, ի՞նչ է ստուգապես նշանակում աճ: Ծճարիտ աճի ըմբռնումը վերջին տասնամյակներում սոցիալ-դեմոկրատիայի մեջ փոխակերպվել է:

Եկոնոմիկայի և ֆինանսների սոցիալ-դեմոկրատ նախարար Կարլ Շիլլերի գլխավորությամբ 1967 թվականին «մշտական և պատշաճ տնտեսական աճն» ամրագրվեց «Կայունության և տնտեսական աճի մասին» օրենքում որպես առանցքային քաղաքական նպատակ: Դրա հետ մեկտեղ, այսպես կոչված, «մոզական քառակուսում» որպես տնտեսական քաղաքականության նպատակներ սահմանվեցին գործազրկության ցածր մակարդակը, սղաճի ցածր տեմպերը և արտաքին տնտեսական հավասարակշռությունը: Պետության խնդիրը, ըստ այդմ, համաձայն Զեյնսի տեսության, կոնյունկտուրային տատանումները հավասարակշռելն է և հետաճից խուսափելը:

մասին է, իսկ մյուս կողմից՝ նաև համահասարակական բարեկեցության, որպեսզի հանրայնորեն սահմանված խնդիրների համար բավարար միջոցներ առկա լինեն

Ազատ, արդար և համերաշխ հասարակությունը, այսպիսով, ենթադրում է բարեկեցություն: Այդ բարեկեցությունը նախ պետք է ձեռք բերվի և ապահովվի տնտեսական աճով: Միայն բարձր արտադրողականությամբ և արժեստեղծմամբ կարող են ստեղծվել անհատական ու հասարակական բարեկեցության ասպարեզներ: Պատմականորեն կարելի է ցույց տալ, որ, որպես կանոն, ամեն անգամ այն դեպքում է սոցիալական արդյունքի բաշխումը ավելի ազնիվ և արդար եղել, քան տնտեսական անկման փուլերում, երբ ժողովրդական տնտեսությունները կայուն աճ են գրանցել: Այսպիսով՝ աճը սոցիալ-դեմոկրատիայի՝ վերևում նշված արժեքների և նպատակների իրականացման նախադրյալ է:

Աճի նվազագույն չափը՝ որպես ազատ, արդար և համերաշխ հասարակության նախադրյալ

Ո՞ր աճի հասկացությունը

1967թ., «Կայունության և աճի մասին» օրենք. «Նշտական և պատշաճ աճ»

1972թ., «Աճի սահմանները».
աճին կողմնորոշվածության բնադատություն

Մասնավորապես, 1972 թվականին լույս տեսած «Աճի սահմանները» ազդեցիկ ուսումնասիրությամբ խթանվեց այն բանի գիտակցումը, որ աճը կարող է կապված լինել նաև հումքի սպառման և շրջակա միջավայրի աղտոտման հետ: Դրանով ավելի սրությամբ դրվեց այն հարցը, թե արդյոք աճն ընդհանրապես ձգտելի է կամ տևականորեն հնարավոր:

2000թ., Լիսաբոնյան ռազմավարության շրջան. աճի տարբերակված հասկացություն

Այս ընթացքում ելևևում է աճի տարբերակված հայեցակարգից, որը փորձում է միավորել տեխնոլոգիական նորարարությունը, բնապահպանական նորացումը և սոցիալական համերաշխությունը: Այս համատեքստում 2000 թվականին կառավարությունների սոցիալ-դեմոկրատ դեկավարների գործուն մասնակցությամբ ընդունվեց, այսպես կոչված, Լիսաբոնյան ռազմավարությունը, որը նախատեսում է տասը տարվա ընթացքում Եվրոպան դարձնել աշխարհի ամենամիջուցունակ և ամենադինամիկ տնտեսական տարածքը:

Որակական աճի հասկացությունը՝ պաշարների սպառման և սոցիալական առաջընթացի տեսանկյունից

Աճի հասկացողությունն, այսպիսով, մշտական փոխակերպման է ենթարկվել: 1960-ական թվականների աճի էյֆորիային, 1970-ական թվականներից սկսած, հաջորդեց բնադատական մոտեցում: Այս ընթացքում ձևավորվել է տարբերակված տեսակետ, որն օգտագործում է որակական աճի հասկացությունը, որը, մասնավորապես, պաշարների օգտագործման կրճատման պայմաններում պետք է ծառայի սոցիալական առաջընթացին: Այդ տարբերակված հայացքը թույլ է տալիս աճը հավասարակշռել կայունությամբ և սոցիալական համահարթեցմամբ:

Սոցիալական համահարթեցում

Սոցիալական համահարթեցման՝ որպես տնտեսաբաղադրական սկզբունքի, պահանջը բխում է սոցիալ-դեմոկրատիայի հեռանկարից: Այն միաժամանակ նաև տնտեսապես է իմաստավոր:

ՄԱԿ-ի Սոցիալական դաշնագիր.
«պատշաճ ապրուստ»

Սոցիալ-դեմոկրատիայի հիմնարար արժեքներն ու հիմնարար իրավունքները լուրջ ընդունողը պետք է ձգտի տնտեսական քաղաքականության, որը կրում է սոցիալական համահարթեցման դրոշմը: Դա բխում է ոչ միայն արդարության, ազատության և համերաշխության հիմնարար արժեքներից, այլ նաև ՄԱԿ-ի դաշնագրերում ձևակերպված հիմնարար իրավունքներից: Այստեղ, օրինակ, դրված է «պատշաճ ապրուստի» պահանջ. այնուհետև նաև այն, որ «կանանց աշխատանքային պայմանները չպետք ավելի վատը լինեն, քան տղամարդկանցը, և որ նրանք նույն աշխատանքի համար նույն վարձատրությունը պետք է ստանան», որ պետք է ապահովված լինեն «բավարար սնունդ, հագուստ և օթևան», որ պետք է լինի «կրթության իրավունք» և դրանով էլ երաշխավորված լինի «անձի լիարժեք զարգացում»:

Սոցիալ-դեմոկրատիան ձգտում է սոցիալական երաշխիքով հասարակության, որտեղ յուրաքանչյուրին տրված է նյութապես ապահովված արժանապատվությամբ կյանքի երաշխիք՝ հասարակական և ժողովրդավարական կյանքին մասնակցելու համար՝ անկախ շուկայի հաջողություններից: Այդ պատճառով տնտեսական աճը սոցիալ-դեմոկրատիայի տեսանկյունից անհրաժեշտ նախադրյալ է, բայց ինքնանպատակ չէ և պետք է հաշվի առնի սոցիալական համահարթեցումը և արդարությունը: Դիսամիկ և արդյունավետ տնտեսության հասույթները պետք է արդար բաշխվեն: Դրանով երաշխավորվում է, որ մարդիկ, գոյության համար վախից զերծ, կարող են լավ աշխատանքով վաստակել իրենց ապրուստը և արդար բաժին ունենալ ազգային եկամտի աճից:

Գերմանիայի տնտեսակարգում սոցիալական համահարթեցումն ամրագրված է նաև Հիմնական օրենքի 19-րդ հոդվածում, որը Դաշնային հանրապետությունը սահմանում է որպես սոցիալական պետություն: Բացի այդ՝ 14-րդ հոդվածը սահմանում է սեփականության իրավունքի իրականացման սահմանափակում՝ հասարակության շահերից ելնելով. «Սեփականությունը պարտավորեցնում է: Դրա օգտագործումը միաժամանակ պետք է ծառայի ընդհանուրի բարօրությանը»:

Բազմաբնակարան շենքերի սեփականատերը չի կարող դրանք չարաշահել որպես սպեկուլյացիայի օբյեկտ, այլ դրանք պետք է նաև պահի բարվոք վիճակում և տա վարձակալության: Կառավարիչը պատասխանատվություն է կրում ոչ միայն

բաժնետերերի շահութաբաժինների, այլ նաև հասարակության համար, օրինակ, աշխատատեղերի պահպանման և շրջակա միջավայրի պահպանության միջոցով: Հասարակական բարեկեցությունից առանձնապես մեծ բաժին ստացող դրա դիմաց նաև առանձնապես շատ պետք է անի հասարակության համար: Սեփականության սոցիալական պարտավորվածությունը սոցիալ-դեմոկրատիայի էական հատկանիշներից է:

«Սոցիալական համահարթեցումը» Համբուրգյան ծրագրում.

«Եկամտուտները և ունեցվածքը Գերմանիայում անարդար են բաշխված: Սոցիալ-դեմոկրատական հարկային քաղաքականությունը պետք է սահմանափակի անհավասարությունը և խթանի հավասար հնարավորություններ: Մենք պաշտպանում են աշխատավարձերի աճը, որը կողմնորոշված է արտադրողականության աճին ու սղածին: Մենք ուզում ենք, որ աշխատողների ձեռքին ավելի շատ կարողություն կուտակվի: Ձեռնարկության կապիտալին աշխատողների մասնակցությունը՝ որպես եկամտուտների լրացուցիչ աղբյուր, երաշխավորում է ձեռնարկության հաջողություններում աշխատողների ավելի արդար բաժին: Բացի այդ՝ այն խթանում է Նորարարությունը և արտադրողականությունը»: (Համբուրգյան ծրագիր, 2007թ., 43 և հետո)

*Սոցիալական
համահարթեցումն
ամրագրված է
Հիմնական
օրենքում*

*Սեփականության
իրավունքի
իրականացման
սահմանափակում
հասարակության
շահերից ելնելով.
օրինակներ*

*Սոցիալական
համահարթեցման
և աշխատանքն ըստ
որակի ու քանակի
վարձատրելու
սկզբունքի միջև
հակասությունն*

*Ռոդրիգ Արժեստեդ-
ծունը ենթադրում է
սոցիալական
համահարթեցում*

*Նաև քննադատող-
ներն են խոստովա-
նում. սոցիալական
պետությունը
խթանում է
արտադրողականու-
թյունը*

*Աճին կողմնորոշվա-
ծության և
սոցիալական
համահարթեցման
հավասարակշռու-
թյունը*

Բայց, արդյո՞ք, սոցիալական համահարթեցումը չի հակասում աշխատանքն ըստ որակի ու քանակի վարձատրելու շուկայական սկզբունքին: Արդյո՞ք սոցիալական համահարթեցումը չի խոչընդոտում աշխատանքի ազդակներին, որոնք կարևոր են դինամիկ տնտեսության և աճի համար: Այս հարցերը մատնանշում են աճին կողմնորոշվածության և սոցիալական համահարթեցման միջև իսկապես գոյու-թյուն ունեցող լարումնային հարաբերությունը:

Անշուշտ, կա նաև հակառակ կապ: Արտադրողականության և աճի զարգացման համար մշտապես անհրաժեշտ է նաև սոցիալական հիմք: Արժեստեդծունը ենթադրում է սոցիալական համահարթեցման նվազագույն չափ: Այսպես՝ ամերիկացի տնտեսագետ Դենի Ռոդրիգես ապացուցել է, որ սոցիալական ապահովության մեծ ծավալ ապահոված պետությունները նաև եղել են տնտեսական հաջողություններ ունեցած պետություններ: Դա հիմնվում է, մասնավորապես, այն բանի վրա, որ սոցիալական ապահովությունը բաժրացնում է անհատական աշխատանքային պատրաստակամու-թյունը: Ով սոցիալապես ապահովված է, նա ավելի շուտ է պատրաստ շրջադարձին, ռիսկերի գնալուն և նոր բաների հանդգնելուն (հմտ. Ռոդրիգե, 1997թ., 178 և հետո):

Այս կապը քիչ է վիճարկվում: Նաև Մյունխենի տնտեսական հետազոտությունների ինստիտուտի (ifo) Նախագահն է շեշտել. «[Համերաշխությունը], սակայն, երիտասարդներին տալիս է ապահովություն և ինքնավստահություն, որ նրանց պետք է կյանքի ռիսկային և բազմախոստում հնարավորություններից օգտվելու համար: Ուստի և ես համոզված չեմ, որ ճիշտ է այն տարածված կանխակալ կարծիքը, թե սոցիալական պետությունը բոլորիս վրա թանկ է նստում: Ընդհակառակը, միանգամայն հնարավոր եմ համարում, որ միայն դրա շնորհիվ է ծավալվել այն արտադրողական ուժերի մեծ բաժինը, որոնք պատասխանատու էին հետպատերազմյան շրջանի տնտեսական վերելքի համար» (Չինն, 1986թ., 566-577):

Չեռևաբար, սոցիալ-դեմոկրատիան ձգտում է աճին կողմնորոշվածության և սոցիալական համահարթեցման հավասարակշռության: Դրա կոնկրետ օրինակ է շվեդական մոդելը: 6-րդ գլխում երկրների օրինակով պարզ է դառնում, որ սոցիալական համահարթեցման բարձր մակարդակը Շվեդիայի տնտեսական նշանակալից հաջողության պայման է:

Կայունություն

Կայունությունը սոցիալ-դեմոկրատիայի տնտեսական քաղաքականության երրորդ ամանցքային սկզբունքն է: Կայունությունը ներառում է բնապահպանական, տնտեսական և սոցիալական չափումներ:

*«Կայունություն»
հասկացության
ակունքը
անտառտնտեսու-
թյան ոլորտն է:*

Կայունության (Nachhaltigkeit) հետ նախ հաճախ կապվում են բնապահպանական հարցեր: Իրականում կայունության շուրջ առաջին մտորումները նաև բխում են բնապահպանական նկատառումներից: «Կայունություն» հասկացությունն սկզբնապես սերում է անտառտնտեսության ոլորտից: Անտառից միշտ առավելագույնը պետք է վերցնել ընդամենն այնքան բնափայտ, որքան կարող է վերստին աճել. սա էր պահանջում 18-րդ դարում անտառագետ Գեորգ Լուդվիգ Չարթիգը: Այսօր բնապահպանական կայունություն՝ նշանակում է, որ շրջակա միջավայրը՝ որպես գալիք սերունդների համար վճարող կենսահիմք, պետք է պահպանվի հնարավորինս անխաթար վիճակում: Այդ պատճառով կարևոր ասպեկտներ են պաշարների խնայումը, կլիմայի պաշտպանությունը, տեսակների պահպանությունը և շրջակա միջավայրի աղտոտվածության սահմանափակումը: ՄԱԿ-ի Սոցիալական դաշնագրում ամրագրված հիմնարար իրավունքները ևս, մատնանշելով «շրջակա միջավայրի հիգիենայի բոլոր ասպեկտների բարելավումը», (հոդված 13), շեշտում են, որ նախ պետք է պաշտպանվեն յուրաքանչյուրի բնական կենսահիմքերը: Ոչ միայն այն պատճառով, որ հակառակ դեպքում գալիք սերունդները կգրկվեն գոյության տարրական պայմաններից, այլ նաև այն պատճառով, որ այստեղ և հիմա մարդկանց հույսը մաքուր խմելու ջուրն է և առողջ օդը:

Սոցիալ-դեմոկրատիայի ներկայացուցիչներն արդեն վաղուց են մատնանշել կայունության նշանակությունը.

«Մենք մեզ պետք է տանք այն հարցը, թե երկիրն արդյոք չի՞ ընկնի աղետալի վիճակի մեջ, եթե բնակչության պայթյունը շարունակվի, և եթե մարդկությունը շարունակի աճող արագացմամբ այդպես օգտագործել անավելացելի բնական պաշարները, ինչպես հակված է դա անելու: [...] Հանուն նրանց ապագայի, ովքեր մեր զավակներն ու թոռներն են, մենք բոլորս պետք է պատրաստ լինենք կանգ առնելու և, որտեղ անհրաժեշտ է, քչով բավարարվելու»: (Գուսթավ Հայնեման, 1972թ.)

*1972թ., Գուսթավ
Հայնեմանի
կայունության
գաղափարը*

1983 թվականին այս գաղափարը որդեգրեց Միավորված ազգերի կազմակերպության կողմից ստեղծված Բրունդլանդի հանձնաժողովը (այսպես է կոչվել Նորվեգիայի Նախկին վարչապետի անունով): Այն ամրագրում էր.

*1983թ.,
Բրունդլանդի
հանձնաժողով*

«Տնական զարգացումն այն զարգացումն է, որը բավարարում է ներկայի պահանջները՝ չդիմելով այն ռիսկին, որ ապագա սերունդները չկարողանան բավարարել իրենց սեփական կարիքները»: (Մեքերթուն Լասո՝ Յու.Ֆ.Ֆ 1987թ., 46)

Բայց «կայունություն» հասկացությունը, բնապահպանական չափումից զատ, ունի նաև տնտեսական չափում: Դա շեշտվում է 1998 թվականին «Կայունություն - տեսլա-

*Կայունության
տնտեսական
չափումը*

կանից՝ իրականացում» հայեցակարգի առնչությամբ Գերմանիայի Բունդեսթագի ստեղծած ուսումնասիրող հանձնաժողովի ներկայացրած եզրափակիչ զեկույցում, որտեղ ասվում է, որ տնտեսական կայունություն՝ նշանակում է, որ բարեկեցության հասնելը պետք է հնարավոր լինի նաև գալիք սերունդներին՝ սոցիալական շուկայական տնտեսությունը պահպանելու համար: Այդ նպատակով հանրային ծախսերը, հատկապես սոցիալական պետության, պետք է տևականորեն ապահովված լինեն լուրջ ֆինանսավորմամբ, և երկարաժամկետ հեռանկարում պետք է ներդրումներ արվեն կրթության, հետազոտությունների և ենթակառուցվածքների ոլորտներում:

«Կայունությունը» Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության Յամբուրգյան ծրագրում.

«Կայունության սկզբունքը նշանակում է մտածել ապագայի հեռանկարից, հակադրվել կարճաժամկետության առաջնայնությունը, ինչպես և տնտեսականի գերակշռությանը, զուտ մակրոտնտեսական տրամաբանությունը, մշակել քաղաքականության հայեցակարգը՝ հասարակության գաղափարից ելնելով, և ընթանել ժողովրդավարական բազմազանությունը, բնապահպանական հարատևությունը, սոցիալական ինտեգրացիան և մշակութային բաժնեկցությունը՝ որպես սոցիալ-դեմոկրատիայի քաղաքականության առաջնորդող գաղափարներ»: (Յամբուրգյան ծրագիր, 2007թ., 17 և հետո)

*Նախագգուշացնող
օրինակ*

Տնտեսական կայունության նշանակությունը հատկապես ակնհայտ է համաշխարհային ֆինանսական շուկաների ճգնաժամի հանդիման: Սոսկ կարճաժամկետ կողմորոշված շահույթի ձգտումը, որը հաշվի չի առնում կայունությունը, կարող է ոչ միայն վտանգի տակ դնել առանձին ձեռնարկությունները, այլև ապակայունացնել ամբողջ ժողովրդական տնտեսություններ:

*Յամբուրգյան
ծրագիր. «Կայունություն՝ նշանակում է
մտածել ապագայի
հեռանկարից»*

Բայց կայունությունը պարունակում է նաև սոցիալական չափում: Սոցիալական կայունությունը նշանակում է հասարակության բոլոր անդամների տևական բաժնեկցություն և սոցիալական լարումների տևական հավասարակշռություն: Այսինքն՝ այստեղ խոսքը հիմնական պահանջների և հասարակության բաժնեկցության կայուն ապահովման մասին է:

*Կա՞, արյոք, այդ
երեք սկզբունքների
միջև լարումնային
հարաբերություն*

Որակական աճ. երեք սկզբունքների իրավահավասար իրականացում

Աճ, սոցիալական համահարթեցում, կայունություն՝ այս երեք սկզբունքները պետք է սոցիալ-դեմոկրատիայի տնտեսական քաղաքականության մեջ իրականացվեն իրավահավասար կերպով: Բայց, արյոք՞ դա ընդհանրապես հնարավոր է: Արյոք՞ սոցիալական համահարթեցումը չի սահմանափակում հասարակության աճի հնարավորությունները: Մի՞թե աճն, ի վերջո, նաև հումքի կարիք չունի և այդ կերպ չի հանգեցնում կայունության

սահմանափակման: Երեք սկզբունքները կարծես թե լարումնային հարաբերության մեջ են գտնվում: Ինչպե՞ս կարող են դրանք իրականացվել իրավահավասարոյն:

Վիլլի Բրանդթն այս խորհրդածությանն անդրադարձել է արդեն իսկ 1973 թվականին՝ աճի և կայունության սկզբունքների օրինակով:

«Ոչ առանձին մարդը, ոչ էլ հանրությունը չեն կարող ապրել բնության հաշվին: Այլապես մեր շրջակա միջավայրի զարգացումը կլինի անմարդկային: [...] Աղմուկը, օդի և ջրի աղտոտումն իրականում հարցականի տակ են դնում տնտեսական աճի օգուտները: Բայց ես զգուշացնում եմ մտքի այն կարծ միացումից, որը ելքը կտեսնի աճի և արտադրողականության ընդհանուր սահմանափակման մեջ: Ավելի շատ խոսքը տնտեսական աճի որտեղի, ինչպեսի և ինչի համարի և այն բանի գիտակցման մասին է, որ աճն ու տնտեսական սկզբունքը պետք է ծառայեն մարդուն: Եթե «հարաբերությունները» չպետք է իշխեն մեզ վրա, այլ մենք են ուզում դրանց իշխել, ապա պետք է փոքր-ինչ սուր մտորենք, երբեմն նույնիսկ ավելի քրտնալից աշխատենք»: (Վիլլի Բրանդթ, Կառավարության 1973թ. հունվարի 18-ի հայտարարությունը)

Վիլլի Բրանդթ՝
աճի և կայունու-
թյան հարաբերու-
թյան մասին

Դրանով Վիլլի Բրանդթը մատնանշում է այն, որ խոսքը կարող է լինել ոչ թե աճի սկզբունքի անվերապահ պաշտպանության, այլ միշտ էլ միայն այն հիմնովին խորհրդածման մասին, թե որտե՞ղ, ինչպե՞ս և ինչի՞ համար պետք է աճ տեղի ունենա: Ո՞ւմ պետք է այն ծառայի, և ո՞վ է շահում դրանից: Այսպիսով՝ սոցիալ-դեմոկրատիայի համար խոսքը ոչ թե աճի կոյր հասկացության մասին է, այլ որակական աճի, որը իրավահավա-

Առանցքային
հարցեր. որտե՞ղ,
ինչպե՞ս և ինչի՞
համար

«Որակական աճը» Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության Զամբուրգյան ծրագրում.

«Մենք աշխատում ենք կայուն առաջընթացի համար, որը միավորում է տնտեսական դինամիկան, սոցիալական արդարությունը և բնապահպանական բանականությունը: Որակական աճի միջոցով մենք կամենում ենք հաղթահարել աղքատությունը և շահագործումը, բոլորի համար հնարավորել բարօրություն ու լավ աշխատանք և դիմակայել կլիմայի սպառնալից փոփոխություններին: Զարկ է ապահովել բնական կենսապայմանները նաև գայլի սերունդների համար և բարձրացնել կյանքի որակը: Այդ նպատակի համար մենք կամենում ենք գիտական ու տեխնիկական առաջընթացի հնարավորությունները ծառայեցնել մարդուն»: (Զամբուրգյան ծրագիր, 2007թ., 5)

սարորեն հաշվի է առնում սոցիալական համահարթեցումն ու կայունությունը:

Եթե, Բրանդթի ասածի իմաստով, փոքր-ինչ ավելի սուր խորհենք, ապա արագ կերևա, որ երեք սկզբունքները ոչ միայն լարումնային հարաբերության մեջ են, այլ նաև կարող են փոխադարձաբար պայմանավորել և օժանդա-

Կայունությունը
կարող է խթանել
աճը: Օրինակ՝
բնապահպանական
արդյունաբերական
բաղաբաժանու-
թյունը (գլուխ 7)

կել իրար: Վերևում պարզ դարձավ, որ սոցիալական համահարթեցումը դիմամիկ տնտեսության համար նախադրյալ է: Բնապահպանական կայունությունը ևս կարող է խթանել աճը: Արդեն այսօր Գերմանիայում վերարտադրվող էներգետիկայով զբաղվող ճյուղերը դասվում են գերմանական տնտեսության աճի կարևոր շարժիչների շարքը և մեծ ծավալով աշխատատեղեր են ապահովում: 7-րդ գլխում բնապահպանական արդյունաբերական քաղաքականության առնչությամբ պրակտիկայից բերվող օրինակը նկարագրում է նման առնչակցություն:

Աճի, սոցիալական համահարթեցման և կայունության կապից ստացվում է որակական աճ

Այսպիսով՝ ակնհայտ է, որ աճի, սոցիալական համահարթեցման և կայունության երեք սկզբունքները հավասարաչափ ապահովելու պահանջը մեծ մարտահրավեր է, բայց միաժամանակ նաև կարող է լինել մեծ շանս: Այդ երեք սկզբունքներից բխող հետևանքները պետք է պարբերաբար վերստուգել և վերահամաձայնեցնել: Վերջին ճշմարտություններ այստեղ չեն կարող լինել: Բայց եթե այդ սկզբունքները հաշվի են առնվում հավասարաչափ կերպով, ապա առաջանում է որակական աճ, որից շահում է ամբողջ հասարակությունը:

4.4. Ակնարկ. որակական աճի չափումը

Ինչպե՞ս կարելի է տնտեսական առաջընթացն արտահայտել թվերով: Տնտեսական զարգացման համար տարածված ցուցորդ (Indikator) է համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ): ՀՆԱ-ն մեկ տարվա ընթացքում երկրի ներսում արտադրված բոլոր ապրանքների և ծառայությունների ընդհանուր արժեքն է: Երբ ՀՆԱ-ն աճում է, ապա խոսում են տնտեսական վերելքի, երբ այն լճանում կամ նվազում է, հետաճի մասին: ՀՆԱ-ի նշանակությունն անհնար է ուրանալ: Հանրային բյուջեները, գործազրկության կրճատումն ու հասարակության բարեկեցությունը կախված են տնտեսական աճից:

Սակայն տնտեսական առաջընթացը չափելիս ՀՆԱ-ն երևան է բերում բազմաթիվ կույր բծեր: Հատկապես սոցիալ-դեմոկրատիայի տեսանկյունից ՀՆԱ-ի սուկական դիտարկումից ուրվագծվող պատկերը ոչ լիարժեք է, քանզի այն նկարագրում է միայն, թե ընդհանուր ինչքան է արտադրվում: Այն ոչինչ չի ասում հետևյալ հարցերի մասին.

- Ինչպե՞ս է բաշխվում ստացված ներքին արդյունքը: Արդյո՞ք բաշխումն արդար է: Արդյո՞ք ռեսուրսների մեծ բաժինը հասնում է փոքրամասնությանը: Ի՞նչ չափանիշներով է կատարվում բաշխումը: Ըստ կարիքավորության՞, աշխատանքի՞, թե՞ սոցիալական շերտի:

Բնապահպանական առաջընթաց = Համախառն ներքին արդյունք

Համախառն ներքին արդյունքի կույր բծերը

1. Բաշխում

- Որքանով է արտադրությունը բնապահպանության տեսակետից անվնաս: Արդյո՞ք միջոցներ ներդրվում են շրջակա միջավայրի պահպանության մեջ: Թե՞ աճը ձեռք է բերվում բնության գիշատիչ շահագործմամբ:
- Ինչպե՞ն է ստացվում աճը, և ու՞ր են հոսում հասույթները: Արդյո՞ք այն ձեռք է բերվում սպառողական ու պետական պարտքի հաշվին: Թե՞ ներդրումներ են կատարվում ենթակառուցվածքների, կրթության ու հետազոտությունների ոլորտներում, որ երկարաժամկետ աճի հնարավորություն լինի:
- Ինչպե՞ն են հաշվի առնվում ոչ դրամային աշխատանքները: Արդյո՞ք ՀՆԱ-ն աճում է միայն այն պատճառով, որ ավելի շատ են աշխատում: Եթե հասարակական հիմունքներով և ընտանեկան աշխատանքը փոխարկվում է վաստակային աշխատանքի, այդ դեպքում ինչո՞ւ է աճում ՀՆԱ-ն, թեև փաստորեն նույն բանն է ձեռք բերվում:

Այս հարցերին պատասխանելու համար պետք է մշակել տնտեսական առաջընթացի համալիր հասկացություն, ինչպես նաև աճի տարբերակված հասկացություն, որն ավելին է, քան այն հարցը, թե ժողովրդական տնտեսությունն ընդհանուր ինչքան է արտադրում:

Աճի դասական հասկացություն	Աճի ընդլայնված հասկացություն
<ul style="list-style-type: none"> • տնտեսական արդյունքի հանրագումար 	<ul style="list-style-type: none"> • տնտեսական արդյունքի հանրագումար • սոցիալական համահարթեցում • կայուն զարգացում

Աճն ավելի ընդգրկուն կերպով արտահայտող մոտեցումներ տվել է մասնավորապես, Համաշխարհային բանկի տնտեսագետ և այլընտրանքային Նոբելյան մրցանակի դափնեկիր Չերման Է. Դեյլին (Դեյլի և Քոբբ, 1989թ., Դեյլի, 1996թ.), որը մասնակցել է փաստացի առաջընթացի հաշվարկման մեթոդի՝ իսկական առաջընթացի ցուցորդի (ԻԱՑ), մշակմանը: Հաշվարկման այդ մեթոդով համախառն ներքին արդյունքը լրացվում է գործոններով, որոնք կոչված են արտացոլելու տնտեսական գործունեության իրական ծախսերը (Լոն, 2003թ.): Ի լրումն ՀՆԱ-ի՝ ցուցորդ ներառվող գործոններն են, մասնավորապես, եկամտի սոցիալական բաշխումը, անհատույց, ինչպես նաև հասարակական հիմունքներով աշխատանքը, կրթության, քրեական հանցագործությունների, ազատ ժամանակի, պաշարների սպառման, շրջակա միջավայրի աղտոտվածության աճը և հանրային ենթակառուցվածքի մեջ կատարվող ներդրումները: ԻԱՑ-ի և նման ցուցորդների հաշվարկը, իհարկե, խիստ բարդ է, իսկ ճշգրիտ կազմությունը և գնահատումը՝ վիճելի: Չնայած ամե-

Նայն արդարացի քննադատությունը՝ նման հաշվարկներն, այնուամենայնիվ, կարևոր նպաստ են հաշվարկման ընդունված մեթոդների թույլ կողմերը, ինչպես ՀՆԱ-ինը, բացահայտելու գործում:

«Redefining Progress» ոչ կառավարական կազմակերպությունը www.progress.org հասցեի տակ կանոնավոր կերպով հրապարակում է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) անդամ պետությունների իսկական առաջընթացի ցուցորդը: Ընդ որում, պարզ է դառնում, որ ԻԱՑ-ով չափվող առաջընթացը շատ ավելի քիչ կարող է լինել, քան ենթադրել է տալիս համախառն ներքին արդյունքի աճը: Առաջին հերթին շրջակա միջավայրի աղտոտվածության և սոցիալական անարդարության ներգրավման պատճառով որոշ երկրներում ԻԱՑ-ը նույնիսկ հետադարձ է:

ՀՆԱ-ին այլընտրանքներ գտնելու ջանքերը շարունակվում են: Ֆրանսիայի Նախագահ Սարկոզին ստեղծել է բարձրաստիճան կազմ ունեցող փորձագիտական հանձնաժողով, որը պետք է մշակի ցուցորդներ, որոնք հաշվի կառնեն կյանքի որակը, սոցիալական առաջընթացը և բնապահպանական ասպեկտները: Այդ հանձնաժողովի արդյունքները ներառվելու են կառավարության հետագա աշխատանքի մեջ:

Լրացուցիչ ընթերցանության համար.

*Միխաել Դաուդերշտեդթ (2007թ.),
Սոցիալական արդյունավետություն, թե՞ վերաբաշխում: Նոր արժեստեղծման քաղաքականության մարտահրավերներ, «Berliner Republik» 3/2007թ..*

5. ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

Թորիաս Գոմբերթ

Այս գլխում՝

- համեմատվում են Բունդեսբազում ներկայացված կուսակցությունների ծրագրերի տնտեսաքաղաքական ասպեկտները,
- համակարգված և չհամակարգված տնտեսությունների մոդելի հիման վրա վերլուծվում են նրանց նպատակային պատկերացումները
- և դասակարգվում ըստ այն որակական աճի նկատմամբ նրանց ունեցած դիրքորոշման, ինչպիսին սոցիալ-դեմոկրատիան է նախատեսում որպես մոդել:

Ո՞ր կուսակցությունից սպասել ամենամեծ տնտեսաքաղաքական ձեռնհասությունը: Ո՞ր կուսակցությունը լավագույնս կլուծի աշխատաշուկայի հիմնախնդիրները: Ո՞ւմն են սոցիալական քաղաքականության ոլորտի ամենալավ հայեցակարգերը: Այս հարցերը ներկայացվում են Գերմանական Բունդեսբազի ընտրությունների շեմին արվող ամեն մի վերլուծության մեջ: Չհաշված որոշ շեղումներ՝ սովորաբար բուրժուական կուսակցություններին կանոնավոր կերպով հավելագրվում է տնտեսաքաղաքական ձեռնհասություն, իսկ սոցիալ-քաղաքական ձեռնհասությունն ավելի շուտ ենթադրվում է ձախ ճամբարում: Կուսակցությունների այդ սկզբունքային տեղորոշումը մնում է համեմատաբար կայուն և կուսակցություններին տրվող գնահատականներում փաստում ընդհանուր կողմորոշվածությունը: Բայց արդյո՞ք դա ճիշտ է: Պատասխանը հետևյալն է՝ այո՛ և ո՛չ:

Տեղորոշումը սահմանափակ ծավալով արտացոլում է կուսակցություններից յուրաքանչյուրի տեսլականը կամ հիմնական շեշտադրումը: Անշուշտ, այդ հարցերը միևնույն ժամանակ խաբուսիկ են: Դրանք չեն սահմանում տնտեսաքաղաքական և սոցիալ-քաղաքական ձեռնհասությունը և չեն ստեղծում ձեռնհասությունների միջև կապ: Բայց տնտեսաքաղաքական տեսլականը չի սահմանափակվում նեղ շրջանակում տնտեսաքաղաքական գործելակերպեր հիմնավորելով, այլ պետք է շատ ավելի հեռահար ձևով հոգ տանի նաև սոցիալական քաղաքականության և այլ քաղաքական դաշտերի հետ կապվելու մասին: Տնտեսական քաղաքականությունը հասարակական քաղաքականություն է, գործուն տնտեսությունը միշտ էլ ներառված է հասարակական համակարգի մեջ, և այդ մասին ևս պետք է մտածել: Այսպիսով, եթե ցանկություն կա հետազոտելու կուսակցությունների «տնտեսաքաղաքական նպատակադրումները», ապա հարկադրաբար պետք է աչքի անցկացնել ընդհանուր ծրագրերը և ապա բացատրել այն դերը, որը պետք է ունենա տնտեսությունը պատկերացված ու նպատակադրված տնտեսական համակարգի շրջանակում:

Այստեղ կողմնացույցի պատկերն օգնում է առաջ գնալ: Կողմնորոշման համար պետք է նկարագրվի ոչ միայն նպատակադրված տնտեսությունը, այլ նաև ելակետը (ինչես նախորդ գլուխներում է դա արվել):

Եվ իսկապես, կուսակցությունները բավականին հստակորեն իրարից տարբերվում են փաստացի մակարդակի իրենց վերլուծություններով և նախատեսվող մակարդակի հայեցակարգերով, ինչպես կարելի է տեսնել համապատասխան գործող ծրագրերից: Ստորև կներկայացվեն կուսակցությունների ծրագրերն իրենց տնտեսաբաղաբական մասերով և կուրվագծվեն ըստ համակարգված և չհամակարգված տնտեսությունների նկարագրման կատեգորիաների⁷:

5.1. Համբուրգյան ծրագիր՝ Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության հիմնադրութային ծրագիր

Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը 2007 թվականին ընդունեց Համբուրգյան ծրագիրը: Այն մինչայդմյան ծրագրերի գծի շարունակությունն է: Ընդ որում, տնտեսաբաղաբական պատկերացման կորիզը, թեթևակի խմբագրամբ, պահպանվել է Գոդեսբերգյան ծրագրից (1959). «Մեք համար գործում է 'այնքան մրցակցություն, որքան հնարավոր է, այնքան կարգավորող պետություն, որքան անհրաժեշտ է' սկզբունքը» (էջ 43):

Այսպիսով՝ հիմնական պատկերացումը համակարգված շուկայական տնտեսությունն է, որն, իհարկե, պետություն-շուկա հարաբերության

մեջ տեսնում է ոչ թե համատեղ գոյակցություն, այլ քաղաքականության առաջնայնությունը: Անշուշտ, տնտեսաբաղաբական պատկերացումն ակնհայտորեն ելնում է այն

Նպատակ «Իրավահավասարություն»

«Մենք կամենում ենք կանանց և տղամարդկանց իրավահավասար և արդար մասնակցություն գոյության համար անհրաժեշտ վաստակ ապահովող աշխատանքին: Հիմնականում կանանց կողմից կատարվող աշխատանքը հաճախ ավելի վատ է վճարվում: Բայց հավասարարժեք աշխատանքի համար պետք է հավասար աշխատավարձ վճարվի: [...] Անհրաժեշտ են օրենսդրական միջոցառումներ ձեռնարկություններում, հանրային կառավարման համակարգում, գիտահետազոտական աշխատանքում, ղեկավար պաշտոններում, ինչպես նաև դիտորդ խորհուրդներում կանանց հավասար մասնակցության համար»: (Համբուրգյան ծրագիր, 2007թ., 41)

⁷ Ընդ որում, վերևում ներկայացված կատեգորիաները կրճատվում են. «Միջձեռնարկութնային հարաբերութուններ» կատեգորիան գրեթե չկա կամ ընդամենը հավանցիկ է հիշատակվում և այդ պատճառով այստեղ բաց է թողնվում:

Նպատակ «Մասնակցականություն»

Որտեղ ազգային պետությունը չի կարող այլևս սոցիալական ու բնապահպանական շրջանակներ դնել շուկաներին, այդ բանը պետք է անի Եվրամիությունը: [...] Որտեղ տնտեսական գործունեությունն անդրսահմանային է, այդտեղ աշխատողների իրավունքները չպետք է դեմ առնեն սահմաններին: Այդ պատճառով մենք կամենում ենք եվրոպական ձեռնարկություններում ապահովել և ընդլայնել գործառույթների մասնակցականությունը: Եվրոպական մակարդակում սակագնային ինքնավարությունը զորացնելու և իրականացնելու նպատակով մենք հանդես ենք գալիս անդրսահմանային սակագնային բանակցությունների և սակագնային համաձայնությունների համար եվրոպական օրենսդրական հիմքեր ստեղծելու օգտին»: (Յամբուրգյան ծրագիր, 2007թ., 26, 28 և հետո)

բանից, որ պետք է գործի միայն այնքան կարգավորող պետություն, որքան անհրաժեշտ է, այսինքն՝ քաղաքական միջամտության համար պետք է առկա լինի «անհրաժեշտություն»: Իսկ ինչու՞ է անհրաժեշտ «կարգավորող պետությունը»:

Կարգավորող պետության անհրաժեշտությունն ու սահմանները քննվում են երկու եական ասպեկտով: Մի կողմից՝

ուսումնասիրվում են չկարգավորվող կամ ոչ բավարար կարգավորվող շուկայի թերությունները: Մյուս կողմից՝ խնդիր է դրվում ներկայացնել ընդհանրապես ժողովրդավարական սոցիալիզմի նպատակային պատկերացումը (Էջ 16 և հետո), որի երաշխավորը կարող է լինել միմիայն ակտիվ ու ժողովրդավարական հասարակությունը՝ կարգավորող պետությամբ: Թերությունների ու նպատակային պատկերացման համապատկերում ուրվագծում են բաց կողմերը և այն հասարակական-քաղաքական առաջադրանքը, որն իրեն իր ծրագրով տվել է ՄԴԿ-ն:

Շուկայի ազդեցությունը, բայց նաև թերությունները Յամբուրգյան ծրագրում հստակորեն ամփոփված են. «Մեզ համար շուկան անհրաժեշտ և մյուս տնտեսական համակարգման ձևերը գերազանցող միջոց է: Բայց ինքնահոսի թողնված շուկան սոցիալապես ու բնապահպանորեն կույր է: Այն ինքն իրենից ի վիճակի չէ հանրային բարիքները տրամադրել համարժեք ծավալով» (Էջ 17): Այսպիսով՝ սոցիալական, տնտեսական և բնապահպանական պատասխանատվության կարելի է հասնել ոչ թե շուկայի միջոցով, այլ հասարակական-քաղաքական ճանապարհով: Բանն այն է, որ գլոբալիզացված շուկայի, ամբողջ աշխարհում աղքատության ու հարստության միջև առաջացած վիհի հետևանքները և բնապահպանական ճգնաժամը շուկայի միջոցով չեն լուծվում, այլ ուժեղանում են: Դրատապ անհրաժեշտ են կարգավորում և հասարակական համաձայնություն ու կառավարում, եթե տնտեսական արժեստեղծումը պետք է օգտակար լինի բոլորին:

«Ժողովրդավարական սոցիալիզմը մեզ համար մնում է ազատ, արդար և համերաշխ հասարակության տեսլական, որի իրականացումը մեզ համար հարատև առաջադրանք է: Մեր գործունեության սկզբունքը սոցիալ-դեմոկրատիան է» (Էջ 16 և հետո): Դրանով փաստացի վիճակին հակադրվում է նպատակային պատկերացումը, որը կողմնորոշված է հիմնարար արժեքներին և յուրաքանչյուր մարդու համար դրանց անսահմանափակ գործողությանն ու ազդեցությանը ոչ միայն Գերմանիայում, այլև ամենուրեք աշխարհում: Ընդ որում, նպատակային պատկերացման հիմքը զարգացման գաղափարն է, նպատակին հնարավոր է հասնել ոչ թե պետական կարգադրությամբ, այլ միայն այն դեպքում, եթե պետությունն ու քաղաքացիական հասարակության դերակատարները գործեն միասին. «Մենք, հետամուտ լինելով այս նպատակին, պնդում ենք ժողովրդավարական քաղաքականությունը և մերժում քաղաքականի ստորադասումը, որը չպետք է սահմանափակվի պետությամբ, այլ պետք է ներառի քաղաքացիական հասարակության դաշինքներ ու համագործակցության ցանցեր, ինչպես նաև մարդու ազատ, ինքնորոշված գործունեությունը» (Էջ 17):

Ընդ որում, հատկապես գլոբալիզացիան, սեռերի միջև իրավահավասարությունը և Եվրամիության աճած նշանակությունը նշվում են որպես ժամանակակից տնտեսական քաղաքականության մարտահրավերներ: Միաժամանակ պետք է շարունակել զարգացնել շուկայական տնտեսության համակարգված ձևը՝ շուկայի նշված թերությունների և նպատակային պատկերացման իմաստով:

Ֆինանսական համակարգ: Համբուրգյան ծրագրում կապիտալի և ֆինանսական շուկաների ազդեցությանը հատկացվում է առանձին գլուխ: Դա արտացոլում է ձեռնարկությունների (նաև Գերմանիայում) ֆինանսավորման և կառավարման համար աճած հասարակական նշանակությունը: «Մենք կամենում ենք կապիտալի շուկաների ներուժն օգտագործել որակական աճի համար» (Էջ 46-47): Անշուշտ, գիտակցվում են նաև թերություններն ու ճգնաժամի մեծ ռիսկը. «Ռոտեղ ֆինանսական շուկաները ձգտում են լույ կարճաժամկետ շահույթների, այնտեղ վտանգում են ձեռնարկությունների երկարաժամկետ աճի ռազմավարությունները և դրանով ոչնչացնում աշխատատեղեր: Մենք նաև կամենում ենք բաժնետիրության իրավունքի միջոցով զորացնել այն ներդրողներին, ովքեր, արագ շահույթի փոխարեն, երկարաժամկետ գործունեության ակնկալիք ունեն: Մեզ անհրաժեշտ են խաղի այնպիսի կանոններ ներդրողների և ֆոնդերի համար, որոնք կխոչընդոտեն միակողմանի շահութամիտվածությունը ձեռնարկությունների միջոցների երկարաժամկետ պահպանման հաշվին: Ապրանքային և ֆինանսական շուկաների աճող միջազգային միահյուսվածության պայմաններում դրանց միջազգա-

յին կարգավորումն ավելի մեծ նշանակություն է ստանում» (էջ 47): Դրան զուգահեռ՝ իրենց երկարաժամկետ և կայուն կողմնորոշման պատճառով խթանվելու է ինսայդրամարկոլային հաստատությունների և կոոպերատիվ բանկերի պահպանությունը, որոնք էական գործոն են փոքր ու միջին ձեռնարկությունների համար և առանցքային նշանակություն կարող են ունենալ նաև տարածաշրջանային տնտեսության համար:

Աշխատանքային հարաբերություններ: Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունն իրեն դիտում է բանվորական շարժման ավանդույթում: Տրամաբանորեն հիմնական շեշտադրումներից մեկը գործառույթի իրավունքների իրականացումն ու բարելավումն է: Այդ նպատակով պետք է պահպանել տնտեսական հիմնակարգի ներսում ներկայիս կարգավորումը: Պետք է պահպանվեն սակագնային ինքնավարությունն ու միասնական սակագնային պայմանագրերը: Զպետք է թույլ տալ, որ աշխատավարձային սակագների վերաբերյալ բանակցող կողմերի որոշումների կայացումն ընդհանրապես տեղափոխվի ձեռնարկություններ: Նվազագույն աշխատավարձերը պետք է նպաստեն սակագնային ինքնավարությանը: Զեռնարկություններում պետք է իրականացվի «ներձեռնարկութենային ժողովրդավարության» տեսլականը: Պետք է ուժեղացվի ձեռնարկությունների խորհուրդների մասնակցությունը որոշումների կայացմանը և դիտորդ խորհրդում՝ ձեռնարկատիրական մասնակցությունը: Զամբուրգյան ծրագրում ներառվել են երկու նոր ասպեկտներ, որոնք պետք է ուղղակիորեն և անուղղակիորեն ազդեն աշխատանքային հարաբերությունների վրա հոգուտ գործառույթի: Արտաձեռնարկութենային ֆոնդերի միջոցով պետք է բարձրացվի գույքում գործառույթի ունեցած բաժինը: Միաժամանակ գործազուրկների ապահովագրությունը պետք է վերափոխվի աշխատանքի ապահովագրության, որն այնուհետև ֆինանսապես կապահովվի վերապատրաստման ու ընտանեկան փուլերը և դրանով աշխատանքային հարաբերությունում կնպաստի գործառույթի դիրքերի ամրապնդմանը գործատուի հանդիման:

Մասնագիտական կրթության ու վերապատրաստման համակարգ: Պետք է պահպանվի մասնագիտական կրթության դուալ համակարգը պետական պատասխանատվության ներքո գտնվող ուսուցողական մասով՝ մի կողմից, և ձեռնարկություններում պրակտիկայի մասով՝ մյուս կողմից: Անշուշտ, մասնագիտական կրթության համար պահանջվում է համերաշխ ֆինանսավորման համակարգ: Սա միանշանակորեն ավելին է, քան ուսուցման տեղերի ավելացման համար մինչ օրս կիրառված դաշինքը: Առաջնային կրթությունը պետք է մնա կամ նորից դառնա անվճար: Ավելի մեծ կարևորություն պետք է տրվի վերապատրաստմանը՝ որպես մասնագիտական կրթության երրորդ սյան:

Արդյունաբերական քաղաքականություն: Որպես պետականորեն և հասարակականորեն խրախուսվող ոլորտներ նշվում են առաջին հերթին նոր առաջատար շուկաները (օրինակ՝ վերականգնվող էներգետիկան, ծառայությունների և առողջապահության ոլորտը, բայց նաև տեղական արհեստագործությունը): Իբրև կարևոր խնդիր առանձնացվում են հանրային ենթակառուցվածքում ներդրումները:

Դրանով Համբուրգյան ծրագիրն ընդհանուր առմամբ պահանջում է տնտեսական քաղաքականություն, որը հարիր է որակական աճին: Սոցիալական համահարթեցումը, բնապահպանական կայունությունը և աճը պետք է խթանվեն հավասարապես:

5.2. Հիմնադրույթներ Գերմանիայի համար. Քրիստոնեա-դեմոկրատական միության ծրագիրը

ԶԴՄ-ն ևս 2007 թվականին ընդունեց նոր հիմնադրույթային ծրագիր: Ընդ որում, ծրագրի առանցքը սոցիալական շուկայական տնտեսությունը որպես հաջողության և ապագայի մոդել դիտելն է: «ԶԴՄ-ն սոցիալական շուկայական տնտեսության կուսակցությունն է: [...] ԶԴՄ-ն մերժում է կոլեկտիվիզմի սոցիալիստական և մյուս ձևերը: Նույնը վերաբերում է նաև անսանձ կապիտալիզմին, որն ապավինում է միայն շուկային և իր միջից չի գտնում մեր դարաշրջանի սոցիալական հարցերի լուծում: Սոցիալական շուկայական տնտեսությունը նաև վերամիավորված Գերմանիայում և գլոբալիզացիայի դարաշրջանում մնում է մեր տեսլականը» (Էջ 46 և հետո):

Այնուհետև «կոլեկտիվիզմի» մերժումն իր արտահայտությունն է գտնում նաև «ձեռնարկատիրության» տեսլականում, որը սոցիալական շուկայական տնտեսության համար համարվում է կորիզ ու ելակետ. «ԶԴՄ-ն իրեն հայտարարում է ազատական ու սոցիալապես պատասխանատու ձեռնարկատիրության կողմնակից: Ձեռնարկատերերը և ձեռնարկությունների ղեկավարներն ստեղծում են հաստատուն ապագայով աշխատատեղեր, ինչպես նաև իրենց անվամբ և իրենց մշակութային ինքնությամբ նպաստում աշխարհում Գերմանիայի հեղինակության բարձրացմանը: Գործունեության հաջողության համար ձեռնարկատերերին անհրաժեշտ են ասպարեզներ, ինչպես նաև համապատասխան շրջանակային պայմաններ և խթաններ» (Էջ 49):

Արդեն իսկ այստեղ երևում է, որ առանցքային գաղափարը նշանակալիորեն տարբերվում է ՄԴԿ-ի առանցքային գաղափարից և հենց՝ ինչպես նպատակի, այնպես էլ ուղու հարցում: Ազատ ու սոցիալապես պատասխանատու ձեռնարկություն և

բարոյական ու սոցիալական պատասխանատվության կոչ՝ ԶԴՄ-ի մոտ, կարգավորում և ժողովրդավարական մասնակցականություն բոլոր մարդկանց համար հիմնարար իրավունքների իրականացման նպատակով՝ ՍԴԿ-ի մոտ: Այդպիսով, ԶԴՄ-ի մոտ, ինչպես սովորաբար, հասարակության ու գործառույթի հանդեպ սոցիալական պատասխանատվություն ցուցաբերելու գործը թողնվում է առանձին ձեռնարկության պատասխանատվության գիտակցմանը:

Այնուհետև, ԶԴՄ-ի համար քաղաքականության դերը պարզորոշ կերպով նվազեցված է. «Սոցիալական շուկայական տնտեսությունը մրցակցակարգ է, քաղաքականությունը սոցիալական շուկայական տնտեսությունում տնտեսակարգի ձևավորման քաղաքականություն է» (Էջ 49): Ըստ այդմ, պետության գործառույթներն են՝ տնտեսավարման ու պայմանագրային ազատության ապահովում, շուկայական արգելքներից պաշտպանություն, շուկայում գերիշխող դիրք ունեցող ձեռնարկությունների կողմից շուկայի չարաշահումից պաշտպանություն և շուկայի թափանցիկություն, միջազգային հարթությունում շուկաների բացում ազնիվ մրցակցային պայմաններում (հմմտ. էջ 49 և 52):

Շուկայական տնտեսության առնչությամբ պետության դերը դրանով իր հիմքերում ազատական ընթռնման կողմնորոշվածություն ունի, բայց միաժամանակ պահպանվում են որոշ կարգավորիչ քաղաքիչներ:

Ֆինանսական համակարգ: Միջազգային կապիտալի և ֆինանսական շուկաների աճող նշանակությունը գնահատվում է դրական, և Գերմանիայում ներդրումների շանսերը շեշտվում են. «Ֆոնդերը, փնտրելով ներդրումների հնարավորություններ, օրինակ՝ մասնավոր բաժնային կապիտալի ֆոնդերը, նաև Գերմանիայում կարող են նպաստել ձեռնարկություններն ավելի մրցունակ ու ավելի նորարարական դարձնելուն» (Էջ 52): Ռիսկն առաջին հերթին շուկայում մասնավոր ներդրումնային խմբերի ունեցած իշխանության մեջ է, բայց, «կարգավորման հուսալի շրջանակների» և թափանցիկության ապահովման համար, ըստ ԶԴՄ-ի տեսակետի, այստեղ բավական է արդեն գոյություն ունեցող միջազգային կազմակերպությունների բերած օգուտը (հմմտ. էջ 52):

Աշխատանքային հարաբերություններ: Աշխատանքային հարաբերությունների ձևավորումը ԶԴՄ-ի մոտ բխում է քրիստոնեական եկեղեցիների (էջ 50) սոցիալական էթիկայից: Ընդ որում, մատնանշվում են անհատական զարգացման հնարավորությունները. «Չաջողության հասնելու համար ձեռնարկություններին հարկավոր են մասնագիտական լավ պատրաստվածություն ունեցող, ստեղծագործ ու

շահագրգիռ աշխատակիցներ: Գործառուներին պետք են մասնակցությանն հնարավորություններ, պատասխանատվություն և ասպարեզ՝ իրենց ունակությունները համապարփակ և հաջողությամբ դրսևորել կարողանալու համար: Կրթությունն ու վերապատրաստումն ապահովում են նրանց աշխատունակությունը և արտադրողականությունը: Իրենց սեփական կյանքի պլանավորման համար գործառուներին միաժամանակ անհրաժեշտ է աշխատանքային-իրավական և սոցիալ-իրավական ապահովություն: Նրանք ունեն հասարակական բարեկեցության մեջ պատշաճ բաժնեկցության իրավունք» (Էջ 50): Աշխատանքային հարաբերությունների կոլեկտիվ պաշտպանությունը և կոլեկտիվ ձևավորումն ավելի շատ քննադատորեն են դիտվում: Այսպես, թեև պնդվում է սակագնային ինքնավարությունը, բայց սակագնային պայմանավորվածություն ձեռք բերող կողմերին կոչ է արվում ձեռնպահ մնալ ճյուղային սակագնային պայմանավորվածություններից և «իրենց պատասխանատվության շատ բաժին տալ ձեռնարկություններին» (Էջ 58): Օրենքով թույլատրվող «աշխատանքի համար ձեռնարկութենային դաշինքների» միջոցով պետք է ձեռնարկութենային կարգավորումներն ուժեղացվեն սակագնապայմանագրային կարգավորումների հանդիման: Դա նմանվում է աշխատանքային օրենսդրության (աշխատանքային իրավունքի մասնագիտական շրջաններում արդեն իսկ թեժօրեն քննարկվող) հեղափոխականացման: Մասնակցականության պահանջ դրվում է, բայց այն ավելի շատ վերաբերում է ձեռնարկութենային հարթության ուժեղացմանը՝ սակագնային պայմանագրերի հարթության հանդիման:

Մասնագիտական ուսուցման ու վերապատրաստման համակարգ: ԶԴՄ-ն ևս կողմ է մասնագիտական կրթության մեջ դուրս համակարգին, քանի որ այն «միջազգային մրցակցության մեջ ձեռնարկությունների նստավայրերի որոշման հարցում առավելություն և երիտասարդության շրջանում գործազրկության լավագույն կանխման միջոց է» (Էջ 38): Մասնավոր և հանրային գործատուներից պահանջվում է տրամադրել ավելի շատ մասնագիտական ուսուցման տեղեր, իհարկե, «ելնելով պատասխանատվության գիտակցությունից և նպատակային ազդակների [միջոցով]» և ոչ թե պետության կողմից պարտադրանքի ուժով (Էջ 39): Պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում պետք է գանձվեն «սոցիալապես տանելի ուսումնական վճարներ»:

Ընդհանուր առմամբ, ԶԴՄ-ն ներկայանում է որպես ձեռնարկությունների պատասխանատվության գիտակցության պատկերի վրա հենվող սոցիալական շուկայական տնտեսության պահապան: Ընդ որում, տնտեսաբաղաբական մասով բազմակի փոխառություններ կան ազատական գաղափարախոսությունից, օրինակ, ապակարգավորմանն ուղղված բազմապիսի առաջարկների տեսքով:

5.3. “Ապագան կանաչ է” - 90-ի դաշինք / Կանաչներ կուսակցության հիմնադրության ծրագիրը

90-ի դաշինք / Կանաչներ կուսակցությունն իր կուսակցական ծրագիրը ներկայացրել է դեռևս 2002 թվականին: Այն մեծ տարբերությամբ ամենաերկարն է այստեղ համեմատվող բոլոր կուսակցական ծրագրերից: Հիմնական կորիզը հասարակության վերափոխումն է սոցիալական ու բնապահպանական շուկայական տնտեսության ուղղությամբ՝ դեպի արևային Էներգետիկայի դարաշրջան: Բնապահպանական ռեսուրսների գիշատիչ շահագործումը դիտարկվում է որպես ապագայի ամանքային հիմնախնդիր: Բայց անհրաժեշտ վերափոխումը կազմված է որպես նախագիծ, որն ունի ոչ միայն բնապահպանական-քաղաքական, այլ նաև ընդգրկուն հասարակական-քաղաքական հետևանքներ ու նախադրյալներ:

Հասարակական-քաղաքական առումով 90-ի դաշինք / Կանաչներ կուսակցությունը կամենում է տարբերվել մյուս կուսակցություններից ազատական (ոչ շուկայական-լիբերալ) պատկերացման իրենց ձևով. «Այդ պատճառով մինչևայժմյան սոցիալական շուկայական տնտեսությունը, որը չափից շատ է ուղղորդված ձեռնարկությունների շահույթին, իր հավակնությանը չի համապատասխանում և անհետաձգելիորեն պետք է կատարելագործվի: Սոցիալականը չի կարող սահմանափակվել պետության գերատեսչական գործառնությունով: Առանց հասարակական ուժերի ազատության, ամանք քաղաքացիների ինքնորոշման և առանց սուբսիդիարության սոցիալական համերաշխությունը կարծրանում է բյուրոկրատիայի: Մեզ համար կարևորը քաղաքացիական հասարակության խթանումն է պետության միջոցներով՝ միաժամանակ պետության սահմանափակմամբ: Դա մեզ տարբերում է պետական-սոցիալիստական, պահպանողական և շուկայական-լիբերալ քաղաքական մոդելներից» (Էջ 43): Այսպիսով՝ 90-ի դաշինք / Կանաչներ կուսակցությունը պահանջում է «տնտեսակարգային մի շրջանակ», որտեղ կերաշխավորվեն բնապահպանական, սոցիալական և մշակութային շահերը (Էջ 46):

Ֆինանսական համարգ: Ֆինանսական համակարգը ներկայիս տեսքով արժանանում է 90-ի դաշինք / Կանաչներ կուսակցության քննադատական գնահատականին: Ընդհանուր առմամբ, նրանց համար կարևորը «շուկայում գերիշխող համաշխարհային խաղացողների (Global Player)» իշխանությունը փշրելն է. «այդ պատճառով մենք կարևորում ենք մի կողմից՝ ժողովրդավարական պատասխանատվությամբ կարգի շրջանակումը, մյուս կողմից՝ բնապահպանական իրազեկվածությունը և կրթությունը, շրջակա միջավայրի համար անվտանգ տեխնիկաների և ապրանք-

ների համար տնտեսական խթանները, ինչպես նաև արդյունաբերության հետ պայմանավորվածությունները» (էջ 27 և հետո): Այդ պատճառով նրանք առանձնակի նշանակություն են տալիս շուկաների սոցիալական ներառվածությանը (Einbettung). «Տնտեսական գլոբալիզացիայի և այդ գործընթացի քաղաքական կառավարման ու ներառվածության պակասության միջև բացը պետք է վերացվի: Եվրամիությունն առայժմ պետությունների համատեղ պատասխանատվության ամենահեռուն գնացած հայեցակարգն է, որի համար այդ պետությունները տվել են սեփական ինքնուրույնության մի մասը: ԵՄ-ն պետք է թողնի տնտեսական քաղաքականության մեջ իր նորագատական ֆիքսվածությունը և առավել ակտիվ դեր խաղա գլոբալիզացիայի սոցիալական ու բնապահպանական ձևավորման գործում» (էջ 17): Դա շարունակվում է նաև համաշխարհային տնտեսության մասով. դրվում է միջազգային կառույցների կատարելագործման ու ֆինանսական տրանսակցիաների համար պարտադիր կանոնների և նվազագույն չափորոշիչների սահմանման պահանջ (էջ 59): Տեղական բանկերի և ինսյուրամարկդերի դերը՝ միջին խավի համար իրենց գործառնություն, ի տարբերություն ՍԴԿ-ի, չի նշվում, չնայած որ տարածաշրջանային տնտեսության խթանումը հիմնական շեշտադրումներից է (հմմտ. էջ 54 և հետո):

Աշխատանքային հարաբերություններ: 90-ի դաշինք / Կանաչներ կուսակցության մոտեցումն այն է, որ «հնարավորինս շատ մարդիկ կարողանան լինել տնտեսական կյանքում գիտակից դերակատարներ » (էջ 47): Դրան հասնելու համար պետք է պահպանել սակագնային ինքնավարությունը և ուժեղացնել ինչպես սակագնային գործընկերներին, այնպես էլ գործարանային խորհուրդները: Միևնույն ժամանակ «տնտեսական զարգացման և զբաղվածության կառուցվածքի աճող շերտավորումը պահանջում են նաև տարածաշրջանային ու ճյուղային շերտավորմամբ սակագնային լուծումներ» (էջ 48), չնայած որ կարևորվում են միասնական սակագնային համաձայնությունները: Պարզ է, որ դրանով ավելի շուտ մտածվում է շրջանակային միասնական սակագնային համաձայնությունների և լրացուցիչ ճկուն ու անհատական ճյուղային ու տարածաշրջանային սակագնային համաձայնությունների ուղղությամբ: Նաև 90-ի դաշինք / Կանաչներ կուսակցությունն է պաշտպանում «բնակչության բաժնեկցությունը արտադրական կարողությանը» (էջ 131): Իսկ այստեղ խոսքն արդյոք ներգործարանային կարգավորումների՞ մասին է, թե՞ արտագործարանային ֆոնդերի. այս հարցը բացորոշ կերպով բաց է թողնվում: Այդուհանդերձ, կուսակցությունը պահանջում է, որ ունեցվածքին մասնակցությունը և որոշումների կայացմանը մասնակցությունը չքննարկվեն առանց մեկմեկու և որ գործարաններում ու ձեռնարկություններում մասնակցականությունը «համապատասխանեցվի փոփոխվող հասարակական պահանջներին և պահանջմունքներին» (էջ 131): Թե ինչ պահանջներ և պահանջմունքներ են, այդ բանը տեքստից չի երևում:

Մասնագիտական կրթության ու վերապատրաստման համակարգ: Մասնագիտական կրթության հարցում 90-ի դաշինք / Կանաչներ կուսակցության համար կարևոր է, որ յուրաքանչյուր ոք սովորող հասարակության մեջ ունենա իր կրթական կենսագրությունն անհատականորեն ձևավորելու հնարավորություն (էջ 99): Ընդ որում, շեշտն առաջին հերթին դրվում է առավել կարճ առաջնային մասնագիտական ուսուցման և լրացուցիչ մասնագիտական վերապատրաստումների վրա, «խորանարդիկային համակարգի» պես մի բան (էջ 99): Առաջնային մասնագիտական կրթությունը կոչված է, կայունության իմաստով, կենտրոնացնելու (մասնագիտական և միջմասնագիտական) «առանցքային որակավորումները» (էջ 100): Գործարանները պատասխանատու են կոնկրետ գործարանային առօրյայի պրակտիկայի մասով մասնավորագրեր տրամադրելու համար: Այս դիրքորոշումները, ի տարբերություն ՄԴԿ-ի և ԶԴՄ-ի, հստակ չեն ձևակերպված: Թե արդյոք մասնագիտական կրթության դուրս համակարգը պետք է մնա և արդյոք ձեռնարկությունները այսուհետ ևս պետք է պատասխանատու լինեն (ինչպես ֆինանսական առումով, այնպես էլ՝ մասնագիտական ուսումնարանների հետ համատեղ, ուսումնական բովանդակությունների համար), այդ հարցը բաց է մնում: Բաց հարց է մնում նաև այն, թե կյանքն ուղեկցող ուսանման հնարավորություններն արդյոք ինչպես պետք է ֆինանսապես և կազմակերպական առումով ապահովվեն: Ընդամենը մատնանշվում են սակագնային համաձայնության կողմերը և այն, որ պետք է լինի «հավասարակշռություն մասնավոր և հանրային միջոցների միջև» (էջ 103):

Ընդհանուր առմամբ, 90-ի դաշինք / Կանաչներ կուսակցությունը ներկայացնում է մի ծրագիր, որը կողմնորոշված է կայունությանը: Պետության ու տնտեսության միջև հարաբերության մասով, այսինքն՝ նաև այն հարցի առնչությամբ, թե համակարգված շուկայական տնտեսությունն ինչպիսին է լինելու, ծրագիրը ներկայանում է որպես ազատական մոտեցումների (օրինակ՝ շուկայակարգի շրջանակ, բայց նաև կրթության համակարգում անհատական մասնաբաժիններ) և սոցիալ-դեմոկրատական մոտեցումների մի խառնուրդ: Բաց է մնում այն հարցը, թե արդյոք խոսքն այդտեղ հասարակության տրամաբանակա՞ն մոդելի մասին է:

5.4. Լիբերալ-դեմոկրատական կուսակցության «Վիսբադենյան հիմնադրույթները»

ԼԴԿ-ի ծրագիրը Բունդեսթագում ներկայացված հինգ կուսակցություններից ամենահինն է՝ 1977 թվականի «Վիսբադենյան հիմնադրույթները»: Դրա եզակիության հատկանիշը ԼԴԿ-ն տեսնում է այն բանում, որ դավանում է ազատականությունը. «ԼԴԿ-ն՝ որպես կազմակերպված լիբերալիզմի կուսակցություն, բանականության,

բազմազանության և մրցակցության իր դավանանքով տարբերվում է մյուս բոլոր կուսակցություններից, որոնք կամենում են առաջընթացի հասնել պետական ուղղափառությամբ և պետական միջամտողականությամբ» (էջ 6): Այնուհետև, ԼԴԿ-ի համար պետության դերն ինչպես քննադատության կորիզն է, այնպես էլ քաղաքական մոտեցումը. «բյուրոկրատական պետական տնտեսությունը» (էջ 14) «բյուրոկրատական կարծրացումներով» խոչընդոտում է տնտեսության և հասարակության ազատ ու ճկուն զարգացումը. «Լիբերալները լավագույն սոցիալական և բնապահպանական մտադրությունների պետական տնտեսության փոխարեն ցանկանում են լավագույն սոցիալական և բնապահպանական արդյունքների շուկայական տնտեսություն» (էջ 6): Ուղի՛ն, որ լիբերալները տեսնում են, նախ՝ տնտեսական կարողություններ (պետական միջամտողականության և համատեղ շահեր հետապնդող խմբավորումների ուժային կարտելների վերացմամբ) ձևավորելն է, որպեսզի այնուհետև հնարավոր լինի հասնել «սոցիալական կարողությունների» (հմմտ. էջ 14): Այնուհետև՝ դա արտացոլվում է նաև Հիմնական օրենքում մասնավորեցման այնպիսի դրույթի ընդունման պահանջում, որը կսահմանի, որ բոլոր գործառույթների հարցում համեմատելի կարողության պարագայում առավելությունը տրվում է մասնավոր տնտեսությանը (հմմտ. էջ 30): ԼԴԿ-ն որպես տեսլական է նշում «սոցիալական ու բնապահպանական շուկայական տնտեսությունը»: Անշուշտ, ԼԴԿ-ն դրան տալիս է ակնհայտորեն այլ սահմանում, քան մի կողմից՝ ԶԴՄ-ն և մյուս կողմից՝ 90-ի դաշինք / Կանաչներ կուսակցությունն են դա անում:

Ֆինանսական համակարգ: Ֆինանսական և կապիտալի համակարգը պետք է լինի ազատ: Թերևս այս կարճ բանաձևին կարելի է հանգեցնել ԼԴԿ-ի դիրքորոշումը: Շուկային հարիր ձևով խոսքն այստեղ ավելի շատ այն մասին է, որ ուժեղ եվրամիության միջոցով պետք է պահպանվի մրցունակությունը: 1997 թվականի տեսակետից դա լիբերալների համար նշանակում էր. «Ժողովրդական սեփականության փոխարեն լիբերալներն ուզում են սեփականատերերի ժողովուրդ: Սեփականության հասնելու շանսը դրդում է գործելու, ստեղծում է սոցիալական ապահովություն, խթանում պատասխանատվության պատրաստակամությունը: Այն նոր ռիսկային մշակույթի նախադրյալ է և ինքնուրույնության նոր մշակույթ» (էջ 15): Դա հանգեցնում է այն եզրակացությանը, որ ձեռնարկատերերի սեփական կապիտալի ֆինանսավորման բազան պետք է հնարավորինս մեծացվի և հենց մասնավոր փողերի, բայց նաև կապիտալի շուկայի միջոցով և «մրցակցության խոչընդոտների» վերացմամբ: Պետության գործառույթը միայն կարգավորելն է. «Անհրաժեշտ է կայուն համաեվրոպական արժույթ, որպեսզի գերմանական և եվրոպական տնտեսությունը միջազգային մակարդակում ավելի մրցունակ դառնա: Արժույթային միությունն ամբողջացնում է ներքին շուկան» (էջ 25): ԼԴԿ-ի հիմ-

Նական շեշտադրումը կապիտալի դոնորների համար լավ պայմաններ ստեղծելն է և դրանով ներդրումնային պատրաստակամությունը մեծացնելը:

Աշխատանքային հարաբերություններ: ԼԴԿ-ն աշխատանքային հարաբերությունների ոլորտում փոփոխությունների իր պատկերացումներն ամփոփում է արտահայտիչ մի նախադասությամբ. «Աշխատակիցները պետք է դառնան համաձեռնարկատերեր» (Էջ 14): Այդ նպատակով էականորեն պետք է բարձրացվի արտադրողական կարողության նկատմամբ սեփականության բվոտան: ԼԴԿ-ն, ընդհակառակը, քննադատորեն է արտահայտվում «պաշտոնյաների մասնակցականության» վերաբերյալ: Թե արդյոք այստեղ խոսքը գործարանային խորհուրդների և դիտորդ խորհուրդներին գործառույթի մասնակցության միջոցով որոշումների համատեղ կայացումը վերացնելու, սահմանափակելու կամ սոսկ լրացնելու մասին է, դա կուսակցության ծրագրից չի երևում: Նաև արտադրողական կարողությանը աշխատակիցների մասնակցության պահանջի պարագայում բաց է մնում այն հարցը, թե ձեռնարկություններում ու գործարաններում կայացվող որոշումների վրա ազդելու հնարավորություններն ինչպիսին պետք է լինեն: Ինքնուրույն համաձեռնարկատերերի հայեցակարգը, անշուշտ, հուշում է, որ խոսքը պետք է լինի ամեն անգամ «անհատական պայմանավորվածությունների» մասին: Դրան հակառակ՝ միակշանակորեն մերժվում են միասնական սակագնային համաձայնությունները (Էջ 14), մինչդեռ պետք է (օրենսդրորեն) ներդրվեն լրացուցիչ կոլեկտիվ համաձայնություն ձեռք բերելու մասին ընդհանրական հոդվածներ, որոնք գործարաններին թույլ կտան, որ իրենք որոշեն, թե աշխատակիցների մասնակցությունն ինչ ձևով պետք է կազմակերպել: ԼԴԿ-ի առաջարկություններն ընդհանուր առմամբ ենթադրում են Գերմանիայում աշխատանքային իրավունքի ոլորտում հեղափոխություն. սոսկ ակնարկվող առաջարկները չեն կարող դա թաքցնել: Լրացուցիչ կոլեկտիվ համաձայնություն ձեռք բերելու մասին ընդհանրական (օրենսդրական) հոդվածները վտանգ են ներկայացնում սակագնային ինքնավարության եռության համար: Բացի այդ՝ գործարանային կարգավորումների գերադասությունը մատնանշում է մինչ այժմ ընդունված իրավական բուրգի փոփոխություն, որը ներառում է մի կողմից՝ օրենքների և սակագնային համաձայնությունների գերակայություն անհատական և գործարանային պայմանավորվածությունների նկատմամբ և մյուս կողմից՝ նպաստավորության սկզբունքը («կիրառվում է աշխատողի համար նպաստավոր կարգավորումը»): Թե ձեռնարկությունների իշխանության այդ զգալի աճն ինչպես է վերահսկվելու, դա լիովին բաց է մնում:

Մասնագիտական կրթության ու վերապատրաստման համակարգ: Մասնագիտական կրթության ու վերապատրաստման համակարգի վերաբերյալ ԼԴԿ-ի ասածներն ավելի շատ ընդհանրական բնույթ ունեն: Աստեղ ևս պետք է խթանվեն

«հրապարակայնությունն ու մրցակցությունը», վերացվեն «կարծրացումներն ու կանոնակարգումները» և խթանվեն կամ թույլատրվեն մասնավոր առաջարկները (հմմտ. էջ 24): Մնացյալ պարագայում ընդամենը շեշտվում է, որ անհրաժեշտ է «մասնագիտական որակավորումների ճկուն համապատասխանեցում և կատարելագործում բոլոր ոլորտներում» (էջ 14):

Ընդհանուր առմամբ, ԼԴԿ-ի ծրագիրը չհամակարգվող շուկայական տնտեսության կողմ է: Գրեթե բոլոր հիմնախնդիրները վերագրվում են պետական և բյուրոկրատական կարծրացումներին, գրեթե յուրաքանչյուր հիմնախնդիր կարող է լուծվել շուկայի համար ավելի շատ ազատությամբ: Ազատությունը սահմանվում է որպես (պետական) հարկադրանքից ազատություն: Իր լիբերալիստական արմատականությամբ այս ծրագիրը ցանկություններ գրեթե բաց չի թողնում:

5.5. «Ձախ» («Die Linke») կուսակցության «ծրագրային հիմնակետերը»

Իրական կուսակցական ծրագիր ժողովրդավարական սոցիալիզմի կուսակցությունից և «Աշխատանք և սոցիալական արդարություն - Ընտրական այլընտրանք» կուսակցությունից ձևավորված «Ձախ» կուսակցությունը դեռ չունի: Կա, իհարկե, մի «ծրագրային հիմնադիր փաստաթուղթ», որն ընդունել է «Աշխատանք և սոցիալական արդարություն - Ընտրական այլընտրանք» կուսակցության և ժողովրդավարական սոցիալիզմի կուսակցության 2007 թվականին տեղի ունեցած համատեղ համագումարը, և որը ձևականորեն (այսինքն՝ «Կուսակցությունների մասին» օրենքով) անհրաժեշտ կուսակցական ծրագիր է: Բայց այդ «ծրագրային հիմնադիր փաստաթուղթը» բովանդակային առումով ավարտուն չէ, այլ ներկայանում է ավելի շատ մտադրությունների շարանման ձևով:

«Ձախ» կուսակցության հիմնական ձգտումը «սանձազերծված կապիտալիզմին» այլընտրանք, այն է՝ «հասարակության համերաշխ նորացում և հետևողականորեն ժողովրդավարական կերտում» (էջ 1) իրականացնելն է: «Ժողովրդավարությունը, ազատությունը, հավասարությունը, արդարությունը, ինտերնացիոնալիզմը և համերաշխությունը մեր հիմնարար արժեքային կողմնորոշումներն են: [...] Ազատությունն ու սոցիալական ապահովությունը, ժողովրդավարությունն ու սոցիալիզմը պայմանավորում են իրար» (էջ 2): Ընդ որում, տնտեսության առանցքային ոլորտները հանրային սեփականություն դարձնելով՝ Հիմնական օրենքով ընձեռված հնարավորությունները պետք է օգտագործվեն ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային սեփականության հիման վրա «արդյունավետ և ժողովրդավարական տնտեսություն» (էջ 3) կառուցելու համար:

«Ձախ» կուսակցությունը հավակնում է հանդես գալու քաղաքականության և հեռանկարի ընդգրկուն փոփոխության օգտին: Թե «փոփոխությունը» որքան հեռուն կգնա, հնարավոր չէ գնահատել հիմնադիր փաստաթղթով, և մնում է սպասել, թե քաղաքական ո՞ր թևն իրեն կհաստատի:

Ֆինանսական համակարգ: Միջազգային ֆինանսական և կապիտալի շուկաների ազդեցությունը «Ձախ» կուսակցության կողմից գնահատվում է որպես ճգնաժամերի և անհավասարության եական գործոն ժամանակակից հասարակության մեջ. «Համաշխարհային ֆինանսական շուկաների միջոցով կապիտալի շահութաբաժնային նկրտումները գործում են ասնձարձակորեն և ամբողջ աշխարհում: [...] Արտադրության և աշխատաշուկայի՝ կապիտալի պահանջմունքներին կողմնորոշված ճկունացումը քայքայում է ընտանեկան ու հանրային կյանքը: [...] Նորագատական կապիտալիզմը նշանակում է ապաժողովրդավարացում: Միջազգային ֆինանսական ֆոնդերի, անդրազգային կոնցեռնների ձեռքբերում և համաշխարհային կապիտալիզմի վերազգային կազմակերպություններում (Առևտրի համաշխարհային կազմակերպություն, Արժույթի միջազգային հիմնադրամ, Համաշխարհային բանկ և այլն) կուտակվել է հսկայական իշխանություն: Դրանք չեն ենթարկվում որևէ ժողովրդավարական վերահսկողության» (Էջ 5): Ֆինանսական համակարգը, ըստ «Ձախ» կուսակցության, պետք է վերակազմակերպվի: Այդ նպատակով նրանք պահանջում են մի կողմից՝ «ֆինանսական շուկաների ժողովրդավարական վերահսկողություն» և մյուս կողմից՝ «մասնավոր տնտեսական իշխանության ապակենտրոնացում», մասնավորապես, հակակարտելային օրենսդրության խստացման միջոցով (Էջ 11): Բացի այդ՝ ֆինանսական համակարգը պետք է լրացվի համերաշխ տնտեսության խթանմամբ (օրինակ՝ կոոպերատիվներ) (Էջ 5), հանրային հատվածի ընդլայնմամբ (Էջ 8) և «զբաղվածությունը խթանող հեռանկարային ներդրումնային ծրագրերի» (Էջ 9 և հետո) միջոցով:

Աշխատանքային հարաբերություններ: «Ձախ» կուսակցությունն «աշխատանք» հասկացությունը կապում է ոչ միայն հաց վաստակելու հետ. «Մենք ձգտում ենք մի հասարակության, որտեղ յուրաքանչյուր կին և յուրաքանչյուր տղամարդ կարող է կատարել գոյություն ապահովող աշխատանք: Վաստակաբեր աշխատանքը, ընտանիքներում և ամուսնական միություններում աշխատանքը, հասարակության կերտմանը մասնակցելուն ուղղված աշխատանքը, ինչպես նաև մշակութային և սոցիալական կյանքին մասնակցությունը պետք է հնարավոր լինեն բոլոր մարդկանց համար» (Էջ 7): Վաստակաբեր աշխատանքի առնչությամբ «Ձախ» կուսակցությունը հանդես է գալիս աշխատանքային հարաբերությունների ակնհայտորեն առավել խիստ օրենսդրական ու նաև սակագնային-պայմանագրային կարգավորման օգտին: Օրինակ՝ պահանջվում են սակագնային ինքնավարության

պահպանում, «օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձ՝ գոյություն ապահովող չափով», «աշխատանքից ազատումից ավելի շատ պաշտպանվածություն», «որոշումների կայացմանը բոլոր աշխատողների առավել ակտիվ մասնակցության իրավունքներ» և «սակագնային համաձայնությունների համընդհանուր պարտադրականություն»: Ձեռնարկություններում որոշումների կայացմանը մասնակցելու մասով պահանջվում է կազմերի հավասար ձևավորման մոտեցում (Էջ 13): Պետք է ստեղծվի քաղաքական գործադուլի իրավունք, որը մինչ այժմ հնարավոր չէ աշխատանքային պայմանագրի կողմերի միջև ծագած վեճերը խաղաղ ճանապարհով լուծելու պարտավորության պատճառով (Էջ 13): Այս օրինակները ցույց են տալիս, որ «Ձախ» կուսակցության համար կարևորվում է տնտեսության ոլորտում ինչպես հասարակական, այնպես էլ պետական կառավարումը:

Մասնագիտական կրթության ու վերապատրաստման համակարգ: Մասնագիտական ուսուցման ու վերապատրաստման ոլորտում մատնանշվում է հասարակության մեջ առկա անհավասարությունը, և դրվում է կրթական համակարգն ընդգրկուն բաժնեկցության ուղղությամբ վերակառուցելու խնդիրը: Դրա մեջ է մտնում մասնագիտական կրթության ոլորտում «ուսուցման հիմնարար իրավունքի» պահանջը. «Պետք է կասեցվի մասնագիտական կրթության համար պատասխանատվությունից գործատուների նահանջը: Մենք հանդես ենք գալիս ուսումնական տեղերի ընդգրկուն և ընտրովի առաջարկի օգտին: Դրա համար մեզ անհրաժեշտ է օրենքով սահմանված մասհանումնային ֆինանսավորում» (Էջ 17): Ուսուցման ու վերապատրաստման գործընթացը պետք է խթանվի պետականորեն (Էջ 17):

Ընդհանուր առմամբ, «Ձախ» կուսակցությունը շատ ավելի ուժեղ է շեշտում պետության դերը, քան մյուս բոլոր կուսակցությունները: Ընդ որում, մոտեցումն սկզբունքորեն, որքան երևում է, շարունակում է մնալ համակարգված շուկայական տնտեսության շրջանակներում: Հստակ հայտարարություն այդ մասին չկա: «Ձախ» կուսակցությունն ընդհանուր ֆոնից կտրուկ առանձնանում է առաջին հերթին երկու առումով: Տնտեսության առանցքային ոլորտները պետք է հանրայնացվեն: Միանգամայն բաց է մնում այն հարցը, թե հանրայնացումը մինչև ո՞ր աստիճան և ի՞նչ ձևով պետք է կատարվի: Բացի այդ, ընդամենը մի քանի նախադասությամբ անդրադարձ կա այն բանին, թե ինչպե՞ս կարելի է այնպես ձևավորել պետական ֆինանսները և ստեղծել բավարար չափով բարեկեցություն, որ պետությանը ներկայացվող պահանջները հնարավոր լինի նաև իրականացնել: Անշուշտ, պարտադիր չէ, որ կուսակցական ծրագիրը պարունակի ֆինանսավորման և իրականացման պլան, այդուհանդերձ, դա դառնալու է վճռորոշ հարց, եթե խոսքը լինելու է առաջարկությունների իրատեսական կենսագործման մասին:

5.6. Ծրագրերի գնահատումը սոցիալ-դեմոկրատիայի նպատակների տեսանկյունից

Սոցիալ-դեմոկրատիան կողմնորոշվում է (սույն հատորի հիմքում ընկած հայեցակարգով) Միավորված ազգերի կազմակերպության կողմից 1966 թվականին ամրագրված և երկրների գերակշիռ մասի կողմից վավերացված հիմնարար իրավունքների դաշնագրերի ձևական գործողությանը և իրական ազդեցությանը: Ընդ որում, սույն հատորում մինչև հիմա շարադրվածի շրջանակներում արդեն պարզորոշ է դարձել, որ հենց համակարգված շուկայական տնտեսություններն են (ինչպես սկանդինավյան) համապատասխանում սոցիալ-դեմոկրատիայի նորմատիվային պահանջներին:

Տնտեսաբաղաբական նպատակադրության մասով Միմոն Ֆաուբօ և Զրիսթիան Զրելլի կողմից ներկայացվել են աճի, սոցիալական համահարթեցման և կայունության երեք նպատակները՝ որպես սոցիալ-դեմոկրատիային համապատասխանող ուղղվածություն: Ըստ այդմ, հարց է առաջանում, թե կուսակցություններն ի՞նչ կերպ են հանդես գալիս համակարգված շուկայական տնտեսության շարունակման կամ փոփոխության օգտին:

Բունդեսբազում ներկայացված հինգ կուսակցությունների կուսակցական ծրագրերի պարագայում խոսքը վերաբերում է «մտադրությունների հայտարարություններին», որոնք տեղեկություն են տալիս այն մասին, թե կուսակցությունները, քաղաքական իշխանությունը որպես նախադրյալ ընդունելով, ինչ ուղղությամբ են ցականում զարգացնել Գերմանիայի տնտեսական ու հասարակական համակարգը: Այստեղ պետք է անտեսել այն հարցը, թե կուսակցություններն այդ գործում որքանով հավատարիմ կմնան իրենց ծրագրերին: Բայց 2008 թվականի աշնանը ֆինանսական շուկաների ճգնաժամի առկայությամբ ԶԴՄ-ի և ԼԴԿ-ի արձագանքներն ու քաղաքական առաջարկությունները ցույց են տալիս, որ նպատակադրումների բացարձակ կողմնորոշվածությունը և կոնկրետ քաղաքական գործողությունները միշտ չէ, որ պետք է համապատասխանեն իրար: Օրինակ՝ ԼԴԿ-ն վերջերս պահանջում էր ուժեղ պետություն, իսկ ԶԴՄ-ն հանդես էր գալիս, հակառակ տնտեսության հանդեպ ազատական իր թևի, նշանակալից երաշխիքների և վարկերի օգտին:

Ընդհանուր առմամբ, կարելի է, իհարկե, ոչ առանց անձնական գնահատման, կատարել հետևյալ ամփոփումը.

- ԶԴՄ-ն այս համատեքստում ներկայացնում է **համակարգված շուկայական**

տնտեսությունն ավելի ցածր մակարդակում, քան այսօր է: Տնտեսական ազատականության գաղափարախոսության արձագանքները համակցվում են անհատականորեն բարոյական ձեռնարկատիրության հետ: Մասնակցականությունը և կառավարման կոլեկտիվ ձևերը, որպես կանոն, մերժվում են կամ պետք է նվազեցվեն կամ ավելի ճկունացվեն:


- **ԼԴԿ-ն** իր ծրագրում ջատագովում է **չհամակարգված և լիբերալիստական շուկայական տնտեսություն**: Թե հասարակության այդ ներկայացվող մոդելն ինչու պետք է լինի «սոցիալական և բնապահպանական շուկայական տնտեսություն», չի հասկացվում:
- **90-ի դաշինք / Կանաչներ կուսակցությունը** կողմ է **համակարգված շուկայական տնտեսությանը**, որը պետք է վերակառուցվի «արեգակնային հասարակության» ուղղությամբ: Այդ նպատակի համար փոխառություններ են արվում ազատական պատկերացումներից, քաղաքացիական հասարակության տարրերից և կոլեկտիվ կառավարման տարրերից: Ընդհանուր առմամբ, 90-ի դաշինք / Կանաչներ կուսակցության ծրագիրն ամենատեղաբարձր է, բայց համակարգված տնտեսության կոնկրետ պատկերացման մեջ քիչ է հստակ:
- **«Ձախ» կուսակցությունը** հաստատակամորեն պաշտպանում է տնտեսության կարգավորումը և հանդես գալիս անհատին պաշտպանության տակ առնող պետության օգտին: Այն երկու առումով առանձնանում է գնահատման սպեկտրից: Մի կողմից՝ մինչև հիմա առկա են միայն ծրագրային հիմնակետերը, մյուս կողմից՝ բաց է մնում այն հարցը, թե «Ձախ» կուսակցությունը «շուկայական տնտեսություն» արդյո՞ք ընդհանրապես դիտում է իբրև իր մոդել:
- **ՄԴԿ-ն** իր ծրագրում հստակորեն պաշտպանում է **համակարգված շուկայական տնտեսությունը** և դրա ընդլայնումը: Ընդ որում, ընդլայնումը կողմնորոշված է ազատության համապարփակ իրավունքների նկարագրությանը, ինչպես դրանք ամրագրված են ՄԴԿ-ի դաշնագրերում: Բայց անդրադարձ է արվում նաև հասարակական կառավարումը հարմարեցնելու անհրաժեշտությանը: Այստեղ առաջին հերթին ուշադրություն է դարձվում կայունության ոլորտին, ֆինանսական շուկաների միջազգայնացմանը և տնտեսական գործընթացների ճկունացմանն ու դրանք սոցիալապես ապահովելուն:
- Այս գնահատումից հետո տնտեսաքաղաքական նշված երեք նպատակների առումով կուսակցությունները կարելի է տեղորոշել հետևյալ կերպ.

ՔԴՄ-ն և ԼԴԿ-ն պարզորոշ հարազատություն են դրսևորում աճի նպատակի հետ և ունեն մյուս նպատակները դրան ստորադասելու միտում: «Սոցիալական համահարթեցում» գաղափարի պարագայում առկա է մերժում կամ թերահավատություն:

90-ի դաշինք / Կանաչներ կուսակցությունը սոցիալական և բնապահպանական շուկայական տնտեսության իր «արեգակնային վերակառուցման» հայեցակարգով կողմնորոշված է առաջին հերթին բնապահպանական կայունության նպատակին: «Սոցիալական համահարթեցումը» որպես նպատակ, պաշտպանվում է, իսկ «որակական աճի» նպատակի հստակ ստորադասումը կարելի է ենթադրել:

«Ձախ» կուսակցության համար կարելի է փաստել հստակ կողմնորոշում «սոցիալական համահարթեցման» նպատակին:

ՍԴԿ-ի համար կարելի է փաստել իրավահավասար և հավասարակշիռ կողմնորոշում երեք նպատակային ոլորտներին:



Նկ. 8. Կուսակցությունների տեղորոշման սխեմատիկ պատկերն ըստ նրանց տնտեսաքաղաքական նպատակադրման հիմնական նախապատվության

Վերադառնա՞նք ելակետային հարցին: Կուսակցությունների տնտեսական ու սոցիալական ձեռնհասությունը հստակորեն բաժանելը վտանգավոր կրճատում է, որը քաղաքականության մասին կարծիք կազմելու համար ընդամենը քիչ բան կարող է ասել: Բայց կուսակցական ծրագրերի վերլուծությունը նաև ցույց է տալիս, որ կուսակցություններն ունեն խիստ տարբեր նպատակային պատկերացումներ այն մասին, թե տնտեսությունը հասարակայնորեն ինչպես պետք է կարգավորվի և սոցիալապես ներառված լինի: Այդ ընդարձակ շրջանակին նետված հայացքը միայն կարող է ընձեռել կուսակցությունների համապատկերում ինքնուրույն կողմնորոշվելու և որոշելու հնարավորություն:

6. ՏՆՏԵՍԱԿԱՐԳԵՐ. ԵՐԿՐՆԵՐԻ ՄՈԴԵԼՆԵՐ

Ինչի՞ մասին է խոսվում այս գլխում.

- Համակարգված և չհամակարգված կապիտալիզմի տիպերի վերաբերյալ տարբերակման հիման վրա համեմատվում են տարբեր տնտեսակարգեր՝ ըստ Դեյվիդ Սոսկիսի և Փիթեր Ա. Յոլլի ներկայացվող տեսության:
- Ուսումնասիրվում են ֆինանսավորման համակարգը, աշխատանքային հարաբերությունները, մասնագիտական ուսուցման համակարգը և միջձեռնարկությունային հարաբերությունները:
- Այս դիտարկման կիզակետում են ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Շվեդիան և Ճապոնիան:
- Դրանցով ծածկվում է մեծ ընդգրկույթ: Ընդ որում, ԱՄՆ-ն ամենաշատն է համապատասխանում չհամակարգված կատարելատիպին, իսկ Շվեդիան ամենաշատն է համապատասխանում համակարգված կատարելատիպին:
- Այս տարբեր տնտեսական մոդելները կարող են կողք կողքի գոյատևել նաև բաց շուկաների ժամանակներում: Դրանց նախադրյալները տարբեր են և սոցիալ-դեմոկրատիայի տեսանկյունից պետք է տարբեր կերպ գնահատվեն:

6.1. ԱՄՆ⁸

Միմոն Ֆաուլթ

Տիպիկ չհամակարգված շուկայական տնտեսություն

ԱՄՆ-ը չհամակարգված շուկայական տնտեսության տիպիկ ներկայացուցիչ է (Մալթեր, 2005թ., ա. 279 և հետո) և շարունակում է շուկայական ազատականության, պետական միջամտությունների նկատմամբ թերահավատության և անհատապաշտության ավանդույթը: Ամերիկյան տնտեսական համակարգը հետապնդում է սպառողին ծառայելու և սոցիալական հիմնարար իրավունքների հաշվին կարողությունը մեծացնելու հնարավորություն ստեղծելու նպատակներ (Ջիլլիին, 2001թ., 150):

Որոշ փուլերում այս կարծիքը կարող է հարաբերականացվել: 1930-ական թվականներին, օրինակ, նախագահ Ֆրանկլին Դ. Ռուզվելտն իր «Նոր կուրսով» («New Deal»)՝ լայնածավալ կոնյունկտուրային ծրագրով, ապավինում էր տնտեսության ավելի ուժեղ համակարգմանը: Նաև նախագահ Լինդոն Բ. Ջոնսոնի քաղաքականությունն էր 1960-ական թվականներին իր «աղքատության դեմ պատերազմով» («war on poverty») գնում այդ ուղղությամբ: Բայց նաև այդ փուլերում ԱՄՆ-ի տնտե-

⁸ ԱՄՆ-ի և Գերմանիայի օրինակները մեծապես հենվում են Մալթերի գրքին (2005թ., ա. 279-282): Շնորհակալություն ենք հայտնում հեղինակին սիրալից համաձայնության համար:

սուբյեկտները մտնում էր ընդհանուր առմամբ մեծապես չհամակարգված: Տնտեսության առանձնապես աննշան համակարգմանն էր միտված ԱՄՆ նախագահներ Ռոնալդ Ռեյգանի (1980-ական թվականներ) և Ջորջ Վ. Բուշի քաղաքականությունը:

Ֆինանսական համակարգ

Ամերիկյան ձեռնարկությունների ֆինանսավորումը կատարվում է հիմնա կանում կապիտալի շուկայի միջոցով: Դա մեծացնում է ֆինանսական ցուցանիշների թափանցիկությունը, քանի որ բորսայում գնանշված ձեռնարկությունները պարտավոր են կանոնավորապես հրապարակել իրենց հաշվեկշիռները: Հնարավորինս մեծ շահութաբաժինների մեջ բաժնետերերի շահագրգռվածությունը էապես որոշում է ձեռնարկության ռազմավարությունը: Դա անվանվում է բաժնետիրային արժեքի (Shareholder-Value) սկզբունք:

Կապիտալի մատչելիությունը կախված է բաժնետերերի կողմից ֆիրմայի շահութաբերության գնահատումից: Ֆիրմաների միավորումներն ու միակցումներն ավելի քիչ են կարգավորված, քան այլ երկրներում: Այդ պատճառով ԱՄՆ-ի ձեռնարկությունների ղեկավարությունները գտնվում են հնարավորինս կարճ ժամանակում հնարավորինս մեծ շահութան ստանալու ճնշման տակ: Չափից քիչ շահութաբաժինը կարող է հանգեցնել ղեկավարության հեռացմանը, բորսայի կողմից կապիտալը հանելուն կամ ֆիրմայի վաճառքին:

Աշխատանքային հարաբերություններ

Կապիտալի և աշխատանքի միություններն ԱՄՆ-ում ավելի շատ ճյուղային շահերի լրբքիստական կազմակերպություններ են, քան համահասարակական պատասխանատվությամբ դերակատարներ: Արհեստակցական միություններն ու գործատուների միությունները, համակարգված շուկայական տնտեսությունների համեմատությամբ, ընդհանուր առմամբ թույլ են և ազդեցիկ գլխադասային կառույցներ գրեթե չունեն: Որոշ ոլորտներում կան, իհարկե, ուժեղ արհմիություններ, որոնք հաջողությամբ պաշտպանում են մասնակի շահեր: Օրինակ՝ Կալիֆոռնիայում կա բանտապահների լավ կազմակերպված արհմիություն, որը քիչ ազդեցություն չունի քաղաքականության, մինչև անգամ պատժի կրման կարգավորման վրա: Ընդ որում, կազմակերպված անդամների համար սեփական առանձին շահերն ավելի առաջնահերթ են, քան համընդհանուր բարեկեցության շահերը: Աշխատանքից ազատման օրենսդրական պաշտպանությունն ԱՄՆ-ում գրեթե ձևավորված չէ: Այդ պատճառով աշխատանքային հարաբերությունները հատկանշվում են կարճաժամկետ աշխատանքային հարաբերություններով և ձեռնարկութենային մակարդակում աշխատավարձերի վերաբերյալ բանակցություններով: Միասնական սակագնային համաձայնությունները, ինչպիսիք կան համակարգված շուկայական տնտեսություններում, վերջին տասնամյակներում շարունակ թուլացող արհմիությունների պատճառով ԱՄՆ-ում հիմնականում հայտնի չեն: Ռոբերթ Ռեյչն արհմիությունների այդ

Կապիտալի շուկայի ֆինանսավորում

Արագ շահութի հասնելու մղում

Գործատուների և գործառուների միությունները գործում են ավելի շատ առանց համահասարակական պահանջի

Հեռացումներից պաշտպանվածության թույլ համակարգ

Թույլ արհմիությունները՝ որպես հակաարհմիութենական քաղաքականության հետևանք

անկումը՝ 1955 թվականին 33 տոկոսից 2006 թվականին ընդամենը 8 տոկոսի, պայմանավորում է երկու գործոններով՝ մի կողմից՝ ձեռնարկությունների բացահայտ հակաարիմիոլոգիայի և քաղաքականությունը և մյուս կողմից՝ կառավարության՝ ավելի ու ավելի հակաարիմիոլոգիայի դարձող քաղաքականությունը: Օրինակ, Նախագահ Ռոնալդ Ռեյգանը 1981 թվականին սահմանեց գործադուլ անող ավիակարգավարների համար ցկյանս մասնագիտական արգելանք (Ռեյչ, 2008թ., 108 և հետո):

*Ընդհանուր
որակավորումներ*

Դպրոցական և մասնագիտական կրթության համակարգ

Ընդհանուր առմամբ ճկուն աշխատաշուկան լրացուցիչ աջակցություն է ստանում մասնագիտական կրթության մի համակարգի կողմից, որն ավելի շուտ ընդհանուր որակավորումներ է հարդրում, որոնք կարող են օգտագործվել տարբեր ֆիրմաներում և ճյուղերում: Աշխատողները բավականին արագ կարող են, կոնյունկտուրային համապատասխան, աշխատանքի ընդունվել կամ ազատվել («hire and fire»): Քանի որ աշխատաշուկան համեմատաբար չկարգավորված է, և հոսունությունն աշխատաշուկայում բավականին բարձր է, այդ պատճառով ամերիկյան գործառույթները հակված են ներդրում անելու ընդհանուր մասնագիտական ուսուցումների մեջ, որոնք նրանք կարող են օգտագործել Նաև իրենց հաջորդ աշխատատեղում: Եվ քանի որ գործատուների միությունները կարող են համակարգվել միայն թույլ կերպով, այդ պատճառով ձեռնարկություններին չի հաջողվում համագործակցել արդյունաբերական սպեցիֆիկ կրթական ծրագրերում: Դրա հետևանքով գործառույթներն ԱՄՆ-ում ավելի շատ ընդհանուր ունակություններ են ձեռք բերում, որոնք հատկապես լավ համապատասխանում են կոնյունկտուրայի նկատմամբ զգայուն ծառայությունների ոլորտներին: Շատ ձեռնարկությունների և ոլորտների համար այդ հանգամանքը հանգեցնում է մասնագետների պակասության:

*Չետազոտական
աշխատանքների
խաչաձև սուբսիդի-
վորում ռազմական
արդյունաբերության
կողմից*

Հանրային բյուջեից ֆինանսավորվող գիտությունների պակասուրդները մասամբ հատուցվում են ռազմական ոլորտից արվող խաչաձև սուբսիդավորմամբ: Բազմաթիվ տրարարություններ, որոնք ներդրվել են քաղաքացիական հատվածում, ստեղծվել են ռազմական մշակումներից, օրինակ, օդանավաշինության մեջ, արբանյակային տեխնիկայում կամ տեղեկատվական տեխնոլոգիաներում (Ռեյչ, 2008թ.):

*Անշան միջձեռնար-
կությունների ցանց*

Միջձեռնարկությունային հարաբերություններ

Ամերիկյան ձեռնարկություններն իրար հետ ավելի ուժեղ մրցակցության մեջ են, քան ֆիրմաները համակարգված տնտեսություններում, ինչպես Շվեդիայում կամ Գերմանիայում, որտեղ նրանք ավելի շատ ապավինում են մյուս ձեռնարկությունների, պետության և արհմիությունների հետ համագործակցությանը (Հինչման, 2006թ., 350): Միջֆիրմային ցանցը քիչ է զարգացած: Ոչ բանկերը, ոչ մյուս ֆիրմաները դիտորդ խորհուրդներում ներկայացուցիչներ չունեն: ԱՄՆ-ում սկզբից ի վեր գերիշխում է տնտեսական

ԱՄՆ

Մեկ շնչին բաժին ընկնող համախառն ներքին արդյունք, 2008թ.	38 800 Եվրո	Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն՝ գնողունակության ստանդարտում (ԳՈՒՄ), մեկ ԳՈՒՄ-ը համապատասխանում է ԵՄ-27-ի մեկ եվրոյի միջին գնողունակությանը (աղբյուրը՝ Եվրոստատ)
Միջին տնտեսական աճ 1990-2007թթ.	2,0 %	Տարեկան միջին տնտեսական աճ՝ մեկ շնչի հաշվով, կայուն գների պայմաններում (աղբյուրը՝ Մարդկային զարգացման ցուցիչ 2009թ., էջ 277)
Պետական պարտք 2008թ.	70,7 %	Պետական պարտքը ՀՆԱ-ի %-ով (աղբյուրը՝ ԳԴՀ ֆինանսների նախարարության ամսական հաշվետվություն, 12/2009թ., էջ 99)
Ընթացիկ գործառնությունների հաշվեկշիռ 2008թ.	-4,9 %	Ակրանքների բոլոր արտահանումների և ներկրումների հավելչուի սալդոն ՀՆԱ-ի %-ով (աղբյուրը՝ ԱՄՆ, World Economic Outlook 10/2009, էջ. 187)
Զբաղվածության մակարդակը 2008թ.	70,9 % (65,5 %)	15 - 64 տարեկան անձանց (կանանց) տեսակարար կշիռը ընդհանուր բնակչության թվում (աղբյուրը՝ Եվրոստատ)
Գործազրկության մակարդակը 2008թ.	5,8 %	Գործազուրկների տեսակարար կշիռը զբաղված բնակչության թվում (աղբյուրը՝ Եվրոստատ)
Եկամուտների անհավասարությունը՝ չափված Զինիի գործակցով	40,8 %	Եկամուտների անհավասար բաշխման ցուցանիշ, 100 % = առավելագույն անհավասարություն (աղբյուրը՝ Մարդկային զարգացման ցուցիչ 2009թ., էջ 195)
Եկամուտների անհավասարությունը տղամարդկանց և կանանց միջև	62 %	Կանանց աշխատանքային եկամուտները՝ տղամարդկանց եկամուտների համեմատությամբ (աղբյուրը՝ Մարդկային զարգացման ցուցիչ 2009թ., էջ 186)
Աղքատության ցուցիչ 2009թ.	15,2 %	Աղքատության ցուցիչը բաղկացած է տարբեր ինդիկատորներից (կյանքի տևողություն, գրագիտության մակարդակ, առողջապահական ապահովման մատչելիություն, ...) 0 = նվազագույն աղքատություն, 100 = առավելագույն աղքատություն (աղբյուրը՝ Մարդկային զարգացման ցուցիչ 2009թ., էջ 180)
Արհմիութենական կազմակերպվածության աստիճան 2007թ.	11,6 %	Արհմիություններում կազմակերպված աշխատող բնակչության տեսակարար կշիռը (աղբյուրը՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն)

գործունեության ազատության գաղափարը, այնպես որ պետությունը միջամտում է շուկայական անցուդարձին միայն դրա աշխատունակությունը պահպանելու և, օրինակ, կարտելների ձևավորումները կանխելու նպատակով: Խիստ հակակարտելային օրենսդրությունը կոչված է կանխելու ձեռնարկությունների միջև այնպիսի համագործակցությունները, ինչպես, օրինակ, գնային պայմանավորվածություններն են:

Ամփոփում. ԱՄՆ

ԱՄՆ-ի՝ հիմնականում չհամակարգված շուկայական տնտեսությունը ձեռնարկություններին ընձեռում է շուկայական զարգացումներին ճկունորեն արձագանքելու հնարավորություն, բայց նաև մեծացնում է շուկայական փոփոխություններին կարճ ժամանակում հարմարվելուն ուղղված ճնշումը: Այդ պատճառով աշխատանքային հարաբերությունների ամերիկյան համակարգը պակաս արդյունավետ է ծախսատար արտադրական ռազմավարությունների մշակման ժամանակ, որոնք երկարաժամկետ հեռանկարում պահանջում են կայուն աշխատատեղեր: Դրա փոխա-

*Հիմնականում
չհամակարգված
շուկայական
տնտեսություն*

րեն այն նպաստավորում է ռիսկային կապիտալին ապավինող նորարարական ոլորտները, ինչպես, օրինակ, տեղեկատվական տեխնոլոգիաները, ինչպես նաև ծառայությունների մի մեծ ոլորտ, որը հիմնված է ընդհանրական մասնագիտական ուսուցման պրոֆիլի և աշխատավարձային առավել ցածր մակարդակի վրա:

*Մասնավոր
հարստության և
հանրային
աղքատության
գոյակցություն*

ԱՄՆ-ն իր տնտեսական համակարգով, ընդհանուր առմամբ, առավել բարձր աճի տեմպերի է հասել, քան եվրոպական երկրները: 1990-ական թվականներից ամերիկյան տնտեսությունն աճել է միջինը 3 %-ով, մինչդեռ Եվրամիության անդամ երկրները գրանցել են 2,2 % տնտեսական աճ: Եթե 1950-ական թվականներին տնօրինության աշխատավարձերը նույն ձեռնարկությունում աշխատող բանվորների աշխատավարձը գերազանցում էին 25 անգամ, ապա դրանք այսօր միջինը 350-ապատիկն են (Ռեյչ, 2008թ., 144): Խրոնիկապես թերֆինանսավորվող հանրային բյուջեների պատճառով ԱՄՆ-ում կողք կողքի գոյատևում են մասնավոր հարստությունն ու հանրային աղքատությունը: Դա, մասնավորապես, հանգեցնում է այլ երկրների համեմատությամբ վատ ձևավորված հանրային ենթակառուցվածքների (Յինչման, 2006թ., 352):

*Վերակառավարում
Բարաք Օբամայի
ընտրությունից
հետո՞*

2008 թվականին Բարաք Օբամայի ընտրությունն ընթանում էր «Change» («փոփոխություն») բնաբանի ներքո: Շատ բան մատնանշում է այն հանգամանքը, որ իսկապես քաղաքական փոփոխություն է լինելու (Ֆաուլթ, 2007թ. և 2008թ.): Ամեն դեպքում հետաքրքիր է, որ ԱՄՆ-ում Դեմոկրատական կուսակցության ռահվիրաներից մեկը՝ Ուիլյամ Գալսթոնը, արդեն իսկ 2008 թվականի հուլիսին տպագրեց մեծ ուշադրության արժանացած մի հոդված՝ «How Big Government Got Its Groove Back»: Նրա թեզն է. քիչ կարգավորող ու միջամտող նիհար պետության գաղափարախոսությունն անցավ: Սկսվում է «մեծ կառավարության» մի նոր դարաշրջան՝ ավելի շատ կարգավորմամբ, ավելի շատ համակարգմամբ և պետության ավելի բարձր քվոտայով (Գալսթոն, 2008թ.):

6.2. Մեծ Բրիտանիա

Քրիստոսի Բրեյլ

Մեծ Բրիտանիան հաճախ նկարագրվում է որպես կապիտալիզմի շահակիր: Այստեղ արդյունաբերականացումը, ազատ առևտուրը և լիբերալիզմը զարգացել են ավելի շուտ, քան շատ այլ երկրներում: Միաժամանակ այստեղ առանձնապես հստակ նաև երևացել են անասնոց կապիտալիզմի ստվերոտ կողմերը: Պատահական չէր, որ Ֆրիդրիխ Էնգելսը նկարագրում էր կախյալ վիճակում գտնվող բանվորների հաճախ անմարդկային կենսապայմաններն ու աշխատանքային պայմանները 19-րդ դարի կեսերին «Աշխատավոր դասակարգերի վիճակն Անգլիայում» աշխատության օրինակով:

Այդ ուսումնասիրության լույս ընծայումից ի վեր բրիտանական կապիտալիզմում, իհարկե, վճռորոշ փոփոխություններ են եղել: Բայց կարելի է արձանագրել նաև որոշ բաների շարունակություններ: Բրիտանական տնտեսակարգն այսօր դեռ շարունակում է մնալ առանձնապես ազատական: Այդ պատճառով միջազգային կապիտալիզմի համեմատական ուսումնասիրությունը Մեծ Բրիտանիան նկարագրում է որպես չհամակարգված, ազատական շուկայական Էկոնոմիկա:

Ստորև նկարագրվում են բրիտանական տնտեսության տիպի կարևորագույն ասպեկտները:

Ֆինանսավորման համակարգը և սեփականատերերի կառուցվածքը

Բրիտանական կապիտալիզմում ձեռնարկության եկամուտների ընթացիկ մակարդակը վճռորոշ նշանակություն ունի ձեռնարկության ֆինանսավորման համար: Ներդրումների համար բրիտանական ձեռնարկություններին անհրաժեշտ է բաժնետոմսերի և ֆինանսական շուկաների «անհամբեր» փողը: Ըստ այդմ, բարձր եկամտաբերությունն ամենակարևոր նախադրյալն է կապիտալի հասանելիության համար: Դրանով Մեծ Բրիտանիան տարբերվում է, օրինակ, երկար ժամանակ Գերմանիայի համար տիպական տնտեսակարգից, որտեղ հողինգ-բանկերը երկարաժամկետ համագործակցության մեջ են ձեռնարկության հետ և այդ կերպ հաճախ մանրամասն տեղյակ են ձեռնարկությանը, նրա ռազմավարություններին ու կառուցվածքներին: Միացյալ Թագավորությունում ներդրողներն ու դրամատուները որոշում կայացնում են գնահատման հանրամատչելի չափանիշների հիման վրա: Ընդ որում, առաջին պլանում ձեռնարկության շահութաբերությունն է:

Նաև սեփականատերերի կառուցվածքները Մեծ Բրիտանիայում էապես տարբերվում են համակարգված շուկայական տնտեսություններում առկա սեփականատիրական հարաբերություններից: Եթե վերջիններում ֆիրմաներին ու ձեռնարկություն-

*Ջահակիր՝
կապիտալիզմի ...*

*... և դրա ստվերոտ
կողմերի*

*Չհամակարգված,
ազատական
շուկայական
տնտեսություն*

*Ֆինանսական և
բաժնետոմսերի
շուկայի միջոցով
ֆինանսավորում*

*Սեփականատե-
րերի կառուցվածքը.
ֆինանսավորողների
և մասնավոր ներդ-
րողների մեծ բաժին*

ներին մասնակցությանը հաճախ բնորոշ են երկարաժամկետ և ռազմավարական շահեր ունեցող ներդրողները (օրինակ՝ այլ ձեռնարկությունների, բանկերի կամ հանրային հատվածի նկատմամբ), ապա Մեծ Բրիտանիայում պատկերը միանգամայն այլ է: Բրիտանական ձեռնարկությունների սեփականատերերի շուրջ 80 տոկոսը ֆինանսավորողներ և մասնավոր ներդրողներ են, որոնց առաջին հետաքրքրությունը, որպես կանոն, ձեռնարկության հնարավորինս բարձր շահութաբերությունն է:

Կողմնորոշվածություն կարծիքի մասնակցում հասանելիին

Ֆիրմաների, այսպես կոչված, թշնամաբար կլանումը (նաև արագ շահույթի հասնելու նպատակով) շուկայի լայնատարած ֆինանսավորման և ֆինանսական շուկաների կառուցվածքի պատճառով ավելի հեշտությամբ է հնարավոր, քան համակարգված շուկայական տնտեսություններում:

Շահութաբերությանը խիստ կողմնորոշվածության պատճառով (որն ուղեկցվում է բացառիկ ստորակարգային ներքին կառուցվածքով) բրիտանական ձեռնարկություններին հաջողվում է մի կողմից՝ արագ վերակառուցվել նոր և շահութաբեր շուկաների ուղղությամբ, իսկ բիզնեսի ցածր շահութաբերություն ունեցող ճյուղերն էլ արագորեն կրճատել: Մյուս կողմից, սակայն, այդ ուղղվածությունը նաև հանգեցնում է բրիտանական տնտեսության համար տիպական «short-termism»-ի՝ կարճաժամկետ հասանելիին կողմնորոշվածությանը:

Աշխատանքային հարաբերություններ

Եղել են փուլեր, երբ բրիտանական արհմիություններն առանձնապես ուժեղ են թվացել: Այսպես կոչված, «դժգոհության ձմեռը» («winter of discontent») դրա օրինակ է: 1978-79 թվականներին երկրով մեկ կազմակերպված գործադուլը խաթարեց ամբողջ հանրային կյանքը Մեծ Բրիտանիայում: Աղբն այլևս չէր տարվում, միջքաղաքային հանրային տրանսպորտը չէր աշխատում, իսկ մահացածներին այլևս հնարավոր չէր թաղել: Բայց իրականում գործադուլների ինտենսիվ փուլերը հաճախ ուժեղ արհմիության արտահայտություն չեն: Ուժեղ ու լավ կազմակերպված արհմիությունները, որպես կանոն, ի վիճակի են գործառույթի շահերը բանակցություններում անցկացնելու՝ առանց գործադուլների դիմելու անհրաժեշտության: Ըստ այդմ, «դժգոհության ձմեռն» ավելի շատ բանակցային անբավարար զորության արտահայտություն էր: Միջազգային համեմատության մեջ բրիտանական արհմիությունները թույլ են: Դրա պատճառը նախ այն է, որ բրիտանական արհմիությունների լանդշաֆտը համեմատաբար տրոհված է: 1990-ական թվականներին դեռևս գոյություն ունեին ավելի քան 300 արհմիություններ: Դրանք կազմակերպված են ոչ թե ըստ ճյուղերի, այլ ըստ մասնագիտական խմբերի, այնպես որ հաճախ մի ձեռնարկությունում ներկայացված են մի քանի արհմիություններ:

Միայն թվացյալորեն ուժեղ արհեստակցական միություններ

Արհմիությունների մեծ տրոհվածություն

Գործառույթի կարտադիր ներկայացվածության բացակայություն

Մեծ Բրիտանիա

Մեկ շնչին բաժին ընկնող համախառն ներքին արդյունք, 2008թ.	29 200 եվրո	Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն՝ գնողունակության ստանդարտում (ԳՈՒՄ), մեկ ԳՈՒՄ-ը համապատասխանում է ԵՄ-27-ի մեկ եվրոյի միջին գնողունակությանը (աղբյուրը՝ Եվրոստատ)
Միջին տնտեսական աճ 1990-2007թթ.	2,4 %	Տարեկան միջին տնտեսական աճ՝ մեկ շնչի հաշվով, կայուն գների պայմաններում (աղբյուրը՝ Մարդկային զարգացման ցուցիչ 2009թ., էջ 277)
Պետական պարտք 2008թ.	52,0 %	Պետական պարտքը ՀՆԱ-ի %-ով (աղբյուրը՝ ԳԴՀ ֆինանսների նախարարության ամսական հաշվետվություն, 12/2009թ., էջ 99)
Ընթացիկ գործառնությունների հաշվեկշիռ 2008թ.	-1,7 %	Ակրանքների բոլոր արտահանումների և ներկրումների հավելչով սալդոն ՀՆԱ-ի %-ով (աղբյուրը՝ ԱՄՅ, World Economic Outlook 10/2009, էջ 187)
Զբաղվածության մակարդակը 2008թ.	71,5 % (65,8 %)	15 - 64 տարեկան անձանց (կանանց) տեսակարար կշիռը ընդհանուր բնակչության թվում (աղբյուրը՝ Եվրոստատ)
Գործազրկության մակարդակը 2008թ.	5,6 %	Գործազրկների տեսակարար կշիռը զբաղված բնակչության թվում (աղբյուրը՝ Եվրոստատ)
Եկամուտների անհավասարությունը՝ չափված Ջինիի գործակցով	36 %	Եկամուտների անհավասար բաշխման ցուցանիշ, 100 % = առավելագույն անհավասարություն (աղբյուրը՝ Մարդկային զարգացման ցուցիչ 2009թ., էջ 195)
Եկամուտների անհավասարությունը տղամարդկանց և կանանց միջև	67 %	Կանանց աշխատանքային եկամուտները՝ տղամարդկանց եկամուտների համեմատությամբ (աղբյուրը՝ Մարդկային զարգացման ցուցիչ 2009թ., էջ 186)
Աղքատության ցուցիչ 2009թ.	14,6 %	Աղքատության ցուցիչը բաղկացած է տարբեր ինդիկատորներից (կյանքի տևողություն, գրագիտության մակարդակ, առողջապահական ապահովման մատչելիություն, ...) 0 = նվազագույն աղքատություն, 100 = առավելագույն աղքատություն (աղբյուրը՝ Մարդկային զարգացման ցուցիչ 2009թ., էջ 180)
Արհմիութենական կազմակերպվածության աստիճան 2007թ.	28 %	Արհմիություններում կազմակերպված աշխատող բնակչության տեսակարար կշիռը (աղբյուրը՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն)

Բրիտանական արհմիությունների թուլության մեկ այլ պատճառ է այն, որ Մեծ Բրիտանիայում, ինչը հատուկ է ազատական շուկայական տնտեսություններին, ձեռնարկությունները պարտավոր չեն ներառել ձեռնարկութենային խորհուրդներ կամ գործառուների ներկայացվածության այլ ձևեր: Մասնակցականության այնպիսի ձև, ինչպիսին, օրինակ, կա Գերմանիայի լեռնամետալուրգիական արդյունաբերության ոլորտում, Մեծ Բրիտանիայում հիմնականում անհայտ է: Վերջապես, երրորդ, Մեծ Բրիտանիայում արհմիությունների իրավունքները Թետչերի պահպանողական կառավարության կողմից (1979-1990թթ.) սխտեմատիկորեն խուզվել են: Ըստ այդմ, արհմիութենական կազմակերպվածության աստիճանն այսօր համեմատաբար ցածր է: Մեծ Բրիտանիայում արհմիություններում կազմակերպված աշխատող բնակչության տեսակարար կշիռը կազմում է շուրջ 30 տոկոս: Ընդ որում, հանրային հատվածը բացահայտորեն ավելի լավ է կազմակերպված, քան մասնավոր հատվածը:

Ընդհանուր առմամբ, արհմիություններում կազմակերպվածության ցածր աստիճան

Աշխատավարձերի վերաբերյալ բանակցությունները՝ ձեռնարկութենային մակարդակում, աշխատավարձի նվազագույն սահմանի պայմաններում (նվազագույն աշխատավարձ)

Աշխատանքից ազատելուց պաշտպանվածության ցածր մակարդակ

Ուժեղ ստորակարգում ձեռնարկություններում

Հաղորդվում են ընդհանուր գիտելիքներ

Գործառույթի նման նաև գործատուներն են համեմատաբար վատ կազմակերպված: Որոշումներ անցկացնելու համար համապատասխան կշիռ ունեցող գլխադասային միություններ գրեթե չկան, և գործատուների միությունների նշանակությունը հետընթաց է ապրում:

Այդ կառուցվածքների պատճառով աշխատավարձային սակագների վերաբերյալ համաձայնությունները, որպես կանոն, ձեռք են բերվում ձեռնարկությունների մակարդակում կամ գործատուների և գործառույթի միջև անհատական բանակցային գործընթացների արդյունք են: 1999 թվականից այստեղ միասնական նվազագույն աշխատավարձի տեսքով կա, իհարկե, աշխատավարձի նվազագույն սահման, որից ներքև չի կարելի իջնել:

Ձեռնարկությունների և առանձին գործառույթի միջև հարաբերությունները շատ ավելի ուժեղ են պայմանավորված շուկայական ուժերով, քան համակարգված շուկայական տնտեսություններում: Գործառույթը համեմատաբար կարճ ժամանակ են մնում ձեռնարկություններում և այդ պատճառով ձեռնարկության հետ, որպես կանոն, քիչ կապվածություն են զգում: Աշխատանքից ազատումները համեմատաբար հեշտ կարելի է անել, քանի որ թույլ արհմիությունները չեն կարող արդյունավետ կերպով խոչընդոտել դրանց, իսկ աշխատանքից ազատված պաշտպանվածությունը թույլ մակարդակի վրա է: Միաժամանակ որակյալ գործառույթը ճկուն աշխատաշուկաներում նաև ավելի հեշտությամբ կարող են նոր աշխատանք գտնել:

Բրիտանական ձեռնարկություններն ընդհանուր առմամբ ավելի ուժեղ են հիերարխավորված, քան համակարգվող տնտեսությունների ձեռնարկությունները: Գործադիր տնօրենից (CEO - Chief Executive Officer) զատ՝ դա արտահայտվում է նաև աշխատանքի կազմակերպվածության մեջ: Այսպես՝ բարձր որակավորում ունեցող մասնագետների թիմային աշխատանքը, որին, օրինակ, Գերմանիայում հաճախ կարելի է հանդիպել, Մեծ Բրիտանիայում ավելի սակավադեպ է: Այստեղ բնորոշ է աշխատանքի պայմանական և ճշգրտորեն պահպանվող բաժանումը (Վուդ, 2001թ., 250):

Մասնագիտական կրթության ու վերապատրաստման համակարգ

Մեծ Բրիտանիայի ճկուն աշխատաշուկաներում մասնագիտական որակավորումներն ավելի շուտ թույլ են արտահայտված: Դրա պատճառները գործատուների տեսանկյունից հասկանալի են:

Նախ՝ նույն հիմնարկում բանվորների և ծառայողների աշխատանքի համեմատաբար կարճ միջին տևողության պատճառով ձեռնարկություններում մշտապես կա այն վտանգը, որ մեկ անձի վրա ներդրումն իրեն չարդարացնի կամ հնարավոր է,

որ նույնիսկ օգուտ տա մրցակից ձեռնարկությանը: Երկրորդ՝ աշխատաշուկաների բացառիկ ճկունության շնորհիվ կարճ ժամանակում կարող են ներգրավվել որակ-
յալ աշխատակիցներ և, կարիքի դեպքում, նույնքան արագ հեռացվել:

Բայց նաև գործառույթների կողմում գրեթե չկա ֆիրմաներին ներհատուկ որակավորման շահագրգռվածություն, քանի որ ձեռնարկություններում համեմատաբար քիչ մնալն ավելի ձեռնտու է դարձնում ընդհանուր ունակությունների վրա կենտրոնացումը, որոնք կարելի է օգտագործել նաև այլ ֆիրմաներում կամ ձեռնարկություններում:

Այդ հաճախ քիչ արտահայտված մասնագիտական որակավորման արդյունքը հասկանալի է. արտադրողականությունը բրիտանական ձեռնարկություններում, ի բաղդատություն, օրինակ, գերմանական ձեռնարկությունների, համեմատաբար ցածր է, և ազատական շուկայական տնտեսություններն ընդհանուր առմամբ հակ-ված են կենտրոնանալու հեշտ վերամշակվող ապրանքների և ստանդարտացված արտադրական եղանակների վրա:

Միջձեռնարկութենային հարաբերություններ

Ձեռնարկությունների միջև հարաբերությունները հիմնվում են շուկայական հարաբերությունների և բողբաբարկելի, ֆորմալ իրավահարաբերությունների վրա: Ձեռնարկությունների միջև փոխկապվածություն գրեթե չկա: Տեխնոլոգիաների փոխանցումն այստեղ առավելապես տեղի է ունենում գիտական կամ տեխնիկա-կան բարձր որակավորում ունեցող կադրերի փոխանակմամբ: Գիտնականների կամ ճարտարագետների տեղափոխությունները գիտահետազոտական հիմնարկներից ազատ տնտեսություն և հակառակը ևս այստեղ ավելի հաճախ է տեղի ունենում, քան դասականորեն համակարգված շուկայական տնտեսություններում: Դրան հակառակ՝ ավելի հազվադեպ են ձեռնարկությունների միջև համատեղ հետազո-տությունները կամ առավել տևական համագործակցության ցանցերը:

Չնահատում և ամփոփում

Կապիտալիզմի բրիտանական տիպն առավել մեծ հարազատություն է դրսևորում ԱՄՆ տնտեսական համակարգի, քան մայրցամաքային-եվրոպական տնտեսու-թյունների հետ: Բրիտանական կապիտալիզմի առավելությունը, ըստ այդմ, զբաղ-վածության համեմատաբար բարձր և գործազրկության ցածր մակարդակն է: Թերություններ են ԱՄՆ-ի կամ գերմանական ձեռնարկությունների համեմատու-թյամբ բրիտանական ձեռնարկությունների՝ նախկինի պես ցածր արտադրողակա-նությունը և դրանց կողմնորոշվածությունը կարճաժամկետ շահութաբաժիններին: Բացի այդ՝ ներկայիս տնտեսական անկման փուլում բացահայտվում են բացառիկ

*Միջձեռնարկութե-
նային կապերը
գրեթե
բացակայում են*

*Մեծ հարազատու-
թյուն ԱՄՆ
տնտեսական
համակարգի հետ*

ճկուն աշխատաշուկայի թերությունները: աշխատուժը կարող է արագ հեռացվել աշխատանքից, գործազրկության ցուցանիշներն արագ աճում են:

Բայց այս դասակարգման պարագայում պետք է հաշվի առնել, որ այն երբեք սպառիչ չի կարող լինել: Մեծ Բրիտանիայի քաղաքական համակարգն իր պարզ մեծամասնության ընտրական օրենսդրությամբ և կենտրոնայնական պետական կառուցվածքով առանձին կառավարություններին թույլ է տալիս կատարել շատ արագ և հիմնովին կառուցվածքային փոփոխություններ:

6.3. Գերմանիա

Սիմոն Ֆաուլթ

Գերմանիան համարվում է տիպիկ համակարգված շուկայական տնտեսություն (Մայեր, 2005թ., ա, 280 և հետո) և երկար ժամանակ դիտվում էր որպես տնտեսական դինամիկայի, քաղաքական կայունության և սոցիալական համահարթեցման օրինակելի համակցության մոդել (Էզլե, 2006թ., 273-326): Գործազրկության մակարդակի աճով և 1990-ականներին սկսած տնտեսական լճացմամբ Գերմանիայի մոդելը, իհարկե, զրկվեց իր փայլի ուժից և բրիտանական «The Economist»-ի կողմից անվանվեց Եվրոպայի հիվանդ մարդ: Անցած տարիների տնտեսական վերելքը կարծես թե հիմքերից զրկեց այդ գնահատականը, բայց և Գերմանիայում բացակայում է ֆինանսական շուկայի ճգնաժամի փորձությունը:

Ֆինանսավորման համակարգ

Գերմանիայում ձեռնարկությունների ֆինանսավորումը կապիտալի շուկայի միջոցով, ընդհանուր առմամբ, քիչ դեր է խաղում: Այդ պատճառով, ձեռնարկության ղեկավարումը գնահատվում է ոչ միայն շուկայի, այլ նաև ձեռնարկության հետ կապված բանկերի և այլ ձեռնարկությունների, ինչպես նաև գործառույթի ներկայացուցիչների և պետական դերակատարների կողմից: Դա կարող է նպաստել անձնական տեղեկատվության փոխանակմանն ու վստահության ձևավորմանը: Ձեռնարկությունների ֆինանսավորում կատարվում է հիմնականում բանկային վարկերի միջոցով: Այդ վարկերն ստանալու գործում, ձեռնարկության ֆինանսական տվյալներից զատ, դեր են խաղում ձեռնարկության ունեցած վարկն ու ցանցային կապերը: Իսկ ձեռնարկության վարկի և գործառույթությունների վերաբերյալ տեղեկությունները ներդրողներն ստանում են սերտ հարաբերությունների միահյուսվածության միջոցով: Կարճաժամկետ շահույթից ջլախված «համբերատար կապիտալի» այդ հասանելիությունը ձեռնարկություններին ընձեռում է երկարաժամկետ նախագծերի մեջ ներդրումներ կատարելու և լավ պատրաստված անձնակազմ պահելու հնարավորություն նաև տնտեսական ճգնաժամերի շրջաններում: Դա համապատասխանում է այն դիտարկմանը, որ Գերմանիայում կառավարումն ավելի քիչ զգայունությամբ կարող է արձագանքել անմիջական շահույթներին կամ սեփական արժեթղթերի արժեքին: Հարկային նորմատիվները, օրենքներն ու ձեռնարկությունների հետ լայն ճյուղավորված ցանցային կապերն ավելի շատ խրտնեցնում են թշնամական կլանումների փորձերից: Ձեռնարկությունների և բանկերի այդ ցանցը, իհարկե, քննադատվում է նաև որպես «բանկային կարտել» (Բըրի, Շմիդթ, 1996թ.), որովհետև այն դժվարացնում է շուկայի նոր մասնակիցների մուտքը և հովանավորում ներսում եղած յուրայիններին: Իհարկե, վերջին տարիների զարգացումները ցույց են տալիս, որ Գերմանիայում արդյունաբերական հարաբերությունները ցանցագերծվում են, իսկ միջազգային մասնակցությունները՝ աճում, ինչպես կպարզաբանվի հաջորդ բաժնում:

*Գերմանիան
համակարգված
շուկայական
տնտեսություն է:*

*Ձեռնարկություն-
ները ֆինանսավոր-
վում են բանկերի
միջոցով:*

Բանկերի և արդյունաբերության միահյուսվածությունը քանդվում է:

Ակնարկ. Վե՞րջ Գերմանիա ԲԸ-ին

Սկզբնապես քաղաքական քննարկումներին անուշադրության մատնված՝ 1990-ական թվականներից Գերմանիայում տեղի էր ունենում դանդաղ, բայց շարունակական չափազանց մեծ մի շրջադարձ, որն անվանվում է, այսպես կոչված, Գերմանիա բաժնետիրական ընկերության լուծարում: «Գերմանիա ԲԸ» արտահայտությամբ նկատի է առնվում այն, որ Գերմանիայում բանկերն ու արդյունաբերությունն ավանդաբար սերտորեն միահյուսված էին իրար: Այդ կապերի արմատները հասնում են միջև կայսերական ժամանակները: Միահյուսվածությունը մասնավորապես ծառայում էր գերմանական ձեռնարկությունների՝ դեպի դուրս ուղղվածության դեմև առնելուն և ներքին կայունությանը: Գլոբալիզացիայի ճնշման տակ հողի զբաղեցրածության համակարգը և խաչաձև մասնակցությունները դարձան խոչընդոտ, հատկապես այն ժամանակ, երբ գերմանական ձեռնարկությունները ցանկանում են մասնակից լինել կապիտալի համաշխարհային շուկային (Էգլե, 2006թ., 291):


Այդ պատճառով բանկերի և արդյունաբերության փոխադարձ կապիտալային մասնակցությունները վերջին տարիներին ակնհայտորեն նվազել են: Գերմանական ձեռնարկությունները մասնագիտացել և միջազգայնացել են:

Ձեռնարկությունների միահյուսվածությունը, հատկապես՝ բանկերի և արդյունաբերության միջև փոխկապվածությունը, Գերմանիայում վերջին տարիներին տրոհվելու միտում ունի: Այդ գործընթացը ցույց է տալիս, թե գլոբալիզացիան որքան է փոխում Գերմանիայի տնտեսական համակարգը: Մաքս Պլանկի անվան ինստիտուտի կողմից հասարակական հետազոտությունների համար կազմված ժամանակաշարքն ապացուցում է, որ այնտեղ, որտեղ դեռևս 1996 թվականին սերտ փոխկապվածություն կար, կապիտալի կապերի հյուսքը հստակորեն բարակել է:


Միտում դեպի չհամակարգված մոդել

Դրանով գերմանական ձեռնարկությունները շատ ավելի բաց են դարձել կապիտալի միջազգային շուկայի համար: Այդ կերպ Գերմանիան փոքր-ինչ շեղվում է համակարգված կապիտալիզմի մոդելից դեպի չհամակարգված մոդել: 2001 թվականին գերմանական ավանդական «Մաննեսման» ձեռնարկության ձեռքբերումը բրիտանական բջջային հեռախոսակապի կոնցեռն «Վոդաֆոնի» կողմից նախկինում անպատկերացելի կլիներ, և բեկում հանդիսացավ: Այսօր Բաժնետոմսերի գերմանական ցուցիչի (Dax) 30 ձեռնարկություններից ութը մեծ մասամբ միջազգային ձեռքբերում են, հազարամյակների սահմանագծին դրանք ընդամենը երեքն էին: Նույն ժամանակահատվածում արտասահմանյան ուղիղ ներդրումների հոսքը եռապատկվել է, միաժամանակ միջազգային շուկաներում աճում են գերմանական մասնակցությունները:

**Կապիտալի միախուլվածքները
Փերմանիայում 1996թ.**



**Կապիտալի միախուլվածքները
Փերմանիայում 2006թ.**



© 2008 Լորթար Զրեմիլեյ, Մաքս Պլանկի անվան հասարակական հետազոտությունների ինստիտուտ, www.mpifg.de/people/lk, Հակամենաշնորհային հանձնաժողովի տպյալներ <http://www.monopolkommission.de>

Կապերի լուծմանը նպաստեց օտարումից շահույթի նախկին 53 տոկոսանոց հարկի վերացումը, որը մինչ այդ ձեռնարկություններին մասնակցությունների վաճառքը ոչ գրավիչ էր դարձնում և նպաստում արդյունաբերության ու բանկերի միջև կապերի կարծրացմանը:

Միջազգայնացման և արտասահմանյան ուղիղ ներդրումների աճի միտումը պահպանվում է: Իհարկե, ներկայումս սկսվում է բանավեճ այն մասին, թե “sovereign wealth funds”-ի (պետական ֆոնդերի) և արտաբորսային մասնավոր կապիտալի ֆոնդերի համար բացությունն արդյո՞ք պետք է սահմանափակվի:

Գերմանիա ԲԸ-ի լուծարման հաշվեկշիռը խառն է ստացվում: Մի կողմից՝ ներդրումներ և նոու-հաու բերող միջազգային կապիտալի համար բացվելը նպաստել է այն բանին, որ շատ գերմանական ձեռնարկություններ պահպանել են իրենց միջուկակությունը և կարողացել ընդլայնել իրենց դիրքերը համաշխարհային շուկաներում: Մեկ արտադրական միավորի հաշվով աշխատավարձային ծախսերը, ի հակադրություն մյուս բոլոր եվրոպական երկրների, նշանակալիորեն նվազեցվել են: Դրա շնորհիվ հնարավոր է եղել արտահանման ծավալը մեկ տասնամյակի ընթացքում ավելացնել 50 տոկոսով, այսպիսով, շահտ ավելի շատ, քան հարևան երկրներում (աղբյուրը՝ Economist Intelligence Unit 2006թ.): Մյուս կողմից՝ աճել են շահութաբաժինների ճնշումը և կարճաժամկետ կողմնորոշումը, որը, մասնավորապես, արտահայտվում է անապահով աշխատանքային հարաբերություններում:

Մասնավոր կապիտալ ներդրումների ընկերությունների և հեշ-ֆոնդերի կողմից գերմանական ձեռնարկությունների գնման աճի ռիսկերը լայնորեն քննարկվել են, առաջին հերթին, մորեխների պարսերի հետ համեմատության համատեքստում: Արվող քննադատությունն այն է, որ այդ ընկերությունները հետաքրքրված են լրկ կաճաժամկետ շահույթներով:

Ընդհանուր տնտեսական զարգացման գնահատման փորձագիտական խորհուրդն իր 2005 թվականի տարեկան եզրակացության մեջ այդ մասին գրել է. «Գերմանիայում քննարկումների առաջին պլանում ձեռնարկությունների համար ռիսկերն էին: Երկյուղ կար, որ կարճաժամկետ կողմնորոշում ունեցող ֆինանսական ներդրողները կմասնակցեն որևէ ձեռնարկության, ձեռնարկությունը կտրոհեն և պահուստները կլուծարեն, որպեսզի հետո մասնակցությունը վերստին վաճառեն և ձեռնարկությունը թույլ վիճակում լքեն:» Որպես դրա արձագանք, 2008 թվականին ուժի մեջ մտավ «Ռիսկերի սահմանափակման մասին» օրենքը: Այն պարտավորեցնում է ներդրողներին բացահայտել իրենց ֆինանսական միջոցների ծագումը, ինչպես նաև իրենց նպատակները (Փորձագիտական խորհուրդ, 2005թ., 35):

Աշխատանքային հարաբերություններ

Գերմանիայում արհմիությունները միջազգային համեմատությամբ ունեն կազմակերպվածության չափավոր աստիճան՝ 23 տոկոս (2003թ. դիրությամբ, հմմտ. էջ 109):

Բայց սակագնային ինքնավարության շնորհիվ նրանք մեծ չափով ազդեցություն ունեն աշխատավարձերի ձևավորման և աշխատանքային պայմանների ստեղծման վրա (Էզլե, 2006թ., 290): Արհմիություններն ու գործատուների միությունները ոլորտային կազմակերպվածություն ունեն, օրինակ, մետալուրգիական արդյունաբերության համար, մի կողմում՝ IG Metall-ը, մյուս կողմում՝ Gesamtmetall-ը: Դա նշանակում է, որ սակագնային բանակցություններում համակարգումը կատարվում է այդ ոլորտների սահմաններում՝ դրանով ապահովելով, որ գործառույթները նույն արդյունաբերության մեջ կարող են ակնկալել նույն ռոճիկը: Այդ միատարր աշխատավարձերի շնորհիվ չկա ձեռնարկությունների միջև լավ մասնագիտական պատրաստվածություն ունեցող մասնագետների համար աշխատավարձային մրցակցություն (Յասսել 2006թ., 14):

*Սակագնային
համաձայնություն-
ներ՝ ըստ ոլորտների*

Ձեռնարկությունում աշխատանքին վերաբերող հարցերում և անձնակազմի վերաբերյալ որոշումներ կայացնելիս աշխատակիցների մասնակցության մակարդակը Գերմանիայում միջազգային համեմատությամբ շատ է զարգացած: «Ձեռնարկություններում իրավական ռեժիմի մասին» օրենքը կարգավորում է ձեռնարկութե-
նային խորհուրդների անդամների թվաքանակը, լիազորությունները և ազատվածությունը: Որոշումների կայացմանն աշխատակիցների մասնակցության օրենսդրական պահանջը կապիտալային ընկերությունների վրա տարածվում է, եթե նրանք ունեն 500-ից ավել աշխատակից: Դա նշանակում է, որ ձեռնարկության աշխատակիցները կարող են ներկայացուցիչներ գործուղել դիտորդ խորհուրդ:

*Մասնակցականու-
թյուն*

Մասնագիտական ուսուցման համակարգ

Գերմանական ձեռնարկություններից շատերի բարդ արտադրական համակարգերը հաճախ ենթադրում են լավ մասնագիտական պատրաստվածություն ունեցող աշխատուժ: Այստեղ իրեն արդարացրել է մասնագիտական ուսուցման դրալ համակարգն իր մեծ պրակտիկամերձությամբ և միաժամանակ մասնագիտական խորությամբ (Էզլե, 2006թ., 287): Այն «գերմանական կապիտալիզմի առանցքային ինստիտուտն է» (Յասսել, 2006թ., 13): Մասնագիտական ուսուցում անցնողները համեմատաբար քիչ են վաստակում, փոխարենը երիտասարդների համար, որպես կանոն, ապահովվում է որակավորված մուտք աշխատաշուկա, որը Գերմանիան դարձնում է երիտասարդների շրջանում ամենացածր գործազրկության մակարդակ (չափահասների գործազրկության մակարդակի մեջ) ունեցող երկիրը Տևտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության բոլոր անդամ-պետությունների մեջ (Յասսել, 2006թ., 15):

*Մասնագիտական
ուսուցման դրալ
համակարգի
նշանակությունը*

Համեմատաբար բարձր մասնագիտական որակավորումը գործառույթին տալիս է բանակցություններ վարելու ավելի մեծ ուժ, քան այն երկրներում, որտեղ ավելի

շուտ գոյություն ունեն ընդհանրական մասնագիտական ուսուցման համակարգեր, և գործառույթին հեշտությամբ կարելի է փոխել: Որակային կողմնորոշում ունեցող այդ արտադրության պատճառով առկա է սպեցիֆիկ կախվածություն որակյալ մասնագետներից: Գործառույթի շարունակ ավելի հեռուն գնացող պահանջներից պաշտպանվելու և այլ ֆիրմաների կողմից որակյալ պատրաստվածություն ունեցող աշխատակիցների վերահավաքագրմանը խոչընդոտելու նպատակով գերմանական ֆիրմաներն արդյունաբերական հարաբերությունների համակարգում գործատուների և արհմիությունների միջև համակարգված սակագնային բանակցությունների միջոցով կազմակերպվել են առանձին արդյունաբերական ոլորտներում: Դրանով է պայմանավորված համեմատելի կարողությունների համար աշխատավարձերի հավասարեցումն ամբողջ արդյունաբերական հատվածում: Դա դժվարացնում է արդյունաբերական սպեցիֆիկայով պատրաստվածություն ունեցող աշխատուժի վերահավաքագրումը:

*Մասնագիտական
ուսուցման
համակարգի
վտանգվածությունը*

Բայց կան երեք պատճառներ, որոնք վտանգում են մասնագիտական կրթության դուռը համակարգը: Առաջին՝ այն կախված է կոնյունկտուրայից: Վերելքային փուլերում ձեռնարկությունները հաճույքով են աշխատանքի ընդունում սովորողների՝ որպես էժան ու ճկուն աշխատուժի: Լճացման շրջաններում առաջանում է մասնագիտական ուսուցման տեղերի պակաս: Եթե այդ պակասը տևական է լինում, ապա ձևավորվում է ինքնաուժեղացման էֆեկտ, որովհետև նրանք, ովքեր ուսումնական տեղեր չեն ստացել, հարվածային ալիքի նման քշվում են, և հաջորդ տարին մեծանում է ուսումնական տեղերի համար մրցակցությունը: Երկրորդ՝ ձեռնարկությունները խուսափում են ուսուցանելու իրենց պատասխանատվությունից: Եվ երրորդ՝ գիտելիքի և սովորածի կիսաշրջանը շարունակ կրճատվում է: Գրեթե ոչ մի ուսուցում չի տևում ցկյանս: Շարունակ ավելի արագ փոփոխվող աշխատանքային ոլորտի մարտահրավերներին պատասխան Գերմանիայում իր վերապատրաստման և կատարելագործման թերզարգացած առաջարկով դեռևս չի գտնվել:

Միջձեռնարկութենային հարաբերություններ

Գերմանական խոշոր ձեռնարկությունների ղեկավարությունները հազվադեպ են ունենում կարևոր որոշումներ միակողմանի կայացնելու հնարավորություն: Դրա փոխարեն նրանք պետք է ստանան դիտորդ խորհուրդների և գործընկերային ցանցերի համաձայնությունը, որոնցում, բանկերից զատ, ներկայացված են նաև այլ ձեռնարկություններ, գործառույթ և պետական դերակատարներ: Հետևաբար, ձեռնարկությունների կողմից որոշումների կայացման հարցում կարևորվում են ոչ թե կարճաժամկետ շահութաբաժնային հետաքրքրությունները, այլ մեծ թվով շահագրգիռ կողմերի հետաքրքրությունները:

*Ձեռնարկությունների
ղեկավարման
հարցերում վճռորոշ
ազդեցություն ունեն
բազմաթիվ շահեր*

Գերմանիա

Մեկ շնչին բաժին ընկնող համախառն ներքին արդյունք, 2008թ.	29 100 եվրո	Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն՝ գնողունակության ստանդարտում (ԳՈՒՄ), մեկ ԳՈՒՄ-ը համապատասխանում է ԵՄ-27-ի մեկ եվրոյի միջին գնողունակությանը (աղբյուրը՝ Եվրոստատ)
Միջին տնտեսական աճ 1990-2007թթ.	1,4 %	Տարեկան միջին տնտեսական աճ՝ մեկ շնչի հաշվով, կայուն գների պայմաններում (աղբյուրը՝ Մարդկային զարգացման ցուցիչ 2009թ., էջ 277)
Պետական պարտք 2008թ.	65,9 %	Պետական պարտքը ՀՆԱ-ի %-ով (աղբյուրը՝ ԳԴՀ ֆինանսների նախարարության ամսական հաշվետվություն, 12/2009թ., էջ 99)
Ընթացիկ գործառնությունների հաշվեկշիռ 2008թ.	6,4 %	Ակրանքների բոլոր արտահանումների և ներկրումների հավելչուի սալրոն ՀՆԱ-ի %-ով (աղբյուրը՝ ԱՄՆ, World Economic Outlook 10/2009, էջ 187)
Զբաղվածության մակարդակը 2008թ.	70,7 % (65,4 %)	15 - 64 տարեկան անձանց (կանանց) տեսակարար կշիռը ընդհանուր բնակչության թվում (աղբյուրը՝ Եվրոստատ)
Գործազրկության մակարդակը 2008թ.	7,3 %	Գործազրկների տեսակարար կշիռը զբաղված բնակչության թվում (աղբյուրը՝ Եվրոստատ)
Եկամուտների անհավասարությունը՝ չափված Ջինիի գործակցով	28,3 %	Եկամուտների անհավասար բաշխման ցուցանիշ, 100 % = առավելագույն անհավասարություն (աղբյուրը՝ Մարդկային զարգացման ցուցիչ 2009թ., էջ 195)
Եկամուտների անհավասարությունը տղամարդկանց և կանանց միջև	59 %	Կանանց աշխատանքային եկամուտները՝ տղամարդկանց եկամուտների համեմատությամբ (աղբյուրը՝ Մարդկային զարգացման ցուցիչ 2009թ., էջ 186)
Աղքատության ցուցիչ 2009թ.	10,1 %	Աղքատության ցուցիչը բաղկացած է տարբեր ինդիկատորներից (կյանքի տևողություն, գրագիտության մակարդակ, առողջապահական ապահովման մատչելիություն, ...) 0 = նվազագույն աղքատություն, 100 = առավելագույն աղքատություն (աղբյուրը՝ Մարդկային զարգացման ցուցիչ 2009թ., էջ 180)
Արհմիութենական կազմակերպվածության աստիճան 2007թ.	19,9 %	Արհմիություններում կազմակերպված աշխատող բնակչության տեսակարար կշիռը (աղբյուրը՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն)

Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո Գերմանիայում քաղաքական տնտեսության մեջ պետության դերը լավագույնս կարելի է նկարագրել որպես հնարավորություններ տվող և իրավապես ապահովող պետության դեր: Տնտեսական գործընթացներին նրա անմիջական միջամտության հնարավորությունները թեև սահմանափակված էին դաշնային կառույցներով և մի շարք անկախ հաստատությունների առկայությամբ, ինչպիսիք են Դաշնային բանկը և Հակակարտելային դաշնային ծառայությունը, այդուհանդերձ, պետությունը զարգացրել է հասարակական խմբերի և մերձհանրային կորպորատիվիստական դերակատարների ինքնակազմակերպումը խթանելու և անհրաժեշտ, մասամբ սահմանադրական, միջոցներով օժտելու ունակություն, որպեսզի ինքնուրույն կարգավորվեն և կառավարվեն քաղաքական տնտեսության այն ոլորտները, որոնք ինչ-որ տեղ պետությունն էր կարգավորում, կամ թողնված էր շուկային: Եվրոպայի կենտրոնական բանկը (ԵԿԲ) և նրա դրամային քաղաքականության անկախությունը, ինչպես նաև Եվրոպայի մրցակցային հանձնակատարները հետևում են այն քաղաքա-

կան-տնտեսական սկզբունքներին, որոնք գործում են նաև Գերմանիայի Դաշնային Հանրապետության համար, և դրանով խզում չեն ներկայացնում: Բացի այդ՝ պետությունը համախառն ազգային արդյունքի մի զգալի մաս ծախսում է սոցիալական ապահովման համակարգերի վրա և հետևում «բոլոր դաշնային երկրամասերում հավասարաբեռ կենսապայմաններ» սահմանադրական պատվիրանին՝ ստեղծելով տարածաշրջանային վերաբաշխման համակարգ (Շտրեեք, 1995թ.):

Գնահատում

Գերմանիայի տնտեսական համակարգը միջին ճանապարհ է անգլո-սաքսոնական շուկայական տնտեսության և սկանդինավյան բարեկեցիկ երկրի միջև (Շմիդթ, 2000թ.):

Գերմանիայում ավելի շատ գոյություն ունեն երկարաժամկետ աշխատանքային հարաբերություններ. գործառույթը տասը տարուց ավել աշխատում են նույն գործատուի մոտ, մինչդեռ Մեծ Բրիտանիայում ութ տարի է, իսկ ԱՄՆ-ում՝ յոթ տարի (Շտրեեք, 1995թ.): Գործակցային աշխատանքային հարաբերությունները և աշխատողների որակավորման բարձր մակարդակն ապահովում են արտադրողականության աճ, որը թույլ է տալիս լավ վարձատրել մասնագետներին և կրճատել աշխատաժամանակը (Հասսել, 2006թ.):

Ընդ որում, Գերմանիայում աշխատավարձային տարբերությունը համեմատաբար փոքր է, իսկ մասնագետները, ի տարբերություն այլ երկրների, լիովին պատկանում են միջին խավին: Վերջինս Գերմանիայում լայնորեն է ձևավորված. իրեն միջին խավ է համարում բնակչության 66 տոկոսը, իսկ բրիտանացիների՝ 26 տոկոսը և ամերիկացիների՝ 44 տոկոսը (Ռյոսսել, 2005թ.):

Բայց տնտեսական ճգնաժամի պատճառով, սկսած 1990-ական թվականներից, գերմանական մոդելը ենթարկվեց նաև քննադատության: Հաստկապես 2005 թվականի Բունդեթագի նախընտրական պայքարում պահպանողականներն սկսեցին «պոչից գնալու» մասին բանավեճ: Ըստ այդմ, Գերմանիան, իբր թե, միջազգային ասպարեզում այլևս մրցունակ չէր: Ի հեճուկս բոլոր կռավոցների՝ Գերմանիան, սակայն, կարողացավ կանոնավորապես ապացուցել իր բարձր մրցունակությունը՝ որպես արտահանման մեջ աշխարհի առաջատար: Դա պայմանավորված է, ի մասնավորի, համալիր արդյունաբերական ապրանքների բարձր որակով, առաջին հերթին՝ ավտոմոբիլային արդյունաբերությամբ և արդյունաբերական սարքավորումների արտադրությամբ: Արդյունաբերության ոլորտում զբաղվածության բաժինը Գերմանիայում անփոփոխ կերպով 10 տոկոսով գերազանցում է Տնտեսական համագործակցության և զարգացման մյուս անդամ-երկրների ցուցանիշը (Էզլե, 2006թ., 292):

6.4. Ճապոնիա

Վերներ Փաշա

Ճապոնիան համարվում է համակարգված շուկայական տնտեսության տիպիկ դեպք: Համակարգված շուկայական տնտեսությունների տիրույթում Հոլլը և Սուսկիսը (2001թ., 34) Ճապոնիան դասում են (արդյունաբերական) խմբային կողմնորոշվածության դեպքերի շարքը: Դա նշանակում է, որ տնտեսական գործունեությունների համակարգումն իրականացվում է միջնուղային տնտեսական խառը կոնցեռնների՝ Ճապոնիայում, այսպես կոչված, կեյթեցուների միջոցով:

Գերմանիայի պես Ճապոնիան հետպատերազմյան շրջանում համարվում էր միաժամանակ տնտեսական բարեկեցության և սոցիալական համահարթեցման հասնելու գործում օրինակելի (Քեֆենհյորսթեր / Փաշա / Շիրե, 2003թ.):

Բայց ամենաուշը 1990-ական թվականների տնտեսական ճգնաժամով այդ փայլը դժգուներեց: Տնտեսական ճգնաժամի պատճառը «փուչիկ-տնտեսության» (անգլերեն «bubble» - փուչիկ) ավարտն էր, այսինքն՝ սպեկուլյացիոն փուչիկի պայթյունը: Սկզբում դեռ վեժերոտ, այնուհետև ավելի ու ավելի շատ նախաձեռնվեցին շուկայական-ազատական բարեփոխումներ, հատկապես վարչապետ Կոիցումիի կառավարման տարիներին (2001-2006թթ.):

Ֆինանսավորման համակարգը

Հետպատերազմյան շրջանի Ճապոնիայի ֆինանսավորման համակարգը բանկային կողմնորոշվածություն ունի: Տասնամյակներ շարունակ ձեռնարկությունների ֆինանսավորման կարևոր գործիք էին բանկային վարկերը:

Բանկերն իրենց հերթին հետպատերազմյան վաղ շրջանում կապիտալի սղության պատճառով մեծապես ապավինում էին կենտրոնական բանկի տրամադրած վարկերին: Կենտրոնական բանկի միջոցով այդ կերպ պետությունն անմիջականորեն բանկերի և միջնորդավորված ձևով ձեռնարկությունների համար մեծ դեր էր ստանում:

Ընդհանուր առմամբ, այդ համակարգից շահում էին խոշոր ձեռնարկությունները: Պետությունը նրանց ռազմավարական առաջադրանքներ կատարելիս ընձեռում էր նպաստավոր տոկոսադրույթային պայմաններ: Բարձր ներդրումնային մակարդակի և աճի մեծ տեմպերի շնորհիվ շահում էին նաև անձնակազմերը (Մոկի / Սաքսընհաուզ, 2008թ.):

1970-ական թվականներից սկսվեցին փոփոխություններ: Ձեռնարկություններն ու բանկերը տնտեսության միջազգայնացման և ազատականացման արդյունքում կարո-

Ճապոնիա. երկար ժամանակ համարվել է տնտեսական բարեկեցության և սոցիալական համահարթեցման մոդել:

Ձեռնարկությունների ֆինանսավորում բանկերի միջոցով

ղացան առանձնանալ պետության հետ սերտ միասնությունից: Հատկապես խոշոր ձեռնարկությունների համար ստեղծվեց կապիտալի շուկայի միջոցով ֆինանսավորվելու հնարավորություն: Այդ շրջադարձի անցանկալի հետևանքներից էր վերևում արդեն հիշատակված «փուչիկ-տնտեսությունը» 1980-ական թվականների վերջերին (Ամիթս, 2004թ.): 1997 թվականին ընդունվեց միջոցառումների փաթեթ՝ «Big Bang» անվանմամբ: Այն նախատեսում էր հրապարակայնության և թափանցիկության միջոցով դարձնել ճապոնիան որպես ֆինանսատեղի ավելի գրավիչ: Սակայն միայն 2003 թվականին հաջողվեց բանկային համակարգում վերացնել պայթյունի վերջին հետքերը:

Աշխատանքային հարաբերություններ

Արդեն նախապատերազմյան շրջանից ի վեր ճապոնիայում կային երկարաժամկետ աշխատանքային հարաբերություններին կողմնորոշված համակարգի սաղմեր, որը հետպատերազմյան շրջանում լիարժեք ծաղկում ապրեց (Դեմես, 1998թ.): Աշխատավարձերի կանոնավոր բարձրացումները, գործերի վիճակից կախված կիսամյակային պարգևավճարները, գրավիչ սոցիալական վճարներն ու կարիերայի նպաստավոր հնարավորությունները կոչված էին կապելու որակյալ աշխատակիցներին ձեռնարկության հետ:

Այդ համակարգը ֆիրմաներին տալիս էր հուսալի, ձեռնարկության հաջողություններում տևականորեն շահագրգռված և լրացուցիչ աշխատանքի պատրաստ աշխատակիցներ ճկունորեն ներգրավելու հնարավորություն: Իհարկե, առաջին հերթին շահում էին խոշոր ձեռնարկություններում կանոնավոր աշխատանք ունեցող տղամարդիկ, ընդհանուր առմամբ, աշխատող բնակչության մոտավորապես մեկ երրորդը:

Դրան զուգահեռ՝ ստվերոտ կողմ էր մնում ձեռնարկություններից կախվածությունը, անգամ նախապատվություն ունեցող աշխատուժի պարագայում: Աշխատանքային փորձը մեծապես կապված էր ֆիրմայի հետ: Դրա հետևանքը տարբեր ֆիրմաների միջև քիչ շարժն էր, մեծ ծավալի արտաժամյա աշխատանքը և ընտանիքը քիչ հաշվի առնող տեղափոխումները:

Անշուշտ, դրական է, որ ճապոնիայում եկամուտների տարբերությունները մեծ չեն անգամ բարձրակարգ կառավարիչների և սովորական աշխատողի միջև:

Հետպատերազմյան ճապոնիայում կշիռ ունեն գործարանային արհմիությունները: Անգամ եթե շարունակ կոնֆլիկտներ են եղել, ձեռնարկության ղեկավարությունը և գործարանային արհմիությունը դրանց հարթահարման համար հաճախ համատեղ ջանքեր են գործադրել: Միևնույն ժամանակ փոքր ձեռնարկություններում գրեթե չի հաջողվել ստեղծել գործառուների կամ ոչ կանոնավոր աշխատողների շահերի պաշտպանություն: Ընդհանուր առմամբ,

*Երկարաժամկետ
աշխատանքային
հարաբերություն-
ներ...*

*... ստվերոտ
կողմերով*

*Գործարանային
արհմիություններ*

աշխատանքային հարաբերությունների շարունակ աճող տարբերությունների և գործառույթների տարբեր շահերի պատճառով արհմիությունների դերը շարունակում է նվազել:

Երկարաժամկետ աշխատանքային հարաբերությունների համակարգը ևս նահանջ է ապրում (Հաաբ, 2006թ.): Ճգնաժամային 1990-ական թվականներին այն առաջին հերթին վերաբերում էր առավել տարեց, բարձր վարձատրվող աշխատակիցներին: Ոչ կանոնավոր աշխատանքային հարաբերությունները, օրինակ՝ ոչ լրիվ աշխատանքային օրով աշխատանքը կամ վարձու աշխատանքը, զգալի նշանակություն են ստացել: Այդ պատճառով միջին աշխատավարձը, 2003 թվականից ի վեր, չնայած տնտեսապես համեմատաբար հաջող տարիներին, գրեթե չի աճել:

Դպրոցական և մասնագիտական կրթության համակարգ

19-րդ դարից ի վեր պետությունը պետական հիմնարկների միջոցով ապահովել է հիմնարար դպրոցական կրթություն: Այս ընթացքում գրեթե բոլոր դեռահասներն ուսումը շարունակում են նաև ինժեներական պարտադիր կրթությունից հետո: Երկար ժամանակ դպրոցական կրթության նպատակը ջանասիրություն, տոկոսություն, ինչպես նաև սոցիալական կապվածություն խթանելն ու հիմնական գիտելիքներ հաղորդելն էր, ոչ թե, դրա փոխարեն, ստեղծագործականություն զարգացնելը և անձնավորության ձևավորման վրա ինքնուրույն աշխատելը (Մյունխ / Էսվայն, 1998թ.): Այդ կերպ շրջանավարտները լավագույնս հարմար էին ֆիրմաներին, որոնք ցանկանում էին իրենք ստանձնել ձեռնարկությանն առնչվող գիտելիքների հետագա հաղորդումը:

Ձեռնարկություններում, որպես կանոն, տարբեր աշխատանքներ են հանձնարարվում («job rotation») «ախատանքի ռոտացիա», «training on the job» «ուսուցում աշխատանքի ընթացքում»), ընդ որում, ձեռք բերված ունակություններն այնքան ֆիմային սպեցիֆիկություն ունեն, որ ֆիրման փոխելը գրեթե հնարավոր չէ: Կրթական համակարգի մեկ այլ առանձնահատկություն է երիտասարդներին իրենց աշխատունակության առումով վերոնշյալ իմաստով «տեսակավորելը»: Այդ գտնված գործառույթի շնորհիվ լավ վարձատրող խոշոր ձեռնարկությունները կարող են հեշտությամբ վեր հանել լավագույն դիմորդներին, մինչդեռ առավել վատ արդյունքներ ունեցող շրջանավարտներն ստիպված են բավարարվել առավել ցածրավարձ հաստիքներով:

Որոշ ժամանակ է, ինչ աճում է այն մտահոգությունը, որ ջանասեր, բայց քիչ ստեղծագործական աշխատակիցների հետ համատեղելի չէ տեխնիկական-կազմակերպական առաջընթացի ղեկավար դիրքը: Ի լրումն դրա՝ երիտասարդ նորեկների վրա կենտրոնացածությունն այլևս համաբայլ չէ արագորեն ծերացող հասարակության իրողությունների հետ: Այդ պատճառով դպրոցներն ու համալսարանները

Ընդհանուր պետական մասնագիտական կրթություն...

... և մասնագիտացում ձեռնարկություններում

հիմա պետք է նաև զարգացնեն ստեղծագործականություն և անհատականություն, ինչպես նաև տարեցների համար անեն լրացուցիչ կրթական առաջարկներ: Բացի այդ՝ ֆիրմաները փորձում են ձերբազատվել աշխատանքի ընդունման ավանդական ձևերից և հնուց ժառանգած ներձեռնարկութենային որակավորման միջոցառումներից: Բայց դեռևս մեծ մարտահրավեր են մնում արտասահմանյան շրջանավարտներին աշխատանքի ընդունելը, կառավարման համակարգում բարձր որակավորում ունեցող կանանց հանդուրժելը և նման բաներ:

Միջձեռնարկութենային հարաբերություններ

Ճապոնիայի ձեռնարկությունների միջև գոյություն ունեն բազմաթիվ կապեր: Որոշ դիտարկողներ խոսում են ցանցային տնտեսությունից (Լինկոլն / Գերլախ, 2004թ.): Հորիզոնական կառուցվածք ունեցող խառը կոնցեռնները, ինչպիսիք են Միցուբիշին կամ Սումիտոմոն, բաղկացած են տարբեր ճյուղերի ձեռնարկություններից, որոնք իրար միահյուսված են կադրային փոխանակումներով, կապիտալով և այլ մեխանիզմներով: Ձեռնարկությունների այլ խմբերի հետ մրցակցության մեջ նրանք նշանակալից մրցակցային առավելություններ են ձևավորել՝ չկորչելով հնուց ժառանգած ճյուղային մասնագիտացումներում:

Ձեռնարկությունների ուղղաձիգ կառուցվածք ունեցող խմբերում կապերն ստեղծվում են արժեստեղծման շղթայի երկայնքով: Եթե մայր ձեռնարկությունը, օրինակ՝ Տոյոտայինը, վերջնական հավաքման աշխատանքներով կարող է ապահովել որակը և պատասխանատու է ռազմավարական հարցերի համար, ապա պահեստամասեր մատակարարողների առաջին խումբն ստանձնում է հիմնական համակարգային բաղադրիչները: Դրանից ներքև գտնվողները, հիմնականում փոքր մատակարարներից բաղկացած մակարդակները, հոգ են տանում առանձին բաղադրիչների համար: Մատակարարների նման բուրգերը հասնում են մեծ ճկունության և բազմակողմանիության, անգամ եթե հենց ստորին մակարդակներն են կոնյունկտուրային դժվարությունների ժամանակ իրենց վրա ընդունում զգալի բեռը:

Լրացուցիչ հարաբերություններ առկա են բանկերի և ձեռնարկությունների միջև վարկային կողմնորոշվածություն ունեցող ֆինանսական համակարգի միջոցով: Հետպատերազմյան շրջանում բանկերը՝ որպես հողիևգ-բանկեր, իրականացրել են վերահսկիչ գործառույթ՝ դրանով դառնալով հաճախ ավելի կարևոր, քան բաժնետերերը: Ձեռնարկությունների կառավարման ճապոնական համակարգը կրում էր մի կողմից՝ ներսից կառավարիչների ստորակարգության, մյուս կողմից՝ դրսից բանկերի դրոշմը (Դիրքս / Օթթո, 1998թ.): Եթե ձեռնարկությունը հայտնվում էր դժվարին կացության մեջ, ապա բանկերից սպասվում էր, որ կօգնեն ձեռնարկու-

*Ցանցային
տնտեսություն*

*Ձեռնարկություն-
ների վերահսկողու-
թյուն բանկերի
կողմից*

Ճապոնիա

Մեկ շնչին բաժին ընկնող համախառն ներքին արդյունք, 2008թ.	27 800 Եվրո	Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն՝ գնողունակության ստանդարտում (ԳՈՒՄ), մեկ ԳՈՒՄ-ը համապատասխանում է ԵՄ-27-ի մեկ Եվրոյի միջին գնողունակությանը (աղբյուրը՝ Եվրոստատ)
Միջին տնտեսական աճ 1990-2007թթ.	1,0 %	Տարեկան միջին տնտեսական աճ՝ մեկ շնչի հաշվով, կայուն գների պայմաններում (աղբյուրը՝ Մարդկային զարգացման ցուցիչ 2009թ., էջ 277)
Պետական պարտք 2008թ.	173,1 %	Պետական պարտքը ՀՆԱ-ի %-ով (աղբյուրը՝ ԳԴՀ ֆինանսների նախարարության ամսական հաշվետվություն, 12/2009թ., էջ 99)
Ընթացիկ գործառնությունների հաշվեկշիռ 2008թ.	3,2 %	Ակրանքների բոլոր արտահանումների և ներկրումների հավելչով սալրոն ՀՆԱ-ի %-ով (աղբյուրը՝ ԱՄՅ, World Economic Outlook 10/2009, էջ. 187)
Զբաղվածության մակարդակը 2008թ.	70,7 % (59,7 %)	15 - 64 տարեկան անձանց (կանանց) տեսակարար կշիռը ընդհանուր բնակչության թվում (աղբյուրը՝ Եվրոստատ)
Գործազրկության մակարդակը 2008թ.	4,0 %	Գործազրկների տեսակարար կշիռը զբաղված բնակչության թվում (աղբյուրը՝ Եվրոստատ)
Եկամուտների անհավասարությունը՝ չափված Ջինիի գործակցով	24,9 %	Եկամուտների անհավասար բաշխման ցուցանիշ, 100 % = առավելագույն անհավասարություն (աղբյուրը՝ Մարդկային զարգացման ցուցիչ 2009թ., էջ 195)
Եկամուտների անհավասարությունը տղամարդկանց և կանանց միջև	45 %	Կանանց աշխատանքային եկամուտները՝ տղամարդկանց եկամուտների համեմատությամբ (աղբյուրը՝ Մարդկային զարգացման ցուցիչ 2009թ., էջ 186)
Աղքատության ցուցիչ 2009թ.	11,6 %	Աղքատության ցուցիչը բաղկացած է տարբեր ինդիկատորներից (կյանքի տևողություն, գրագիտության մակարդակ, առողջապահական ապահովման մատչելիություն, ...), 0 = նվազագույն աղքատություն, 100 = առավելագույն աղքատություն (աղբյուրը՝ Մարդկային զարգացման ցուցիչ 2009թ., էջ 180)
Արհմիութենական կազմակերպվածության աստիճան 2007թ.	18,3 %	Արհմիություններում կազմակերպված աշխատող բնակչության տեսակարար կշիռը (աղբյուրը՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն)

թյուններին՝ համակարգի ճգնաժամը կանխելու համար: Որպես պատասխան քայլ պետությունն ստանձնում էր գոյության երաշխիք անգամ ամենաթույլ բանկային հաստատությունների համար: Բանկերի և ձեռնարկությունների, մասամբ նաև իրավասու պաշտոնյաների միջև անձնական կապերով հնարավոր էին դառնում երկարաժամկետ նախագծված ռազմավարություններ: Մյուս կողմից, կարող էին լինել նաև խնդրահարույց պայմանավորվածություններ՝ ընդհուպ մինչև կոռուպցիա:

Այս ընթացքում համակարգը զգալի ճնշման տակ է հայտնվել: Միջազգային կապիտալի շուկայից կախվածության աճն ստիպում է ձեռնարկություններին առավել թափանցիկ դարձնել իրենց հարաբերություններն ու ձեռնարկությունների կառավարումը: Դրանով առաջանում է այն վտանգը, որ ճապոնական ձեռնարկություններն ստիպված են արևմտյան ֆիրմաների պես կարճաճուն գործողությունների դիմել, իսկ երկարաժամկետ հուսալի համագործակցության առավելությունները վերանում են:

*Արդյունաբերական
արտադրության
օպտիմալացում...*

Չնահատում

Ճապոնիայի խմբային կողմնորոշվածությունն ունեցող, համակարգված կապիտալիզմը հետպատերազմյան շրջանում լավագույնս ի վիճակի էր օպտիմալ ձևով ընդլայնել ճապոնական արդյունաբերական հատվածի ուժեղ կողմերը: Բանն այն է, որ հաջողվել էր հիմնականում ստանդարտացված արդյունաբերական արտադրանքը քայլ առ քայլ կատարելագործել և լավ որակի ու արտադրողականության աճի ապահովմամբ մեծ քանակությամբ իրացնել համաշխարհային շուկայում: Բանկային ֆինանսավորումն ու վերահսկողությունը հնարավոր էր դարձնում երկարաժամկետ նախագծմամբ ռազմավարություններ: Մարտունակ կոնցեռնները կազմակերպում էին ռազմավարությունների համար անհրաժեշտ ռեսուրսները: Ջանասեր աշխատողները կենսագործում էին ռազմավարությունները: Կրթական համակարգը մեծ թվով այդպիսի աշխատուժ էր տրամադրում:

Այդ մեխանիզմը թեև հարուցում էր որոշ սոցիալական ու քաղաքական հիմնախնդիրներ, օրինակ՝ խոշոր և փոքր ձեռնարկությունների միջև տարբերությունները, անձնական զարգացման հնարավորությունների պակասը և որոշակի կոռուպցիոն ռիսկեր, բայց բնակչության մեծ մասն ընդհանուր առմամբ շահում էր ընդհանուր տնտեսության վերելքից:

Բայց միջազգայնացման ու տեխնիկական-կազմակերպական առաջընթացի պայմաններում համակարգն արդեն հասել է իր սահմաններին: Ընդ որում, սոցիալական համահարթեցումն իրականացվում է անբավարար չափով և զգալի ճնշման տակ է դնում կառավարությանը, ինչը, շուկայի բարեփոխիչ Կոիցումիի հեռանալուց հետո, կառավարական հարաբերությունների անկայունության կարևոր պատճառներից մեկն է:

Այս ընթացքում բարձրացվել է այն հարցը, թե ճապոնիայի տնտեսությունը որքանով է ավելի ու ավելի շարժվում չհամակարգված, անգլո-ամերիկյան մոդելի ուղղությամբ (Դորե, 2000թ., Փաշա, 2004թ., Շտրեթե / Յամամուրա, 2003թ.): Անշուշտ, այնպիսի տպավորություն է, որ ճապոնիան չի թեքվի դեպի չհամակարգված կապիտալիզմի ուղին: Դրա ամենաուժեղ նշանը ձեռնարկությունների կառավարման մեջ ընթացող զարգացումներն են: Հատկապես չհամակարգված մոդելի համար բնորոշ միաժամանակյա կողմնորոշվածությունը կապիտալի շուկային, շուկայով պայմանավորված կադրային քաղաքականությունը և կառավարման կառուցվածքների հրապարակայնությունն առայժմ գրեթե տարածված չեն: Տարբեր ֆիրմաներում ավելի շատ գերիշխում են խառը ձևերը, օրինակ՝ բաց կադրային քաղաքականությունն ավելի շատ հետպատերազմյան ավանդական մոդելի մեջ ներառելը (Աուկի / Ջեկսոն / Միյաջիմա, 2007թ.):

Նոր և իրենով ամփոփ ընդհանուր համակարգ դեռևս չի գտնվել:

*... բայց սոցիալական
և քաղաքական
հիմնախնդիրներ*

*Ճապոնական
մոդելի ապագա՞ն*

6.5. Շվեդիա

Էրիք Գուրգադիս

Ռեհն-Մեյդների մոդելը

Շվեդիայի տնտեսական քաղաքականությունը հիմնվում է այսպես կոչված Ռեհն-Մեյդների մոդելի վրա: Այն կոչվել է արհմիութենական տնտեսագետներ Գյոսթա Ռեհնի և Ռուդոլֆ Մեյդների անունով: Նրանք երկուսով 1951 թվականին մշակել են համատնտեսական մոդել, որը լիարժեք զբաղվածությունը պետք է համատեղելի պահեր «համերաշխ աշխատավարձային քաղաքականության» հետ՝ չհարուցելով սղաճային գործընթացներ:

Չիմքում ընկած էր այն պատկերացումը, որ տևական լիարժեք զբաղվածության հնարավոր չէ հասնել ընդհանուր բարձր համատնտեսական պահանջարկով, անգամ եթե վերջինս առաջ բերվի նպաստավոր համաշխարհային տնտեսական զարգացմամբ կամ ազգային կոնյունկտուրային ծրագրերով: Քանի որ տնտեսության առանձին ճյուղերը միշտ տարբեր տեմպերով են աճում, ապա տևական բարձր համընդհանուր տնտեսական պահանջարկն արագորեն հանգեցնում է դեֆիցիտային ոլորտների առաջացմանը: Աճը, այնուամենայնիվ, շարունակելու համար դեֆիցիտային ոլորտները փորձում են այլ ոլորտներից աշխատուժ հավաքագրել: Լիարժեք զբաղվածության պարագայում դա կարող է տեղի ունենալ միայն ավելի բարձր աշխատավարձեր առաջարկելով և կապված է այդ ոլորտներում դրանից հետո գնաճի հետ: Դա էլ իր հերթին բերում է, գնողունակության կորուստների հավասարակշռման նպատակով, մնացած ոլորտներում աշխատավարձերի աճի, որի հետևանքը ընդհանուր գնաճերն են և, դրանով էլ՝ սղաճային զարգացումներն ընդհանուր տնտեսության մեջ:

Չամերաշխ աշխատավարձային քաղաքականություն

Գործը ղժվարանում էր նաև, որ շվեդական բանվորական արհմիությունը երկրորդ Չամաշխարհային պատերազմից հետո հետամուտ էր, այսպես կոչված, «համերաշխ աշխատավարձային քաղաքականության»: Վերջինս երկու էական նպատակ ունի: Մի կողմից՝ այն հավակնում է իրագործելու «Չավասար աշխատավարձ՝ նույն աշխատանքի համար» սկզբունքը և այդտեղ ուղղված է միջին աշխատանքային արտադրողականության զարգացմանը: Մյուս կողմից՝ տարբեր աշխատանքների միջև աշխատավարձային տարբերությունն ընդհանուր կերպով պետք է նվազեցվի: Այդ նպատակներին հասնելու համար նախադրյալը կենտրոնական աշխատավարձային բանակցություններն ավելի ցածր հարթություններից գերադասելն է:

Լիարժեք զբաղվածություն՝ համերաշխ աշխատավարձային քաղաքականությամբ

Ռեհն-Մեյդների մոդելի առավելություններն ու թերությունները

Խոչընդոտելու համար, որ «համերաշխ աշխատավարձային քաղաքականության» արդյունքները սղաճի հետևանքով չկորչեն, Ռեհն-Մեյդների մոդելում առաջարկվեց ձգված հանրային ֆինանսական քաղաքականություն, որը բյուջետային ավելցուկների միջոցով կզսպի համատնտեսական պահանջարկը:

Ճշում ցածր արտադրողականություն ունեցող ձեռնարկությունների վրա

Նման տնտեսաքաղաքական հայեցակարգը ցածր արտադրողականություն ունեցող ձեռնարկություններին մղում է կրկնակի պաշտպանության: Նախ՝ իրենց վատ ծախսային ու գնային կառուցվածքի պատճառով և ընդամենը չափավոր պահանջարկի պայմաններում նրանք բախվում են իրացման խնդիրների: Այնուհետև՝ «համերաշխ աշխատավարձային քաղաքականությունը» սրում է առանց այդ էլ արդեն խնդրահարույց ծախսային ու մրցակցային վիճակը՝ բոլոր ոլորտներում և բոլոր ձեռնարկությունների մոտ սահմանելով միջին աշխատաքային արտադրողականության զարգացմանը համընթաց աշխատավարձային պահանջներ:

Արդյունավետ ձեռնարկությունների խրախուսում

Դրան սիմետրիկորեն կրկնակի խրախուսվում են բարձր արտադրողականություն ունեցող ձեռնարկությունները: Նախ՝ իրենց բարվոք ծախսային վիճակի և դրանով պայմանավորված՝ նպաստավոր գնագոյացման շնորհիվ նրանք բախվում են բավարար պահանջարկի: Այնուհետև՝ միջին արտադրողականությանը կողմնորոշված սակագնային համաձայնությունները գիտակցաբար չեն սպառում նրանց բարձր արտադրողական բաշխման ասպարեզը: Դրանով այդ ձեռնարկություններն ստանում են լրացուցիչ կապիտալի մուտքեր Նոր բարձր արտադրողականության աշխատատեղեր ստեղծելու համար:

Գործազրկությունը հարձակողականորեն ըմբռնվում է որպես հանրային համապատասխանեցման խնդիր

Սահմանափակիչ հանրային ֆինանսական քաղաքականության և «համերաշխ աշխատավարձային քաղաքականության» այդ համակցումից տուժում են ցածր արտադրողականություն ունեցող ձեռնարկությունները, ինչպես նաև այնտեղ աշխատող գործառուները: Բայց դրա արդյունքում առաջացած գործազրկությունն ըմբռնվել է ոչ թե պաշտպանականորեն որպես հանրային հիմնախնդիր, այլ հարձակողականորեն որպես հանրային համապատասխանեցման խնդիր: Այնուհետև՝ դրան համապատասխան մշակվել է մշտապես Նորացվող ու կատարելագործվող «ընտրողական աշխատաշուկայական քաղաքականություն»: Լայնածավալ ուսուցողական միջոցառումներով և տեղափոխումներին օգնելով՝ փորձ էր արվում գործազուրկ դարձած մարդկանց, ինչպես նաև այն անձանց, ովքեր առաջին անգամ կամ ընդհատումից հետո դարձյալ աշխատանք էին փնտրում, որակավորել արտադրողական, իսկ դա Նշանակում է՝ նաև լավ վարձատրվող մասնագիտությունների համար:

Այսպիսով՝ Ռեհն-Մեյդների մոդելում սահմանափակիչ դրամավարկային քաղաքականությունը, «համերաշխ աշխատավարձային քաղաքականությունը» և «ընտրողական աշխատաշուկայական քաղաքականությունը» գործում են շվեդական տնտեսության մշտական նորացման և կառուցվածքների համապատասխանեցման ուղղությամբ: Այդ մոդելը, 1960-ական թվականներից սկսած, գործել է երբեմն շատ, երբեմն քիչ, որպես շվեդական տնտեսական քաղաքականության ղեկավար գիծ: Ընդհանուր առմամբ, շվեդական տնտեսական մոդելին այն տվել է «այնպիսի հայեցակարգային կոհերենտություն (միասնականություն) և քաղաքական ընդունվածություն, ինչին անգամ թեկուզ մոտավորապես հնարավոր չի եղել հասնել համեմատվող երկրներից և ոչ մեկում» (Շարփֆ, 1987թ., 119)՝ բնորոշում, որ Ֆրից Վ. Շարփֆը 1987 թվականին տվել է Գերմանիայում, Մեծ Բրիտանիայում, Ավստրիայում և Շվեդիայում սոցիալ-դեմոկրատական տնտեսական քաղաքականությունների համեմատության առիթով: Այս կարծիքը կարելի է հաստատել նաև այսօր: Ունենալով ներքին նեղ շուկա՝ տասը միլիոնից պակաս բնակչությամբ Շվեդիային այդ կերպ հաջողվեց, չնայած գլոբալիզացիայի բոլոր վայրիվերումներին, մրցունակ տնտեսությամբ համաշխարհային շուկայում ոչ միայն դիմնալ, այլ նաև ինտենսիվացնել ապրանքափոխանակությունը և վերջերս շարունակ աճող ձևով՝ նաև ծառայությունների փոխանակումը: Այս ընթացքում համախառն ազգային արդյունքի կեսն արտահանվում է:

Ֆինանսավորման համակարգը և սեփականատերերի կառուցվածքը

Ձեռնարկությունների ֆինանսավորումը Շվեդիայում բաղկացած է տարբեր տարրերից: Ֆինանսավորումը հենվում է նախ արտահայտված հոլդինգ-բանկային համակարգի վրա: Լրացուցիչ կան բաժնետոմսերի շուկայի միջոցով ֆինանսավորման տարրեր: Բայց այստեղ հարկ է նկատի ունենալ այն առանձնահատկությունը, որ Շվեդիայում ձեռնարկությունները շատ դեպքերում մեկը մյուսում ունեն բաժնետոմսեր: Այդ պատճառով Շվեդիայում ձեռնարկությունների ֆինանսավորման համար հատկանշական է, ընդհանուր առմամբ, առավել երկարաժամկետ նախագծված հեռանկարը: Շվեդիայի ֆինանսավորման համակարգը նմանվում է այն ֆինանսավորման համակարգին, որը երկար ժամանակ բնութագրական էր Գերմանիային «հռենոսյան կապիտալիզմ» հասկացության ներքո:

Մասնագիտական կրթության համակարգ

Շվեդիայում շուտ նկատվեց, որ գլոբալիզացված համաշխարհային տնտեսությունում մրցունակ տնտեսության ամենակարևոր «հումքը» կրթությունն է:

Մասնագիտական կրթությունը Շվեդիայում կատարվում է գիմնագիական բարձր դասարաններում: Գրեթե բոլոր աշակերտները կամավոր հաճախում են այդ պարապմունքներին: Ակադեմիական ճանապարհներից գատ՝ կան 14 ազգային ծրագրեր, որոնք առաջարկում են սպեցիֆիկ մասնագիտական կրթություններ:

Շվեդական կրթական քաղաքականության հիմնարար սկզբունքներից է եղել և է՝ կրթական փակուղիներից հնարավորինս խուսափելը: Այդ պատճառով էլ սպեցիֆիկ մասնագիտական կրթություններն այնքան շատ են հարստացված ընդհանուր բովանդակություններով, որ մասնագիտական կրթության ավարտի հետ միաժամանակ կապված է ընդհանուր ուսումնական իրավունքը: Օրինակ, 2006 թվականին հասունության ատեստատի համեմատելի քննությունների մակարդակը կազմում էր 94,6 տոկոս:

Բացի այդ՝ հատկանշական են ամբողջ մասնագիտական կյանքի ընթացքում կրկնվող ուսուցման բազմապիսի հնարավորությունները: Զանգի, ինչպես տեսանք, շվեդական տնտեսական և զբաղվածության քաղաքականության նպատակը գոյություն ունեցող որոշակի աշխատատեղի պաշտպանությունը չէ: Այն ավելի շատ ցանկանում է մարդկանց ընդունակ դարձնել՝ զբաղեցնելու միջազգային մրցակցության մեջ համապատասխան արտադրողական և դրանով էլ՝ ամենամրցունակ աշխատատեղերը: Ուստի և կրթական համակարգում ամբողջ բնակչության համար զուգակցվում են համապատասխան ընդհանուր և հատուկ կրթական բովանդակությունները:

Աշխատանքային հարաբերություններ

Երբ երևաց, որ սոցիալ-դեմոկրատներին կարճաժամկետ հեռանկարում կառավարական պաշտոններից այլևս հնարավոր չի լինի դուրս մղել, գործատուները 1938 թվականի, այսպես կոչված, Սայրբադենյան հիմնական համաձայնագրով ձևաչեցին արհմիությունները որպես լիարժեք բանակցային գործընկերներ:

Համաձայնագրով նախատեսվում էր, որ պետությունը հնարավորինս պետք է չմիջամտի աշխատաշուկայի կարգավորումներին: Դա հաջողվում էր հաջորդող ավելի քան 30 տարիների ընթացքում: Աշխատաշուկան բավարարված էր, աշխատավարձերի ձևավորումը կարգավորվում էր կենտրոնացված ձևով՝ սակագնային համաձայնություններով: Գրեթե չկար աշխատաշուկայական օրենսդրություն:

Արհմիություններն ու գործատուները՝ որպես հավասարը հավասարի հետ

Շվեդիա

Մեկ շնչին բաժին ընկնող համախառն ներքին արդյունք, 2008թ.	30 100 Եվրո	Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն՝ գնողունակության ստանդարտում (ԳՈՒՄ), մեկ ԳՈՒՄ-ը համապատասխանում է ԵՄ-27-ի մեկ եվրոյի միջին գնողունակությանը (աղբյուրը՝ Եվրոստատ)
Միջին տնտեսական աճ 1990-2007թթ.	2,3 %	Տարեկան միջին տնտեսական աճ՝ մեկ շնչի հաշվով, կայուն գների պայմաններում (աղբյուրը՝ Մարդկային զարգացման ցուցիչ 2009թ., էջ 277)
Պետական պարտք 2008թ.	38,0 %	Պետական պարտքը ՀՆԱ-ի %-ով (աղբյուրը՝ ԳԴՀ ֆինանսների նախարարության ամսական հաշվետվություն, 12/2009թ., էջ 99)
Ընթացիկ գործառնությունների հաշվեկշիռ 2008թ.	7,8 %	Ակրանքների բոլոր արտահանումների և ներկրումների հավելչուի սալրոն ՀՆԱ-ի %-ով (աղբյուրը՝ ԱՄՅ, World Economic Outlook 10/2009, էջ 187)
Զբաղվածության մակարդակը 2008թ.	74,3 % (71,8 %)	15 - 64 տարեկան անձանց (կանանց) տեսակարար կշիռը ընդհանուր բնակչության թվում (աղբյուրը՝ Եվրոստատ)
Գործազրկության մակարդակը 2008թ.	6,2 %	Գործազրկների տեսակարար կշիռը զբաղված բնակչության թվում (աղբյուրը՝ Եվրոստատ)
Եկամուտների անհավասարությունը՝ չափված Ջինիի գործակցով	25 %	Եկամուտների անհավասար բաշխման ցուցանիշ, 100 % = առավելագույն անհավասարություն (աղբյուրը՝ Մարդկային զարգացման ցուցիչ 2009թ., էջ 195)
Եկամուտների անհավասարությունը տղամարդկանց և կանանց միջև	67 %	Կանանց աշխատանքային եկամուտները՝ տղամարդկանց եկամուտների համեմատությամբ (աղբյուրը՝ Մարդկային զարգացման ցուցիչ 2009թ., էջ 186)
Աղքատության ցուցիչ 2009թ.	6,0 %	Աղքատության ցուցիչը բաղկացած է տարբեր ինդիկատորներից (կյանքի տևողություն, գրագիտության մակարդակ, առողջապահական ապահովման մատչելիություն, ...), 0 = նվազագույն աղքատություն, 100 = առավելագույն աղքատություն (աղբյուրը՝ Մարդկային զարգացման ցուցիչ 2009թ., էջ 180)
Արհմիութենական կազմակերպվածության աստիճան 2007թ.	70,8 %	Արհմիություններում կազմակերպված աշխատող բնակչության տեսակարար կշիռը (աղբյուրը՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն)

Համագործակցության փուլին 1970-ական թվականների սկզբից մինչև 1998 թվականը հաջորդեց առճակատման փուլը: Աշխատավարձերի վերաբերյալ կենտրոնացված բանակցությունների համակարգը հետզհետե տրոհվում էր: Բայց հատկապես Եվրամիության անդամակցությամբ պարտադրված կայունության հարկադրանքները սակագնային կողմերի մոտ հասունացրեց սակագնային համաձայնությունների համակարգը նոր հիմքի վրա դնելու անհրաժեշտության գիտակցումը: Սոցիալ-դեմոկրատական կառավարության առաջարկությամբ ամենակարևոր արդյունաբերական արհմիություններն ու գործատուները 1998 թվականին կնքեցին այսպես կոչված արդյունաբերական սակագնային պայմանագիրը:

Արդյունաբերական սակագնային պայմանագրի հիմնասյուները հետևյալն են. առաջին՝ կարգավորման մեխանիզմ, որը կփորձի նվազագույնի հասցնել անպայմանագիր և դրանով է՝ առճակատումներով հղի ժամանակները: Այդ պատճառով նախատեսվում է հին պայմանագիրն ավարտվելուց առաջ արդեն իսկ սկսել

*խուսափում
առճակատումներից*

բանակցություններ նոր պայմանագրի շուրջ: Երկրորդ՝ պայմանագիրն ապավինում է հրապարակայնորեն նշանակված, անկողմնակալ հաշտարարների, որոնք պետք է բանակցությունները տանեն «Եվրամիության նորմերին համապատասխանող» պայմանագրերի կնքման ուղղությամբ: Վերջապես, երրորդ՝ վերակենդանացվեց աշխատավարձերի հարցում արտահանմանը կողմնորոշված մրցակցային ոլորտի առաջատար գործառույթի պատկերացումը: Արդյունաբերական սակագնային պայմանագրի էական բաղադրատարրեր հետագայում վերցվեցին հանրային ոլորտի համար:

Արհմիությունները Շվեդիայում ունեն խիստ ուժեղ դիրք և կազմակերպվածության բարձր աստիճան՝ ներկայումս ավելի քան 70 տոկոս: Գրեթե բնական է թվում, որ ձեռնարկություններում մասնակցականությունը ևս ապահովվում է արհմիությունների միջոցով: Ինքնուրույն գործարանային խորհուրդներով Գերմանիայում ամկա կրկնակումը Շվեդիայում հայտնի չէ:

Ձեռնարկությունների մակարդակում մասնակցականությունը, նույնպես ի տարբերություն Գերմանիայի, օրենքով հաստատութենացված չէ: Շվեդիայում ավելի շատ գնացել են արհմիություններին մասնակցականության հարցերի բոլոր տեսակների շուրջ բանակցելու իրավունքներ տրամադրելու ճանապարհով: Մասնակցականությանն առնչվող կոնֆլիկտների դեպքում գոյություն ունի նաև (աշխատավարձային) սակագնային պայմանագրի գործողության ընթացքում գործադուլի իրավունք:

Միջձեռնարկութենային հարաբերություններ

Ոչ միայն արհմիությունները, այլ նաև գործատուների միությունները Շվեդիայում ցուցաբերում են կազմակերպվածության բարձր աստիճան: Երկու կողմերում ուժեղ գործընկերների ամկայությունը գործատուների և արհմիությունների միջև վերոնշյալ համաձայնությունների հաջողության համար էական նախադրյալներից մեկն էր: Բացի այդ՝ Շվեդիայի համար հատկանշական է ձեռնարկությունների միջև փոխադարձ սերտ կապիտալային միահյուսվածությունը: Շուկայական հարաբերություններին զուգահեռ՝ հաջողություն ունեն վերջապես նաև տեղեկատվական միջձեռնարկութենային բազմակի ցանցերը՝ ինչպես սեփական կապիտալի տրամադրման, այնպես և միջֆիրմային համագործակցության շրջանակներում տեխնոլոգիաների փոխանցման նպատակով:

Չնահատում

Այս գրքում դիտարկված երկրներից Շվեդիան ամենամոտն է համակարգված շուկայական տնտեսության կատարելատիպին: Շվեդական տնտեսությունն առանձնանում է նրանով, որ գործատուներն ու գործառույցները սակագների ձևավորման հարցերում ակտիվորեն համագործակցում են, աշխատաշուկայի երկու կողմերն էլ ներգրավված են մասնագիտական կրթության հանրային խնդրում, ձեռնարկությունների ֆինանսավորումը կազմված է հոլդինգ-բանկային համակարգի, փոխադարձ բաժնեմասնակցության և սեփական կապիտալի տրամադրման պարագայում տեղեկատվական միջձեռնարկութենային զանցերի խառնուրդից, և տեխնոլոգիաների փոխանցման նպատակով ստեղծված այդ տեղեկատվական ցանցերն օգտագործվում են նաև ֆիրմաների միջև համագործակցություններ ձևավորելու ժամանակ:

Շվեդիան ուշագրավ է, որովհետև այն իր համակարգված տնտեսական համակարգի և արտահայտված բարեկեցիկ պետության շնորհիվ իրար է կապում տնտեսական բաժր աճը, բարօրության արդար բաշխումն ու գործազրկության ցածր մակարդակը: Այսպիսով, ի համեմատություն ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի և Ճապոնիայի, Շվեդիան լավագույնս է համապատասխանում սոցիալ-դեմոկրատիայի պահանջներին:

- լավ աշխատանքի և մասնակցականության մասով, որ այդ երկու դաշտերը միահյուսված են իրար և սոցիալ-դեմոկրատիայի համար առանցքային խնդիրներ են,
- Նվազագույն աշխատավարձերի մասով, որ դրանք անհրաժեշտ են վատ վճարվող աշխատանքային հարաբերությունները կանխելու համար, և որ դա պահանջվում է հենց գեներային առումով:

7.1. Բնապահպանական արդյունաբերական քաղաքականություն.

Աճին ուղղված քաղաքականություն՝ հանուն կայուն ապագայի⁹

Փեթեր Ֆրանց, Ֆլորիան Մայեր և Շտեֆան Թիդոու

Եկոլոգիան դառնում է 21-րդ տարի Եկոնոմիկայի առաջնորդ ուժը: Էներգիայի և հումքային պաշարների պահանջարկն անցած տարիներին վիթխարի աճ է ունեցել և շարունակելու է աճել: Առաջիկա չորս տասնամյակում երկրագնդի վրա ապրող մարդկանց թիվը ներկայիս վեց միլիարդից կհասնի շուրջ ինը միլիարդի: Արդյունաբերական հասարակություններում ապրողների թիվը նույն ժամանակահատվածում կեռապատկվի՝ դառնալով չորս միլիարդ: Դրանով խիստ կաճի արդյունաբերական ճանապարհով արտադրված սպառողական ապրանքների պահանջարկը: Ըստ գնահատումների՝ միայն Բրազիլիայում, Ռուսաստանում, Յնդկաստանում և Չինաստանում հաջորդ երեք տարիներին կկրկնապատկվի գնողունակ ու սպառումահամ միջին շերտը: Բայց մեր մոլորակի հումքային պաշարները նույնքան սահմանափակ են, որքան կառուցապատվելիք և տնտեսավարվելիք տարածքները: Օդն ու ջուրը թանկարժեք ռեսուրսներ են: Նաև Էներգիան անսպառ չէ, համեմայն դեպս, այն Էներգիան, որն ստացվում է ավանդական Էներգակիրներից, և դա դեռ այսօր էլ գերակշռում է:

Կարճ տնտեսական և բնապահպանական մարտահրավերներն ավելի ու ավելի են փոխներթափանցում իրար: Անցել են այն ժամանակները, երբ շրջակա միջավայրն ու տնտեսությունը կարող էին նախագծվել որպես ներհակություններ: Զանգի ինչը բնապահպանական հրամայական է, այն նաև տնտեսապես է ավելի ու ավելի անհրաժեշտ դառնում, և դա՝ ոչ միայն ընդհանուր տնտեսական, այլ նաև միկրոտնտեսական տեսանկյունից: Օրինակ՝ Համաշխարհային բանկի նախկին գլխավոր տնտեսագետ սըր Նիկոլաս Ստերնի գնահատմամբ անկանգ կլիմայական փոփոխությունների տնտեսական ծախսերը կազմում են համաշխարհային ՀՆԱ-ի մինչև 20 տոկոսը:

9 Եկոնոմիկայի և Եկոլոգիայի միջև սերտ կապի մասին լրացուցիչ տեղեկություններ տալիս է 2009 թվականին առաջին անգամ հրատարակված բնապահպանական տնտեսության զեկույցը, որը համատեղ լույս են ընծայել Բնապահպանության դաշնային նախարարությունը և Շրջակա միջավայրի դաշնային ծառայությունը. www.umweltwirtschaftsbericht.de

Տնտեսության և բնապահպանության հարաբերության այդ փոփոխությունը քաղաքականության համար ունի անմիջական հետևանքներ: Փոքր-ինչ ավելի սուր ձևակերպմամբ կարելի է ասել, որ բնապահպանական քաղաքականությունը գնալով ավելի ու ավելի է դառնում նաև տնտեսական քաղաքականություն: Բնապահպանական արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը հաշվի է առնում այդ զարգացումը և եզրակացնում, որ Եներգետիկայի և ռեսուրսների հարցը դարձել է առանցքային տնտեսական, բնապահպանական ու սոցիալական հարց՝ ազգային, բայց նաև համաշխարհային մասշտաբով:

➤ **Կայուն աճի քաղաքականությունը դառնում է նորարարության, աճի և զբաղվածության օրակարգ**

Բնապահպանական արդյունաբերական քաղաքականությունը կապում է կայունության ամրապնդմանն ուղղված տնտեսական-բնապահպանական արդիականացման ռազմավարությունը բնապահպանական-տնտեսական մասնագիտացման ռազմավարության հետ: Այն չի տալիս գաղափարախոսական պատասխան մեր ժամանակի մարտահրավերներին, այլ նախագծում է ծրագրային ու նպատակամետ ճանապարհ:

Ըստ էության, խոսքը երկու բանի մասին է: Առաջին՝ խոսքն այն մասին է, որ մենք մեր տնտեսությունը վերակառուցենք կայունության իմաստով: Դա արտադրական կառուցվածքների (այսպիսով՝ խոսքն Եներգիայի մասին է) և ռեսուրսների արդյունավետության հարց է: Դրա մեջ է մտնում ոչ միայն արդյունավետ վերաբերմունքը, այլ նաև վերակողմորոշումը դեպի վերականգնվող հումք: Այսօր, նավթի փոխարեն, կենսազանգվածից կարելի է արտադրել ոչ միայն վառելիքային, այլ նաև պլաստմասսա և ժամանակակից նյութեր: Եվ, իհարկե, խոսքն Եներգաքաղաքական առումով, այսպես կոչված, վերականգնվող Եներգետիկայի աղբյուրները, այսինքն՝ արևը, քամին, ջուրը, երկրաջերմային Եներգիան և կենսազանգվածը ավելի լավ օգտագործելու և դրանց ներուժը լիարժեքորեն սպառելու մասին է: Այս քաղաքականությունը երկարաժամկետ հեռանկարում այլընտրանք չունի: Միայն այդ կերպ կարելի է հաջողությամբ դուրս գալ սահմանափակ հումքապաշարների և աճող պահանջարկի միջև առկա կառուցվածքային դիլեմայից և աճն անջատել ռեսուրսների սպառումից: Բայց բնապահպանական արդյունաբերական քաղաքականությունը ձգտում է ոչ միայն այդ վերակառուցմանը, այլ նաև, երկրորդ, տնտեսության համար դրա հետ կապված շահները առավելագույնս օգտագործելուն: Քանի որ հենց նրա համար, որ աշխարհում Եներգիան թանկանում է, իսկ հումքապաշարները նվաղում են, կանաչ տեխնոլոգիաներն իրենց մեջ ունեն հսկայական ներուժ, դրանք բնականոնորեն դառնում են ապագայի առաջատար

շուկա: Արդյունավետության բարձրացմանն ուղղված և բնապահպանական տեխնոլոգիաները դառնում են առանցքային տեխնոլոգիաներ:

Ձեռնարկություններին խորհրդատվական ծառայություններ տրամադրող մասնագետների գնահատմամբ բնապահպանական տեխնոլոգիայի շուկաներն արդեն այսօր ունեն շուրջ 1 000 միլիարդ եվրոյի չափի համաշխարհային շուկայի ծավալ: Ըստ կանխատեսումների՝ մինչև 2020 թվականն այդ թիվն ավելի քան կկրկնապատկվի և կանցնի 2 000 միլիարդը: Արդեն այսօր Գերմանիան բնապահպանական ապրանքների արտահանման գծով և տեխնոլոգիական շատ ոլորտներում համաշխարհային շուկայի առաջատարն է: Դրանք շատ լավ ելակետային նախադրյալներ են կանաչ շուկաներից նաև ապագայում օգուտ քաղելու համար, եթե հաջողվի պահպանել տեխնոլոգիական առաջատարի դիրքը: Բայց դա, փորձն է ցույց տալիս, մեծ մասամբ կախված է այնպիսի հավակնոտ բնապահպանական քաղաքականությունից, որը դառնում է արդիականացման շարժիչ արտադրական գործընթացների և արտադրանքի նկատմամբ բարձր պահանջներ ներկայացնելով:

Բնապահպանական արդյունաբերական քաղաքականությունը, այսպիսով, կամենում է ավելի սերտորեն միակցել այդ երկու չափումները: Դրա համար անհրաժեշտ է այնպիսի պետություն, որը կծնակերպի խստապահանջ նպատակներ և որը կսահմանի ճիշտ շրջանակային պայմաններ, պետություն, որը՝ որպես չահակիր, ցույց կտա ուղիներ, բայց, որտեղ անհրաժեշտ է, նաև առջևից կգնա: Շուկան թեև հետզհետե նաև արձագանքում է փոփոխված իրողություններին, սակայն դեռևս և բազմապատիկս դանդաղ: Համենայնդեպս, այն մինչև հիմա միայն անբավարար չափով է կանխարկել ինչպես մարտահրավերները, այնպես էլ դրանց շահները: Եվ եթե կլիմայի փոփոխության վերաբերյալ գիտական իմացությունները լուրջ ընդունենք, ապա մեր տրամադրության տակ կա ընդամենը մի քանի տարի ճակատագրական ռելսերը փոխելու համար: Ամեն դեպքում, չափից ավելի քիչ ժամանակ՝ դրանք տնտեսակարգային քաղաքական և անհետևանք սկզբունքային բնավեճերի վրա վատնելու համար: Խոսքը զանազան քաղաքական գործիքների ու մոտեցումների պրագմատիկ խառնուրդի և բնապահպանական ու նորարարական քաղաքականությունը շուկայի և պետության անհաջողության բևեռայնության մեջ խելամիտ ձևով իրար շարկապելու մասին է: Այդ նպատակի համար պետությունը պետք է գործադրի և իրար զուգակցի բազմապիսի քաղաքական ու տնտեսական գործիքներն այնպես, որ խթանվեն նորարարությունները, կիրառությունն գտնեն Էկոլոգիապես արդյունավետ տեխնոլոգիաները, ազդակներ տրվեն տնտեսության ու հասարակության Էներգապես և ռեսուրսապես արդյունավետ վերակառուցման համար, և միաժամանակ խթանվեն աճն ու զբաղվածությունը:

» Բնապահպանական արդյունաբերական քաղաքականության սկզբունքները

Բնապահպանական արդյունաբերական քաղաքականության մոտեցումը հատկանշվում է նրանով, որ այն իրար է միացնում տարբեր ասպեկտներ:

1. Առաջարկային և պահանջարկային գործիքները պետք է հմտորեն համակցվեն: Չաճախ առաջարկամետ ու պահանջարկամետ քաղաքականությունները ներկայացվում են իբրև անհաշտելի հակադրություններ: Իսկ նորարարության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միայն նպաստավոր առաջարկային-քաղաքական ընդհանուր պայմանների և ակտիվացնող պահանջակի զուգակցումն է նորարարական տեխնոլոգիաների հաստատմանն օժանդակելու և դրանք շուկա հանելու լավագույն նախադրյալը: Բայց դա հնարավոր է միայն այն դեպքում, եթե քաղաքականությունն ուշադրության տակ է պահում առաջարկի և պահանջարկի կողմը միասին:

2. Հաշվարկելի շրջանակային պայմանները նույնքան կարևոր են, որքան հավակնոտ նպատակների առաջադրումները: Ձեռնարկությունները պետք է իմանան, թե իրենք որտեղ են: Այդ պատճառով քաղաքականությունը չպետք է գործի կամայականորեն: Բայց պլանավորման ապահովությունը միաժամանակ չպետք է հանգեցնի այն բանին, որ ձեռնարկությունները բավարարվեն անցյալի իրենց հաջողություններով կամ չընդունեն «ապագայի մարտահրավերը»: Մրցակցությունը չի քնում: Հենց Ասիայում վերելք ապրող տնտեսությունները ձգտում են շուկա: Հավակնոտ նպատակների առաջադրումները, որոնք հայտարարվում են երկարաժամկետ հեռանկարով և կանխատեսելի են, պլանային աշխատանքը և դիմամիկան հավասարակշռող քաղաքականության կարևոր բաղադրիչ են: Մեկ ուրիշ օրինակ է գերգնայուն ապրանքի (Top-Runner) մոտեցումը, որն ամեն անգամ կողմնորոշվում է տեխնիկայի լավագույն մակարդակին: Այդ կերպ ձեռնարկություններից պահանջվում է միայն այն, ինչ կարելի է անել և իրագործել, բայց դա արվում է ամեն անգամ նորովի:

3. Գները պետք է ճշմարտությունն ասեն՝ չվնասելով մրցակցությանը: Գները սղության կարևոր չափիչներ են, որոնք բնապահպանական ճշմարտությունն այլևս երկար չեն կարող մթազնել: Արտաքին ծախսերի ներառումն ու գործող շուկաները բնապահպանական արդյունաբերական քաղաքականության կարևոր առանցքային կետեր են: «Իրական ծախսերը» գնի մեջ ներառելը նախկինի պես գործնականում դյուրին չէ, օրինակ, միջազգային մրցակցային պայմաններում հաշվի չառնելու կամ միայն ապագայում առաջացող ծախսերի հաշվարկման դժվարության պատճառով:

4. Գետագոտությունների ոլորտը տեխնոլոգիաների հանդեպ բացությամբ և միաժամանակ նպատակաուղղված ձևով պետք է խթանի առաջընթացը և փարոսներ դնի: Ոչ ոք այսօր չգիտի, թե վաղը որ տեխնոլոգիական լուծումները կունենան առավելություն: Ուստի և քաղաքականությունը պետք է բաց լինի տեխնոլոգիաների հանդեպ և իրավունք չունի դիմելու ծայրահեղ դիսկի: Այդ պատճառով տեխնոլոգիայի սաստկացման («technology forcing») քաղաքականությունն ապավինում է հավակնոտ նպատակների, բայց նպատակներին հասնելու համար չի նախանշում տեխնոլոգիական լուծման ռազմավարություններ: Մյուս կողմից, կան կոնկրետ տեխնոլոգիական գծեր, որոնք շուկան միայնակ չի կարող մշակել, որոնք, սակայն, խոստանում են հիմնախնդիրների լուծման մեծ ներուժ: Նաև դա պետք է հաշվի առնի պետական գիտահետազոտական և տեխնոլոգիական քաղաքականությունը՝ միաժամանակ ապավինելով փորձնական պիլոտային ծրագրերին և խորհրդանշական փայլ ունեցող փարոսային նախագծերին:

5. Հորիզոնական հայեցակարգերն ու ոլորտային քաղաքականությունները պետք է լրացնեն իրար: Շրջանակային պայմանները պետք է այնպես դրվեն, որ ամբողջ տնտեսությունը բերեն բնապահպանական նորարարության ընթացակերպի: Դա ոչ միայն բնապահպանական-քաղաքական կարգավորման հարց է, այլ նաև մրցակցային, հարկային և տնտեսաքաղաքական ձևավորման: Բացի այդ՝ դրա համար անհրաժեշտ են ինչպես արդյունավետ, ժամանակակից և էկոլոգիապես անվտանգ ենթակառուցվածք, այնպես էլ որակյալ գործառույթներ: Այս հորիզոնական չափումը կարևոր է: Բայց պարբերաբար լինելու են ոլորտներ, որտեղ կառուցվածքային փոփոխությունը պետք է նաև ոլորտային մասշտաբով արագացվի: Այստեղ խոսքն առանցքային տեխնոլոգիաներն ու արդյունաբերությունները ճիշտ նպատակի ուղղությամբ խթանելու մասին է, որովհետև կարծրացած և ուժային կենտրոնացմամբ շուկայական կառուցվածքներն այլ կերպ փշրել հնարավոր չէ, տեխնոլոգիական զարգացման թռիչքները սոսկ շրջանակային պայմանների կառավարմամբ չեն կարող ապահովվել, կամ միջազգային մրցակցությունում դեր ունեն նաև երկարաժամկետ ռազմավարական շահերը:

Արդյունաբերական հասարակության ռեսուրսամետ վերափոխման համար հարկավոր են ոչ միայն նորարարական ձեռնարկություններն ու ջահակիր պետություն: Դրա համար հարկավոր են նաև գործառույթներ, ովքեր լավ աշխատանք են կատարում և լավ աշխատանք ունեն, ինչպես նաև ակտիվ սպառողներ, ովքեր իրենց պահանջարկի միջոցով արդիականացման կարևոր ազդակներ են հաղորդում «ներքևից»: Վերջապես, խոսքը, ոչ այս, ոչ այն, բոլոր դերակատարների «նոր գործարքի» մասին է՝ փոփոխվող աշխարհի մարտահրավերները հաղթահարելու և բնապահպանական-տնտեսական արդիականացման ռազմավարության անցնելու համար:

Քաղաքականության ու տնտեսության համար ասպարեզն զգալիորեն փոխվել է: Շրջանակային պայմանները ցույց են տալիս, որ Էկոնոմիկան և Էկոլոգիան ավելի քան երբևէ իրար հետ կապված են, և ապագա ունեցող Գերմանիա հանգրվանին անհրաժեշտ է Էկոլոգիապես անվտանգ ու սոցիալապես կրելի արդյունաբերական արտադրություն՝ կայուն արտադրանքով և ծառայություններով, բարձր որակով և մասնագիտական ուսուցմամբ: Բնապահպանական արդյունաբերական քաղաքականությունը դրա համար ուղի կհարթի:

7.2. Բյուջետային քաղաքականություն. Թե ինչ ենք մենք Գերմանիային պարտք

Միխաել Դաուդերշտեդթ¹⁰

Պետական պարտքը կազմում է ավելի քան 1,5 տրիլիոն եվրո: Դրա սպասարկումը կլանում է հարկերի մի զգալի մասը կամ պահանջում է լրացուցիչ պարտքեր: Համարվում է, թե այն բեռ է դառնում գալիք սերունդներին, որոնք պետք է մարեն այդ պարտքերը: Ուստի և հանրային քննարկման առարկա են մի շարք հայեցակարգեր, որոնք կոչված են կանխելու պետական պարտքի հետագա աճը (առանցքային բառ՝ «Պարտքերի արգելակ»): Այս հայեցակարգերն աղերսվում են Կայունության և աճի եվրոպական դաշնագրի հետ, որը նույնպես ելում է այն բանից, որ երկարաժամկետ հեռանկարում, այսինքն՝ կոնյունկտուրային շրջափուլից այն կողմ հազիվ թե կարելի լինի նոր պարտքեր անել: Խելացի ֆինանսական քաղաքականությունը վերականգնման ու ներդրման իմաստով պետք է պարտքի մարմանը զուգընթաց նաև պահպանի ակտիվ կոնյունկտուրային քաղաքականության հնարավորությունը և ոչ թե այն դժվարացնի:

Քաղաքական ու տնտեսական առումով պետք է տարբերակել պետական պարտքի երկու չափում՝ կոնյունկտուրայով պայմանավորված սղաճը և աճ խթանող ներդրումների ֆինանսավորմանն ուղղված երկարաժամկետ պարտքը: Տնտեսագետների մեծամասնության համար այդ երկու չափումներն իրենց էությանը, նույնիսկ եթե ոչ իրենց ծավալի մասով, անվիճելի են:

➤ Աճ՝ պարտքերի միջոցով

Կոնյունկտուրայի անկման ժամանակ պետական եկամուտները նվազում են, միևնույն ժամանակ ծախսերը, հատկապես գործազուրկների ապահովագրման համար,

10 Այս տեքստը 2007թ. օգոստոսին WISO-direkt հանդեսում /տնտեսության և սոցիալական հարցերին նվիրված հանդես/ հրապարարակված «Թե ինչ ենք մենք Գերմանիային պարտք» հոդվածի կրճատված և 2008 թվականի ֆինանսական շուկաների ճգնաժամի լույսի ներքո վերամշակված տարբերակն է:

աճում են: Դրա հետևանքով, որպես կանոն, առաջացող ճեղքվածքը կայունացնում է այլ պարագայում փրկվող պահանջարկը: Ժամանակակից կոնսոլիդացիոն հայեցակարգերը, այդ թվում՝ նաև Կայունացման և աճի եվրոպական դաշնագիրը, այդ ավտոմատ կայունարարները համարում են իմաստալից: Գերմանիայում 1967 թվականին ընդունված կայունացման և աճի մասին օրենքը նախատեսում է երեք հակափուլային (antizyklisch) բյուջետային քաղաքականություն, բայց փաստացի տարվել է առփուլային (prozyklisch) քաղաքականություն:¹¹ Անկման ժամանակ ֆինանսական քաղաքականությունն աճող սղաճին հաճախ արձագանքել է ինսայելու խուճապային փորձերով, որոնք խորացրել ու երակարացրել են հետաճը: Ընդհակառակը, վերելքի ժամանակ կոնսոլիդացում չի եղել, որի պատճառով աճել է ընդհանուր պարտքը:

Ակտիվ կոնյունկտուրային քաղաքականությունը պետական պարտքերը պետք է այնպես սահմանի, որ դրանք ունենան հակացիկլային ազդեցություն: Իդեալական դեպքում հետաճի ժամանակ ծախսերը պիտի մեծացվեն, անգամ եթե աճում են սղաճն ու պարտքերը, որպեսզի փոխհատուցվի մասնավոր հատվածում առկա թույլ պահանջարկը: Ընդ որում, կոնյունկտուրայի առումով միևնույն է, թե խոսքն արդյոք պետական ներդրումների¹², թե՞ սպառման մասին է, նույնիսկ եթե ներդրումների պարագայում աճի էֆեկտն ավելի տևական է: Բումի ժամանակ այդ ծախսերը պետք է նվազեցվեն, որպեսզի հնարավոր լինի կանխել անցանկալի գերտաքացումը և կոնսոլիդացնել բյուջեն:

Գերմանիայում Զիմնական օրենքը (հոդված 115) սահմանում է կոնյունկտուրային քաղաքականության շրջանակները: Պետության կողմից վարկեր վերցնելը պետք է ծառայի միմիայն ներդրումների ֆինանսավորմանը: Դրանով արտահայտվում է այն դատողությունը, որ այն ծախսերի ֆինանսավորման բեռը, որոնց օգուտը բաշխվում է առավել երկար տարիների վրա, չպետք է բարդվի մեկ առանձին բյուջետային տարվա վրա: Ավելի լայն ընդգրկումով՝ ինչ ապագա սերունդներին է օգտակար լինելու, այն չպետք է ֆինանսավորվի բացառապես ի հաշիվ ներկայիս բնակչության: Դրանով պետական բյուջեի վրա է տեղափոխվում մասնավոր տնտեսության կամ ձեռնարկության տրամաբանությունը, որոնք պարտքեր են անում ապագայում հասույթներ բերող կամ ծախսերը ինսայող ներդրումները ֆինանսավորելու նպատակով (օրինակ՝ տան կառուցում կամ ձեռքբերում, որն ապագայում կբերի վարձակալության եկամուտներ կամ կինսայի վարձակալության ծախսերը):

Պետության պարագայում այդ տրամաբանությունն ավելի բարդ է: Ի՞նչն է մեծացնում նրա հետագա եկամուտները կամ իջեցնում նրա ծախսերը: Ի վերջո, աճը մեծացնող բոլոր միջոցառումները նպաստում են եկամուտների աճին: Դրա մեջ մտնում է ակն-

11 Ըստ Սոլովի և Վիփլոշի ոչնչացուցիչ կարծիքի (2007թ.)

հայտորեն շատ ավելի բան, քան «գույքային ներդրում» հասկացությունն է ենթադրում: Ապագա ծախսերից խուսափելու նպատակով հատկացումները պետք է դասվեն ներդրումների շարքը (օրինակ՝ կանխարգելիչ պատվաստումների ծրագրերը):

Բայց ինչո՞ւ պարտքերը կարող են իմաստավից լինել: Ամեն աճի գործընթաց ֆինանսավորվում է վարկերով, դրանով էլ՝ պարտքերով, եթե ոչ պետության, ապա մասնավոր հատվածի կողմից: Քանզի ընթացիկ եկամուտներն ընդամենը բավարարում են ընթացիկ արտադրությունը պահելու համար: Լրացուցիչ արտադրության համար հարկավոր է վարկառություն՝ անհրաժեշտ լրացուցիչ ներդրումները ֆինանսավորելու նպատակով, որոնք իրենց հասույթով իդեալական դեպքում (այսինքն՝ եկամուտ ստացողների կողմից չկուտակելու կամ չինսայելու պարագայում) այնուհետև հնարավորում են լրացուցիչ արտադրանքի իրացումը: Եթե բյուջեներն ու ձեռնարկությունները (ասեմք՝ հետաճով պայմանավորված հոռետեսության պատճառով) պարտքեր չեն անում, ապա աճի գործընթացի շահից ելնելով՝ կարող է առաջանալ այն բանի անհրաժեշտությունը, որ դա պետությունն ասի: Ընդհակառակը, բում ապրող լավատեսության փուլում (ինչպես, օրինակ, 2007 թվականին ԱՄՆ-ում) վարկատվությունը կարող է անցնել ռեալ տնտեսական աճի հնարավորություններից:

Դրամային քաղաքականությունն այս համակարգում ունի վարկառությունը սահմանափակելու և իրատեսական չափի հասցնելու գործառնությ: Չափից ավելի մեծ պարտքերը (անկախ այն բանից, թե ով կանի՝ պետությունը, ձեռնարկությունները թե բյուջեները) հանգեցնում են ակտիվների արժեքի ուռճացման կամ ինֆլյացիոն պահանջարկի, որն առաջացնում է ոչ թե ռեալ քանաքական աճ, այլ գերազանցապես գնաճ՝ լճացած առաջարկի պայմաններում:

» **Ինչքան պարտքն է չափից շատ**

Բայց ի՞նչ չափով կարող է կուտակվել պարտքի բեռը: Աճի շատ փուլեր, ոչ վերջին հաշվով նաև համաշխարհային տնտեսության ամենավերջին աճի փուլը, ավարտվել են պարտքային ճգնաժամերով, բայց մեծ մասամբ ոչ թե պետության, այլ գերհագեցած ֆինանսական շուկաների: Ոչ միշտ է պարզ եղել, թե ակտիվների մեծ մասամբ միաժամանակ աճած գները (անշարժ գույքի, բաժնետոմսերի և այլն) բխել են իրատեսական հասույթների ակնկալիքի՞ց, թե՞ սպեկուլյացիոն մոլուցքից: Ի վերջո, ռեալ տնտեսությունն է իր արտադրողականության առաջընթացով և ազատ, չզբաղեցված արտադրական գործոններով որոշում, թե համակարգը դեռ ինչքան շարժի տեղ ունի: Դրա համար կարևոր ցուցորդներ (Indikatoren) են սղաճը և արտահաշվեկշիռը: Յետին թվով (1997թ. ասիական ճգնաժամից հետո, 2000թ. «dot.com» փուլիկից կամ նաև 2008թ. աշնանը ֆինանսական շուկաների ճգնաժամից հետո) բոլորը խելացի

են. բայց ո՞վ էր ուզում խեղդել աշխատատեղեր ու եկամուտներ ստեղծող գեղեցիկ բունը, ինչ է թե գները մի փոքր աճում են, և վճարային հաշվեկշիռը կարմրում է:

Անկախ կոնյունկտուրային քաղաքականության նկատառումներով թե հանրային ներդրումները ֆինանսավորելու նպատակով արված համապատասխան մաքուր վարկառության ծավալից՝ շատերին անհանգստացնում է կուտակված պարտքերի բացարձակ չափը: Այն սահմանափակում է պետության գործունակությունը, քանի որ նա իր եկամուտների մի զգալի մաս պետք է ծախսի պարտքի սպասարկման վրա, որն աճող տոկոսների դեպքում ցավ պատճառելու չափ կարող է ուռչել: Պետական պարտքը, ի լրումն, հանդիսանում է վերաբաշխում հոգուտ այն ակտիվատերերի, ովքեր պետությանը պարտքով փող են տվել և որոնց տոկոսային եկամուտները վճարվում են գերազանցապես աշխատավարձից կախում ունեցողների վճարած հարկերից: Վերջապես (դա ամենաշատը բերվող փաստարկն է), այն կարծես թե որպես բեռ նստում է մեր երեխաների՝ ապագա սերունդների ուսերին:

➤ **Աղքատ ապագա՝ հարուստ ներկայի դիմաց**

Պարտքն իսկապե՞ն վնաս է հասցնում ապագա սերունդներին: Չնայած սիրով թափված ջանքերին՝ այս թեզն իր ընդհանրականության մեջ ճիշտ չէ: Հաջորդ սերունդը ժառանգելու է ինչպես պարտքը, այնպես էլ պահանջները: Պետական պարտքը շոշափում է ոչ թե սերունդների միջև բեռի ընդհանուր գումարը, այլ հաջորդ սերունդի ներսում բաշխումը: Բոլոր հարկատուներին հանդիման, որոնց բաժին է ընկնում պարտքերի վերադարձը, համապատասխանաբար կանգնած են նաև պարտատերերը, այսինքն՝ այն քաղաքացիները, ովքեր պետությանը պարտքով փող են տվել:

Բեռի ծավալը, որ երկարաժամկետ հեռանկարում պարտքի որոշակի մակարդակի պատճառով պետք է կրեն պետությունն ու հարկատու հասարակությունը, կախված է հիմնականում տոկոսադրույքի և անվանական աճի հարաբերակցությունից: Եթե տնտեսությունն ավելի արագ է աճում, քան տոկոսադրույքը, ապա պետական պարտքի հարաբերական բեռը (որպես ՀՆԱ-ի բաժին) նվազում է: Նման բեռնաթափիչ պայմաններ տիրել են 1950 թվականից մինչև 1975 թվականը տևած աճի երկար փուլում, բայց դրանից հետո ավելի հազվադեպ են դարձել: Բայց այս հանգամանքը նաև ցույց է տալիս, որ բարձր տոկոսների քաղաքականությունից առաջին հերթին շահում են ակտիվատերերը: Բարձր տոկոսները մեծացնում կամ առնվազն կայունացնում են նրանց պարտքային պահանջների հարաբերական արժեքը:

Եթե այսօրվա սերունդը կամենում է ինչ-որ բան անել հաջորդների բարեկեցության համար, ապա նա չպետք է կուտակի ֆինանսական գույքի այնպիսի արժեթղթեր,

որոնց ռեալ հասույթները արժեթղթերի ժառանգների համար պետք է ստեղծի հաջորդ սերունդը: Նա պետք է ավելի շատ իրականացնի այնպիսի միջոցառումներ, որոնք կբարձրացնեն հաջորդ սերնդի արտադրողականությունը: Դրա մեջ են մտնում ենթակառուցվածքների և կրթության, հետազոտությունների և մշակութային մեջ ներդրումները: Եթե սպառումից հրաժարումս ընդհանրապես օգտակար է, ապա՝ ռեսուրսների խնայման ձևով, քանի որ աճող ռեսուրսային ծախսերը (օրինակ՝ հեղեղումներից պաշտպանությունը ներառյալ) նվազեցնում են արտադրողականությունը: Եթե (հենց անհավասար բաշխման ֆոնին) խնայողություն են անում առավել հարուստ տնտեսությունները, չիրականացնելով ռեալ ներդրումներ, ապա դա կարող է հանգեցնել ակտիվների վտանգավոր, անկասելի ուռճացման:

Որպես երկիր մենք, պահանջներ (կարողություն) կուտակելով, սեփական տնտեսության շրջանակներում նույնքան չենք կարող բարեկեցություն փոխանցել դեպի ապագա, որքան չենք կարող պարտքեր կուտակելով դեպի ապագա մղել աղքատություն: Դա կհաջողվի միայն այն դեպքում, եթե պարտքեր անենք արտասահմանում կամ արտասահմանի նկատմամբ դեբիտորական պարտքեր կուտակենք: Արտասահմանյան պարտքերը, հնարավոր է, ապագայում մեզ դատապարտեն ավելի շատ արտահանման, քան ներկրման՝ պարտատերերին սպասարկելու համար: Արտասահմանի նկատմամբ դեբիտորական պարտքերը, ինչպիսիք Գերմանիան վերջին տարիներին կուտակել է, ֆինանսական շուկայի ճգնաժամի դեպքում կարող են հօդս ցնդել կամ խիստ արժեզրկվել, որի ցավոտ փորձը շատ ներդրողներ 2008 թվականին ունեցան: Բայց բանն այն է, որ արտաքին առևտրի ակտիվ սալոն Գերմանիայում ավելի քիչ է ընկալվում իբրև բեռ, քան (նաև տնտեսական քաղաքականության) նպատակ:

➤ **Չանրային խնայողականություն, բայց մասնավոր մոլու՛ցք**

Այդ ամենով հանդերձ, վերջին հաշվով ոչ մի նշանակություն չունի, արդյոք խոսքը պետությա՞ն պարտքերի մասին է, թե՞ ձեռնարկությունների և տնտեսությունների: Բանն այն է, որ Գերմանիայում պետական պարտքն է համարվում բեռ (մեղք), իսկ մասնավոր պարտքերի կուտակումը, ընդհակառակը, առաքինություն է: Ընդ որում, հաջորդ սերունդը ժառանգում է ոչ միայն 1,5 տրիլիոն եվրո սակավ ռիսկային պետական պարտք, այլ նաև 2,5 տրիլիոն եվրոյի չափով ձեռնարկությունների հնարավոր անսպասելի պարտքերը:

Այն փաստը, որ մասնավոր պարտքերը երկար ժամանակ համարվում էին պակաս խնդրահարույց, ոչ վերջին հաշվով նպաստել է նախկինում այնպիսի հանրային հատվածների մասնավորեցման, ինչպիսիք են փոստը, հեռահաղորդակցությունը, երկաթուղին և ավտոմայրուղիները: Այժմ դրանց վարկերն այլևս ոչ թե սպառնա-

լից պետական պարտքեր են, այլ ուրախալի մասնավոր ներդրումներ: Այդտեղ ևս համարվում է, որ վերաբաշխումը կկատարվի հաջորդ սերնդի շրջանակներում: Բայց այս անգամ հարկատուները չեն, որ պետք է հավաքեն պետական պարտքի տոկոսները, այլ հաճախորդները և, ինչպես հաճախ ստիպված լինում է, զբաղվածները, որոնք գների (օրինակ՝ վարձակալության վճարների) շնորհիվ և աշխատավարձերի զսպման միջոցով պետք է բարձրացնեն շահութաբերությունը: Բայց նաև մասնավոր հատվածի համար գործում է այն, որ իրական բարեկեցությունը միայն ռեալ արտադրողականության աճով է պայմանավորված:

Այսպիսով՝ մենք Գերմանիային պարտք ենք երկարաժամկետ հեռանկարում կայուն աճի համար անհրաժեշտ պարտքեր անելու արիությունը: Դրան են ծառայում հիմնական գույքային միջոցների, առողջապահության, կրթության, հետազոտությունների և մարդկային կապիտալի մեջ ներդրումները: Արտահանման ակտիվ սալդոյի միջոցով արտասահմանի նկատմամբ կամ կապիտալով ապահովված «կանխահոգության» միջոցով Գերմանիայի գալիք սերունդների նկատմամբ կրեդիտորական պարտքերի այդքան գովերգված կուտակումը, ընդհակառակը, միայն այն արժեքն ունի, ինչ ապագա սերունդները կարող են երկրից ներս և երկրից դուրս ստանալ՝ շնորհիվ այսօրվա ներդրումների: Զօգուտ ներդրողների կատարվող ոչ սոցիալական վերաբաշխումը չհաշված՝ դրանց հասույթները, սակայն, չեն կարող ավելի բարձր լինել, քան ժողովրդական տնտեսության աճի բուն տեմպերը:

7.3. Մասնավորեցման ռիսկերն ու հնարավորությունները

Սիմոն Ֆաուլթ

Հանրային սեփականության մասնավորեցումը մեր ժամանակի տնտեսաբանական բախումնային թեմա է, որի պարագայում խնդրո առարկան պետության ու մասնավոր տնտեսության միջև հարաբերության կենտրոնական հարցն է: Գերմանական երկաթուղու մասնավորեցման շուրջ ծագած թեժ բանավեճը ցույց է տալիս, որ այդ թեմայի պարագայում խոսքն ավելի մասին է, քան առանձին քաղաքական որոշումների, այն է՝ փոխանակված փաստարկները պտտվում են համընդհանուր բարօրության, կենսաապահովման և պետության գործառույթների վերաբերյալ սկզբունքային պատկերացումների շուրջ: Այն փաստը, որ երկաթուղու մասնավորեցմանը կողմ և դեմ կարծիքներն անցնում են ՍԴԿ-ի շարքերով, պարզորոշ է դարձնում, որ մասնավոր տնտեսության ու պետության միջև հարաբերության հարցին սոցիալ-դեմոկրատիայի համար պարզունակ պատասխաններ չկան, այլ այն կարիք ունի համալիր դիտարկման:

Ամբողջ աշխարհում մասնավորեցումների տարբերակված ներկայացում տրված է Հռոմյան ակումբի¹² կողմից գիտնական և քաղաքական գործիչ Էռնսթ Ռևլիի ֆոն Վայցգեբերի ղեկավարությամբ անցկացված ուսումնասիրության շրջանակներում կազմված «Մասնավորեցման սահմանները» գրքում: Ստորև տրվող շարադրանքը հիմնականում հիմնվում է այդ զեկույցի վրա:

Հռոմյան ակումբն իր զեկույցի մեջ փաստարկում է անքննադատ մասնավորեցման գաղափարախոսության ծայրահեղության դեմ՝ մի կողմից, և պետության նկատմամբ անքննադատ վստահության դեմ, որն ուզում է հնարավորինս շատ սեփականություն տեսնել պետության ձեռքում՝ մյուս կողմից: Բայց միանգամայն կանխադրելի է տարբերակված միջին մի ճանապարհ, որն ապավիներ, կախված որևէ ոլորտի պայմաններից, մասնավոր դերակատարներին, հանրային և մասնավոր հատվածների միջև գործընկերություններին կամ պետական հանձնառությանը: Հնարավոր են մասնավորեցման և դերակատարների համադրության տարբեր ձևեր:

- Պետական ձեռնարկությունները մրցակցության մեջ են մտնում մասնավոր մրցակիցների հետ, բայց մնում են հանրային սեփականություն, օրինակ, Գերմանական երկաթուղին, որը, հանդիսանալով 1994 թվականից մինչև իր մասնակի մասնավորեցումը բաժնետիրական ընկերություն Դաշնության ձեռքում, հարաճուն մրցակցության մեջ է այլ առաջարկողների հետ:
- Գործառույթների պատվիրակում: Դա նշանակում է, որ պետությունը գործառույթներ է փոխանցում մասնավոր առաջարկողներին և գնում իր համար այդպիսիք: Դաշնային տպարանը դրա օրինակ էր: Այն, իհարկե, մի քանի տարի անց անվտանգության քաղաքական պատճառներով դարձյալ հետ գնվեց մասնավոր ձեռքից:
- Գործընկերություններ հանրային և մասնավոր հատվածների միջև (PPP): Համագործակցային լուծումներ, որոնց դեպքում պետական ու մասնավոր դերակատարները համագործակցում են:
- Լիարժեք մասնավորեցում: Հանրային սեփականության ամբողջական օտարում այնպես, որ պետությունն ընդամենը կարգավորումներով կարողանա ազդել շուկայական անցուդարձի վրա:

Պետական կարգի և տնտեսական ազատության, անվտանգության և նորարարության միջև հարաբերությունն ամեն անգամ պետք է վերահավասարակշռել: Շրջանակային պայմանները ժամանակի ընթացքում կարող են փոխվել: Հեռահաղորակչության ոլորտի մասնավորեցումն ու ազատականացումը շարունակում է դիտվել որպես մասնավորեցումների դրական օրինակ: Գները մրցակցության

12 Հռոմյան ակումբը գիտնականների միջազգային կազմակերպություն է, որն զբաղվում է հասարակական ու տնտեսական հարցերով: Հռոմյան ակումբը հայտնի դարձավ 1972թ. հրատարակված «Աճի սահմանները» ուսումնասիրությամբ, որով ակումբը բնակչության աճը, շրջակա միջավայրի աղտոտվածությունն ու հումքային պաշարների սպառումը մտրեց համաշխարհային օրակարգ և վճռորոշ ազդեցություն ունեցավ բնապահպանական շարժման վրա:

շնորհիվ կտրուկ նվազել են, նորարարությունները ոլորտում աճել են, իսկ մասնավորեցումից ստացված հասույթները փող են լցրել հանրային գանձարանները: Այդ զարգացման համար նախադրյալ էր այն, որ առկա հեռախոսային ցանցում իրենց ծառայությունները կարող են մատուցել տարբեր առաջարկողներ, որը տեխնիկապես հնարավոր դարձավ միայն 20-րդ դարի վերջին: Մինչ այդ մասնավորեցումն ավելի շատ մրցակցության չէր հանգեցնի, որովհետև այդ դեպքում պետական մենաշնորհն ընդամենը կփոխարինվեր մասնավոր մենաշնորհով:

Պետության և մասնավորի միջև ճոճանակը ճոճվում է այս ու այն կողմ: 19-րդ և 20-րդ դարերում պետությունները հետզհետե ավելի շատ պատասխանատվություն են վերցրել իրենց վրա, և պետական քվոտան ամենուրեք է հստակորեն աճել է: Կապի ոլորտից, էլեկտրաէներգիայի արտադրությունից մինչև այնպիսի արդյունաբերական ճյուղեր, ինչպիսիք եղել են պողպատի արտադրությունը և ավտոմոբիլաշինությունը, նախկինում եղել են հանրային սեփականություն հանդիսացող ճյուղեր, որոնք ներկայումս մասամբ կամ ամբողջովին մասնավորեցված են: Վերջին բառորդ դարում ճոճանակն ակնհայտորեն շեղում է տվել մասնավոր տնտեսության ուղղությամբ:

Ովքե՞ր էին այդ շարժման առաջամարտիկները: Միջազգային մակարդակում Զամաշարհային բանկը և Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄԻ) դրան վճռորոշ մասնակցություն են ունեցել, այսպես կոչված, Վաշինգտոնյան կոնսենսուսով: Վերջինիս տնտեսաբարաբանական դեկավար ուղենիշները պահանջում էին պետության նահանջ և հանգեցրին աշխարհով մեկ ապակարգավորման ու մասնավորեցման ալիքի: Եթե թուրքական սովորեցրած լինեին «մասնավորեցում» արտահայտությունը, ապա 1980-ական և 1990-ական թվականներին ընդարձակ մասերում կարելի կլիներ հրաժարվել Զամաշարհային բանկի և ԱՄԻ-ի խորհրդից, այսպես է գրում Նոբելյան մրցանակի դափնեկիր և Զամաշարհային բանկի նախկին գլխավոր տնտեսագետ Ջոզեֆ Յու. Ստիգլիցը (Ստիգլից, 2002թ., 78-81): Վաշինգտոնյան կոնսենսուսի հիմնախնդիրը, ըստ Ստիգլիցի, այն էր, որ կոնսենսուսը դիտում էր մասնավորեցումը որպես ինքնասպառակ ճշգրտորեն ստուգելու փոխարեն, թե որ ոլորտները որ պայմաններում են հարմար դրա համար, և թե դերակատարների ինչ համադրությամբ կարելի կլինի հասնել կայուն աճի և արդար բաշխման ու ապահով ապրուստի: Թե մասնավորեցումն ինչ էֆեկտներ ունի, դա հենց կախված է այն տնտեսական ոլորտից, որտեղ մասնավորեցումներ են կատարվում, և այդտեղ իշխող շրջանակային պայմաններից, և մասնավորեցումներն այդ կերպ որևէ երկրում կարող են հաջողվել, իսկ նույն ոլորտում մեկ այլ երկրում՝ ձախողվել:

Ստորև ներկայացվող գործոնները հատկապես կարևորվում են մասնավորեցումների հետևանքների համար.

- Արդյո՞ք տվյալ ոլորտում մրցակցություն հնարավոր է, թե՞ ընդամենը պետական մենաշնորհը փոխարինվում է մասնավորով: Առաջին հերթին, այսպես կոչված, ցանցային արդյունաբերությունների պարագայում դա միայն պայմանակա- նորեն է հնարավոր. օրինակ՝ մեկ երկաթուղագծով ռելսային երթևեկության մեջ մրցակցություն հնարավոր է ընդամենը սահմանափակ ձևով: Այլևս գրեթե շահութաբեր չէ կառուցել զուգահեռ ռելսեր: Իսկ նույն ռելսերի վրա գնացքները չեն կարող իրար վազանցել: Ցանցային արդյունաբերությունների մեջ են մտնում նաև այնպիսի մատակարարներ, ինչպիսիք են ջրամատակարար, գազամա- տակարար և էներգամատակարար ձեռնարկությունները: Եթե բանը հասնի մասնավորեցման, ապա առաջարկողների համար պետք է այնպիսի կարգա- վորում լինի, որ նրանք չօգտվեն շուկայում իրենց ունեցած իշխանությունից:
- Արդյո՞ք կա վտանգ, որ սպառողները կտրվեն կարևոր ապրանքներից ու ծառայու- թյուններից: Օրինակ, հեռավոր շրջաններում ապրող մարդիկ՝ փոստային ծառա- յություններից, կամ անապահով ընտանիքները՝ էներգամատակարարումից:
- Արդյո՞ք կա պետության կողմից հատուկ պաշտպանության շահագրգռվածու- թյուն: Դաշնային տպարանն արդեն իրականացված մասնավորեցումից հետո վերստին տեղափոխվեց հանրային սեփականություն, որովհետև տպագրվող փաստաթղթերն ու կառավարվող տվյալները զգայուն են համարվում:

Մասնավորեցումների և պետականացումների հաշվեկշիռը շատ խառն է: Արդ- յունքները մեծապես կախված են ոլորտից ու քաղաքական ձևավորումից: «Մաս- նավորեցման սահմանները» զեկույցում ուսումնասիրվում ու գնահատվում են Գերմանիայում և այլ երկրներում իրականացված մասնավորեցումների առանձին դեպքեր: Առկա է մասնավորեցումների դրական ու բացասական արդյունքների մի մեծ ընդգրկույթ: Ստորև նախ կներկայացվեն մասնավորեցումների բացահայտված դրական էֆեկտները, այնուհետև՝ ռիսկերը՝ ըստ Զոմյան ակումբի վերլուծության:

Եթե մասնավորեցման արդյունքում որևէ ոլորտում մրցակցություն է առաջանում, ապա դա, որպես կանոն, հանգեցնում է առավել բարվոք հաճախորդամետության: Մասնավոր մրցակցության մեջ գտնվող ձեռնարկություններն ապավինում են գոհ հաճախորդներին և պետք է լինեն նորարարական ու արդյունավետ՝ շուկայում գոյատևելու համար: Զեռահաղորդակցության ոլորտը համարվում է օրինակ մի ոլորտի համար, որտեղ մասնավորների միջև մրցակցությունը հանգեցրել է նորա- րարությունների և շուկայի ընդլայնման, որոնք պետական մենաշնորհի համար մտածելի չէին: Պետական ձեռնարկությունները, որոնք ստիպված չեն մտնել մրցակցային իրավիճակի մեջ, առավել ծախսատար աշխատանքի և նորույթների նկատմամբ ավելի քիչ բաց լինելու միտում ունեն: Անշուշտ, ծախսերի կրճատում

և սպասարկման առավել բարձր որակ պարտադիր չեն: Մասնավոր ձեռնարկությունները միտում ունեն բացառելու այն հաճախորդներին, որոնցով շահույթներ գրեթե անհնար է ստանալ, **այսինքն՝ նրանք** հակված են «չամիջները հանելուն»: Դրա օրինակներ են հեռավոր վայրերում ապրող մարդիկ, որոնց պարագայում նամակները տեղ հասցնելը անշահութաբեր կլիներ:

Մասնավորեցումները կարող են իմաստալից լինել, եթե պետությունը ներդրումների համար միջոցներ չունի, և մասնավոր (միջազգային) ներդրողները պատրաստ են կապիտալ տրամադրելու: Դա հաճախ տեղի է ունենում առավել աղքատ երկրներում, որտեղ կենսապահովման կարևոր ապրանքներ, ինչպիսին ջրային տնտեսությունն է, մասամբ տրվում են մասնավոր ներդրողներին: Բայց դրա շնորհիվ մատակարարումը, որպես կանոն, բարելավվում է միայն վճարունակ հաճախորդների համար և կարող է սրել անարդարությունը:

Մասնավորեցումների ժամանակ հաճախ հանդիպող հիմնախնդիր են ներդրումնային դաշտի թույլ կարգավորումները: Ստիպված լինելով գործել՝ պետությունը, չունենալով մասնավորեցման փորձ, կարող է վաճառքի պայմանների վերաբերյալ համաձայնության գալ ի վնաս իրեն: Փորձված միջազգային կոնցեռնների հանդիման հատկապես նախկին կոմունիստական երկրները հաճախ գայթակղվել են ոչ իրատեսական գնային ու որակային նորմերից: Այսպես՝ Արևելյան Եվրոպայի անցումային պետություններում, ի թիվս այլոց, Էներգետիկական ձեռնարկությունները վաճառվել են իրենց արժեքից շատ ցածր գնով:

Արդեն վերևում նշվել են այն հիմնախնդիրները, որոնք ծագում են, երբ անբավարար մրցակցություն է տիրում, և ձևավորվում են մասնավոր մենաշնորհներ, օրինակ, այլընտրանք չունեցող ցանցային արդյունաբերություններում (ջրամատակարարում, Էներգացանցեր): Դա այնուհետև չի հանգեցնում ոչ նորարարական, ոչ էլ գնային առավելությունների: Մասնավոր մենաշնորհները, որպես կանոն, պարունակում են էլ՝ ավելի շատ վնասներ, քան պետական մենաշնորհները:

Մեկ այլ ռիսկ է ռիսկերն ու արտաքին ծախսերը հետաձգելը: Մասնավոր մի ներդրողի վաճառելուց հետո պատահել է, որ շրջանառության ռիսկերը մնացել են պետության վրա: Դա, օրինակ, այն դեպքն է, երբ արտաքին լրացուցիչ ծախսերը, ինչպիսիք են բնապահպանական հետևանքները, բարդվում են հանրային ոլորտի վրա, մինչդեռ ձեռնարկությունից ստացվող շահույթները մնում են մասնավոր ձեռքերում: Այդպիսի օրինակ են ատոմային Էներգետիկայի հետևանքների հետ կապված ծախսերը:

Մասնավոր ներդրողների պարագայում մեկ այլ ինդիո կարող է լինել երկարա-
ժամկետության և տևական որակի անտեսումը, որը որոշ դեպքերում հանգեցրել է
Նախկինում հանրային միջոցներով պահվող ենթակառուցվածքների փլուզման:
Դրա հայտնի օրինակ է բրիտանական երկաթուղին: Մասնավորեցումից հետո
ներդրողները անտեսել են ռելսային ցանցը, մինչև բանը չհասավ ծանր վթարների,
և ցանցը վերստին հարկադրաբար պետականացվեց:

Հաճախ մասնավորեցումներն առաջին հերթին ունեն գանձապետական պատ-
ճառներ: Մուտքերով Նախատեսվում է փակել բյուջետային ճեղքերը: Դա կարող է
դրական ազդեցություն թողնել այլ քաղաքական ոլորտների վրա: Դրեզդեն քաղաքը
վաճառել է ավելի քան 100000 բնակարան ունեցող բնակֆոնդը և դրա շնորհիվ
միակ գերմանական խոշոր քաղաքն է, որ պարտքեր չունի: Տարեկան տնտեսվող
80 միլիոն եվրոն, որը մինչ այդ վճարվում էր տոկոսների համար, կարող է, վար-
ձավճարների ու պահպանման ծախսերի տարբերությունը հանած, ներդրվել այլ
հանրային գործառույթների իրականացման համար, օրինակ՝ կրթության:

Հռոմյան ակումբն առաջարկում է մասնավորեցումների համար կազմել գործողու-
թյունների իրականացման ստուգիչ թերթիկ: Նախ պետք է հանրային քննարկման
դրվեն մասնավորեցման պատճառները՝ խուսափելու համար մասնավորեցումից՝
որպես ինքնանպատակի, որոնք են.

- կարգավորման հուսալի շրջանակներ՝ ներդրողի համար նպատակների հստակ
սահմանմամբ,
- պետության կողմից լավ տրամադրվող ծառայությունների՝ գաղափարախո-
սական պատճառներով մասնավորեցման բացառում,
- ժողովրդավարական վերահսկողություն վերահսկիչ մարմինների կողմից,
- Այնտեղ, որտեղ պետությունն այլևս սեփականատեր չէ, նա պետք է կարգա-
վորմամբ իր ազդեցությունն ունենա շուկայի վրա:
- Հատկապես պաշտպանության տակ առնել հանրային ապրանքները և կեն-
սաապահովումը: Այս բարիքների մասնավորեցումը պետք է ստուգվի առանձ-
նակի բարեխղճությամբ:
- Կարիքավորների պաշտպանության սոցիալական խարտիա: Դրա համար
օրինակ է Դրեզդեն քաղաքը, որն իր անշարժ գույքի վաճառքը կապել է վար-
ձակալների համար հատուկ պաշտպանական իրավունքների հետ:
- մասնավորեցման մրցույթի թափանցիկ և ազնիվ անցկացումը,
- քննել պետության և մասնավորի միջև հանրային-մասնավոր գործընկերու-
թյան կամ ընկերակցությունների տեսքով երրորդ ճանապարհի առկայությունը:

7.4. Լավ աշխատանք և մասնակցականություն. լավ աշխատանքի քաղաքականությունը

Վուֆգանգ Շրյոդեր

Յուրաքանչյուր հասարակություն յուրովի է հասկանում աշխատանքը: Եվ նաև յուրաքանչյուր հասարակության ներսում դեմ հանդիման կանգնած են մտածողության տարբեր ձևեր աշխատանքի վերաբերյալ կամ այն բանի, թե այդ պարագայում լավ աշխատանքի տակ ինչ է հասկացվում: Ինչպե՞ն է կազմակերպված աշխատանքը ներկայումս: Ինչպե՞ն ենք աշխատելու: ապագայում: Ի՞նչ նշանակություն ունի աշխատանքը մեր կյանքում և հասարակական միասնության համար: Արդյո՞ք աշխատանքային հարաբերությունների բևեռացումը մի կողմից՝ խնդունկ¹³ վարձատրությամբ ու հիասթափեցնող աշխատանքային ապրումներով լեցուն հարաբերությունների և մյուս կողմից՝ բարձր վարձատրվող ու պատշաճ, բավարար աշխատանքային իրավիճակներ ապահովող հարաբերությունների անցողիկ երևույթ է: Թե՞ խոսքն ավելի շուտ աղետալի զարգացման սկզբի մասին է: Այս հարցերն ստացել են անհետաձգելի հրատապություն: Առանց դրանք ուշադրության առնելու: հնարավոր չէ մշակել անհատական ու հասարակական ապագայի նախագծեր: «Աշխատանքի վերջի» վերաբերյալ դրույթի ներկայացուցիչների մոտ հնչելությունը նվազել է: Նրանք փաստարկում էին, թե ժամանակակից հասարակության համար սպառվում է վաստակային աշխատանքը, և այլևս հնարավոր չէ լիարժեք զբաղվածությունը: Այս դրույթը, ոչ վերջին հաշվով, կարող է հերքվել սկանդինավյան երկրների կողմից, որոնք իրար հետ միավորում են զբաղվածության բարձր մակարդակ ու բարձր սոցիալական ստանդարտներ: Գերմանիայում ևս հնարավոր եղավ գործազրկությունը տարիների լճացումից հետո ակնհայտորեն նվազեցնել: Իհարկե, ուրվագծվող խորը տնտեսական ճգնաժամով զանգվածային գործազրկության թեման Նոր հրատապություն ձեռք կբերի: Բայց միևնույն ժամանակ մշտակա է «ճկունացված գերաշխատանքային հասարակության» հանդեպ վախը: Անգամ եթե արտադրողականության առաջընթացը նպաստել է այն բանին, որ այսօր բազմապատիկս քիչ աշխատանք է անհրաժեշտ բազմապատիկս մեծ համախառն ազգային արդյունքի հասնելու համար, քան, օրինակ, 40 տարի առաջ, ապա դա աշխատանքի փոփոխության շուրջ քննարկման մեջ ընդամենը կողմերից մեկն է:

➤ Շրջադարձ աշխատանքի կազմակերպման մեջ

Անգամ եթե վաստակային աշխատանքի ձևավորումը միայն որոշակի փուլերում ու համադրություններում է դառնում լայն հասարակական քննարկման առարկա, այդուհանդերձ, այն մշտապես բնորոշ է զբաղվածների առօրյային: Արդյունաբերական աշխատանքը սերտորեն միահյուսված էր կոնվեյերի կամ հաստոցների մոտ աշխատանքի հետ: Չնայած որ, այսպես կոչված, աշխատանքի թեյրորիստա-

¹³ «Pekär» բառը սերում է լատիներենից և նշանակում է մոտավորապես «խնդրանքով ձեռք բերված» կամ «անապահով»

կան կազմակերպումը, որը հատկանշվում էր հաստոցներով, վերահսկողությամբ, ստանդարտներով, այսինքն՝ որոշ առումով աշխատանքի գիտական պլանավորմամբ, չէր որոշում բոլոր մարդկանց իրականությունը, այդուհանդերձ, դրանից գալիս էին տպավորիչ ազդեցություններ ոչ միայն ամբողջ հասարակության վրա, այլ նաև հետաաշխատանքային կյանքի վրա: Բանվորական շարժման, հատկապես արհմիությունների պատմությունը ևս հնարավոր չէ հասկանալ առանց աշխատանքի թեյլորիստական կազմակերպման ու խոշոր գործարանի:

Թեյլորիզմից զատ՝ 1980-ական թվականներին, ի դեմս տոյոտիզմի¹⁴, ձևավորվեց մի երկրորդ, նորարարական արտադրական մոդել: Այդ արտադրական մոդելը, որն այդպես է անվանվել ճապոնական ավտոարտադրող

Թեյլորիզմը գալիս է Ֆրեդերիկ Թեյլորից (1856 - 1915թթ.): Նրա նպատակն աշխատանքը հնարավորինս արդյունավետ կազմակերպելն էր: Ընդ որում, նա այն տեսակետին էր, որ բանվորները գործում են նույն սկզբունքներով, ինչպես մեքենաները, և փորձում էր գործարանային արտադրական պրոցեսները կառուցարկել մեխանիկական կոնվեյերային աշխատանքի տեսքով:

«Տոյոտա» կոնցեռնում ժամանակին խմբային աշխատանքի հիման վրա ձևավորված աշխատանքի նոր կազմակերպման պատճառով, մասնավորապես, նպատակ ուներ հավասարակշռել աշխատանքի խիստ բաժանման թերությունները և հնարավորել աշխատողների ավելի ուժեղ ինտեգրումն իրենց առավել ընդգրկուն ունակություններով: Ասպեկտներից մեկը վաստակային աշխատանքի հումանիզացումն էր, ինչը միաժամանակ նաև արհմիութենական գործարանային քաղաքականության հիմնական ձգտումներից մեկն էր: Դրա հետ կապված ձգտումն էր աշխատանքային պայմանների բարելավումը՝ աշխատանքի և կյանքի որակը միավորելու, առողջապահական ինտեգրման հնարավորություն ստեղծելու և հասարակական հարստությունը խթանելու համար:

Աշխատանքի կազմակերպման մասով նորարարությունների գերազանց վայրեր են եղել մեծ մասամբ ավտոմոբիլային արտադրության գործարանները: Ընդ որում, կարևոր ազդակ էր բխում շվեդական «Վոլվո» ավտոկոնցեռնի գործարաններում խմբային աշխատանքի նոր ձևերից: 1980-ական թվականների սկզբներին ավտոմատ կամ կիսավտոմատ ռեժիմով խմբային աշխատանքի նոր ձևերի հայտնագործումն ու նոր արտադրական հայեցակարգերը ևս սերտորեն կապված էին այդ առանցքային արդյունաբերության հետ: Կիսավտոմատ ռեժիմով խմբային աշխատանքի հետ կապվում էր առավել բազմակողմանի, առավել հետաքրքիր և որակավորմամբ առավել հարուստ աշխատանքային իրավիճակի հույսը, իրավիճակ, որի դեպքում աշխատողներն իրենց աշխատանքային ծավալի բաշխման և համապատասխան որոշումների մասնակցության առումով ստանում են անհատական գործողությունների ավելի մեծ ազատություն: Այնպես էր թվում, թե խմբային աշխատանքը դառնում է աշխատանքի նոր աշխարհի խորհրդանիշը, և որ անհատը համագործակցող խմբում նոր արժեք է ստանում:

¹⁴ Կոչվել է ավտոմեքենաներ արտադրող «Տոյոտա»-ի անունով, որը փորձում էր զանգվածային արտադրության արտադրողականությունը կապակցել ցեխային սկզբունքով արտադրության որակի հետ:

Այնքանով, որքանով ստանդարտացված կրկնվելերային աշխատանքը (թելլորիզվո) հասավ իր սահմաններին, բանը հասավ նաև աշխատանքային պայմանների բարելավման շուրջ բանավեճին, որոնք դեպի մասնակի ավտոնոմ խմբային աշխատանք զարգացման մեջ մոտենում էին «ավ աշխատանք» տեսլականին: Այդ գործընթացը Գերմանիայում միջազգային բաղդատությամբ համեմատաբար մեծ տարածում է գտել, այնպես որ որոշ հեղինակներ խոսում են գերմանական հատուկ ճանապարհի մասին, որի որակական չափումը հենվում է թելլորիզվում մշակված որակյալ մասնագիտական աշխատանքի հիմքի և դուալ մասնագիտական կրթության վրա: Այդ հիմքի վրա որոշ չափով տեղի էր ունենում հումանիզացման և ռացիոնալիզացման ներդաշնակեցում, որն էլ իր հերթին հանդիսանում է արտահանմանը կողմնորոշված արդյունաբերության մեջ ճկուն մասնագիտացման նախագծի համար արդյունավետ հիմք: Բայց 1990-ական թվականների կեսերից սկսած՝ արդյունաբերական աշխատանքի այդ յուրահատկությունը վերստին դարձել է քննարկման առարկա, որովհետև մի կողմից՝ տնտեսական ու ֆինանսական հարկադրանքները և մյուս կողմից՝ խմբային աշխատանքում հակասական զարգացումները հարցականի տակ են դրել դրա արդյունավետությունն ու ընդունելիությունը:

Այս ընթացքում սթափություն է տիրում: Խմբային աշխատանքը թեև ընդարձակվել է, բայց առայժմ չեն իրականացել դրա հետ կապված սպասելիքներն աշխատանքի ոլորտի արմատական հումանիզացիայի առումով: Ընդհակառակը, զբաղվածների աշխատատեղում աշխատանքի կազմակերպման հնարավորությունները շատ ոլորտներում դարձյալ կրճատվել են հոգուտ ավելի ուժեղ ստանդարտացման: Այդպես այսօրվա արդյունաբերական աշխարհում առավելագույն արտադրողականության համար մրցակցության մեջ են տարբեր աշխատանքային ռեժիմներ:

Խոշոր արդյունաբերական աշխատանքի վերացմանը զուգահեռ միևնույն ժամանակ աշխատանքի մեկ այլ տիպ է հետզհետե դառնում հասարակական քննարկման առարկա: Խոսքը ճկուն, գիտելիքամետ սպասարկողական աշխատանքի մասին է: Հաճախ է ելևվում այն բանից, որ անհատներն այդ ոլորտներում ավելի շատ ինքնավարություն ունեն: Ամեն դեպքում նրանք աշխատում են ոչ թե խոշոր, այլ փոքր ձեռնարկություններում և շատ ավելի մեծ պատասխանատվություն են կրում իրենց աշխատանքի արդյունքների համար: Աշխատանքի այդ ձևի հետ կարծես թե կապի մեջ է դրվում հաստատված աշխատանքային ռեժիմի վերջը: Եվ աշխատաժամանակի կրճատման փոխարեն խոսվում է «անվերջ աշխատելու» մասին: Օրինակ՝ էլեկտրոնային փոստի և բջջային հեռախոսի դարաշրջանում շատ աշխատակիցներից ակնկալվում է, որ մշտապես, նաև օրենսդրական դրույթներից այն կողմ, աշխատանքային ժամերից դուրս հասանելի լինեն: Այդ զարգացման հնարավորությունների և ռիսկերի մասին բանավեճում վճռորոշ դեր է խաղում աշխատողների որակավորումը, եթե խոսքն ավելի շատ անկախու-

թյան մասին է: Ռիսկերի կողմում քննարկման առարկա են դառնում հոգեկան սթրեսի, հուզականորեն այրվել-սպառվելու համախտանիշի (հոգեպես հյուժվածություն աշխատանքից), աշխատանքի կողմից մարդու ամբողջական կյանվածության նոր ձևերը և կյանքի ավելի լավ որակի առումով դրանցից բխող հակասությունները:

Վերջին տարիներին շատ է քննարկվել այն հարցը, թե որոյո՞ք կա գործառույթի նոր տիպի պես մի բան, որը որպես «աշխատուժային ձեռնարկատեր» նաև պատասխանատու է իր սեփական «employability»-ի (գբաղունակության) համար: Դրանով ուշադրությունը պետք է բևեռվի զարգացման մի գործընթացի վրա, որն սկսվում է պրոլետարական վարձու բանվորով, անցնում մասնագիտացված գործառույթ և հասնում ձեռնարկութենացված աշխատուժային ձեռնարկատեր: Շուկայանման կապալային հարաբերությունների պայմաններում մասամբ ինքնակազմակերպվող աշխատուժային ձեռնարկատիրոջ հատկանիշները բևեռվում են հատկապես երեք չափումների վրա, որոնք են՝ անհատականացված որակավորումները, աշխատանքի սիստեմատիկ ինքնավերահսկողությունը, ինչպես նաև սոցիալական պաշտպանվածության ծանր պայմաններում ինքնաշահագործման վտանգը: Զանի որ աշխատուժային ձեռնարկատիրոջ պարագայում խոսքը սոցիալական մի կառուցարկի մասին է, որը կհամապատասխաներ շուկայահիմք տնտեսության մի նոր աստիճանի, սոցիոլոգներ Ֆոսսը և Փոնգրաթցը հանգում են նոր ներձեռնարկութենային իշխանական հարաբերությունների հետևյալ գնահատմանը. «Կապիտալիստական ձեռնարկություններում կապիտալի և աշխատանքի միջև հակասությունն աշխատուժային ձեռնարկատիրոջ տիպով չի վերանում, այլ վերածվում է տարբեր տեսակի ձեռնարկատերերի միջև կառուցվածքային հակասության» (Ֆոսս, Փոնգրաթց, 2003թ., 32): Նույնիսկ եթե, ինչպես քննադատների կողմից իրավամբ առարկվում է, այդ տիպը ոչ մի դեպքում դեռ որոշիչ է աշխատանքի աշխարհի համար, այդուհանդերձ, վեր հանված հատկանիշներն արդեն հիմա լայնորեն սփռված են:

Լավ աշխատանքի քաղաքականության համար ամենամեծ մարտահրավերը ներկայումս ծանր պայմաններում աշխատողների թվի կտրուկ աճն է: Ընդ որում, առանձնապես ինդրահարույց է այն, որ այդ ոլորտից դուրս գալու ճանապարհը շարունակ ավելի դժվարին է դարձել: Սոցիալ-դեմոկրատիայի նախագծի համար լավ աշխատանքը՝ այն անհատների առումով, ում դա վերաբերում է, կարևոր է առաջին հերթին երկու պատճառով: Նախ՝ վատ աշխատանքը պետք է հումանիզացվի, և երկրորդ՝ այդ հատվածում աշխատողներին հետագա զարգացման համար պետք է ցուցաբերվի աջակցություն այդ գոտուց վերստին դուրս գալու գործում:

➤ **Մասնակցականության դերակատարներն ու մեթոդները**

Արդյունաբերական աշխատակարգի նշանակության նվազման հետ կապված են լավ

աշխատանքի քաղաքականության գործող դերակատարներին ներկայացվող նոր պահանջներ: Միությանների և պետության կողքին ձեռնարկութենային դերակատարները կազմում են լավ աշխատանքի համար պայմանավորված քաղաքականության գերմանական մոդելի երրորդ վճռորոշ սյունը: Մինչև 1980-ական թվականները նրանց գործունեությունն իրականացվում էր վերձեռնարկութենային պայմանավորվածություններով ձեռք բերված, ինչպես նաև պետականորեն նորմավորված ստանդարտների շրջանակներում: Այդքանով Գերմանիայում ձևավորվել է ձեռնարկութենային սոցիալական կարգ, որը կողմնորոշվում է վերձեռնարկութենային կարգավորման նմուշներին՝ ստիպված չլինելով դրանք սոսկ կրկնել: Գերմանական մոդելը թույլ է տալիս գանազան ձեռնարկութենային գործողությունների համադրությունների և իրարով փոխանակելի նմուշների ընդգրկույթ: Իհարկե, դրանք սահմանափակվում են շրջանակային պայմաններով: Օրինակ՝ գործադիր տնօրինությունը պարտավոր է անձնակազմային հարցերում հաշվի առնել ինչպես անձնակազմի և ձեռնարկութենային խորհրդի շահերը, այնպես էլ վերձեռնարկութենային ատյանների սահմանած նորմերը, այսինքն՝ սակագնային պայմանագրերում ամրագրված և պետական նորմերը: Ընդհակառակը, ձեռնարկութենային խորհուրդն աշխատողների շահերի պաշտպանության իր գործառույթը պետք է զուգակցի ձեռնարկության արտադրողականության ու տնտեսական հաջողության համար պատասխանատվացության հետ: Ձեռնարկութենային մասնակցականության ու համագործակցության մոդելն իր հերթին պարզորոշ կերպով ներառվում է «Ձեռնարկությունների իրավական ռեժիմի մասին» օրենքի աշխատանքային հիմքում. «Գործատուն և ձեռնարկութենային խորհուրդը համագործակցում են՝ հաշվի առնելով գործող սակագնային պայմանագրերը, փոխվտահորեն և ձեռնարկությունում ներկայացված արհմիությունների ու գործատուների միությունների հետ գործակցելով՝ ի բարօրություն գործառույթների և ձեռնարկության» («Ձեռնարկությունների իրավական ռեժիմի մասին» օրենքի § 2, պարբ. 1):

Շահերի պաշտպանության մոդելը Գերմանիայում ֆորմալ տարբերում է ձեռնարկութենային խորհուրդը և արհմիությունը, այսինքն՝ ձեռնարկութենային խորհրդի անդամները պարտադիր չէ, որ լինեն որևէ արհմիության անդամ, իսկ արհմիությունն ուղղակի և մեխանիկական ազդեցություն չունի ձեռնարկութենային խորհրդի վրա: Այդ ֆորմալ բաժանման առումով գերմանական մոդելի ամենամեծ ձեռքբերումներից մեկն այն է, որ ձեռնարկութենային խորհրդի և արհմիության մեջ ձևավորվել է ոչ այնքան անհաղթահարելի մրցակցություն, որքան սերտ առօրեական կապ: Վեց տասնամյակից ի վեր ձեռնարկութենային խորհուրդների անդամների ավելի քան 70 տոկոսը միաժամանակ արհմիությունների անդամներ են և արհմիություններում հասարակական հիմունքներով նշանակալի գործառույթներ են իրականացնում: Եթե ձեռնարկութենային խորհուրդն անձնակազմի, ձեռնարկության ղեկավարության և

արհմիության միջև լարումնային դաշտում գործում է իբրև «սահմանային իրավիճակ» (Ֆյուրսթենբերգ, 2000թ. [1958թ.]), ապա ձեռնարկության գործադիր տնօրինությունը ստիպված է տարուբերվել անձնակազմի, ձեռնարկութենային խորհրդի և ձեռնարկության ղեկավարության, ինչպես նաև գործատուների միության վճռորոշ շահերի ու պահանջների միջև: Ձեռնարկութենային խորհրդի և գործադիր տնօրինության շահերի միջև հակասությունները հարթվում են ըստ սահմանված կարգի, բացահայտ կոնֆլիկտը բացառություն է: Այնտեղ, որտեղ բացահայտ կոնֆլիկտներ են լինում բաշխման կամ կազմակերպական հարցերում, հաճախ ներգրավվում են արտաձեռնարկութենային ղերակատարներ: Ձեռնարկութենային խորհուրդն ու գործադիր տնօրինությունը իրենց վերապահված խմբային ոլորտների ամենակարևոր հիմնական ղերակատարներն են: Նրանք ունեն տարբեր իրավական բնույթ և, որպես կանոն, անհավասար իշխանական ռեսուրսներ, այնպես որ արդյունաբերական հարաբերությունների քաղաքական դաշտում խոսքը մեծ մասամբ հավասար ուժեր ունեցող ղերակատարների մասին չէ: Ձեռնարկութենային ղերակատարները սակագնային պայմանագրերի քաղաքականության ոլորտում իրաժարվում են պլանավորման իրավունքներից հոգուտ միութենային որոշումների հարթության և դրանով հետևում են պատմականորեն ձևավորված հաստատութենային մի նմուշի, որը մինչև հիմա խրախուսել է համագործակցության մի եղանակ, որի կարևորագույն քաղադրիչներն առաջնահերթ տարբերակվում են քաղաքականի և տնտեսականի:

➤ **Մարտահրավերներ՝ մասնակցականության համար**

Ձեռնարկութենային խորհրդի անդամների մասնակցականության, ձեռնարկություններում սեփական ներկայացուցիչների, ինչպես նաև դիտորդ խորհուրդներում հաստիքային արհմիութենականների միջոցով տնտեսական հարցերում մասնակի գործակցության՝ աշխատանքի բաժանման վրա հիմնված մոդելը ներկայումս կանգնած է նոր մարտահրավերների առջև:

1. Մասնակցականության ղերակատարներին կապակցող ուժերը փշովում են:

Աշխատանքային քաղաքականության ոլորտներում որոշումների կայացման վերձեռնարկութենային մակարդակի ընդունումը ձեռնարկութենային մակարդակի կողմից ամենևին ինքնին հասկանալի չէ, այլ նաև պատմականորեն ձևավորված վարվելակերպերի և առկա քաղաքական ուժային հարաբերությունների արտահայտություն է: Զանգի այնտեղ, որտեղ գործադիր տնօրինությունները տեսնում են սակագնային քաղաքականության սեփական ճանապարհներով գնալու հնարավորություններ՝ չվաստելով ձեռնարկությունում տիրող խաղաղությունը և տնտեսական արտադրողականությունը, երբեմն դրա փորձերն արվում են, ընդ որում, վերջին տարիներին ավելի ու ավելի հաճախ: Սոցիալ-դեմոկրատիայի նախագծի համար հստակ է, որ աշխատողների մասնակցությունը ոչ

թե բարեհաճության հարց է, այլ խոսքն այստեղ մասնակցության՝ օրենքով ամրագրված հիմնարար իրավունքի մասին է, որը ոչ մի պարագայում չի կարող դրվել սակարկության:

Վերծեռնարկութենային քաղաքականության օրինակարգության և ընդունելիության համար կարևոր է, որ ձեռնարկութենային դերակատարները տեսնեն, որ միութենային մակարդակում իրենց ազդեցությունն ու շահերը հաշվի են առնված: Դա, որպես կանոն, միությունների համար իրենց անդամների նկատմամբ լույսալույսի և պարտավորվածության բարձր աստիճանի հասնելու նախադրյալ է: Ընդ որում, ավանդույթը եղել է կարևոր կապակցող ուժ, որը բնորոշ է եղել արդյունաբերական հարաբերությունների տիրույթին: Սակայն վերջին 20 տարին այն կտրուկ կորցրել է իր նշանակությունը: Մի քանի տասնամյակ շարունակ գերմանական ձեռնարկությունների մեծամասնությունում կար գործառույթների փորձված, ոչ հիմնովին հետամտված բաշխում, որն ավանդվում էր սերնդից սերունդ: Միությունների և ձեռնարկութենային դերակատարների միջև մշակութային-ավանդական կապակցող ուժերն այս ընթացքում կարծես թե կորցնում են իրենց ազդեցության ուժը: 1980-ական թվականներից սկսած՝ նշմարվում է մի միտում, որ միութենային նորմավորման ուժը թուլացվում է: Կառավարման մարմիններն ու ձեռնարկութենային խորհուրդները ավելի ու ավելի հաճախ են գնում իրենց սեփական ճանապարհներով, հրապարակայնորեն արտահայտում են իրենց դժգոհությունը միութենային մակարդակում կայացված որոշումների նկատմամբ և չեն ցուցաբերում դրանց հետևելու պատրաստականություն:

2. Ձեռնարկութենային խորհուրդը կոնտակտային անձ և շահերի ներկայացուցիչ է բոլոր զբաղվածների համար: Մեծ մարտահրավեր է եզրային և առանցքային անձնակազմերի շահերի հավասարաբար պաշտպանությունը: Ձեռնարկությունների անձնակազմերի կառուցվածքը վերջին տարիներին խիստ փոխվել է: Ժամանակավոր աշխատող գործառույթների, մասնակի զբաղվածություն ունեցողների և վարձու աշխատողների թվաքանակը խիստ աճել է: Դա ձեռնարկություններում կարող է լինել կոնֆլիկտների պատճառ, որով նաև ձեռնարկութենային մասնակցակախության առջև ծառայում են միջնորդման ու համերաշխության հիմնախնդիրներ: Ձեռնարկութենային խորհուրդը ներկայացնում է մշտապես փոփոխվող անձնակազմ՝ ընդամենը երբեմն ունենալով զբաղվածների վատ պաշտպանված խմբերի շահերը նույն հաջողությամբ, ինչպես մշտական անձնակազմերի պարագայում՝ ներկայացնելու բացառիկ հիմնախնդիրներ:

3. Ձեռնարկությունների մասնակցականության մոդելն առճակատվում է ձեռնարկութենային պատասխանատվության՝ իրարից հեռացող ձևերի հետ: «Ձեռնարկությունների իրավական ռեժիմի մասին» օրենքի ստեղծման ժամանակ ձեռնարկու-

թյուններում որոշումներ կայացնողները, որպես կանոն, նրանք էին, ովքեր էլ կրում էին տնտեսական ռիսկը: Ձեռնարկութենային խորհրդի մասնակցակախությունը թեև սահմանափակված է ձեռնարկության կազմակերպական կառուցվածքի և անձնակազմային հարցերով, այդուհանդերձ, նրանք, որպես կանոն, մասնակցում էին նաև տնտեսական որոշումների քննարկմանը և անհրաժեշտության դեպքում դրանք մերժում: Բայց միջազգայնացմամբ և սեփականատերերի ու ձեռնարկությունների ղեկավարության՝ իրարից առանձնացմամբ տնտեսական որոշումները կարգադրվում են, որը հակասում է անձնակազմի, բայց նաև ձեռնարկության բարեկեցությանը չընդեռելով այդ որոշումների վրա ձեռնարկութենային դերակատարների կողմից արդեն նախապես ազդելու հնարավորություն: Աշխատողների համար տնտեսական վնասները թեև կարող են մեղմվել ձեռնարկութենային խորհրդի կողմից տարվող բանակցություններով, սակայն ձեռնարկությունների զարգացումն ու «ֆինանսական շուկային կողմորոշված կառավարումը» նոր մարտավերների առաջ են կանգնեցնում մասնակցակախության մոդելը:

4. Ձեռնարկությունների միջազգայնացումը պահանջում է մասնակցականության միջազգայնացում: Աշխատանքային պայմանների վատացման համար հիմնական փաստարկներից մեկը մտնում է ձեռնարկությունների տեղակայման վայրի հարցում մրցակցությունը, հաճախ նույնիսկ՝ մի կոնցեռնի ձեռնարկությունների միջև: Այսպես՝ ավտոմոբիլների նոր մոդելների վերաբերյալ, օրինակ, մրցույթները հայտարարվում են ամբողջ կոնցեռնով մեկ, և այդ կերպ տեղակայման վայրերի միջև մրցակցությունն օգտագործվում է աշխատավարձային ծախսերի և սոցիալական հատուցումների կրճատման համար: Բայց առկա է նաև համերաշխության առաջին դրական փորձը, օրինակ, Ջեներալ մոթորսի եվրոպական արտադրական տեղակայումների միջև, երբ ձեռնարկության կենտրոնական գրասենյակն սպառնում էր Եվրոպայում փակել առանձին գործարաններ: Ի դեմս ձեռնարկությունների եվրոպական խորհրդի՝ ունենալ առաջին կարևոր վերագրային հաստատությունը, որի իրավասություններն արդեն այսօր իմաստալից կերպով օգտագործվում են: Բայց և այնպես, այստեղ անհրաժեշտ են լրացուցիչ իրավական բարելավումներ՝ գործատուների ներկայացուցիչների համար հավասարը հավասարի հետ խոսելու հնարավորություն ապահովելու նպատակով: Միջազգային պահանջները հաշվի առնող մասնակցակախության մեկ այլ ասպարեզ է Եվրոպական բաժնետիրական ընկերությունը: Նաև դրա համար անհրաժեշտ է մշակել ռազմավարություններ և հայեցակարգեր, որոնք օգտվեն եղած շանսերից՝ միաժամանակ նվազեցնելով ռիսկերը: Տրամաբանությունը պարզունակ է: Մասնակցականության իրավունքներ ապահովելու համար անհրաժեշտ է Եվրոպական մակարդակում համագործակցության ուժեղացում՝ տարբեր դերակատարների և մակարդակների ներգրավմամբ: Որքան ավելի շատ հաջողվի դա, նույնքան գոհացուցիչ էլ կլինեն արդյունքները:

7.5. Նվազագույն աշխատավարձերի վերաբերյալ բանավեճը

Քլաուդիա Վայնբուխ¹⁵

Արդյո՞ք ցածր աշխատավարձերի աճող տեսակարար կշիռը բաղաբաղական գործողությունների անհրաժեշտություն ազդարարող հիմնախնդիր է, թե՞ գործազրկության կրճատման գործուն ռազմավարության անհրաժեշտ բաղադրիչ: Այս հարցը Գերմանիայում նախկինի պես խիստ վիճելի է: Չնայած վերջին տարիների բազմաթիվ ուսումնասիրություններ հիմնականում միահամուռ կերպով ապացուցել են, որ Գերմանիայում ցածր աշխատավարձերն արդեն զգալի չափերի են հասել (հմմտ., օր.¹ Շեֆեր, 2003թ., Ռայն / Գարթներ / Զրուգ, 2005թ., Գյոբել / Զրաուգե / Շուկ, 2005թ., Այխհորսթ և ուրիշներ, 2005թ.), շարունակվում են ցածրավարձ զբաղվածության ընդլայնման պահանջները, և նույնիսկ դեռ հնչում են առանձին ձայներ, որոնք պահանջում են ցածրավարձ աշխատատեղերի ներդրում:¹⁶

Ընդհանուր առմամբ, բանավեճը վերջին շրջանում ավելի շատ տեղափոխվել է դեպի այն հարցը՝ արդյո՞ք (միայն) պետության խնդիրն է ցածր աշխատավարձերն այնպես ավելացնել, որ բյուջետային համատեքստում գոյություն ապահովող եկամուտներ երաշխավորվեն, թե՞ սակագնային կամ օրենսդրական մակարդակով նվազագույն սահմաններ են անհրաժեշտ, որոնք կապահովեն, որ ձեռնարկությունները չկարողանան աշխատավարձերը շարունակ նվազեցնել: Ստորև ստուգվում և գենդերային հեռանկարից մեկնաբանվում է ցածր, ինչպես և նվազագույն աշխատավարձերի տիպական թեր և դեմ փաստարկներից մի քանիսի հիմնավորվածությունը:

Հօգուտ ցածրավարձ աշխատատեղերի հաճախ մատնանշվում է այն հանգամանքը, որ դրանք կարող են լինել դեպի ավելի լավ վճարվող զբաղվածություն տանող ցատ-

15 Այս հոդվածը գրեթե նույնական ձևով՝ «Ցածր և նվազագույն աշխատավարձերի վերաբերյալ բաղաբաղական բանավեճը՝ մեկնաբանված գենդերային հեռանկարից» վերտառությամբ, որպես «Ցածր և նվազագույն աշխատավարձեր: Վերլուծություն գենդերային հեռանկարից» հոդվածի առանձին գլուխ, հրատարակվել է Ֆրեդերիքե Մայերի և Անգելա Ֆիդլերի (հրատարակիչ) «Ամրապնդված սխալ դիրքեր: Սեռերի միջև հարաբերություններին առնչվող վերլուծություններ» ծրուգվածում, 2008թ., Բեռլին: Ընդհանրապես այս հոդվածում edition sigma հրատարակչությանը և հեղինակին վերատպության հնարավորության համար:

16 Այս հարցի շուրջ հարմար մեջբերումներ դժվար է գտնել: Համապատասխան հրատարակությունների մեծամասնությունում ցածրավարձ զբաղվածության պահանջը բարձրացվում է քիչ թե շատ վերապահումներով: Այդպիսին է, օրինակ, աշխատավարձերի ավելի շատ ցրման, ցածր որակավորման աշխատանքի համար մրցունակ աշխատավարձերի թույլատրման, «աշխատավարձերի տարբերության պահանջի» վերականգնման կամ նաև «ծառայությունների բացը» փակելու անհրաժեշտության վերաբերյալ խոսակցությունը՝ ԱՄՆ-ի հետ համեմատության մեջ: Որպես օրինակ՝ այստեղ մեջբերենք Փորձագիտական խորհրդի 2006/2007թթ. եզրակացությունից. «Բայց ծառայությունների ոլորտում բացվում են զբաղվածության բազմաթիվ հնարավորություններ, ինչպես ցույց է տալիս այլ երկրների, օրինակ՝ Միացյալ Նահանգների, փորձը, և ինչպես ուսուցանում է մեր երկրի անցյալին նետված հայաթքը, երբ բազմաթիվ աշխատատեղեր ցածրավարձ ծառայությունների ոլորտում չափից բարձր աշխատավարձային ծախսերի պատճառով կրճատվել են»: Փորձագիտական խորհուրդ, 2006թ., 370

կահարթակ: Ամեն դեպքում, այդ թեմային նվիրված որոշ վերջին ուսումնասիրությունների արդյունքները ճշում են այդ առնչությամբ լավատեսությունը: Ցածր վճարվող աշխատատեղերից, այսպես կոչված, «վերընթաց շարժունությունը» Գերմանիայում վերջին տարիներին ակնհայտորեն նվազել է (հմնտ. Ռայն / Գարթներ / Զրուգ, 2005թ.): Դա է հաստատում նաև Աշխատանքի դաշնային գործակալության (ԱԴԳ) տվյալների հիման վրա Աշխատանքի և որակավորման ինստիտուտի կողմից արված գնահատումը, որտեղ մենք հետամուտ ենք եղել այն հարցին, թե 1998 թվականին նվազագույն աշխատավարձի շեմից ցածր աշխատավարձ ստացած լիարժեք դրույթով աշխատողների ո՞ր մասին է մինչև 2003 թվականը հաջողվել հասնել բաժր (ցածր աշխատավարձի շեմից վերև) վճարվող զբաղվածության: Միջինը 34,4 տոկոսին է դա հաջողվել (այսինքն՝ 2003 թվականին դեռ աշխատողների մեկ երրորդին): Բայց զբաղվածների խմբերի կտրվածքով հաջողության հասածների այդ բաժինները զգալի տարբերություն էին տալիս: Ամենաշատը հաջողվել է երիտասարդներին (մինչև 25 տարեկան՝ 62,3%), բարձր որակավորում ունեցողներին (բաժրագույն կրթությամբ՝ 53,6%), ինչպես նաև տղամարդկանց (50,4%) հասնել ավելի լավ վճարվող աշխատատեղի: Կանանց պարագայում, ընդհակառակը, միայն յուրաքանչյուր չորրորդին է հաջողվել դուրս գալ ցածր աշխատավարձի տիրույթից (27,1%) (Բոշ / Կալինա, 2007թ., 45):

Ճայրահեղ վիճելի է ցածրավարձ աշխատատեղերի գնահատումը նաև սոցիալ-քաղաքական հեռանկարից: Եթե ոմանք փաստարկում են, թե ամբողջական դրույթային աշխատանքից ստացված եկամուտը պետք է բավարարի գոյության ինքնուրույն ապահովումը երաշխավորելու համար, և աղքատությունը, չնայած ամբողջական դրույթով աշխատանքին, հանդուրժելի չէ, ապա ուրիշները մատնանշում են այն հանգամանքը, թե ցածրավարձ աշխատանքը պարտադիր չէ, որ աղքատության հասցնի: Մասամբ նույնիսկ արտահայտվում է այն կարծիքը, որ ցածրավարձ աշխատողների պարագայում խոսքը գերազանցապես այնպիսի անձանց մասին է, ովքեր «հավելավաստակ» են անում (հմնտ. օր.՝ Բրենթե / Այխորթ, 2007թ.): Երկու տեսակետում էլ միաժամանակ զգացվում է, որ ցածր աշխատավարձերը կանանց պարագայում ինդրահարույց չեն: Օրինակ՝ նաև նվազագույն աշխատավարձերի կողմնակիցների մոտ քաղաքական ուշադրության կենտրոնում ընտանիքի հայրն է, ով, չնայած ամբողջական դրույթին (ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, արտաժամկ աշխատանքին), այնքան քիչ է վաստակում, որ դրանով իր ընտանիքը չի կարող կերակրել: Կանանց պարագայում թվում է, թե այդ հիմնախնդիրը պակաս էական է: Եթե այդքան շատերն են աշխատում ոչ լրիվ դրույթով կամ փոքրածավալ զբաղվածություն ունեն, ապա խոսքը, թերևս շատերն այդպես կմտածեն, այնուամենայնիվ, հավանաբար, գերազանցապես «հավելավաստակողների» մասին է, ովքեր, չնայած ցածր աշխատավարձերին, աղքատության պայմաններում չեն ապրում, որովհետև, կասկածի դեպքում, կա նաև ավելի լավ վաստակող ամուսին կամ կյանքի ընկեր:

Նման խորհրդածություններում ճիշտը միայն այն է, որ ոչ բոլոր ցածրավարձ աշխատողներն են աղքատության մեջ ապրում, որովհետև ընտանեկան տնտեսության համատեքստում մեկից ավելի եկամուտներ են հավաքվում, այնպես որ ընտանիքի եկամուտները, միասին վերցրած, աղքատության շեմից բարձր են: Իրականում աղքատության առանցքային պատճառն առաջին հերթին գործազրկությունն է կամ վաստակային աշխատանք չունենալը և միայն մասնակիորեն՝ ցածր վաստակային եկամուտները: Ամեն դեպքում, ցածր վճարվող հատվածում աշխատող աղքատ մարդկանց բաժինը Գերմանիայում արդեն 1990-ական թվականների վերջերին կազմում էր 41 %, որը բարձր էր ԵՄ միջինից՝ 37 % (Մարլյե / Պոլսթյո, 2000թ.): Եվ կասկածելի է թվում նաև այն ենթադրությունը, թե ցածր աշխատավարձ ստացող կանայք ընտանեկան համատեքստում ապահովված են: Բեքերի կողմից կատարված վերլուծության համաձայն (2006թ., ա), որն իհարկե վերաբերում է ամբողջական դրույքով աշխատողներին, ընտանեկան համատեքստում աղքատության շեմից ներքև ապրող, ցածր աշխատավարձ ստացող կանանց բաժինն ընդամենը աննշան չափով է զիջում (19 %) ցածր աշխատավարձ ունեցող տղամարդկանց բաժնին (22 %): Չուտ ընտանեկան համատեքստը հաշվի առնող դիտարկումն անտեսում է այն հանգամանքը, որ սոցիալական հատուցումների այնպիսի պահանջները, ինչպիսիք են թոշակը կամ գործազրկության նպաստը, կախված են սեփական վաստակով պայմանավորված եկամուտների չափից: Ոչ վերջին հաշվով պետք է հաշվի առնել, որ կյանքի ընկերոջ շնորհիվ ապահովվածությունը պարտադիր չէ, որ տևականորեն կայուն լինի: Գործազրկությունը, իրարից հեռանալը կամ ամուսնալուծությունը կարող են դա արագ և տևականորեն փոխել:

Նվազագույն աշխատավարձն օրենքով ամրագրելու դեմ բազմակիորեն առարկվում է, թե ցածր աշխատավարձերը ցածր արտադրողականության արտահայտություն են, և պետության կողմից աշխատավարձի ցածր սահմաններ դնելը կհանգեցնի զբաղվածության կորուստների: Դրանով էսպես կվատթարանան հատկապես ցածր որակավարում ունեցողների աշխատաշուկայական շաները: Համենայն դեպս, ցածր աշխատավարձ Գերմանիայում ամենևին էլ հիմնականում ցածր որակավորում ունեցողները չեն ստանում: Գերմանիայում ցածրավարձ աշխատողների շուրջ երեք բառորդը մասնագիտական կրթություն ունի կամ նույնիսկ ակադեմիական կրթություն: Եվ զբաղվածության վրա ցածր աշխատավարձերի թողած ազդեցություններն էլ են վիճահարույց: Մեծ Բրիտանիայում 1999 թվականին օրենքով նվազագույն աշխատավարձ սահմանելու ժամանակ աշխատատեղերի զգալի կորուստների երկյուղ կար, բայց այնտեղ փաստորեն զբաղվածության մակարդակն անցած տարիներին կտրուկ աճել է՝ չնայած ցածր աշխատավարձերի զգալի բարձրացմանը (Բոշ / Վայնբուֆ, 2006թ., ա): ԱՄՆ-ում 2006 թվականին 650 տնտեսագետներ (այդ թվում՝ հինգ Նոբելյան մրցանակի դափնե-

կիրներ) պահանջում էին այնտեղի նվազագույն աշխատավարձի զգալի բարձրացում (Տնտեսական բաղաբանկանության ինստիտուտ, 2006թ.):

Գերմանական տնտեսագետների շրջանակներում նման տարբերակված դիրքորոշում դեռևս չի ձևավորվել: Գերմանացի տնտեսագետ-պրոֆեսորների գերակշռող մեծամասնությունն այն կարծիքին է, թե նվազագույն աշխատավարձերն ինքնին բացասականորեն են ազդում զբաղվածության վրա: Այսպես, օրինակ, Եվրոպական տնտեսական հետազոտությունների կենտրոնի (ԵՏՅԿ) նախագահ Վոլֆգանգ Ֆրանցը 2005թ. ապրիլի 12-ի մամլո մի հաղորդագրությունում ասել է. «Մակրոտնտեսական տեսության մեջ ոչ մի հանգամանքի վերաբերյալ այնպիսի միասնականություն գոյություն չունի, ինչպես նվազագույն աշխատավարձերի վնասակար ազդեցությունների վերաբերյալ» (մեջբերումը՝ ըստ Շուլթեն, 2005թ., 190):

Նման ձևով էր փաստարկում Բավարական տնտեսության միավորումը (2006թ., 7) այլ երկրներում օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձերի հետ կապված փորձի առնչությամբ. «Բայց աշխատաշուկայի վրա դրական ազդեցության վերաբերյալ տեղեկություններ չկան:»¹⁷

Բայց իրականում զբաղվածության վրա նվազագույն աշխատավարձերի թողած էֆեկտները տեսականորեն անորոշ են, և առկա ուսումնասիրությունները հանգում են իրարից զգալիորեն տարբերվող արդյունքների (հմնտ. Բոշ / Վայնբուխ, 2006թ., ք): Որպես օրինակ բերենք այստեղ Տնտեսական փորձագետների խորհրդի (Council of Economic Advisers, Ընդհանուր տնտեսական զարգացման փորձագիտական գնահատման գերմանական խորհրդի ամերիկյան նմանակը)՝ 1999 թվականին ԱՄՆ նախագահին ներկայացված տարեկան զեկույցից մի հատված. «Ապացույցների ամբողջությունը մատնանշում է այն հանգամանքը, որ նվազագույն աշխատավարձի համեստ աճը զբաղվածության վրա քիչ ազդեցություն է ունեցել կամ բոլորովին չի ունեցել (մեջբերումը՝ ըստ Շուլթեն, 2005թ., 198):

Եվ Բոֆինգերի վերջին եզրակացություններից մեկում (2006թ.) ևս, մասնավորապես, փաստվում է. «Զանի որ Էմպիրիկ ուսումնասիրությունները երևան չեն բերում միասնական պատկեր, չի կարելի ելնել այն բանից, թե նվազագույն աշխատավարձերն ընդհանրապես վնասակար են զբաղվածությանը: Դա ուժի մեջ է առնվազն այնքան ժամանակ, քանի դեռ դրանց չափը համեստ է ընտրվում:»

17 Այստեղ նաև (սխալաբար) պնդում կա, թե նվազագույն աշխատավարձը Մեծ Բրիտանիայում և Իռլանդիայում վերաբերում է «հենց ոչ ցածր որակավորում ունեցողներին» (Բավարական տնտեսության միավորում, 2006թ., 8): Իրականում Մեծ Բրիտանիայի ձեռնարկություններում աշխատանքի մեջ մտնելու մինչև վեց ամիս տևող փուլերում, որոնց ընթացքում որակավորում է իրականացվում, կարող է վճարվել փոքր-ինչ ավելի ցածր նվազագույն աշխատավարձ (այսպես կոչված, «development rate») (հմնտ. Բոշ / Վայնբուխ, 2006թ., ք, 36 և հետո): Բայց դա ամենևին չի համարվում ցածր որակավորում ունեցողների համար համընդհանրական բացառիկ կարգավորում:

Մեր տեսանկյունից ևս երկու ծանրակշիռ փաստարկ խոսում են Գերմանիայում նվազագույն աշխատավարձի օրենսդրական ներդրման օգտին՝ աշխատավարձային դեմիինգի կանխումը, որը Գերմանիայում ավելի ու ավելի է տարածվում և, դրա հետ սերտորեն կապված, բազային ապահովման շրջանակներում ցածր եկամուտների սուբսիդավորման աճը: Գերմանիայում ցածր աշխատավարձերի տեսակարար կշռի աճը մատնանշում է այն հանգամանքը, որ երկար ժամանակ ճյուղային մակարդակում նվազագույն ստանդարտներ ապահոված սակագնային համաձայնությունների համակարգն այլևս արդյունավետ պաշպանություն չի ապահովում ցածր ու ցածրագույն աշխատավարձերից: Սակագնային պայմանագրերի պարտադրականությունն Արևելյան և Արևմտյան Գերմանիայում հետաճ է ապրում, բայց ևսև սակագնային աշխատավարձերն են մասամբ շատ ցածր (հմնտ. Գերմանական Բուևդեսթագ, 2004թ.):

Մեր հաշվարկներով ամբողջ Դաշնության կտրվածքով շուրջ 5,5 միլիոն աշխատող (2006թ.), այդ թվում՝ շուրջ երկու երրորդը կանայք (Գերմանիայում աշխատանք ունեցող բոլոր կանանց 19,8%-ը), վաստակել են մեկ ժամի համար, առանց պահումների, 7,50 եվրոյից պակաս (դա համապատասխանում է ներկայումս արիմիությունների կողմից օրենսդրական նվազագույն աշխատավարձի պահանջին): Մոտավորապես 1,9 միլիոն զբաղվածներ ստացել են նույնիսկ հինգ եվրոյից պակաս (Կալինա / Վայսբոփֆ, 2008թ.): Գերմանիայում մեկ ժամի համար միջին աշխատավարձում դա կազմում է շուրջ 33%: Համապատասխան զբաղվածները դրանով վաստակում են նույնիսկ ավելի քիչ, քան թույլատրվում է ԱՄՆ-ում, որտեղ (միջազգային համեմատության մեջ արդեն իսկ ավելի շատ խորհրդանշական) պետական նվազագույն աշխատավարձը մոտավորապես նույն մակարդակի վրա է (և, բացի այդ, առաջիկայում զգալիորեն պետք է բարձրացվի):

Եվրամիությունում 27 անդամ-պետություններից 20-ն ունեն օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձ, իսկ մյուս երկրներն ունեն մեխանիզմներ, որոնք ապահովում են ակնհայտորեն ավելի մեծ սակագնային պարտադրականություն, քան Գերմանիայում: Այնպիսի երկրներ, ինչպես Ֆրանսիան, Նիդեռլանդները, Մեծ Բրիտանիան, Բելգիան, Լյուքսեմբուրգը և Իռլանդիան, 2007 թվականի աշնանն ունեին ութ եվրոյից մինչև ինը եվրո նվազագույն աշխատավարձեր:

Նույնիսկ բանվորական ճամբարում, որն ավանդաբար (բացառությամբ շինարարության ոլորտի) մերժում է աշխատավարձերի ձևավորմանը պետական միջամտությունը, այս ընթացքում հնչում են նվազագույն ստանդարտների պահանջներ՝ աճող աշխատավարձային դեմիինգը կանխելու համար: Այստեղ առանձնապես ակտիվ են շենքերի մաքրման և ժամանակավոր աշխատանքի ոլորտների միությունները, այսինքն՝ զբաղվածների մեջ կանանց միանգամայն տարբեր բաժին ունեցող ճյուղեր: Շենքերի մաքրման ոլորտը

վերջերս ներառվել է «Գործառույթի գործուղման մասին» օրենքում, որը կշանակում է, որ սակագնային պայմանագրերն ունեն ընդհանուր պարտադրականություն և գործում են նաև արտասահմանյան առաջարկողների համար: Ժամանակավոր աշխատանքի ոլորտի երեք գործատվական միություններից երկուսը ևս պահանջում են նվազագույն աշխատավարձի համաճյուղային կարգավորումներ՝ աճող աշխատավարձային դեմփինգը կանխելու և ապահովելու համար, որ արտասահմանյան առաջարկողները, որոնք այսուհետև կարող են ուժեղացնել ճնշումը գերմանական շուկայում, «Գործառույթի գործուղման մասին» օրենքի մեջ ներառվելով, պարտադրվեն պահպանել նվազագույն ստանդարտները (ավելի մակրամասն՝ հմնո. Վայսբուխֆ, 2006թ.):

Օրենսդրական նվազագույն աշխատավարձի օգտին մեկ այլ փաստարկ վերաբերում է սոցիալական պետության ֆինանսավորման հիմունքներին: Մինչ այժմ ձեռնարկությունները Գերմանիայում կարող էին վստահ լինել, որ ցածր աշխատավարձերի դեպքում պետությունը կստանձնի անբավարարության երաշխիքը, օրինակ, գործազրկության նպաստ II ստանալու լրացուցիչ իրավունքի միջոցով, եթե ընտանեկան համատեքստում պահանջարկը չի կարող ծածկվել սեփական եկամուտների հաշվին: Աշխատանքի դաշնային գործակալության տվյալներով 2006 թվականին բոլոր աշխատուժային կարիքավորների 20,9 տոկոսը կազմում էին լրացուցիչ բազային ապահովման իրավունք ունեցող զբաղվածները (5,399 միլիոնից՝ 1,117 միլիոնը): Այդ, այսպես կոչված, հավելումատերերի մեծ մասը պարտադիր սոցիալական ապահովագրությամբ զբաղվածներ են (բոլոր օգնության կարիք ունեցողների 11,3 %-ը կամ 601533 մարդ): 440055 մարդ (բոլոր բազային ապահովում ստացողների 8,3 %-ը) ունեցել է նույնիսկ ամբողջական դրույքով աշխատանք: Բազային ապահովման վճարներ ստացող աշխատուժային անձանց մեջ կանանց բաժինը կազմում էր պարտադիր սոցիալական ապահովությամբ զբաղվածների 48,4 %-ը և քիչ զբաղվածների 55,1 %-ը: Բեքերի ուսումնասիրություններից մեկի (2006թ.) համաձայն՝ նույնիսկ զգալիորեն ավելի շատ աշխատող անձինք կարող էին ունենալ պետական հավելավճարների իրավունք, որից սակայն միջև հիմա դեռ չեն օգտվել: Նվազագույն աշխատավարձի օրենսդրական ներդրումը թեև ոչ մի դեպքում ավելորդ չի դարձնի պետության կողմից ցածր եկամուտների սուբսիդավորումը, բանի որ, ցածր ժամավճարներից զատ, դեր են խաղում նաև կարճ աշխատանքային ժամերը և տնային տնտեսության մեծությունը, այդուհանդերձ, անկասկած, զգալիորեն կնվազեցնի նման տեսակ «համակցված աշխատավարձերի» համար ֆինանսական ծախսերը և կկանխի պետության հաշվին աշխատավարձերի նվազեցումները:

Բազային ապահովման վճարներ ստացող, քիչ զբաղվածություն ունեցող անձանց հաճախ մեղադրում են, թե նրանք «օպտիմալացնում» են տրանսֆերտային վճարումների և սեփական վաստակային եկամուտների համակցումը, այսինքն՝ լրացուցիչ վաստակում

են ճիշտ այնքան, որքան թերիաշվեզրվում է («անտեսանելի գլխարկով աշխատողեր», հմմտ. Գրաբովսկի և ուրիշներ, 2006թ.): Բայց այդտեղ հաշվի չի առնվում, որ միևնույն-աշխատանքների աճը պայմանավորված է նաև ձեռնարկություններում անձնակազմային ռազմավարության փոփոխություններով, և չպետք է ընդհանրապես ելնել այն բանից, որ աշխատողները կամավոր են դրան գնում: Շենքերի մաքրման ոլորտում, օրինակ, պարտադիր սոցիալական ապահովագրությամբ մասնակի և ամբողջական զբաղվածության աշխատատեղերն այս ընթացքում վերապահված են առաջին հերթին ղեկավար կադրերին (Քիմինգ և ուրիշներ, 2005թ., Յերլինգ/Վայսբուխ, 2006թ.): Ըստ այդմ էլ նաև կասկածելի է թվում, թե արդյո՞ք դա հնարավոր է փոխել բազային ապահովման վճարումների վրա վաստակային եկամուտների հաշվեզրման փոփոխության միջոցով հոգուտ բարձր վաստակի աշխատանքային հարաբերությունների, ինչպես, օրինակ, առաջարկել են Բոֆինգերը և ուրիշները (2006թ.): Դրանով միանշանակորեն ավելի վատ վիճակում կհայտնվեն ցածր լրացուցիչ վաստակ ունեցող անձինք (հմմտ. Մակրոէկոնոմիկայի և կոնյունկտուրային հետազոտությունների ինստիտուտի և Տնտեսական և սոցիալական գիտությունների ինստիտուտի աշխատանքային հանձնաժողով, Համակցված աշխատավարձ, 2007թ.), այդ թվում՝ անհամեմատ մեծ չափով կտուժեն կանայք:

Ի մի բերելով այս ամենը՝ մեր տեսանկյունից շատ բան խոսում է այն մասին, որ Գերմանիայում անհրաժեշտ են վարձատրության պարտադիր նվազագույն ստանդարտներ: Այս առնչությամբ սկզբունքորեն առկա տարբերակների մեջ կանանց հեռանկարից լավագույն լուծումը կլիներ օրենսդրորեն նվազագույն աշխատավարձի ներդրումը, որովհետև զբաղվածության բոլոր ոլորտների համար կսահմանվեր պարտադիր աշխատավարձային ստորին սահման: Սակագնային նվազագույն աշխատավարձերը դրան ոչ թե այլընտրանք են, այլ, ծայրահեղ դեպքում՝ կողապաշտպանություն, որովհետև ընդհանուր պարտադրականության հայտարարության և «Գործառուների գործուղման մասին» օրենքի մեջ ընդգրկելու համար անհրաժեշտ նախադրյալներն առկա են միայն քիչ ոլորտներում: Կանանց մեծ բաժին ունեցող տիպիկ ցածրավարձ ոլորտներ սակագնային լուծումների ժամանակ հաճախ անտեսվում են:

Անվիճելի է, որ օրենսդրորեն սահմանված նվազագույն աշխատավարձն իրենով մեխանիկորեն չի հանգեցնի կանանց ինքնուրույն գոյատևման ապահովմանը, քանզի դրա համար հաճախ չի բավարարում նաև մեկ ժամի դիմաց 7,50 եվրո աշխատավարձը, մասավանդ որ Գերմանիայում կանանց զգալի մասն աշխատում է ոչ լրիվ դրույթով կամ ունի միևնույն-աշխատանք:

8. ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՄՏԱԾԵԼ

Սոցիալ-դեմոկրատիայի ընթերցագրքերը տալիս են սոցիալ-դեմոկրատիայի հիմնարար հարցերի կողմնացույց և տարբեր քաղաքական ոլորտներում կողմնորոշման կետեր: Բայց դրանք չեն կարող և չեն կամենում առաջադրել մշտապես գործող պատասխաններ: Սոցիալ-դեմոկրատիայի ճանապարհը՝ որպես գաղափար և որպես քաղաքական գործունեություն, շարունակ պետք է ստուգվի, հարմարեցվի և նորովի մտածվի, եթե նրանով հարկ է հաջողությամբ անցնել:

Այս հանրագումարը ևս դա է շարունակում և այդ պատճառով ցանկանում է առաջին հերթին հրավիրել հետագա մտածողության: Խորհելու այն մասին, թե ինչպես կարող է հաջողվել սոցիալ-դեմոկրատիայի տնտեսական քաղաքականությունը, և թե այն ինչ մարտահրավերների առաջ է կանգնած 21-րդ դարում:

Ներկայումս սոցիալ-դեմոկրատիայի տնտեսական քաղաքականության առանցքային մարտահրավերը պետության և շուկայի միջև նոր հասարակական հավասարակշռություն ապահովելն է: Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության Յամբուրգյան ծրագիրն այս առումով տալիս է կարևոր ազդակ:

«Մեզ համար շուկան անհրաժեշտ և տնտեսական համակարգման մյուս ձևերը գերազանցող միջոց է: Բայց ինքնահոսի թողնված շուկան սոցիալապես և բնապահպանորեն կոտր է: Այն իրենից ի վիճակի չէ հանրային բարիքները տրամադրել համարժեք ծավալով: Որպեսզի շուկան կարողանա զարգացնել իր դրական ներգործությունը, նրան անհրաժեշտ են սանկցիայի իրավասություն ունեցող պետություն, գործուն օրենքներ և ազնիվ գնագոյացում:» (Յամբուրգյան ծրագիր, 2007թ., 17)

Նոր մարտահրավերների հանդիման սոցիալ-դեմոկրատիան հարկադրված է լինելու մշտապես կատարելագործվել: Գիտակցելով իր հիմունքները և ունենալով հստակ հայացք իրականության համար՝ նա այդ բանը նաև կկարողանա:

Դա վերաբերում է նաև սոցիալ-դեմոկրատիայի տնտեսական քաղաքականությանը: Այս հատորը նպատակ ունի հստակեցնելու, որ սոցիալ-դեմոկրատիայի հիմնարար արժեքներից, որոնք կոնկրետացված են Միավորված զգերի կազմակերպության հիմնարար իրավունքների դաշնագրերում, ստացվում է սոցիալ-դեմոկրատիայի պարզորոշ տնտեսաքաղաքական պրոֆիլ: Աճի, սոցիալական համահարթեցման և կայունության սկզբունքներով ժամանակակից, արժեքային կողմնորոշվածություն ունեցող տնտեսական քաղաքականության կողմնացույց:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Յոզեֆ Աբերնան (2008թ.), *Finanzkrise: Ackermann fordert mehr Regulierung*, ըստ՝ 2008թ. մարտի 18-ի manager-magazin online

Զենիֆեր Ամիբա (2004թ.), *Financial Crisis: Institutional Rigidity and Reluctant Change*, Փրինսթոն

Մասահիրո Աուի և Գերի Ռ. Սաքսընիաուզ (2000թ.), *Finance Governance and Competitiveness in Japan*, Օքսֆորդ

Էռնսթ Բայեր և Ուրիշտեր (2002թ.), *Lebens- und Arbeitsbedingungen des Industrieproletariats*, Դուիսբուրգ

Իրենե Բեբեր (2006թ. ա), *Mindestlöhne – ein Instrument (auch) zur Förderung der Gender-Gerechtigkeit?*, ըստ՝ Գաբրիելե Շուրթե, Թորսթեն Շուլցեն, Յոզեֆ Վիրենսթե (իրատ.), *Mindestlöhne gegen Sozialdumping. Rahmenbedingungen – Erfahrungen – Strategien*, Զալբուրգ, էջ 61–79

Իրենե Բեբեր (20006թ. ք), *Armut in Deutschland: Bevölkerungsgruppen unterhalb der ALG-II-Grenze*, Յոհան Վոլֆգանգ Գյոթեի անվան համալսարան, «Սոցիալական արդարություն» նախագծի աշխատանքային նյութեր, N 3, Մայիսի Ֆրանկֆուրտ

Փեթեր Բոֆինգեր (2007թ.), *Grundzüge der Volkswirtschaftslehre*, 2-րդ հրատ., Մյունխեն
Փեթեր Բոֆինգեր, Մարթին Դիթթ, Սաշա Գեյներ, Ուլրիխ Վալվայ (2006թ.), *Vorrang für das reguläre Arbeitsverhältnis: ein Konzept für die Existenz sichere Beschäftigung im Niedriglohnbereich*. Փորձագիտական եզրակացություն Սաքսոնիայի Էկոնոմիկայի և աշխատանքի նախարարության համար (SWMA), Զրատարականության վայրը չի նշված

Գերհարդ Բոշ և Թորսթեն Կալինա (2007թ.), *Niedriglohnbeschäftigung in Deutschland*, ըստ՝ Գերհարդ Բոշ, Բլաուդիա Վայսբրուխ (իրատ.), *Arbeit für wenig Geld: Niedriglohnbeschäftigung in Deutschland*, Մայիսի Ֆրանկֆուրտ, էջ 20–105

Գերհարդ Բոշ և Բլաուդիա Վայսբրուխ (2006թ., ա), *Mindestlöhne in Großbritannien – ein geglücktes Realexperiment*, ըստ՝ Տևտեսական և սոցիալական գիտությունների ինստիտուտի տեղեկագիր, 3, էջ 125–130.

Գերհարդ Բոշ և Բլաուդիա Վայսբրուխ (Թորսթեն Կալինայի մասնակցությամբ) (2006թ., ք), *Gesetzliche Mindestlöhne auch in Deutschland?*, Փորձագիտական եզրակացություն Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի պատվերով, Աշխատանքի և որակավորման նվիրված բնագիտությունների խմբակ, Բոնն

Կարլ Բոնեթ և Վերներ Այխորսթ (2007թ.), *Mindestlohn für Deutschland nicht sinnvoll*, ըստ՝ Գերմանիայի տնտեսական հետազոտությունների ինստիտուտ, շաբաթագրություն, 9, էջ 121–131

Աշխատանքի դաշնային գործակալություն (2006թ.), *Beschäftigung von erwerbsfähigen Hilfebedürftigen*, հոկտեմբեր 2006թ., Նյուրնբերգ

90-ի դաշինք / Կանալներ (2002թ.), *Die Zukunft ist Grün*, 90-ի ԴԱՇԻՆՔ / ԿԱՆԱԳՆԵՐ կուսակցության հիմնադրության օրագիր, ընդունվել է Դաշնային պատվիրակների համաժողովում, 15–17 մարտի 2002թ., Բեռլին

Յան Մարթին Բրդի և Թոմաս Շնիդթ (1996թ.), *Das Bankenkartell: die Verflechtung von Geld, Macht und Politik*, Մյունխեն

ԲՐՄ (2007թ.), *Freiheit und Sicherheit. Grundsätze für Deutschland*, ԲՐՄ-ի հիմնադրության օրագիր, ընդունվել է կուսակցության 21-րդ համագումարում, 3-4 դեկտեմբերի 2007թ., Զալտլեյտ

Յանսգեորգ Զոնեթթ (2002թ.), *Vom Handelskapital zur Globalisierung. Entwicklung und Kritik der kapitalistischen Ökonomie*, 2-րդ վերանայված հրատ., Մյունսթեր

Յերման Դեյլի և Ջոն Գոբբ (1989թ.), *For the Common Good*, Բուստոն

Սիլվաե Դաուդերշտեթ (2007թ.), *Aufschwung 2007: die Verantwortung der Lohnpolitik, WISO-direkt, Analysen zur Wirtschafts- und Sozialpolitik*, Բոնն

Յեյմուք Դեմե (1998թ.), *Arbeitsmarkt und Beschäftigung*, ըստ՝ Գերմանիայի ճապոնական հետազոտությունների ինստիտուտ (իրատ.), *Die Wirtschaft Japans. Strukturen zwischen Kontinuität und Wandel*, Բեռլին, էջ 135–164.

Գերմանական Բունդեսթագ (1998թ.), *Abschlussbericht der Enquete-Kommission «Schutz des Menschen und der Umwelt – Ziele und Rahmenbedingungen einer nachhaltig zukunftsverträglichen Entwicklung»*, Գերմանական Բունդեսթագ, տպագիր տարբերակ 13/1 2000, 26 հունիսի 1998թ., Բեռլին

Գերմանական Բունդեսթագ (2004թ.), *Wandel der Arbeitswelt und Modernisierung des Arbeitsrechts*, Գերմանական Բունդեսթագ, տպագիր տարբերակ 15/2932, Բեռլին

«Ձախ» կուսակցություն (2007թ.), Երագրային հիմնականներ. «Ձախ» կուսակցության օրագրային հիմնադիր փաստաթուղթ, ընդունվել է «Աշխատանք և սոցիալական արդարություն - Հետարական այլընտրանք» կուսակցության և ժողովրդավարական սոցիալիզմի ձախ կուսակցության 2007թ. մայիսի 24-ին և 25-ին Դորթմունդում կայացած համագումարների կողմից

Դանիել Դիրթս և Չիլկե-Սուզան Օթթոն (1998թ.), *Das „japanische Unternehmen“*, ըստ՝ Գերմանիայի ճապոնական հետազոտությունների ինստիտուտ (իրատ.), *Die Wirtschaft Japans. Strukturen zwischen Kontinuität und Wandel*, Բեռլին, էջ 211–244

Ռոնալդ Դոդ (2000թ.), *Stock Market Capitalism: Welfare Capitalism: Japan and Germany versus the Anglo-Saxons*, Օքսֆորդ

Ռոնալդ Դոդ, Ուիլյամ Լեգոնիք, Մերի Օ՝Սուլլիվան (1999թ.), *Varieties of Capitalism in the Twentieth Century*, ըստ՝ *Oxford Review of Economic Policy*, հուն. 15, էջ 102–120
Տևտեսական բաղաբաղաբանության ինստիտուտ (2006թ.), *EPI on the Minimum Wage*, *EPI News*, 27 հոկտեմբերի, 2006թ., Վաշինգտոն

Երիսթֆ Էգլե (2006թ.), *Deutschland: der blockierte Musterknebe*, ըստ՝ Թոմաս Մայեր (իրատ.), *Praxis der Sozialen Demokratie*, Վիսբադեն, էջ 273–326

Վերներ Այխորսթ, Յերման Գարթներ, Գերհարդ Զրուգ, Թոմաս Ռայն, Էբերհարդ Վիրենս (2005թ.), *Niedriglohnbeschäftigung in Deutschland und im internationalen Vergleich*, ըստ՝ Յոթթեա Ալլմենդիգեր, Վերներ Այխորսթ, Ուլրիխ Վալվայ (իրատ.), *IAB Handbuch Arbeitsmarkt. Analysen, Daten, Fakten*, Նյուրնբերգ, էջ 107–142.

Ֆրիդրիխ Էնգելս (1988թ.), *Herm Eugen Dührings Umwälzung der Wissenschaft (Anti-Dühring)*, Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Էնգելսի երկերի լիակատար ժողովածու (MEGA), հուն. 27, Բեռլին

Լրացուցիչ ընթերցանության համար.

Սոցիալ-դեմոկրատիայի ակադեմիայի համացանցային կայքում բերվում է լրացուցիչ գրականության մեկնաբանված ընտրանի.

www.fes-soziale-demokratie.de/materialien

Արդիական տնտեսաբաղաբանական ուսումնասիրություններ և վերլուծություններ են արծարծում Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի Տևտեսական և սոցիալական բաղաբաղաբանության բաժնի հրատարակած Նյու-թերը:

www.fes.de/wiso

Լրացուցիչ ընթերցանության համար.



Սոցիալ-դեմոկրատիայի պոփուլարիզմի և արմատների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ, տեքստեր և կոլոկեր բերվում են Ֆրիդրիխ էբերտ հիմնադրամի առցանց ակադեմիայի «Սոցիալ-դեմոկրատիա» մոդուլում.
▶ www.fes-online-akademie.de

Տնտեսության բոլոր կարևոր հարցերի վերաբերյալ ներածություն և տնտեսական նորությունների տրված են Ֆոլքեր Յակիբի, Գուլթալ Չոբնի և Կիմ Օթթոյի «Տնտեսական հանրագիտարան. հասկացություններ, թվեր, անալիզություններ»-ում (տե՛ս էջ 18):

Եվրոստատ, Եվրահանձնաժողովի վիճակագրական տվյալների շտեմարան, http://epp.eurostat.ec.europa.eu/portal/page/portal/statistics/search_database

ԼՂԿ (1997թ.), Վիքարդենյան հիմնադրույթներ. *Für die liberale Bürgergesellschaft*, ընդունվել է Լ.Դ.Կ. 1997թ. մայիսի 24-ին Վիքարդենում կայացած համադաշնային համագումարում Միլթոն Ֆրիդմեն (1973թ.), *Capitalism and Freedom*, Չիկագո Թոմաս Լ. Ֆրիդմեն (2005թ.), *The World Is Flat: A Brief History of the Twenty-First Century*, Լյու Յոթթե Ֆրիդրիխ Ֆյուրսթենբերգ (2000թ. [1958թ.]), *Der Betriebsrat als Grenzinstitution*, ըստ՝ Ֆրիդրիխ Ֆյուրսթենբերգ (իրատ.), *Arbeitsbeziehungen im gesellschaftlichen Wandel*, Մյունխեն / Մերինգ

Չիգմար Գաբրիել (2008թ.), *Links neu denken. Politik für die Mehrheit*, Մյունխեն

Ուլկյամ Ա. Գելբաուն (2008թ.), *How Big Government Got Its Groove Back*, ըստ՝ *American Prospect*, հուն. 19, թիվ. 6, Վաշինգտոն, էջ 23–26

Յայնե Գերսթենբերգեր (2006թ.), *Die subjektlose Gewalt. Theorie der Entstehung bürgerlicher Staatsgewalt*, 2-րդ հրատ., Մյունսթեր

Ռոբերտ Ջիլկին (2001թ.), *Global Political Economy: Understanding the International Economy Order*, Փոլիսթոն / Օքսֆորդ

Յան Գյոբել, Փեթեր Բրաուդե, Յուլգեն Շուլ (2005թ.), *Mehr Armut durch steigende Arbeitslosigkeit*, ըստ՝ Գերմանիայի տնտեսական հետազոտությունների ինստիտուտ, շաբաթագրություն 10, էջ 725–730

Ֆարիան Գրաբովսկի, Ալենթաանդեր Նոթթախեր, Միխայել Չաուգա (2006թ.), *Die große Flut. Dank Hartz-Reformen haben Hunderttausende Niedrigverdiener neuerdings Anspruch auf staatliche Hilfe – darunter auch viele Selbstständige*, ըստ՝ Շպիգել, 19, էջ 66–68.

Ռենե Յապ (իրատ.) (2006թ.), *The Changing Structure of Labour in Japan*, Լոնդոն

Փիթեր Ա. Յոլլ և Դեյվիդ Սուսկի (իրատ.) (2001թ.), *Varieties of Capitalism. The Institutional Foundations of Comparative Advantage*, Լյու Յոթթե / Օքսֆորդ

Յամբուրգյան ծրագիր (2007թ.), Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության հիմնադրութային ծրագիր, ընդունվել է 2007թ. հոկտեմբերի 28-ին կայացած ՄԴԿ Յամբուրգյան համադաշնային համագումարում

Ֆոլքեր Յակիբե, Գուլթալ Չոբնի, Կիմ Օթթո (2009թ.), *Das Wirtschaftslexikon. Begriffe. Zahlen. Zusammenhänge*, J.H.W. Dietz Nachf. հրատարակչություն, Բոնն (ույս է տեսել 2009թ. գարնանը)

Ալենթաանդեր (2006թ.), *Die Schwächen des deutschen Kapitalismus*, ըստ՝ Ֆոլքեր Բերգման, Չիգուրդե Վիլթս (իրատ.), *Gibt es einen deutschen Kapitalismus? Die soziale Marktwirtschaft im Weltsystem*, Մայնի Ֆրանկֆուրտ, էջ 200–214

Ֆոլքեր Յուլ.Ֆ (իրատ.) (1987թ.), *Unsere gemeinsame Zukunft: der Brundtland-Bericht der Weltkommission für Umwelt und Entwicklung*, Գրեվեն

Գուստավ Վ. Յայնեման (1972թ.), Որդունի խոսք IG-Metall արհիվության համագումարում „*Qualität des Lebens*“, 11 ապրիլի 1972թ., Օրեթիսուգեն, ըստ՝ IG Metall (իրատ.), *Aufgabe Zukunft*, հուն. 1. *Qualität des Lebens. Beiträge zur vierten internationalen Arbeitstagung der Industriegewerkschaft Metall für die Bundesrepublik Deutschland*, 11. bis 14. April 1972 in Oberhausen, Մայնի Ֆրանկֆուրտ, էջ 14–17

Միխայել Յայնրիխ (2004թ.), *Kritik der politischen Ökonomie. Eine Einführung*, 1-ին հրատ., Շտուտգարթ.

Բեթթիևա Յիմինգ, Կարեն Յերինգ, Թորսթեն Կալիևա, Ալիս Վանսելտու, Զլաուդիա Վայնբուխ (2005թ.), *Stellenbesetzung im Bereich „einfacher“ Dienstleistungen. Abschlussbericht einer Studie im Auftrag des Bundesministeriums für Wirtschaft und Arbeit*, N. 550, Բեռլին

Լյու Յիլեն (2006թ.), *USA: Residual Welfare Society and Libertarian Democracy*, ըստ՝ Թոմաս Սայեր (իրատ.), *Praxis der Sozialen Demokratie*, Վիքարդեն, էջ 327–373

Գուստավ Չոբնի (2005թ.), *Die deutsche Krankheit: Sparwut und Sozialabbau*, Մյունխեն

Մակրոէկոնոմիայի և կոնյունկտուրային հետազոտությունների ինստիտուտի և Տնտեսական և սոցիալական գիտությունների ինստիտուտի աշխատակազմի հանձնաժողով, *Համակարգված աշխատավայր (2007թ.)*, *Was tun im Niedriglohnbereich? Eine kritische Auseinandersetzung mit einem neueren Kombilohnkonzept*, IMK-Report, N18, Դյուսելդորֆ

Թորսթեն Կալիևա և Զլաուդիա Վայնբուխ (2008թ.), *Neue Berechnung des IQ zu Niedriglöhnen in Deutschland. 2006 arbeiteten 5,5 Millionen Beschäftigte für Bruttostundenlöhne unter 7,50 €*, ձեռագիր, Գելբենբիլդեն

Փաուլ Էնֆենսիյորսթեր, Վերներ Փաշա, Կարեն Շիթ (2003թ.), *Japan: Wirtschaft – Gesellschaft – Politik*, Վիքարդեն

Ջոն Մեյնարդ Էյլս (1966թ.), *Allgemeine Theorie der Beschäftigung, des Zinses und des Geldes*, Մյունխեն / Լայպցիգ

Ջեյմս Ռ. Լինբուլ և Միխայել Լ. Գերլախ (2004թ.), *Japan's Network Economy: Structure, Persistence, and Change*, Էնթերիջ

Էրիկ Մարյե և Սոֆի Դոնթոյ (2000թ.), *Low-Wage Employees in EU Countries*, *European Commission, Statistical Office: Statistics in Focus/Population and Social Conditions*, 11/2000թ., Լյուբեքսբուրգ

Կարլ Մարքս (1991թ.), *Kritik der politischen Ökonomie*, Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Էնգելսի երկերի լիակատար ժողովածու (MEGA), հուն. 10, Բեռլին

Կարլ Մարքս և Ֆրիդրիխ Էնգելս (1987թ.), *Manifest der Kommunistischen Partei*, Բեռլին (Արևմտյան)

Դոնեյա Միդդոլ և ուրիշներ (1972թ.), *Die Grenzen des Wachstums – Berichte des Club of Rome zur Lage der Menschheit*, Մյունխեն

Վոլֆգանգ Մերկել և ուրիշներ (2003թ.), *Defekte Demokratie*, հուն. 1. Տեսություն, Օփիլադեն

Թոմաս Սայեր (2006թ.), *Praxis der Sozialen Demokratie*, 1. հրատ., Վիքարդեն

Թոմաս Սայեր (2005թ. ա), *Theorie der Sozialen Demokratie*, 1. հրատ., Վիքարդեն

Թոմաս Սայեր և Նիկոլ Բայեր (գործակցել է) (2005թ., ք), *Die Zukunft der Sozialen Demokratie*, Բոնն

Ալֆրեդ Մյուլլեր-Լինդե (1947թ.), *Wirtschaftslenkung und Marktwirtschaft*, Յամբուրգ

Յոախիմ Մյունի և Միկիկո Էսվայն (1998թ.), *Bildung, Öffentlichkeit und Arbeit in Japan. Mythos und Wirklichkeit*, Բեռլին

Վերներ Փաշա (իրատ.) (2004թ.), *Systemic Change in the Japanese and German Economies. Convergence and Differentiation as a Dual Challenge*, Լոնդոն / Լյու Յոթթե

1. Իրավահավասարություն (Էջ 78)
2. Գլոբալիզացիա (Էջ 51)
3. Հիմնարար իրավունքներ (Էջ 59)
4. Հիմնարար արժեքներ (Էջ 56)
5. Լավ աշխատանք (Էջ 145)
6. Կապիտալիզմ (Էջ 17)
7. Շուկայական տնտեսություն (Էջ 42)
8. Նվազագույն աշխատավարձ (Էջ 153)
9. Մասնակցականություն (Էջ 39)
10. Կայունություն (Էջ 70)
11. Սոցիալական համահարթեցում (Էջ 68)
12. Աճ (Էջ 66)

Մաթիաս Փլացեթ, Փիլիբ Շտայնբրյուք, Ֆրանկ-Վալթեր Շտայնսլայեր (2007թ.), *Auf der Höhe der Zeit*, Բեռլին

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (OECD), *Stat Extracts*, <http://stats.oecd.org>

Հանս Յ. Փոլզրայթ և Գ. Գյունթեր Ֆոս (2003թ.), *Arbeitskraftunternehmer: Erwerbsorientierung in entgrenzten Arbeitsformen*, Բեռլին

Ռոբերթ Ռայն (2008թ.), *Superkapitalismus. Wie die Wirtschaft unsere Demokratie untergräbt*, Մայնի Ֆրանկ-ֆուրտ / Նյու Յորք

Թոմաս Ռայն, Հերման Գարթներ, Գերհարդ Զրոգ (2005թ.), *Niedriglohnsektor: Aufstiegschancen für Geringverdiener verschlechtert. IAB-Kurzbericht vom 10. März 2005*, Նյուրնբերգ

Յորգ Ռյոստել (2005թ.), *The Semantic of Social Structure: An International Comparison*, Զյլլ

Դենի Ռոդրիկ (1997թ.), *Has Globalization Gone Too Far?*, Վաշինգտոն

Փորձագիտական խորհուրդ (2005թ.), *Die Chance nutzen – Reformen mutig voranbringen, Sachverständigenrat zur Begutachtung der gesamtwirtschaftlichen Entwicklung*, Տարեկան փորձագիտական եզրակացություն 2005/06թթ., Վիսբադեն

Փորձագիտական խորհուրդ (2006թ.), *Widerstreitende Interessen, ungenutzte Chancen, Sachverständigenrat zur Begutachtung der gesamtwirtschaftlichen Entwicklung*, Տարեկան փորձագիտական եզրակացություն 2006/07թթ., Վիսբադեն

Զլաուս Շեֆեր (2003թ.), *Effektiv gezahlte Niedriglöhne in Deutschland*, ըստ՝ Տնտեսական և սոցիալական գիտությունների ինստիտուտի տեղեկագիր, 56, էջ 420– 428

Ֆրից Վ. Շարիֆ (1987թ.), *Sozialdemokratische Krisenpolitik in Europa*, Մայնի Ֆրանկֆուրտ / Նյու Յորք

Մանֆրեդ Գ. Շվիդթ (2000թ.), *Immer noch auf dem mittleren Weg? Deutschlands politische Ökonomie am Ende des 20. Jahrhunderts*, ըստ՝ Ռուսելդ Չարլս, Հելմուդ Վոլման (իրատ.), *Von der Bonner zur Berliner Republik*, Վիսբադեն, էջ 491– 513

Թոմաս Շուլցեն (2005թ.), *Gesetzliche Mindestlöhne in Europa. Institutionelle Regelungen und ökonomische Konsequenzen*, ըստ՝ Էբհարդ Հայն (իրատ.), *Löhne, Beschäftigung, Verteilung und Wachstum*, Մարբուրգ, էջ 185– 208

Յոզեֆ Ա. Շումպերթեր (1950թ.), *Kapitalismus, Sozialismus und Demokratie*, Մյունխեն

Ամբոթյա Սեն (1999թ.), *Development as Freedom*, Նյու Յորք

Հանս-Վերներ Չին (1986թ.), *Risiko als Produktionsfaktor*, ըստ՝ Ազգային էկոնոմիկայի և վիճակագրության տարեգիրք, Մյունխեն, էջ 557– 571

Ադամ Սմիթ (1974թ.), *Der Wohlstand der Nationen. Eine Untersuchung seiner Natur und seiner Ursachen*, Մյունխեն

Ռոբերթ Սոլոու և Չարլզ Վիլիզո (2007թ.), ըստ՝ Ռոնալդ Եթթաթե, Յոնես Լանգբաու (իրատ.), *Aufschwung für Deutschland. Plädoyer international renommierter Ökonomen für eine neue Wirtschaftspolitik*, Բոնն, էջ 35– 47

Ջոզեֆ Յու. Ստիգլից (2002թ.), *Die Schatten der Globalisierung*, Բեռլին

Վոլֆգանգ Շարեթ (1995թ.), *German Capitalism. Does it exist?, Can it survive?*, Զյլլ

Վոլֆգանգ Շարեթ և Կոզո Յամամուրա (իրատ.) (2003թ.), *The End of Diversity? Prospects for German and Japanese Capitalism*, Իթաթա, Նյու Յորք

Սիմոն Ֆաուբ (2007թ.), *Hoffnung wagen*, «Berliner Republik» հանդես 3/2007թ., Բեռլին, էջ 78– 83

Սիմոն Ֆաուբ (2008թ.), *Amerikas Hoffnung*, «Berliner Republik» հանդես 1/2008թ., Բեռլին, էջ 79– 81

Բավարական տնտեսության միավորում (2006թ.), *Mindestlöhne – Gefahr für den Arbeitsmarkt. Argumentation. Die Stimme der Wirtschaft vom 14.3.2006*, Մյունխեն

Գերթ Գ. Վազներ և Վոլֆգանգ Վիգարդ (2002թ.), *Volkswirtschaftliche Forschung und Politikberatung*, ըստ՝ Իրենե Բեթեր և ուրիշներ (իրատ.), *Soziale Sicherung in einer dynamischen Gesellschaft*, Մայնի Ֆրանկֆուրտ, էջ 770– 788

Զլաուս Փեթեր Վայներթ (2008թ.), *Auf lange Sicht sind wir alle tot. Die Wirtschaftsprognosen des John Maynard Keynes*, Գերմանական ռադիո. մշակույթ, ռադիոֆեյետոն, օրացուցաբերթ, 2008թ. հունիսի 5-ի հաղորդում, URL: (վերջին անգամ նայվել է 2009թ. հունվարի 8-ին)

Զլաուդիա Վայնթոֆ (2006թ.), *Mindestbedingungen für die Zeitarbeitsbranche? Expertise im Auftrag des Interessenverbandes Deutscher Zeitarbeitsunternehmen (IGZ). Institut Arbeit und Technik*, Գելզենբերխեն

Էռնսթ Ուլրիխ ֆոն Վայցգեթեր (2006թ.), *Grenzen der Privatisierung*, Շտուտգարթ

Ստյուարդ Վուդ (2001թ.), *Business, Government, and Patterns of Labour Market Policy in Britain and the Federal Republic of Germany*, ըստ՝ Փիթեր Ա. Հոլլ, Դեյվիդ Սուսկի (իրատ.), *Varieties of Capitalism. The Institutional Foundations of Comparative Advantage*, Նյու Յորք / Օքսֆորդ, էջ 247– 274

Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի նյութապահանակ. Ֆինանսական շուկայի ճգնաժամ

Ֆինանսական շուկաների ճգնաժամի վերաբերյալ Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի բոլոր վերլուծությունների, եզրակացությունների և միջոցառումների ամփոփագիր՝ www.fes.de/inhalt/in_finanzkrise.htm

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Տեղեկատվալից գիրք է: Ընթերցագիրք 2-ն արժե ընթերցել: Այն չի պատրաստվել հատուկ այդ նպատակով, սակայն ճշգրտորեն համապատասխանում է մոլատարած ֆինանսական կապիտալիզմի այս ժամանակներին: Արժեքների կողմնորոշված տնտեսական քաղաքականությունն է գրքի թեման ու հավակնությունը: Այն անդրադառնում է մի քաղաքականության (սոցիալ-դեմոկրատիայի), որտեղ կենտրոնում մարդն է, և որը դրանով բոլորի համար բարձր մակարդակում բարեկեցությունը դարձնում է նպատակ, հասանելի և հենց՝ տևական, – տնտեսապես՝ արդյունավետ, բնապահպանորեն խելացի, սոցիալապես՝ կայուն ու արդար: Դեպի առաջ ճանապարհի կողմնացույց»:
Ֆրանց Մյունթեֆերինգ, ՍԴԿ նախագահ մինչև 2009թ.

«Սոցիալ-դեմոկրատիայի ընթերցագրքերը բարդ հանգամանքներին արագ և ըմբռնելի ձևակերպում են տալիս: Ով, ինչ, ինչպես և, առաջին հերթին, ինչ հիմքով. ասկոսի համապատկեր, որը խառնաշփոթ քաղաքական առօրյայում ոսկի արծե»:
Դիաննե Զյոսթեր, արհմիութենական պատասխանատու քարտուղար

«Տնտեսությունը և սոցիալ-դեմոկրատիան» ընթերցագիրքը հետաքրքիր և մանրամասն ծանոթություն է տալիս տնտեսական գործընթացների և սոցիալ-դեմոկրատիայի առնչությունների վերաբերյալ: Հենց ֆինանսական ճգնաժամի առումով անհրաժեշտ է իմանալ տարբեր տնտեսական համակարգերն ու տնտեսակարգերը և, առաջին հերթին, քաղաքական կուսակցությունների տնտեսական հիմնադրույթները, ինչպես նաև ծրագրերը»:
Թորսթեն Շեֆեր-Գյումբել, Հեսսենի երկրամասի ՍԴԿ նախագահ և Հեսսենի Լանդ-թագում ՍԴԿ խմբակցության ղեկավար

«Մեծ ճգնաժամի շրջանում ամեն բան այլ է: Կապիտալիզմի կառավարման ու համակարգման համար տեսություններն ու գործիքները երկրորդ ծաղկում են ապրում: Սոցիալ-դեմոկրատիան հաղորդում է մի տեսլական, որն իր դրոշմն է դնում նաև տնտեսաքաղաքական կողմնորոշման վրա: Տնտեսական ու քաղաքական գործունեության համար աճում է հիմնարար արժեքների և հիմնարար իրավունքների գնահատանքը: Ով կամենում է հասկանալ այդ բեկումնային գործընթացները և մասնակցել դրանց ձևավորմանը, նրան՝ 'Տնտեսությունը և սոցիալ-դեմոկրատիան' ընթերցագիրքը լուրջ օժանդակություն է առաջարկում: Այն տալիս է գործնական օրինակներ և տեսական հիմունքներ սեփական կողմնորոշման ձևավորման համար: Այն դրդում է խորհելու և գործելու: Տնտեսությունը ոչ մի բնության օրենքի չի հետևում, այլ քաղաքականություն է և կերտվում է մարդկանց կողմից»:
Ուլլա Շմիդթ, Առողջապահության դաշնային նախարար

«Տնտեսությունը և սոցիալ-դեմոկրատիան» ընթերցագիրքը շատ հաջողված օժանդակություն է այն մարդկանց համար, ովքեր խորհում են այն հարցի շուրջ, թե՛ տնտեսական կյանքում, աշխատանքում կամ որպես սպառող իրենց ապրածն արդյոք համապատասխանում է այն բանին, ինչ շիմսական օրենքն է հասկանում՝ սոցիալական պետության պահանջի՝ ներքո»:

Յոզեֆ Ֆոգթ, ՍԴԿ, IG-Metall արհմիության և Աշխատավորների բարեգործական կազմակերպության երկարամյա անդամ

«Յենց ֆինանսական ճգնաժամի շրջանում Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի՝ Տնտեսությունը և սոցիալ-դեմոկրատիան՝ հատորն առանցքային բառերի անհրաժեշտ շտեմարան է: Հեղինակները հակիրճ և հասկանալի կերպով վերլուծում են առանցքային տնտեսական ուսմունքները, քննախոսում են գործնական օրինակներով և հարց տալիս, թե սոցիալ-դեմոկրատիայի ժամանակակից տնտեսական քաղաքականությունն ինչպիսին պետք է լինի: Այդ կերպ ընթերցագիրքը դառնում է քաղաքական կրթության տարրական գործիք: Զանգի քաղաքականությունը կերտելն ու մասնակցականությունը սոցիալ-դեմոկրատիայի շարժիչն են»:

դ-ր Փեթեր Շուրոբ, Բունդեսբանում ՍԴԿ խմբակցության ղեկավար մինչև 2009թ.

Մենք ցանկանում ենք ձեզ հրավիրել մասնակցելու սոցիալ-դեմոկրատիայի շուրջ բանավեճի: Դրա համար Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի Սոցիալ-դեմոկրատիայի ակադեմիան առաջարկում է գործունեության լայն ասպարեզ: Ութ սեմինարային մոդուլներ արժարժում են սոցիալ-դեմոկրատիայի հիմնարար արժեքները և գործնական ոլորտները.

Սոցիալ-դեմոկրատիայի հիմքերը

Տնտեսությունը և սոցիալ-դեմոկրատիան

Սոցիալական պետությունը և սոցիալ-դեմոկրատիան

Գլոբալիզացիան և սոցիալ-դեմոկրատիան

Եվրոպան և սոցիալ-դեմոկրատիան

Ինտեգրացիան, ներգաղթը և սոցիալ-դեմոկրատիան

Պետությունը, քաղաքացիական հասարակությունը և սոցիալ-դեմոկրատիան

Խաղաղությունը և սոցիալ-դեմոկրատիան

ՅԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Յոխեն Դահմը (* 1981թ.) Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի Քաղաքական ակադեմիայի ռեֆերենտ է: Մյունսթերում և Մալագայում ուսանել է քաղաքագիտություն, հաղորդակցության տեսություն և հանրային իրավունք:

Դ-ր Միխաել Դաուդերշտեդը (* 1947թ.) 1980 թվականից աշխատում է Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի համար: 2006 թվականից ղեկավարում է Տնտեսական և սոցիալական քաղաքականության բաժինը, մինչ այդ, ի թիվս այլոց, Միջազգային քաղաքականության վերլուծությունները: Ուսանել է մաթեմատիկա, տնտեսագիտություն և զարգացման քաղաքականություն Ախենսում, Փարիզում և Բեռլինում:

Փեթեր Ֆրանցը (* 1953թ.) 1988 թվականից աշխատում է Շրջակա միջավայրի, բնության պահպանության և ռեսուրսների անվտանգության դաշնային նախարարությունում: Բեռլինյան գրասենյակում 1999 թվականից ղեկավարում է «Շրջակա միջավայր և տնտեսություն, նորարարություն և զբաղվածություն, շրջակա միջավայրի աուդիտ» բաժինը: Ուսանել է քաղտնտեսություն և վարչական գործ:

Թոբիաս Գոմբերթը (* 1975թ.) աշխատում է ձեռնարկութենային խորհուրդների անդամների համար սեմինարիների կազմակերպման բաժնում: Միաժամանակ աշխատում է նաև հաղորդակցության տեսության և տեսական սեմինարների ու քննարկումների դասընթացավար: 2003-2005թթ. եղել է ՄԴԿ երիտասարդական թևի դաշնային նախագահի տեղակալ, 2005-2007թթ.՝ երիտասարդ սոցիալիստների դաշնային խորհրդի անդամ: Այդ ընթացքում մասնակցել է երիտասարդ սոցիալիստների միութենային դպրոցի ստեղծմանը: 2007 թվականից համարվում է Սոցիալ-դեմոկրատիայի ակադեմիայի դասընթացավար: Նա «Սոցիալ-դեմոկրատիայի հիմքերը» հատորի հիմնական հեղինակն է: Մինչայժմյան գիտական աշխատանքները նվիրված են Ժան-Ժակ Ռուսոյին, մարքսիստական տեսությանը և բարոյագիտությանը:

Դ-ր Էրիկ Գուրգադիսը (* 1944թ.) 1993 թվականից ղեկավարում է Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի Մեքլենբուրգ-Առաջավոր Պոմերանիայի երկրամասային գրասենյակը: Ուսանել է տնտեսագիտություն և սոցիոլոգիա: Դրանից հետո դասավանդել է տնտեսագիտություն Բերգնոյշտադթի և Արենսբուրգի ժողովրդական համալսարաններում, ինչպես նաև Յամբուրգի Էկոնոմիկայի և քաղաքականության բարձրագույն դպրոցում:

Դ-ր Զրիսթիան Զրելլ (* 1977թ.) Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի աշխատակից է և Սոցիալ-դեմոկրատիայի ակադեմիայի պատասխանատուն: Ուսանել է քաղաքագիտություն, պատմություն, տնտեսագիտություն և սոցիոլոգիա Չիգենի և Նյու Յորքի համալսարաններում: 2007թ. պաշտպանել է ատենախոսություն քաղաքագիտության թեմայով՝ ՄԴԿ-ի, Մեծ Բրիտանիայի Լեյբորիստական կուսակցության և Ֆրանսիայի Սոցիալիստական կուսակցության եվրոպական քաղաքականության շուրջ:

Դ-ր Ֆլորիան Մայերը (* 1975թ.) Շրջակա միջավայրի, բնության պահպանության և ռեակտորների անվտանգության դաշնային նախարարության «Շրջակա միջավայր և տնտեսություն, նորարարություն և զբաղվածություն, շրջակա միջավայրի աուդիտ» բաժնի ռեֆերենտ է և դասավանդում է Հայդելբերգի համալսարանում: Ուսանել է տնտեսագիտություն և հասարակական գիտություններ:

Պրոֆ. դ-ր Վերներ Փաշան (* 1957թ.) 1992 թվականից ներկայիս Դուսիբուրգ-Էսսենի համալսարանի Արևելյան Ասիայի Էկոնոմիկա / Ճապոնիա և Կորեա ամբիոնի պրոֆեսոր է: Ուսանել է Լոնդոնում (Էկոնոմիկայի և քաղաքական գիտությունների դպրոց), Նագոյայում (Ճապոնիա) և հատկապես Ֆրայբուրգում քաղաքատնտեսություն, որտեղ և պաշտպանել է թեկնածուական և դոկտորական ատենախոսություն:

Պրոֆ. դ-ր Վոլֆգանգ Շրյոդերը (* 1960թ.) 2006 թվականից Զասսելի համալսարանի ԳԴՀ-ի քաղաքական համակարգի և փոփոխվող պետականության ամբիոնի պրոֆեսոր է: Մինչ այդ զբաղեցրել է տարբեր պաշտոններ, ի թիվս այլոց, IG-Metall արհմիության ղեկավարությունում և դասախոսել ու հետազոտություններ է կատարել Մայնի Ֆրանկֆուրտում, Դարմշտադթում և Հարվարդում: Մարբուրգում, Վիեննայում և Ֆրանկֆուրտում ուսանել է քաղաքագիտություն, իսկ Գիսենում պաշտպանել ատենախոսություն:

Շտեֆան Թիդոուն աշխատում է Շրջակա միջավայրի, բնության պահպանության և ռեակտորների անվտանգության դաշնային նախարարության «Շրջակա միջավայր և տնտեսություն, նորարարություն և զբաղվածություն, շրջակա միջավայրի աուդիտ» բաժնում: Ներկայումս ժամանակավորապես ազատվել է աշխատանքից և աշխատում է Բունդեսթագում 90-ի դաշինք / Կանաչներ կուսակցության խմբակցության համար:

Սիմոն Ֆաուլթը (* 1977թ.) պաշտպանում է ատենախոսություն Գերմանիայում աշխատաշուկայի բարեփոխումների ազդեցությունների վերաբերյալ: Որպես Սոցիալ-դեմոկրատիայի ակադեմիայի դասընթացավար՝ նա ղեկավարում է Էկոնոմիկայի և գլոբալիզացիայի թեմաներին նվիրված սեմինարները: Աշխատել է Սոցիալական հետազոտությունների և սոցիոլոգիայի ինստիտուտում, Բեռլինի Ջերթիե հիմնադրամի կառավարման բարձրագույն մասնավոր դպրոցում, ինչպես նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունում (OECD):

Դ-ր Զլաուդիա Վայնբուխ (* 1963) Դոկտորոգ-Էսսենի համալսարանի աշխատանքի և որակավորման ինստիտուտի «Ճկունություն և անվտանգություն» (FLEX) հետազոտական բաժնի ղեկավարն ու գործադիր տնօրենի տեղակալն է: Ուսանել է Դորթմունդում քաղաքատնտեսություն և սոցիոլոգիա և այնտեղ պաշտպանել ատենախոսություն: